



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

*Unguiculata*  
Venezuela

1902

891.99  
U-66



12 MAR 2011

891.542-31

V-66

891.99

3833

4-66 Հ. Շոյաց  
Քիչաք ջուրակ

17-669 24/08/00

Յագահար Խօնովեան

ՄԵՐՈՒ ԾՈՎ

Վ. Ե. Պ

ԵՐԵՖ ՄԱԿԻՑ ԲԱՂԱԿԱՑ

ՄԱՍԿՈՒՄ - 1902.

891.99

U-66

ՅՈՎԱԿ ՐԱՅՈՎԵԱՆ

Մանուկյան  
Հայոց Տիբեթ

# ՄԵՐԱԾ ԾՈՎՈ'

14 նոյեմբեր 1911.

Վ Ե Պ

Հայոց Տիբեթ

ԵՐԵՔ ՄԱՍԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ

1001  
3835



ՄՈՍԿՈՒԱ

ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐՅՈՒՔԱՐԵԱՆ

1902.

101.00.2013

55645

ԱՐՅՈՅ Ե ՎԱՐՈՅ

Ա Ր Ծ Մ Ա Ւ

Թօյ. С.-Петербургъ, 8 Октября 1901 г.



Տիպոգր. Խ. Բարխւարան, Մոսկվա, Մամոյ պեր., հ. Բելլյաևա.  
1901

## ՄԵՐԱԾ ԾՈՎՈ

ՄԱՍՆ Ա. Ռ. ՋԻՆ.



Ա.

մերիկական տիպի վեթխալի շո-  
գենաւը, մինն այն հսկայ շոգենա-  
ւերից, որպիսիները միայն երթե-  
եկութիւն ունեն վօլգա գետի  
վրա, մի քանի օր է արդէն, որ  
թողնելով նիմնի նօվգորօդի տո-  
նավաճառի աղմկալից ափերը, ուղեղորդում է  
դէպի. Սատրախան՝ տանելով իր վրա բազմա-  
թիւ պասաժիրներ:

Շոգենաւն արդէն անցել էր Սարատովը՝ Վօլ-  
գայի վրա համարված այդ մայրաքաղաքը, և  
մատենում էր Ցարիցինին: Դեռ Ցարիցինի նշոյն  
անգամ չկար, բայց այստեղ իջնող պասաժիր-

ԴԵՒՆ անհամբերութեամբ սպասում էին  
Պաքին:

աւն իրան յատուկ վեհութեամբ ուժ-  
ու հարուածներ է հասցնում լայնածաւալ  
գետի մակերեսյթին և իր ետելից թողնում կա-  
ռաձեւ ալիքներ, որոնք գնալով մանրանում  
ին մակերեսյթի խաղաղ տարածութեան  
ընդունում իրանց նախկին հարթու-  
և անդորրութիւնը:

Ս.մառնային արեգակի այրող Ճառագայթներն  
անխնայ թափվում էին շրջակայքի վրա, բայց  
շոգենաւն արհամարհելով այդ տապը շարու-  
նակում է գնալ իր սովորական չափաւոր գը-  
նացքով:

Իսկ շուրջը տիրող շոգն անտանելի էր: Գե-  
տը դանդաղ կերպով սահում էր, կարծես մի  
տեսակ նիրհ և թմրութիւն դգալով արեգակի  
հրատապ Ճառագայթներից: Նա աւելի բարւոք  
էր համարում անշարժ մնալ իր ափերի մէջ:  
Բաց - կապոյտ երկինքն ամպհովանու նման իր  
զիրկն էր առել ջրային այդ ահազին տարա-  
ծութիւնը: Գետի երկու ափը հեռաւորութեան  
պատճառով միապաղաղ շերտերի տեսք էր ըն-  
դունել: Ամբողջ տարածութեան վրա թագաւո-  
րում էր մի տախտկալի միակերպ անդորրու-  
թիւն: Տեղ - տեղ ձինկուլները՝ դանդաղ պայտ-  
նիր գործելով, իրանց հայեացքն ուղղում էին:

Դէպի ջրային մակերեսյթը: Ա.ջ կողմում մի  
փոքրիկ կղզի ծածկված անտառով կարծես  
նյոնպէս նեղանալով շոփից, քաշված և կուչ  
եկած իր ստուերի տակ, ակամայից գլուխը խո-  
նարհեցնում էր շոգի առաջ: Զէին հանդստա-  
նում միայն կղզու վրա իշխող թռչուններն և  
իրանց անոյշ գայլայլեկով մի տեսակ կենդանու-  
թիւն ներնտում իրանց շուրջը: Ահա կանչեց  
անբնակալ կկուն, կլկաց լորինք որոնց մելա-  
մաղձիկ ձայները մի խորհրդաւոր արձագանք  
գտնելով հեռաւոր տարածութեան մէջ, յետոյ  
խոյն մեռնում էին: Օդի ծանրութիւնն այն-  
քան սասահիկ էր, որ շոգենաւի վրա ամեն մարդ  
քաշվել էր իր կայիւթները և յոգնած հայաց-  
քով ու անհամբերութեամբ սպասում էր երե-  
կոյին:

Միայն երկու մարդու վրա, որ նստած էին  
առաջին կարգի դահլիճում, այդ շոգը շունեցաւ  
ոչ մի աղղեցութիւն: Այդ մարդիկն Աստրախա-  
նի վաճառականներ էին, որ վերադառնում էին  
տօնավաճառից իրանց հայրենի քաղաքը և այժմ  
զբաղված էին կարեոր խօսակցութիւնով:

Հստ երեսյթին, նրանք նոր էին թողել իրանց  
մի ինչ որ վիճաբանութիւնը, որ դրաւել էր  
նրանց ամբողջ ուշադրութիւնը: Այդ նկատ-  
վում էր մանաւանդ նրանցից մէկի, տարիքով  
աւելի հասակաւորի, իւրաքանչիւր շարժման-

Քից: Այդ մարդը մի առանձին ոգեորութեամբ  
էր պաշտպանում իր ասելեքը մինչև անգամ  
այն ժամանակ, երբ երկրորդը, ըստ երեսյթին,  
լսելու հակումն էլ չէր արտայայտում:  
Մրանք հայր և որդի Ոսկերչաններն էին:  
Ոսկերչան - հայրը մի ձնորսական ընկերու  
թեան անդամ է, իսկ որդին այդ ընկերութեան  
հաշւապահը:  
Նրանք ձուկ էին աարել տօնավաճառ ծա-  
խելու, այժմ աջող վաճառքից յետոյ վերա-  
դառնում էին իրանց հայրենի յարկի տակ:  
Հայր - Ոսկերչանը նիշարակազմի բայց աշ-  
խոյժ տղամարդ էր, իր երիտասարդութիւնն ար-  
դէն անց կայրած, բոլորած: Իսկ որդին մի հա-  
սարակ բաց գոյնի պիջակով և լայնեզր գլխար-  
կով մօտ 25 տարեկան էլու նրա նոր ձեկ սպի-  
տակ բրիւկները շքեղ կերպով գրկում էին  
նրա ոտները, իսկ դեղնագրյն կիսաբայ մաքուր  
ոտնամանները լրացնում շքեղ հագուստը: Ե-  
րեսի գոյնը թուի էր, թշկրը մեջ ընկած, իսկ  
ու աչքերը մի տեսակ փայլ էին պարզեւում  
նրա երիտասարդական դէմքին, իսկ փոքրիկ մի-  
լուքը սքողում էր նրա երեսը:  
Հայր - Ոսկերչանը հանից իր գլխարկը և դրեց  
սեղանի վրա և նրա այդ գործողութիւնից գը-  
ծագրվեցաւ զլուխն իր ամբողջ ծաւալով, որ  
բոլորովին նմանում էր երիտասարդի գլխին այն

զանազանութիւնով միայն, որ հօր գլխի վրա  
արդէն բուն էին դրել սպիտակ մաղերը:  
Ոսկերչան - հայրը խիստ ուրախ տրամադրու-  
թեան տակ էր երեւում: Աչքերը վառվում էին  
մի ինչ որ տենչալի շահասիրութեամբ, թշերը  
ծածկվել էին կարմրով. նրա թարմութիւնը  
կորցրած երեսը կարծես կենդանացել էր, իսկ  
շոքից չորացած շըթունքները շաբունակ շար-  
ժում էին գործում: Մի խօսքով ամեն ինչ ար-  
տայայտում էր, որ հայր - Ոսկերչանը կրում է  
ներքին կատարեալ բաւականութիւն: Իսկ Ալեք-  
սանդր Ոսկերչանը, որ անց ու դարձ էր անում  
հօր առաջ երբեմն - երբեմն հօր կողմն էր դարձ-  
նում իր երեսը և սրանով արտայայտում իր ա-  
կամայ ուշադրութիւնը դէպի հօր պատմածները:  
— Այս, եթէ ուղղում ես վաճառական դառ-  
նաս, պէտք է ձեռքդ ընկածը բաց չ'թռողնես:  
Ում վլաս կ'հասնի, եթէ մենք փուղի զլուխ  
50 կոպէկ աւել մեր օգախն վերցնենք: Սա շատ  
արդարացի վաճառութիւն է: Մեր ընկերնե-  
րից ոչ ոք այնքան չէ խիվում մեր գործում,  
որքան մենք - և նրանք էլ պէտք է հաւասար  
վարձատրութիւն ստանան:

— Բայց չէ որ մենք նրանց փողի միջոցով  
ենք գործում:

— Ի՞նչ անենք, փողն է նրանցը, իսկ աշխա-  
տանքը, խելքը ումն է: Թող աեմնենք, թէ ինչ

պիտի անէին առանց մեզ մանաւանդ այն ախ-  
մախ հօգոշեանցը, որ ձեռքերը զրպանը դրած  
միայն գրասենեակ դալ ու դարդակ պատելը  
զիտէ, իսկ բանի գործի որ եկաւ՝ պաշը փախ-  
ցընէ... Եւ այդպիսի մարդն էլ պիտի հաւասար  
փող ստանայ:

— Միայն նրա վրա խօ չե մուռմ:

— Ասենք թէ: Միւսներն ի՞նչ են, նրանից  
կարծում ես շատ լաւ են: Մէջների աչքաբացը  
Մայիլեանն է — նա ի՞նչ է անում, ի՞նչ վերք  
ու դուրքի մէջ է: Տարենը տասներկու ամիս  
ձանապարհորդում է և Մոսկվայում հանգիստ  
նստում: Դու կարծում ես, որ մեր երեք ընկերը  
մեր տեղը լինէին նցնը չէին անիլ: Կարծում ես,  
որ մեր ազգական Մակար իվանիչը այդ ճանա-  
պարհներով Աստծու կրակի տէրը չե դարձել  
է, Ալեքսանդր, գեռ ջահիլ ես, գեռ մի քանի  
փուդ աղ պէտք է ուտես, որ մեր աշխարհի  
մարդ դառնաս: Դու, ի հարկե, ուսում առել  
ես, չեմ ասում չե, բայց փորձ չունես, պրակ-  
տիկայից զուրկ ես: Ես քեզ հաւատացնում եմ,  
որ եթէ մենք չեինք լինիր՝ այդ ընկերութիւնը,  
այդ գործը մի ձմեռվայ մէջ կքայքայվէր: Ար-  
բանք հէնց երեքն էլ անունի համար են գործի  
մէջ մտել: Եւ ով է սրանց միացրել դու խօ  
լաւ գիտես, ամեն ինչ քո աչքի առաջ է եղել...  
Ալեքսանդրը զիտէր, որ հօր ակնարկած չն-

կերութիւնը պարտական է իր գյուղեամբ հօրը  
միայն: Սյդ բանի մասին նա շատ անգամ է  
լսել հօրից: Ասկերչեան - հայրը թուլութիւն ու-  
նէր ամեն անգամ ընկերութեան մասին խօսք  
բացվելուց յիշել այն հանգամանքները, որ նրա  
շնորհեւ նպաստաւոր դեր են խաղացել ընկե-  
րութեան հիմնաւորվելու օրից: Ամեն անգամ  
եղբ խօսքն ընկնաւմ էր այդ կէտին, որդին լուսւմ  
էր, որովհեաւ հայրը չափազանց շատ էր խօ-  
ստում այդ խնդրի մասին: Այդպէս էլ արաւ այդ  
անգամ, նա միայն վերադարձաւ հօր աշկարայ  
խարդախութեան և այս առիթով ասաց:

— Պէտք է այնպէս անել որ գործը չքայքայվի:

— Երբէք այդ չի լինիր: Նրանցից ամեն մէկը  
շահ ունի այս ընկերութեան մէջ: Ինչ օգուտ  
ունեն հեռանալուց, երբ նրանց գումարները այդ  
գործում աւելի օգուտ են ստանում: Քան թէ  
բանկը պէտք է տար, հասկացար: Մի րօպէ են-  
թաղբներ քո ասածը կատարվեց, ուրեմն ինչ  
է հետեւում սրանից — որ պէտք է լինել հեռա-  
տես: Եւ եթէ գլխաւոր գործ կատարողը մենք  
ենք, պէտք է մեզ էլ չմոռանանք: Այժմ էլ  
հէնց այդ օրինակը՝ ի՞նչ մեծ բան է ընկերու-  
թեան համար 5000 բուբլին, որ մենք յետ ենք  
գյուղմ ներկայ վաճառքից: Ես այդ քայլու խար-  
դախութիւն էլ չեմ համարում, որովհեաւ մեր  
տեղ ով էլ լինիր՝ այդպէս կվարվէր:

Նրանք ստիպված եղան ընդհատել խօսակցութիւնը։  
Շոգինաւը կանգնեց։ Սկսվեց պատաժիրների հոսանքը։ Սկսեցին գնալ գալ ոմանք պատրաստվում էին նախաձաշելու։ Ոսկերչիան հայրը տեսնելով, որ աւել չի լինում խօսել վեր կացաւ և դուրս եկաւ դաշլիճից։ Իսկ Ալեքսանդրը Ոսկերչեանն անցաւ շոգենաւի պատշգամբը և ակսեց դիտել ու հետաքրքրվել այն տեսարանով, ինչ որ անցնում էր նրա առաջեւից թէ տախտակամածի վրա և թէ գետափում։ Ճշմարիտ է, նա առաջին անգամ չէ, որ անցնում է այդ տեղով, բայց նրա դուրս դալը կապ ունէր մի անձնաւորութեան հետ, որին յօյս ունէր պատահել այստեղ։ Այդ պատճառով նա առանձին հետաքրքրութեամբ էր զիտում իր շուրջը։ Նրա առաջեւից շտապ շտապ անց ու դարձ էին անում զանազան մարդիկ։ Ափի ամբողջ տարածութիւնը բըռն ված էր կառքերով, որոնք պատրաստված էին առաջարկել իրանց ծառայութիւնը շոգենաւից ցած եկողներին։ Որանք այն մշակներն էին, որոնց հետ պասաժիրներն ակամայից պիտի դորձ բռնէին իրանց բարդ ու բուրգը տեղափոխելու ժամանակ։ Այդ կառապանները համարվում էին այն ատելի մարդիկը, որոնք մէկին հինգ գին պահպան աշանջելով առաջարկացնում էին բարձրացնում էին առաջնաւի լաստակներից դուրս, տախտակամածի վրա, երկու կողմը, տեղաւորված էին մանրավաճառ կանայք, որոնք ծախու էին բերել հաց, երշիկ, ձու և զանազան տեսակ ուտելեղիններ։ Ամեն կողմից տարածվում էր աղմուկ և գոչիւն։ Բանսորների երգի, կառապանների հայհոյանքների, մանրավաճառների հրաւելների մէջ ևս պարունակում էր մի բնորոշ ինքնուրոյնութիւն, որ յատուկ է Վօլգայի վրա գտնվող ամեն կայարաննին։ Իսկ շոգենաւի երրորդ կարգում թափված բանւօր պասաժիրները արբած երգում էին և չարչարում էին

ափում։ Մրանցից շատերը չէին քաշվում անփորձ ձանապարհորդների հասցեներին վերաւորական սրախօսութիւններ շպատել, եթէ միայն այդպիսիները փորձէին ուզած գնից պակաս առաջարկել։ Մի և նոյն տեղում խոնվում էին ապրանքակիր մշակները, որոնք բարձելով իրանց առողջ լայնաթիկ մէջքի վրա մէծ մէծ հակերը տեղից տեղ էին փոխարրում։ Այդ մարդկանց ուքից ցգլուխ կարառված շորերը, շապիկների կեղար, զլիների մազերի զզգված քիլքաները չէին գրաւում ոչ ոքի ուշադրութիւնը։ Այդ մարդիկ բարձրացնում էին ահազին ծանրութեան հակեր, զլորում էին շաքարի տակառներ և այդ ամենը նրանք անում էին առանց տրտունջի, մինչև անգամ յարակցելով մի մալամազիկ երգով։ Շոգենաւի լաստակներից դուրս, տախտակամածի վրա, երկու կողմը, տեղաւորված էին մանրավաճառ կանայք, որոնք ծախու էին բերել հաց, երշիկ, ձու և զանազան տեսակ ուտելեղիններ։ Ամեն կողմից տարածվում էր աղմուկ և գոչիւն։ Բանսորների երգի, կառապանների հայհոյանքների, մանրավաճառների հրաւելների մէջ ևս պարունակում էր մի բնորոշ ինքնուրոյնութիւն, որ յատուկ է Վօլգայի վրա գտնվող ամեն կայարաննին։ Իսկ շոգենաւի երրորդ կարգում թափված բանւօր պասաժիրները արբած երգում էին և չարչարում էին

Հարմօնիկան։ Այդ ձայներն էլ կազմում էին մի տեսակ փինալ դրսի խառնիճաղանձ հարայշրոցին։ Իսկ այդ պատկերի ետև փովում էր Յարիցնը իր հազար և մի հոգսերով։ Ներկայ րոպէում նա կէսօրվայ շոգի աղղեցութեան տակ նոյնպէս մի տեսակ նիրհ էր վայելում։

Ալեքսանդրն առանձին հետաքրքրութեամբ էր դիտում այդ ամենը, որովհետեւ Ճանապարհի միապաղաղ անդորրութեան մէջ այդ աղմուկը մի տեսակ գրաւչութիւն էր պարունակում։ Ճանապարհորդի ուշադրաւթիւնը առանձին բաւականութեամբ է կանգ առնում սրա վրա։ Ալեքսանդրին քիչ չվշտացրեց այդ բանւորների չարքաշ կեանքը, նրանց երեսի քրտինքը և մանաւանդ այն հանդամանքը, որ այդ մարդիկ այդ ամենին վերաբերվում էին բոլորովին սովորական կերպով։

Բայց ամենից առաւել Ալեքսանդրին վշտացրեց մի ուրիշ հանդամանք, նա չտեսաւ նրան, որին յշու ուներ այստեղ պատահել։ Մօտ մի ժամ է, որ նա այստեղից չեռանում, նրա առաջելից շատ մարդիկ դնացին եկան, միայն այդ ամենի մէջ չերեաց նա։

— Գուցէ այդ շոգենաւը բաց թողնեն Ասենք, շոգենաւը պէտք է դուրս դայ ուշ երեկոյեան, իսկ մինչև այն ժամանակ դեռ մի քանի ժամ կայ — ուրեմն կարող է լինել որ այդ շոգենաւը էլ հասնեն։

Մինչդեռ Ալեքսանդրն արդէն յօյսը կտրած պատրաստվում էր վերադառնալ շոգենաւի դահլիճը, հաւատացած լինելով, որ այլ ևս չեղալու իր սպասած անձնաւորութիւնը, ինչպէս շոգենաւի լաստակների վրա երևեցաւ մի 50 տարեկան մարդ։

Նրա հետ թեանցուկ գալիս էր նիհար կազմուածքով մի օրիորդ։ Գալով մինչև մէջ տեղը տղամարդն ինքը վերցրեց օրիորդի կուռը և այնպէս սկսեց բարձրանալ շոգենաւ։

Ալեքսանդրը տեսնելով սրանց շատ ուրախացաւ, որովհետեւ սրանք էին այն անձնաւորութիւնները, որոնց նա անհամբեր սպասում էր։

— Թոյլ տուեցէք, թոյլ տուեցէք, — բացականչեց Ալեքսանդրը, վերցնելով տղամարդութեւը։

— Ես ինքս կգնամ. զուք օգնեցէք օրիորդին։

Ալեքսանդրը շտապեց անցնել օրիորդի կողմը և առաջարկել իր ձեռքը։

Խմբակը բարձրացաւ շոգենաւ։

— Զեր հայրիկն էլ այստեղ է, միասին էք, — հարցրեց տղամարդը հեալով։

— Այո՛, ես էլ հայրիկն էլ։ Ամբողջ Ճանապարհ եկել ենք ձանձրանալով, մի ծանօթ մարդ չկայ։ Դուք ի՞նչպէս էք, — զարձաւ նա օրիորդին։

— Ենոլհակալ եմ, ինչպէս տեսնում էք, —

պատասխանեց օրիորդը զլսի մի թեթև շար-  
ժումով:  
— Զեր Մօսկվայից դուրս գալու մասին մեղ  
N յայտնեց:  
— Արդէ՞ն պատահեցի՞ք Նրանք ուղևորվեցին առաջին կարգը: Հայր-  
Ոսկերչանը պատրաստվում էր թէյ խմելու:  
Տեսնելով նորեկներին նա ուրախ ժամանակ վեր  
կացաւ և սիրալիր ողջոյններով ընդունեց նրանց:  
— Իվան Ստեփանիչ Իվան Ստեփանիչ շատ  
ուրախ... Նստեցէք: Ալեքսանդր, կառավարիր,  
որ բարդուբուրդը տեղը դնեն:  
— Ես կարծում էի, որ դուք նիմուռմ կլի-  
նիք, — ասաց իվան Ստեփանիչը:  
— Եւ կլինէի էլ եթէ աջող կերպով մեր  
բախտից մէկը չպատահէր և բոլոր ձուկը մի  
անդամից չդնէր:  
— Հա՞ այդ լաւ է:  
 Իվան Ստեփանիչը նստեց: Իսկ Ալեքսանդրն  
արդէն զբաղվեց իրեղէնները տեղաւորելով: Նրան  
օգնում էր և օրիորդը:  
 Իվան Ստեփանիչ Մայիլիանը մի համակրելի  
տղամարդ էր: Նրա փոքրիկ ալեխառն միրուքը  
մի առանձին ինտելեկտնառութիւն էր պարզեռում  
Նրա մօյդ երեսին: Հասակը բարձր էր: Կանոնա-  
ւոր շարժումներով և խօսակցութեան ձեւրով  
իվան Ստեփանիչը բոլորովին հեռու էր վաճա-

ռականի սովորական տիպից: Նրա մէջ չէին ե-  
րևում վաճառականներին յատուկ եւրոպական  
արտաքին փայլի տակ թագնւած ասիականի  
բիրտ և անտաշ վարմունք, Գուցէ նա շտկվել  
է, կոկվել էր այն ձանապարհորդութիւնների  
շնորհիւ, որ մշտապէս անում էր: Մայիլիանը  
յայտնի էր իբրև մի առանձին կամքի տեր մարդ: Նա  
իր անունը և հարստութիւնը ձեռք է բե-  
րել դեռ այն ժամանակները, երբ կովկասում  
հեշտութեամբ հարստանում էին կապալների  
միջոցով: Նա իրան աստրախանցի չի համարում:  
Եւ իսկապէս, նա իր ոսկորները դուրս է բերել  
հիւսիսային կովկասի քաղաքներից:

Նրա աղջեկը, 22 տարեկան եւգինէն, վայե-  
լում էր հօր առանձին սէրը: Մանաւանդ հօր  
և աղջկայ մէջ այդ զգացմունքն աւելի վառ-  
վեց, երբ մեռաւ Մայիլիանի կինը: Իվան Ստե-  
փանիչը իր կնոջ ամբողջ սէրը վերափոխեց իր  
աղջկայ գրաւ: Նա ոչինչ չէր խնայել իր աղջկայ  
համար. տուել էր լաւ կրթութիւն, սովորեց-  
րել էր երաժշտութիւն, իր բացակայելու ժա-  
մանակ միշտ աղջկանն էլ հետն էր վերջնում:  
Մայդական նույնական գործութեան մասին  
պատճառով եւգինէն քանի անգամ Մօսկվա է  
եղիլ, տեսել է Պետերբուրգը:

Մայիլիանն իր շաքարային տկարութեան  
պատճառով շատ յածախ էր ձանապարհոր-  
դում: Այժմ նա վերադառնում էր Մօսկվայից,

ուր գնացել էր այդ անգամ պրօֆեսորների հետ իր տկարութեան մասին խորհրդակցութիւն անելու:

—Ի՞նչ հիանալի է սարքած, —ասաց Մայիլ եանը, դիտելով շողենաւի սարքը: Սովորաբար այդ ընկերութիւնից զգիտեմ ինչու խուսափել եմ: մինչև անգամ ուղում էի մնալ Յարիցինում և վաղը դուրս գալ «Կովկաս Մերկուրիայի» ընկերութեան շողենաւով. Եւզինէն էր, որ խորհուրդ շտուեց գիշերը մնալ Յարիցինում: Բայց ոչնչով «Մերկուրիայի» պակաս չէ:

—Բոլորովին նոր շոգենաւ է, այս ամառ է բերել տուած թէլիքիայից:

Մայիլ եանը սկսեց առանձին Հետաքրքրութեամբ համեմատել շողենաւի զարդարանքը և յարմարութիւնը միւս ընկերութիւնների շողենաւների հետ և եկաւ այն եղբակացութեան, որ այստեղ կան մի քանի յարմարութիւններ, որից զուրկ են «Կովկաս Մերկուրիայի» շողենաւները:

Շոգենաւի կիրթ զարդարանքը ապացուցանում էր ընկերութեան հմտութիւնը, որ կարողացել էր միացնել յարմարութիւնը գեղեցկութեան հետ: Այստեղ գլխաւոր զռան վարագոյրներին կից փայլում էին գեղանկար մոմաշորներով պատած պատերը. Իսկ զլխաւոր մուտքի տառաջ պիտառի զլորին կախված էր յայտնի:

բանաստեղծներից մինի իւղանկար պատկերը. տեղ - տեղ դրած մարմարէ բոլորակ սեղանների վրա թափթփած էին լրագիրներ, ալբոմներ, պատկերազարդ շաբաթաթերթեր և գրքեր, որոնք պատրաստված էին ընթերցանէր ձանապարհորդների համար: Դահլիճի մէջ տեղում բայցված էր մեծ սեղան, որ ծանրաբեռնված էր ծաղկամանների և ձաշվայ սարքերի տակ: Իսկ պատի տակ ձգված էին թաւշեսց բազմոցներ: Ահա այդ ընդհանուր սեղանի առաջ Ոսկերշան-հայրը պատրաստվում էր թէյ խմելու: Սպասաւորը բերեց սարքը, թէյանոցը և բաժակները, որոնք փայլում էին իրանց անարած մաքրութեամբ, և զրեց հիւրերի առաջ:

—Զեղ համար թէյ ածեմ, —հարցրեց Ոսկերշան-հայրը Մայիլ եանից, երբ վերջինս թողներով շոգենաւի դիտելով տեղաւորվեց բազմոցի վրա:

—Այո, կխմեմ, շատ ծարաւ եմ:

Ալեքսանդրն, որ արդէն տեղաւորել էր ամեն ինչ և վերադարձել դահլիճ օր. Եւզինէի հետ, վերցրեց թէյանոցը և սկսեց թէյ ածել:

—Դէ, պատմեցէք, պատմեցէք, իվան Ստեփանիչ ի՞նչ կայ Խօսկվայում. ի՞նչպէս էք, ի՞նչ խորհուրդ տուին բժիշկները, — մի շարք հարցերով շըջապատեց Ոսկերշան-հայրը իր պաշտօնակցին, որպէս զի նրան միջաց չտայ Հետաքրքվելու տօնավածառի առևտուի:

նակը կուզէք, աշա՝ Մարկոսեանը յայտնի վաճառական էր, ծանաշնում էիք խօ, ունէր երկու խանութ, — բայց հենց որ սովորը ձգեց, ի՞նչ էք կարծում; ի՞նչ եղան գործելը, որդին խանութը փակեց և գնաց կամաւոր օֆիցերութիւն սովորելու, իսկ նրա մօտի գործակատարն այս օրերս երկրորդ տունն առաւ: Ի՞նչու որդին չշարժւնակեց հօր սարքած գործը — հարցնում եմ ձեղանից...

— Նատ հասկանալի է, — ընդհատեց Եւգինէն, տեսնելով որ Ոսկերչեան - Հայրը պատրաստվում էր էլե օրինակներ բերել: — Այդ տեսակ տիպերն արդիւնք են մեր սխալ դաստիարակութեան: Քննենք և տեսնենք, թէ ի՞նչ ենք մենք անում մեր երեխաների համար: Երեխան մեծացաւ թէ չէ, մենք իսկըն կամենում ենք նրանից մի յայտնի մարդ շինել և մէկ - մէկուց յետ չմնալու համար, տալիս ենք դպրոց և անհամբեր սպասում ենք այնտեղից աւարտելուն, շրջապատում ենք նրան խորթ գաստիարակութիւնով, մառանալով բոլորովին ուսման զլիսաւոր նպատակը, այլ ամենն անում ենք միայն ցոյցի համար: Յուցամոլութիւնը սովորեցնում ենք մանկութիւնից: Նոր ենք հազցնում իրեւ ցոյց, տեղ ենք հանում մեր երեխաներին, ցոյց տալու նպատակով և վերջապէս ուսում ենք տալիս ցոյցի համար: Դրացին իր որդուն տալիս է

դիմնազիա, նա էլ պէտք է տայ, որովհետեւ չի ուղում յետ մնալ իր զրացուց կամ ուղումէ իր որդու հազին անշուշտ տեսնել պլազան կոճակներ և այդ ամենն առանց կշռելու ընդունակութեան չափը: Այդպիսիները զոռով անցնում են մինչև երկրորդ կամ երրորդ դասարան և դուրս վանդվում՝ ինչպէս անպէտք մի իր: Այնուհետեւ շատ հասկանալի է թերուսի վեճակը: Այդպիսին իրան համարում է ընտանիքից դուրս և սկսում է փայփայել իրան համար բոլորովին անհասկանալի երեսյթներ: Ձեր ասած Մարկոսեանի որդին ի՞նչ էր: Նա սովորել է բէալականում և երրորդ դասարան չկարողացաւ անցնել: Մի և նոյն ժամանակ նա բոլորովին չի վարժված յարդել ու սիրել իր հօր գործը. նա մի վանդուած է մեր սխալ հայեացքների: Եւ այդպիսի զաստիարակութիւն ստացածին կարել՞ է առաջարկել գործ կամ առետուր, երբ նա ոչ մի գործի չի պատրաստված: Բանն ուրիշ կլինէր, եթէ նա սովորէր մի առետրական դպրոցում, պատրաստվէր հօր առետրի համար, այն ժամանակ կտեսնէիք, որ նա այլ հայեացք կփայփայէր: Ես այժմ էլ ասում եմ հայրիկին եղօրս տայ առետրական դպրոց: Ի՞նչ ուղում էք ասէք, մեր բոլոր չարիքը կրթութեան սխալ սխտեմի մէջ է:

— Ես համաձայն եմ, — ասաց Մայիլեանը,

բայց ասում եմ կուցէ որպիս կարող է աւարտել ձեմարանը, եթէ ոչ այդ առևտրական դպրոցը միշտ էլ կարող է մտնել մի տարի ուշ մի տարի շուտ—մեծ բան չենք կողցնում: — Եյ՞, սիսալ հայեացք ենք մենք մշակել մեր կրթութեան մասին,—բացականչեց Եւգին, երբ նկատեց որ իր ասածները տպաւորութիւն են գործում:

— Ես չեմ կարող չհամաձայնվել օրիորդ Եւգինի հետ, — ասաց Ալեքսանդրը, — բայց կարծում եմ, որ այդ երևոյթը ունի աւելի ուրիշ, այդպիս ասած՝ խոր հոգեբանական պատճառ: Մեր մէջ ոչ մի դասակարդ նախատիւնքի այն պատուանդանի վրա չե կանգնած, ինչ որ վաճառականական աշխարհը: Ցաւօք սրտի պիտի ասենք, որ այդ աշխարհումն են աւելի շուտ ունակութիւններ, քաղաքակրթութիւններ: Վաճառականն իր շահերից դուրս ոչինչ չի տեսնում: Նա չի հետաքրքրվում ոչ իր շնչապատուներով, ոչ զրականութիւնով, մինչև անդամ այդ ամենը համարում է աւելորդ բան. Նրա հասարակական, գրականական աշխարհը փայլում է անշարժութիւնով և անզբաժնութիւնով: Ահա թէ ինձն է պատճառը, որ մեր նոր սերունդը փախչում է այդ աշխարհից: Նրա համար այստեղի օղը ծանր է, նոյն իսկ խեղող: Փոխեցէք ներկայի լեժիմը, կարզը,

ստեղծեցէք նոր միջնորդի, նոր պայմաններ, բարձրացրէք վաճառականի յարդը և դուք կտեսնէք, որ նոր սերունդը ուրախութեամբ ոտ կղնի այդ աշխարհը:

Երբ Ալեքսանդրն այդ ամենը պատմում էր, Եւգինն հազիւ կարողացաւ իրան զսպել և շնորհատել նրան: Նրա կարծիքով Ալեքսանդրը թէւ ուրիշ կողմից, բայց և այնպէս պաշտպանեց համանման հայեացքներ:

— Թէ այսպէս, թէ այնպէս, — ասաց նա, — վաճառականութիւնը շատ հեշտ կարելի է արժանաւոր պատուանդանի վրա դնել:

— Եւգինն շատ համակրութեամբ է վերաբերվում մեզ,— ասաց Մայիլեանը: — Որքան անախորժութիւններ տեսնի մեր աշխարհում, նա էլի չե փոխում իր հայեացքները:

— Միթէ պէտք է մի քանի ուղղեց պակասութիւններից հիասթափվել:

— Ես մինչև անգամ ուզում եմ նրան առաջարկել մեր գրասենեակում պարապել և ինսդրել Ալեքսանդրից հաշուապահութեան դասեր տալ:

— Ուրախութեամբ յանձն կառնէի այդ տեսակ պարապմունք,— ասաց Ալեքսանդր:

Եւգինն չափազանց ուրախացաւ խօսքի այդ ընթացքի վրա և շնորհակալութիւն յայտնելով՝ բարձրացաւ իր տեղից ու հեռացաւ սեղանի առաջեկց:

Նոգենաւը տուեց իր երրորդ սուլոցը և սկսվեց  
շարժվել: Նա թողնում էր Վոլգայի վրայի զրե-  
թէ վերջին առետրական կէտը և ուղևորվում  
էր Աստրախան: Վոլգան Յարիցինից քիչ ան-  
ցած՝ ծռվում է դէպի հարաւարեելք: Այստեղ  
ափերը քանի գնում են ներկայացնում են մի  
կատարեալ ամայութիւն: Աջ կողմն աւազու-  
կաւիծեայ բլուրներ, ձախում — հարթ տափա-  
րակ: Այստեղց արդէն մարդ կարծես նկատում  
է թէ դուրս է եկել եւրոպայից և իր տուած  
փոված են Միջին-Ասիայի աւազու և բնու-  
թիւնից զուրկ վայրերը: Միայն Վոլգան է, որ  
շունչ ու կիանք է պարգևում այդ ամայացած  
ափերին:

Յարիցինից Աստրախան ուղևորվողը իրան  
արդէն համարում է տանը, չնայելով գեռ մի  
ամբողջ օր պէտք է գնայ և կարէ 400 վերստ  
աւել տարածութիւն:

Ահա գետը մի պայտ է անում, շոգենաւը  
ծռվում է իր սովորական ուղղութիւնից և ձախ  
կողմում թողնելով մի անմարդաբնակ կղզի,  
մտնում է կրկին լայն տարածութեան մէջ:

Կրկին նոյն տեսարանը, նոյն հաւասար-պարզ  
մակերշյմը, նոյն լերկ ափերը: Տեղ-տեղ միայն  
իրանց զլուխներն են բարձրացնում աւազի մի-  
ջեց հեռավական սիւները, փռվում են չմշակ-  
ված դաշտեր: ոչ անտառ, ոչ արտ, ոչ մի բնու-

թեան պարզեւ... չեռուից միայն երեսում է մի  
ինչ որ գիւղ որ այդ լայնածաւալ տարածու-  
թեան մէջ մի կէտ էր միայն, որի վրա կանդ էր  
առնում ճամբարդի կարուտած աչքը: Դա  
Նոգենաւը գնում է:

Վրա հասաւ երեկոն: Արեգակը սկսեց թեքվել  
դէպի արևմուտք՝ իր վերջին ոսկեզօծ շողերսվ  
փաղաքշելով Վոլգայի ջրերը: Բայց ահա և այդ  
տեսարանն էլ չքայաւ: Վրա վաղեցին մոխրա-  
գոյն սառւերներ և զիշերային մշուշը սկսեց  
թանձրանալ: Քամին էլ վշեց աւելի եռանգով:  
Հորիզոնի վրա պաղպացին աստղերը: Պտասմիր-  
ները դուրս թափեցին: Միայն մեր ծանօթ  
խմբակը շարունակում էր գահլիճում մնալ:  
Քիչ յետոյ սրանք էլ ցրվեցին քնելու: Զեր  
քնել միայն Ալեքսանդրը, նա դուրս եկաւ պա-  
տրշգամբը և նստեց: Երկար նա լրւու նայեց  
ջրին, զիշերային մլութեան մէջ թագնվող ա-  
փերին, ականջ էր գնում շոգենաւի տակից վա-  
զով ջրային կոյտին: Նրա մէջ զարթեցին քաղցր  
պատկերներ: Նա սկսեց համեմատել ներկայ բօ-  
պէն այն բօպէների հետ, երբ նա պատահում  
էր եւգինէին... Մի ակամայ հոգոց դուրս թռաւ  
նրա սրաից — այնքան այդ միայնակութիւնը  
ծանր թվայ նրան:

Ի՞նչ է անում նա այժմ: Նա հանգստանում  
է, վայելում է քուն և մտածում է արդեօք,

որ այստեղ նրան սպասում է մէկը, որպէս զի միասին բաժանի երեկոյեան այդ զուարձալի ժամերը... Նրա երևակայութիւնը սլացաւ հայրնի քաղաքը, որտեղ սրանք միջոց էին ունենում պատճելու, վիճաբանելու... Եւ որպիսի՞ վիճաբանութիւններ էին դրանք—երբեմն բաւականին տաք, երբեմն թեթև։ Օրվայ աշխատանքից յետոյ, երբ փակվում էր գրասենեակը, Ալեքսանդրը գնում էր նրա մօտ... Ահա այդ ժամանակ նրանք նուիրվում էին ընթերցանութեան, մաքերի փոխանակութեան... Նա այսօր զգաց այդ փայելչութիւնը երեք ամիս ընդհատումից յետոյ, բայց շատ կարծատե... Եւզինէն չափազանց յօդնած էր, երկաթուղին նրան շատ ջարդել էր, և այդ պատճառով նա շուտով հեռացաւ հանգստանալու։

Բայց շոգենաւը գնում է ու գնում։ Մարդկանց անցուղարձը գնալով պակասում էր. արդէն կարվեցին երկրորդ կարգի մարդկանց աղմուկները և երգերը։ Շոգենաւի մի ծայրում մի ինչ որ զցող նստած դարիջը շե առաջ վերջին կումբն էր կլանում, բայց և այդ զցոցն էլ թմրելու վրա էր։

Վերջապէս, շոգենաւում այլ ևս մարդ չմնաց. ամենքը գնացին քնելու։ Կախ ընկաւ Ալեքսանդրի սիրաը իր միայնակութիւնից։ Յինվելով նստարանի վրա, նա դարձեալ մի քիչ

դիտեց հեռուն, նուիրվեց իր քաղցր մտածմունքներին—և, վերջապէս վերկենալով աեղեց, ուղևորվեց քնելու։

Միւս օրը Ալեքսանդրն անհամբեր ձգտում էր պատահել Եւզինէին, բայց այդ աջողվեց նրան բաւականին ուշ։ Օրիորդը վեր կացաւ կէս օրվան մօտ, յետոյ ստիպված եղաւ զբաղվել հօր հետ, որովհետեւ Մայիլեանը իրան լաւ չէր զգում։ Արդէն Ճրագները շոգենաւում վասել էին, երբ Եւզինէն հօր հետ մտաւ դահլիճ։ Հայրը խնդրեց մի բան նուազել. օրիորդը բացեց պիտունն և վերցրեց մի քանի թեթև ակկորդներ։ Շուտով զահլիճում հնացեմն Ղօքդանեանի բայեաթու ելեւ ջները։ Ալեքսանդրը մեծ հաճոյ քով լսում էր Եւզինէի նուազելը։ Վերջացնելով կտորն, Եւզինէն վեր կացաւ զանամուրի առաջեկց և գուրս եկաւ պատշգամբ։ Ալեքսանդրը հետեւեց նրան։ Նա արդէն սկսեց իրան աւելի ազատ պահել։ Երեսում էր, որ Եւզինէն ևս առանձին բաւականութեամբ էր բաժանում նրա հետ պատճած ժամերը։ Նրանց մէջ իսկըն վերականգնեց փոխադարձ համակրութիւնը և կապվեց խօսք։

Նրանք զօսոնում էին շոգենաւի շուրջը։ Օդի մէջ տիրում էր զգալի թարմութիւն։ Դեռը պատկերացնում էր մի խաղաղ տարածութիւն։ —Ես շատ ձանձրացայ ձանապարհից, — ա-

սայց Ալեքսանդրը, —իսկապէս ասած՝ վեց օր շարունակ ջուր տեսնել այդ էլ մի բան չէ: Մանաւանդ որ ամբողջ ձարապարհն եղել եմ մենակ: — Զէ՞ որ ձեր հայրը ձեղ հետ է: — Այս, բայց ևս ձանձրացայ մի և նոյն նիւթի վրա խօսելուց:

— Ինչո՞ւ, ես շատ կուզէի լսել սրանց դատողութիւնը: Դուք ի դուր էք նրանց փորձառութեան անուշաղիր վերաբերվում: Եյդ մարդիկ փորձուած փաճառականներ են: սրանց միայն կրթութիւնն է պակասում: Տուէք կրթութիւն, կտեսնէք թէ նրանք ինչ հրաշքներ կդորձեն: Ես շատ կուզէի, որ սրանց չափ հմտութիւն ձեռք բերէի այդ ասպարիզում: Եթէ ինձ թոյլ տրվէր ձեր գրասենեակում պարապել որքան ես ուրախ կլինէի: Դուք, ի հարկէ, չէք զանալ պարապել ինձ հետ հաշուեպահութեամբ: Ես փոքր ի շատէ զիտեմ, ինքնապարապողութեամբ կարողել եմ մի քիչ հոտ առնել: բայց անհրաժեշտ է փորձնական պարապունք:

— Ի հարկէ, ի հարկէ, սկսէք, դժուար չէ: Բայց իմացէք, որ ես խիստ եմ պաշտօնի ժամանակ, եթէ մի պակասութիւն տեսել եմ, երեսով կտամ:

— Ինչ առել կուզէ, մինչեւ անդամ ես կվերաւորվեմ, եթէ դուք ինձ ուղղակի պակասութիւններս չասէք:

— Ի հարկէ ես կաշխատեմ քիչ նկատողութիւն անել:

— Ինչո՞ւ, այժմեանից բողոքում եմ այդ տեսակ պարապմունքի զէմ... արէք այնպէս, ինչպէս թելաղրումէ գործը: Ասենք, ես ձեր հմտութիւնը չունեմ, բայց և այնպէս կտեսնէք, որ ես այնքան էլ խամր չեմ: Ես կարող եմ զբեկից դիրք արձակ փոխաղրիլ ամեն մի հաշիւ:

— Բայց իմացէք, որ այդ ձեռնարկներով ոչինչ չէ աջողվում անել:

— Կտեսնենք:

Եւզինէն մի քիչ վերաւորված զգաց իրան, երր տեսաւ, որ Ալեքսանդրը թերահաւատութեամբ է վերաբերվում նրա հմտութեան:

— Դուք տղամարդիկ սովոր չէք յարգել կանանց անկախ աշխատանքը:

— Միայն այդ ոչ ձեզ վերաբերմամբ: Եւզինէի քնքոյշ երեսը շառագունեց այդ խօսքիրից:

— Միայն ես կասկածում եմ, որ հայրիկը չէ թողնիլ, — ասաց նա:

— Բայց չէ որ նա ինքն ասաց:

— Նա ինձ այնքան է սիրում, որ չվերաւորելու համար այդպիսի խօստութեր յաձախ է անում: բայց անցնում է մի քանի օր, սկսում է համոզել թէ մեր պէս հարուստ մարդկանց այդ չի վայելիր, թէ մեզ կմեզաղրեն: Դուք դի-

տէք, որքան դժուար է կոռւել ծուռ հայեացք-ների հետ... Իսկ վերաւորել տկար մարդու և չեմ ուզում. ամեն մի դիմաղրութիւն նրա վրա վատ է աղդում... Խօսակցութիւնն ընդհատվեց սուր սուլցով, որ լսվեց այդ միջոցին. սրան պատասխանեցին: Նցն շվկոյով շոգենաւից: Սա նշան էր, որ առաջ է դալիս մի այլ շոգենաւ: Սյու ժամանակ հեռուից լսվեցին շոգենաւի անիւների ձայներ և մի պատիկ շոգենաւ հաւասարվելով՝ առաջ ընկաւ և կամաց - կամաց անհետացաւ հորիզոնի ետև:

Նրանք նստեցին:

Ալեքսանդրն անփոյթ կերպով յենուելով նստարանի վրա, քթի տակ մրժմիթաց մի ինչ որ երդ: Իսկ Եւգինէն նայում էր դէպի հեռուն: Գիշերը հիանալի էր: Վոլգայի զրաւիչ տարածութիւնը գնալով անհետք կորչում էր անվերջ հեռաւորութեան մէջ: Երկու ափերի մէջ եղած տարածութիւնը հսկայական չափ էր ընդունել: Որ կողմը նայէիր — ջուր էր, ջուր... Եւ այդ հսկայ խաղաղ զեալ կարծես նիրհում էր կամարաձև երկնքի տակ և իր սահուն հանդարդ ալիքներով շցում էր շրջապատ մեռած քնութիւնը: Պարզ աստղերը այդ անհուն տարածութեան վրա զցում էին վառ հայեացք. միայն լուսնի բացակայութիւնն էր խանգարում պատկերի ամբողջութիւնը. երեմն՝ երբեմն ա-

րեմուաքից համառմ էին մեղմ, անհոդ քամու հարուածները. այդ ժամանակ գետը կարծես սթափվում էր իր նիրհից. Նրա մակերեսին աւելի կենդանանում էր. իսկ անոյշ քամին այդ շարժումը գործելուց յետոյ, կորչում էր հեռաւոր տարածութեան մէջ: Մի կատարեալ թարմ կանաչ խոտերի բոյրով լի զրվութիւն և խորհրդաւոր ձայներ ու սրւեոց էր բերում այդ մեղմ քամին: Տեղաեղ պատահող փոքրիկ ճահճու կղզիների վրայից, որոնք ծածկված էին կարծահասակ և ցանցառ անտառներով հասնում էին Ճպուաների կոփինչն ու գորտերի կըռկըռոյցը: Թէ Ալեքսանդրն և թէ Եւգինէն թողային իրանց խօսքը և սկսեցին նայել ու վայիլել զիշերային անուշութիւնը: Մէկ - մէկ Ալեքսանդրը աչքերը զցում էր Եւգինէի վրա, սրան պատասխանում էր օրիորդի լի սիրալիր հայեացքը: Շոգենաւի էլեքտրական լամպաներից լցոն ընկնում էր սրանց վրա: Ալեքսանդրն էրկար նայում էր Եւգինէի զրաւիչ և նկրքին մի կատարեալ բաւականութիւն արտայայտող աչքերին, նրա թափված մակերին... Սյու ամենն այնքան դուր եկաւ Ալեքսանդրին, որ նրա սիրաը սկսեց թնդալ և մի ինչ որ զուրեկան զգացմունք սկսեց շցել նրա ջղերը:

Իսկ զիշերն շարունակ գրաւում էր մարդու սիրաը իր ոգեսորիչ բոյրով և կախարդիչ զց-

Ներովէ Ահա դարձեալ Հեռւում Երևեցաւ մի շողինաւ. Նրա վրայի լամպաները դեռ Հեռուից պսպղացին և մի աղօտ լցու գցեցին ջրի վրա: Գիշերը շարունակ շցում էր մարդու տրամադրութիւնը: Բայց յանկարծ կուտակվեցան ամպեր և ծանրացան հորիզոնի վրա, բայց ոչ մի վտանգ չսպառնալով, անցան գնացին դէպի արեւելք... Սնդորրութիւնը քանի գնաց կատարեալ դարձաւ. միայն զորտելն էին, որ շարունակում էին կոկուալ: Տափարակ ափերը բոլորովին անհետացել էին աչքից: Մեր երիտասարդները կարծեն կամենում էին առելիք կուշտ կերպով յագենաւ այդ անոշ երեկոյից և հանգիստ վայելել նրա մսիթարական անսահմաններութեան մէջ: Նրանք երկուն էլ նայում էին հեռուն, որը մի ակամայ ուժով հրաւիրում էր մարդու ուշադրութիւնը դէպի իր զիրկը, դէպի իր ծոցը... Նրանք երկար մնացին այդ գրութեան մէջ և չհեռացրին իրանց աչքը մարող երեկոյից, իրանց առաջնորդ վազող մանր - մունը կղզիներից, հանգիստ ու խաղաղ զետից: Եւ նրանց թւում էր, որ այդ տարածութիւնը զարթեցնում է նրանց մէջ մի ինչ որ անծանօթ զգացմանք, մի զգացմանք, որ զգուում է մարդու երիտասարդական քաղցր ցնորդները, սրտի առաջին անձանօթ զրգիւը և զարթեցնում է առաջին ամօթխած յարաբերութիւնները: . . .

Քաղցր է և անմոռանալի՛ մարդու երիտասարդութիւնը: Ամեն մի թեթև առիթ մարդու երակների մէջ զարթեցնում է մի անոռաանալի զրգիւ: Միրաք, կարծես, դուքս է ուզում թռչել ուրախ ու քաղցր յիշողութիւններից, անմառանալի ապաւորութիւններից: Մի այդպիսի ապաւորութիւն տակ էին Ակքսանդրն ու Եւգինէն: Բայց ահա հեռւում լսվեց մի աղմուկ: Ակքսանդրը շարժում գործեց և դարձեց երեսը դէպի այն կողմը, որտեղից հանում էր աղմուկը: Եւգինէն նշյալէս վեր կացաւ և ուղղելով իր դերիան, նայեց դէպի հեռուն: Արդէն հասանք, — բայցականչեց նա: Իսկ շողենաւի վրա իրարանցումը գնալով սաստկանումը էր: Մի երկար տարածութիւն՝ վառ հաղարաւոր ծրագներով՝ գծագրվեց նրանց առաջ: Անթիւ նաւերը տարածվում էին զետի վրա: Ափում կանգնած շողենաւներից արդէն հասնում էին ձայներ. իսկ այնտեղ, ամպամած հեռաւորութիւնից, գծագրվում էին տների անհաւասարը կտուրները, որնք իրանց ցրուածութեամբ երեւում էին ինչպէս մօխրագոյն կետեր, մյուգ-մյուջ ցիցիւ: Մրանց վրա կենցրոնանում էր մայր եկեղեցու սպիտակ ու բարձր զանգակատունը, որ մի կատարեալ իշխողի տեսքով, կարծես, հովանաւորում էր շուրջը նիրհող աները:

Իսկ զրանց առաջ մի անտահման ջրային տարածութիւն՝ ծանրաբեռնված էր հաղարաւոր նաւերով: Մի թեթև տատանումով սահեց ջրի վրայից քամին: Այս ու այն կողմից մէկ մէկու արձագանք տուին սուլոցները: Ճռճռացին շոգենաւի կապերը և արձակիվերով վերեկց՝ մի ուժին հարուածով ընկան տախտակամածի վրա... Շուրջ կտուրների ու կայմերի վրայից բարձրացան ազռաւները և մի անախորժ կռոռոցով արտայայտեցին իրանց բողոքը իրանց հանդստութիւնը խանդարողների հասցեին... Շոգենաւը կանգնեց: Իսկ գետը մի խուլ աղմուկ բարձրացնելով՝ բարկացած հարուածեց քարուքանդ ափերին... Ամեն կողմը, ուր աչքը ցցէիր, հՀանդիպէիր ծրագների խաղերին, նաւերի տատակման... Ափի վրա, քաղաքի կողմից, վրա էր կոխում մթութիւնը և իր թեերը տարածում շոգենաւի վրա: Շոգենաւից լավում էին նաւափարի և բանեորների ձայները, լաստակների քաշերը և պասաժիրների իրարանցման ծանր և խուլ աղմուկը, որ դուրս թռչելով շոգենաւից, դիմաւորում էր ափում տիրող լոռութեան, մի լոռութեան, որ իր միապաղադ և սրամաշմակերպութեամբ մի անդամից հիմասթափեց: Էր մարդու և վանում ձանապարհին ստացած ամեն ուրախ տպաւորութիւն... .

Պասաժիրների առաջ փռվեց լայնածաւալ Աստրախանը իր խանիթաղանձ աներով և անշարժ նեղ փողոցներով Այն ուղեղ փողոցը, որ գնում է շոգենաւների նաւահանգիստներից սկսած՝ համարվում է ոչ զիաւոր, բայց աղմկալից: Մանաւանդնա առանձին աչքի ընկնող կենդանութիւն էր ստացել այդ րօպէին՝ շոգենաւի գալու պատճառով: Չնայելով երեկոյեան ժամանակին, այսանեղ թագաւորում էր նոյն աղմուկը, ինչ որ ցերեկը: Ոսկերչեանը և Մայիւեանը բնակվում էին քաղաքի երկրորդական փողոցներից մինում և մինչեւ տուն հասնելու հարկաւոր էր կտրել առնուազն երեք վերստ տարածութիւն: Ամբողջ ձանապարհը ներկայացնում էր մի հսկայ՝ երկաթի ստամոքսով, որ կարողանում է մարսել իր մեջ առեւտրական բազմատեսակ ձիւղեր: Եւ իսկապէս, երկար տարածութեան վրա փռված քարէ տները պատկերացնում էին իրանց շուրջը մի մշտական առեւտրի եռում: Ամբողջ ձանապարհը, որով պահնում էին մեր ձանապարհորդների կառքերը, ընդգրկում էր իր ծոցում շարանաձև խանութներ: Իսկ բոլոր

շուրջը իշխում էր մի այնպիսի Խլացուցիչ աղմուկ և կենդանութիւնն, որ Ոսկերչան - հայրը, որքան էլ սովոր լինէր այդ ձայներին, այնուամենայնիւ շատ ձանձրացաւ։ Կառքը շարունակ էլք գնում, այլ ստիպված էր լինում հանդարտեցնել գնացքը կամ նոյն իսկ յետ նահանջել որպէս զի չենթարկղի ընդհարման։ Երկու ընտանիքի կառքերն էլ ընթանում էին մէկ - մէկու ետեից։ Ահա նրանց առաջը կտրեց մի շարան կառքերի ընթացքը, որ հպարտ շարժումով շտափում էին հակառակ ուղղութեամբ։ Ոսկերչանը մինչև անդամ նեղացաւ։ Նա, ինչպէս և բոլոր վաճառականները, շտափում էր, թէ՛ տանը մի առանձին զործ շրւնէր։ Զգալի կենդանութիւնը, որ կարող էր շատ շտերի վրա մի ցանկալի տպաւորութիւն թողնել։ Ոսկերչանն հօր վրա զործեց տաղակալի տպաւորութիւն։ Նա իրան յոգնած զգաց։ Գրեթէ նոյն տպաւորութեաննտակ էր և Մայիլեանը։

Միայն Ալեքսանդրն և Եղիշնէն մէկ - մէկուց անտեղեակ՝ զգում էին իրանց սրտում կենդանի բերկրանք։

Ալեքսանդրը կարծես ուրախացել էր և աշխայժ սրտով նայում էր իր հայրենի քաղաքին, Գուցէ այդ նրանից էր, որ նրա սրտում դեռ կենդանի էին այն տպաւորութիւնները որ

նա ստացել էր շոգենաւում Եւդինէի ներկայութիւնից։ Գուցէ և Ճանապարհի անգործութիւնը և հայրենի քաղաքի հետ կազմված զանազան տպաւորութիւններն էին պատճառ, որ Ալեքսանդրը առանձին բաւականութեամբ ձգնում էր իր հայրենի վայրերը՝ դէպի այդ մշական աղմուկը, որ քանի գնում սաստկանում էր ու եռում։

Տեսարանը շարունակ էլք փոխվում և մինչեւ Ոսկերչանի տունը պատահում էր մարդկանց թունդ հոսանք։ Ամբողջ շարժումը ներկայացնում էր լարվածու սարքած մեքնայ, որ կարծես բանի էր զցած որոշված նպատակով պը տղաներ ու շարժումներ անելու համար։ Ընդհանուր առմամբ, ծշմարիտ է քաղաքն իր արտաքին տեսքով անմաքուր փողոցներով և խեղդաղ փոշիով մասամբ մի անախօրժ զիծ մտցնում էր Ալեքսանդրի ստացած տպաւորութիւնների մէջ, բայց զա մի աննշան խաղ էր համարվում, որ և կրկին անհետանում էր կառքի անընդհատ հեռանալով դէպի քաղաքի սիրութ։

Ահա նրա կառքը բարձրացաւ կամուրջի վրա, որի տակ հոսող վախտ գետակը ամբողջապէս ծածկված էր զանազան նաւերով, որոնք բեռնաւորված էին զանազան տեսակ չորացած ձբկներով։ Այդ կամուրջի վրա Ալեքսանդրի կառքը

ուղղակի կանգնեց և ճանապարհ տուեց մի երկծի լծած կառքի, որի կառապանը ոչ ոքի վրա ուշ չփառձնելով՝ ուղղակի քշում էր ձիերին։ Ալեքսանդրը աչք զցեց դէպի այդ գետակը։ Նաւերի վրա կենդանութիւնն արդէն դադարել էր. բանւորներն օրվայ վաստակից յետոյ պառկել էին հանգստանալու։ Ոչ կամրջե վրայի դղբոցը, ոչ կից փողոցների աղմուկը, ոչ գետակի թեթև տատանումը չէին խանգարում այդ աշխատաւորների յոզնավաստակ քունը։ Ամեն ինչ այստեղ հանդիստ էր, միայն մի նաւակ ուժգին հարուածներով ճեղքելով գետակի մակերցյթը թեթև թիերով, և խուսափելով բարժաներից, գնում էր դէպի գետակի բերանը—մայր գետը՝ Վոլգան, որ այստեղից գտնվում էր մի քանի սահեն հեռաւորութեան վրա։

Ալեքսանդրի սիրտն այդ պատերի առաջ Ճնշվեց։ Նա մտարերեց, որ այստեղ են կագնում գիւղերից եկած այն նաւակները, որոնցով գիւղացիք բերելով կաթ և մածուն և օրվայ ընթացքում ծախելով իրանց բերքը, գիշերվայ այդ ժամանակ ուղեկորվում են դէպի իրանց գիւղը, որ կրկին բերեն շաբաթվայ մէջ հաւաքածը ու տնտեսածը։ Եւ այդ մարդիկ մի քանի մասեթների համար վստահանում էին զիշերով ընկնել այդպիսի երկիւղալի ճանապարհ։ Նա մինչև անգամ զարմացաւ այդ մարդիկանց վստա-

հութեան վրա։ Ահա թէ ինչերի է մղում մարդուս հացի խնդիրը։ Ի՞նչպէս անեն խեղձերը, երբ այս է նրանց միակ ապրուստի ճանապարհը։ Բայց ով էր հետաքրքրվում այդ խեղձ մարդ կանցով այդ ծով քաղաքում։ Նրանք, ինչպէս մի շիւդ ծովում, գնում են գնում, ուր տանում է հոսանքը, ուր շպրտում է քամին։ Բայց ահա կառքը սլացրեց Ալեքսանդրին և րօպէի տպաւորութիւնը դեռ երկար շարունակում էր նրա մոտատանջութեան առարկայ գառնալ։ Անցաւ աւելի քան կէս ժամ երբ մեր ծանօթ խմբակը հասաւ, վերջապէս, տունն ճական արագ մեր մէջ գոյն գոյն գոյն զգմտեցած զույգ գ.

Սատրախանը փռված լինելով Վոլգա գետի բերանում ուղղակի Եւրոպական Ռուսաստանի սահմանում, տիպիկական ներկայացուցիչ է կէս-ասիական քաղաքի։ Նա շատ հին է։ Մկըդրից նա զրաւել է դէպի իր գիրկը ամեն ազգի ներկայացուցիչներին, որոնք հեշտ հարսանալու տենչով բռնված՝ դիմել են այստեղ։ Սյստեղ կարելի է պատահել և հայի և ռուսի, և թուրքի, պարսկի, հրէայի, լեհացու, գերմանացու, իսկ մի ժամանակ եղել են և հնդկացիք։

Քաղաքը զլիսաւորապէս, շնչում է ձռւկով:  
Խօհապէս ասած՝ Ռուսաստանում Աստրախանը  
դարձել է ձկնորսութեան կենտրոն, որ և մինչև  
այժմ էլ առևտրի այդ ճիւղը կազմում է  
նրա զարկերակը։ Ոյդ հանգամանքի շնորհիւ մի  
եռուն կեանք է այստեղ կազմակերպվել գրեթէ  
այնպէս, ինչպէս մայրաքաղաքներում։ Ոյդ բա-  
նով շատերը պարձենում են։ Սյստեղ գյու-  
թիւն ունեն մի քանի ձնկնորսական ֆիրմաներ,  
որոնք միլիոնների գործ են տիեսնում։ Վաճա-  
ռականների մեծ մասը կրում է ասիական վա-  
ճառականի անշարժ բնաւորութիւնը։ Վերին  
աստիճանի դանդաղիոտ, անշարժ, վախեցող  
րիսկից, տգէտ, մնապարծ։ Ինչ ասել կուզէ, այդ  
բոլոր երեսյթները խոր կնիք են դրել քաղա-  
քացիների վրա։

Հայերը բուն են դրել Աստրախանում շատ  
հին ժամանակներից։ Ճիշտ տեղեկութիւններ  
որանց դաղթականութեան մասին պակասում  
են։ Յայտնի է միայն, որ Անիի աւերումից յե-  
տոյ—1239 թ. Հայերը թողեցին Անին և ու-  
ղեորվեցան դէմքի հիւսիս, Նրիմ, Լեհաստան,  
մի մասն էլ Աստրախան։

1554 թ. Շամախու Հայ կառավարիները  
պատգամաւորներ են ուղարկել Ռուսաստան և  
խնդրելիս են եղել հին առևտրական յարաբերու-  
թիւնների շարունակելու մասին Աստրախանում։

Ուռւսաց պատմագիր Կարամզինն ասում է.  
«Թուրքերը տիրելով Հայաստանին 1262 թ.  
շատ հայեր գաղթեցին այժմեան Աստրախանի  
և Ղազանի նահանգների։» Ուրիշ տեղ նոյն  
պատմագիրն զրում է. «Մամայը կամենալով  
վրէժինզիր լինել ուռւսաց կնեազին՝ Դիմիտ-  
րին, ժողովեց զօրք թուրքերից, չերքէզներից,  
հայերից»... ՎԲ

Բայց այսքանը Ճիշտ է համարվում, որ Պիա-  
րոս Մեծի օրերով հայերն աւելի շատ գաղթած  
լինեն, որովհետեւ այդ կայսրը կամենալով Աստ-  
րախանում ծաղկեցնել վաճառականութիւնը,  
հրաւիրեց հայեր՝ տալով սրանց զանազան ար-  
տօնութիւններ, որոնց հայերը վայելում էին  
մինչև անցեալ դարի 80.-ական թուականները։

Որքան ել հայի անունը դուքս եկած լինի  
վաճառականութեան ասպարիզում, Աստրախա-  
նում գոնէ այդ կեանքը հեռու չի գնացել։

Սյսքանն ուղեղ է, որ վաճառականի տիպը  
կազմում է Աստրախանի հիմնաքարը։ Ամեն մի  
հասարակական գործի ընթացք կախված է որա-  
նից։ Ներկայումն Աստրախանի հայերը, շատ  
քիչ բացառութեամբ, մանր վաճառականներ են,  
որոնք արգէն տեղի են տալիս նոր ֆօրմացիայի  
ներկայացուցիչներին։ Մարդիկ ընկնում են աս-  
պարիզեց և շատերն էլ իրանց գյուլթիւնը  
հազիւ քաշ տալիս։ Սյսքափիները միշտ մեղա-

դրում են հանգամանքը, ժամանակը՝ բոլորովին զլսի չընկնելով, որ մի և նոյն պայմանների մէջ իրանց քթի տակ կան և աջողականներ:

Այդ վաճառականների կարգին էր պատկանում և Ոսկերչեանը: Այն շրջանը, որի մէջ մեծացել է նա, եղել է վաճառական աղաների մի յայտնի շառաւիզ:

Տօր մահից յիշոյ Ոսկերչեանը մնաց գրեթէ առանց կօպէկի, որովհետեւ նրա հայրը վերջին տարիները արդէն աղքատացել էր: Բայց այդ հանգամանքը նրան չվշտացրեց: Նա յոյս էր տածում, որ կարող է հարստանալ: Դեռ պատանի հասակում Ոսկերչեանն աւելորդ համարելով ուսումը, յանձն առաւ իր վրա, առնել վաճառականի անունը և մտաւ մի խանութ ծառայելու: Խանութի տէրը մի անհոգ մարդ էր և գործի գլուխ զրել էր Ոսկերչեանին: Հանգամանքները շատ նպաստաւոր էին: Ոսկերչեանի նպատակների համար: Կարճ ժամանակում նա իր մէջքն այնպէս պնդացրեց, որ կարիք զգաց իր վաղուցվայ փայփայած միտքը զլուի բերելու: Նա բացեց բախկալի խանութ և գարձաւ բախկալչեց:

Պէտք էր տեսնել այդ ժամանակ Ոսկերչեանին, որ իմանալ թէ ինչ նշանակութիւն ունեցաւ նրա համար ինքնազլուխ խանութպանութիւնը: Նրա երեսի վրայից անպակաս էր ուրախ

ժպիտը: Ճակատագիրը կարծես զրան ստեղծել էր միմիայն վաճառականութեան համար: Սկսեցին ասել-խօսել թէ ինչպէս Ոսկերչեանը կարծ ժամանակում կարողացաւ անկախ զիրք ստեղծել: Այդ ժամանակներին, է վերաբերում և նրա ամուսնութիւնը, որ մի շահաւետ միջոց եղաւ նրա առևտրական միտումների համար Կինը բերեց նրա քսակի օգտին 3000 ըռուբլե, որպիսի գումարը Ոսկերչեանը ամբողջովին գցեց իր գործի մէջ: Պատահելիս իր նախկին ծանօթներին, նա աշխատում էր պահել իրան աղայական զիրքի մէջ: Բարեւելիս միշտ Աստծու բարին էր ասում, խուսափելով «բարի լուսից»: Նա այդ անում էր այն մտքով, որ ապացուցի, թէ ինքը չէ առաջին բարեւողը: Այդ ժամանակները նրա կեանքի փայլուն շրջանն էր: Նրա գործը ծաղկում էր և առաջ գնում հսկայական քէր մնում իր աջողութիւնից և տանը մենակ նստած ժամանակ, առանձին բաւականութեամբ ու լրջութեամբ մտքում թւում էր հարուստ վաճառականներին և բաժանում էր նրանց կարգերի: Համաձայն սրանց ունեորութեան: Այդպիսի զբաղմունքների ժամանակ նրա միտքը կանգ էր առնում այս ինչ կամ այն ինչ վաճառականի անցած ճանապարհին, քննում էր պայմանները թէ ինչ միջոցով կարողացել է սա

կամ նա հարստութեան այս ինչ դիրքի վրա  
կանգնել: Եւ երեմն ժամերով անցուդարձ ա-  
նելով իր առանձնասենեակում քըքում էր  
խնդիրներն այդ ուղղութեամբ և զալիս էր այն  
եղակացութեան, որ համապատասխան պա-  
տուաւոր դիրք ստեղծել հասարակութեան մեջ  
կարելի էր միմիայն հարստութիւնով: Այդ նպա-  
տակով նրա աչքերը սկսեցին ման զալ ուրիշ  
գործի վրա: Մի քանի ձկնորսական ֆիրմաները  
նրա աչքից, ինչ ասել կուղէ, չեին կարող խոռ-  
սափել: Լաւ դիտելով և հետաքըրվելով այդ  
խնդրով, նա եկաւ այն եղակացութեան, որ սա  
է միակ օրինաւոր առեւտուրը, որ մարդուն մի  
անգամից ոտքի է կանգնեցնում: Եւ իսկապէս,  
չէ որ մի զիշերում, մի օրում ահազին միլիօն-  
ներ են զուրս բերում գետից: Եւ ով էր այս  
ինչ ֆիրմայի տէրը ձկան առեւտրից առաջ  
ինչ ունէր այս ինչ աղան, երբ դեռ չէր կտած  
այս օրհնած գործին:

Եւ նա մուքում սկսեց թուել միլիօնատէր  
ֆիրմաներին և նրանց հետ համեմատեց իրան  
—ու մի գաճաճ նկատեց իրան այդ հսկաների  
առաջ: Նա այդ առիթով ընկատ խոր մասճ-  
մունքների մէջ: Ոսկերչեանը համեմատեց իր ըն-  
դունակութիւնները և տեսաւ, որ եթէ սա մի  
չնչին միջոց ունենայ, կարող է դիւրութեամբ  
զլուխ բերել այդպիսի մի գործ: Նա այնպէս

վառվեց այդ ցանկութեամբ, որ վճռեց անպատ-  
ճառ զլուխ բերել մի ձկնորսական ընկերութիւն: Ոսկերչեանը հաւատացած էր, որ ինչ չե կա-  
րելի անել միակ միջոցով կարելի է զլուխ բե-  
րել ընկերութիւն կազմելով: Մարդուս կեանքում  
լինում են շրջաններ, երբ բախտի բերմամբ ա-  
մեն մի ցանկութիւն հեշտ է կատարվում: Ոս-  
կերչեանն երբէք չէր կարող երեակայել, թէ  
այնպէս շուտ զլուխ կգայ իր փայփայած ըն-  
կերութիւնը: Նա գտաւ մարդիկ, որոնք ուրա-  
խութեամբ յանձն առան մասնակցել նրա հետ  
այդ ընկերութիւնում: Նա զիմեց իր ազգական  
Բրուկեանին, իսկ այդ վերջինս հրաւելիեց Դո-  
դոշեանին: Բրուկեանի մի աղջկայ հետ ամուս-  
նացած էր Դոդոշեանը, իսկ միւսի՝ Մայիլեա-  
նը — և ահա այդ հանգամանքի շնորհիւ այդ  
մարդիկ մէկ - մէկու հետ կապվեցան և ղեկը<sup>1</sup>  
յանձնեցին Ոսկերչեանին:

Պէտք է ասած՝ Ոսկերչեանը մինչ այդ ժա-  
մանակ արդէն բաւական հմտացել էր ձկան գոր-  
ծին: Բախկալի խանութը պահելով՝ մի և նոյն  
ժամանակ նա կողմանակի կերպով ձուկ էր զր-  
նում, չոլացնում էր և ծախում: Այդ միջոցով,  
ի հարկէ, նա կարողացաւ ի մօտոյ ծանօթանալ  
ձկան գործին, այնպէս որ, երբ զլուխ եկաւ ըն-  
կերութիւնը, միւս ընկերների մէջ սա համար-  
վում էր աւելի հեղինակաւոր անգամ:

Այդպիսով ընկերութեան գլխաւոր գրասենեակը հինգերորդ տարին է, որ գործում է քաղաքի յայտնի փողոցներից մինում:

¶.

**S**օնավաճառից զերադառնալուց երկու օր յետոյ Ասկերչեան - հայրը մի ինչ որ պատուերներ էր տալիս իր որդուն, որը խորասուզված լինելով իր հաշուեպահական մատեանների մէջ՝ նստած էր զրասեղանի առաջ: Ալեքսանդրը խորին դժգոհութեամբ ցոյց էր տալիս իր հազարանդութիւնը և գրի էր անցնում հօր պատուերները:

— Անշուշտ պէտք է այդ հաշեւն աւարտել մինչև նրանց գալը:

Ոսկերչեանն ակնարկում էր ընկերութեան միւս անդամներին:

— Ես խոստացել եմ այսօրվան պատրաստել: — Կէս ժամից արդէն պատրաստ կլինի:

— Այնպէս ես զբել ինչպէս որ ասացի: Ալեքսանդրը զլիի ակամայ և դժգոհ շարժումով միայն դրական պատասխան տուաւ:

Այդ միջոց ներս մտաւ Դօդոշեանը՝ ընկերութեան չորս անդամներից մինը: Տեսնելով Ոսկերչեանին, նաև անհամբեր և արագ քայլերով

մօտեցաւ նրան, սեղմեց նրա ձեռքը, յետոյ այս ու այն կողմը դիտելով, հարցրեց.

— Իե՛ռ չե՞ն եկել: Հա՞ այս րօպէիս իս պատահեցի բօրսայում Ստոլին Փիրմայի գլխաւոր գործակատարին: Նա ձուկ է ուզում, միայն թէ էժան գնով չպէտք տալ, որովհետեւ այս րօպէ լսեցի, որ Յարիցինում ձուկը գնով է: Մուդակը՝ 2 բուրլի 10 կօպէկ պուղն է: Մուդակի ունենք, թէ չէ: Երէկվայ պարտիան ուղարկած է:

— Զէ: Պահելով արա, պահելով արա, շտապել հարկաւոր չէ:

— Դօդոշեանը բաւականանալով այդ տեղեկութիւններով, հանեց մէկ հատ պապիրոս և սկսեց ծխել:

Դօդոշեանը բուն Աստրախանցի էր և բաւականին հարուստ, ինքն աստրախանցուն յատուկ միամիտ, բայց իրան համարող մեծ ընդունակութիւնների տէր և իր հարստանալը վերագրում էր ոչ թէ հանգամանքին և երանելի անցեալին, այլ իր արտակարգ ընդունաթեան: Դօդոշեանը ներկայացուցիչ էր այն տիպերի, որոնք հարստացել են հէնց այն շնորհիւ, որ ապրել են երանելի անցեալում: Խսկապէս ասած՝ Աստրախնում հարուստների մեծամասնութիւնը պատկանում էր հին սերունդին: Մօտաւորապէս 30 տարի առաջ հարստանալը

չափաղանց դիւրին և սովորական երեցիթ էր համարվում: Թօգօշեանը պարտական էր այդ անցեալին: Նա մանկութիւնից սիրեց վաճառականութիւնը: Դեռ անցեալ դարի յշխնական թուականներին նրա մտքում յղացաւ թողնել ծառայութիւնը և կաշել սիփական գործի: Նրա հայրը պարապում էր նաւավարութեամբ: Այն ժամանակները Վոլգայի վրա երեցին առաջին շողենաւները, բայց սրանք այնպիսի նորութիւններ էին տեղական կեանքում, որ սրան կից մի կարծ ժամանակ շարունակվում էր հասարակ նաւավարութիւնը, որով և պարապում էին շատ հայեր: Թօգօշեանի հայրը եղաւ զրեթէ վերջին նաւավարը:

Նաւավարութիւնն այդ տարիները համար վում էր արդիւնաւոր պարապմունքներից մինը: Պուդերով ապրանքները փոխարինում էին տեղից - տեղ, նիմնի տօնավաճառից Աստրախան և այստեղից Կասպից ծովով աւելի հեռու Բաքու և այլն:

Թօգօշեանի հայրը որդուն այդ պաշտօնին չժառայեցրեց. Նա տեսնում էր, որ այս գործը չնորհիւ շոգիի և նորանոր դիւտերի՝ ընկնելու վրա է և հային յատուկ եռանդով թուլացաւ այդ գործից:

Նա չփորձեց նոր ձանապարհի վրա գործադրել իր ընդունակութիւնները, վախեցաւ դեր-

մանացիների ու շվեդացիների մրցումից և լաւ համարեց վախուստ տալ այդ անհաւասար կը-ուուից: Տայի խելքն իր ամբողջ ուժով կորձեց գործադրել աւելի էական ձիւղի վրա: Եւ այդ առաւելութիւնը նա համարեց վաճառականի խանութը, ուր և տուեց որդուն ծառայելու: Ինն երկար տարիներ ծառայեց Թօգօշեանը, որից յետոյ իրան այնպէս զգաց, որ յըս դրեց իր սեփական միջոցներով գուրս գալ ասպարէզ: Նա այդ ժամանակ ունէր մի շնչին գումար, բայց մի տարվայ առևտուլը նրան այնքան միջոց ստուց, որ նա կարիք զգաց դիմել տօնավաճառ: Նրա գնացած տարին նոր տիրել էր Սեւաստապոլի խաղաղութիւնը: Առևտրական աշխարհում մեծ շարժում էր նկատվում և նա կամաց կամաց հարստացաւ: Վերջին տարիները միայն նա թողել էր առևտուրը և ոչընչով չէր պարապում: Միայն սրանից հինգ տարի առաջ նա նորից վառվեց չահասիրական տնչով և մտաւ այդ ընկերութեան մէջ:

— Սրանք այսօր ի՞նչ ու շացան, — վեր կենալով տեղից, մանգալով ասաց Թօգօշեանը:

— Բան ունիք, — հարցրեց Ոսկերչեանը դրդուհութեամբ:

Ոսկերչեանը չէր սիրում Թօգօշեանին նրան չափից գուրս դադարէ մարդ համարելով:

— Զէ, այնպէս եմ հաղցնում:

Այդ միջոց գրասենեակ մտաւ Մայիլեանիր, իսկ նրա ետևից հեալով և անքալով սկսեց քաշէ-քաշ տալ իր ոտները ընկերութեան պատուա-ւոր անդամ՝ Բբուկեանը:

Մակար Իվանիչ Բբուկեանը 65 տարեկան մի չափաղանց գեր մարդ էր: Բնութիւնն առանց խնայելու պարզեց էր նրան մի այնպիսի գերու-թիւն, որ շատ-շատերի ծիծաղն էր գրգռում: Մի թեթև դաղափար տուած լինելու համար նրա կազմուածքի մասին, բաւական է ասել որ նա կը ուժ էր ինն ու կէս պուդ: Այդ գե-րութիւնից նա չէր վշտանում, մինչև անդամ ցանկութիւն էր յայտնում կէս պուդ էլ ծան-րանալ որպէս զի ուղիղ 10 պուդ լրանար:

Միայն նա սիրում էր շատ խօսել: Հնաց այդ էր պատճառը, որ նա մաննելուն պէս սկսեց խօսել: — Ուֆ, ուֆ, ախր ըսկի մեր բանն է ա-ռեարի մեջ գլուխ կոխելը. մարդու զցել էք էլի: Այդ բոլորը սրա ցեցութիւնն էր, — հանաքով մատնանիշ արաւ նա Ոսկերչեանին: — Այ այդ-պէս ամեն օր չարչարփում եմ, հանգիստ չեն տալիս մարդու. առաւօտը՝ էն գլխան, զեռ հին-գը չխփած վեր եմ կացել և մինչև հիմա ոտի վրա եմ... Քանի՞մն է հիմա—տասնըմինը կայ... Հա, դէ հաշուիր, եղայր. ես էլ խօ ջահիլ չեմ: այս տարի Ջրօրհնեքին վաթսուն ու հինգս թամամաւ: Մինչև հիմի տասը մարդու հետ

եմ խօսել: Դուրս եմ գալիս երես լուանալու, տղան եկաւ թէ ձիանքը գարի չունեն, մինչև սրան փող տուի, ձանապարհ զցեցի, շոր լուա-նողը եկաւ. սրանից մինչև նորը ընդունեցի, կեղտոտը տուի, եկան յայտնեցին թէ ձուկ են բերել: Ուղարկեցի այստեղ, չե՞ն եկել:

— Դեռ մարդ չի եկել—ասաց Ոսկերչեանը:

— Երեկի ուշ ես եկել:

— Հինգ ժամիցն է, որ այստեղ եմ: Դուցէ, կրերեն:

— Հա, այդ այդպէս. յետոյ ինչ կայ: Դու ի՞նչպէս ես,— զարձաւ նա Մայիլեանին, — դու էլ նոր ես զալիս. Էն կողմից որտեղց էիր գա-լիս... .

— Բանկից: Փողերս Մօսկվայում իստակ ծախ-սեցի. հիմա պէտք է մայեային կաշնք:

— Հա, Մօսկվան էնպէս տեղ է, որ գնացիր, էնա քիսայիդ բերանը բացիր, փող մի խնայիր: Յետոյ օգուտ տեսա՞ր:

— Թէ Հ... Այդ պրօֆեսորներն էլ բան չեն հասկանում, այնպիսի ծիծաղելի խորհուրդներ են տալիս, որ առանց իրանց էլ հասկանում ենք:

— Ճանաչում եմ, Ճանաչում, — ընդհատեց Բբուկեանը, — 20 տարի առաջ ես էլ դրանց խորհրդին զիմել եմ, ինչ ասեմ, աւելի լաւ է, որ խելքդ ինչ կարում է, էն էլ անես: Մի տարի առացին, թէ ոչ մի ցաւ չկայ, միւս տարի տուե-

ցին ջրեր խմելու, բայց երևակայիր աւելի չաղացայ: Զահիլութիւն էր էլի, ուզում էի միքիւ լզարեմ: Այդ ջահիլ ժամանակվայ արարքը մարդ մի-մի օր միտքն է բերում, ինչ ասեմ, շատ զարմանում եմ, խելք է էլի—բասինչի են ասել ջահիլ... Մարդիկ հազարներ են ծախսում, որ չաղանան, իսկ ես իմ Աստուածանից տուած պարզեից ուզում էի թեթևանալ... Յետք, խօսքդ ասա, Մօսկվայում անձռւները ի՞նչպէս էին...

— էլ մի ասիր օրամշ թափում էր. Էնաթափում էր հա:

— Հենց սրա համար էլ էդ Մօսկվան աչքից ընկած է: Էնա որ անձրւի ձոնդը բացվում է, կապվելու ձար չկայ: Շաբաթներով արևի երես չես տեսնելու Չես հաւատիլ—դարձաւ նա. Դօդոշեանին, — չես իմանում՝ ինչ շըր հագնես, մեջ աշխարհի մնում ես: Տանդ նատած աեսնում ես հիանալի եղանակ է՝ էնի գօրա էլ դուրս ես դալիս. մին էլ տեսար ամպեց. Էնա որ ամպեց, իսկոյն թափում է հանիկարմաղի արտասուքի նման:

— Հա, հա, էդպէս ինձ պատահեց մի տարի նիմնում, — յայտնեց իր հեղինակաւոր կարծիքը Դօդոշեանը, — էնա թքամ ու դուրս եկամ: Մեր տեղը չէ. ափսոս չէ մեր քաղաքը:

— Նիմնան էլ պակաս չէ անձրւի կողմից. էս

տարի ի՞նչպէս էր, — դարձաւ Մակար Իվանիչը Ոսկերչեանին: Ասսա ու նույն ու նույն Ոսկերչեանը, որ գեռ զբաղված էր որդու հետ հայիններով, դժոխութեամբ զլուխը բարձրացրեց և կամեցաւ խօսել բայց սրան ընդհատեց Բրուկեանը:

— Թող ի սէր Աստուծոյ, էդ հաշիւները յետոյ կանես: Պատմիր, տեսնենք, ի՞նչ կար, ի՞նչպէս էր առեւտուրը, մանուֆակտուրան ինչպէս ծախսվեց. հաւատան նիսսեա... Զէ, մօսկվացիների մեջքը կրտսվեց այն օրից, երբ Լօձը դլուխ բարձրացրեց: Ուր գնում ես, Լօձի ապրանքն է, իսկ Պարսկաստանի ապրանքով ի՞նչպէս էին առեւտուր անում: Էս տարի բրինձը լաւ գնով է հենց իմանաս: Ասա զարիբները մեջքները լաւ պնդացրին: Աղբեր, էս ապրանքը ես հաւանում եմ՝ աշխատաւոր, սեմզաւոր ապրանք է. ոչ փշանալ ունի, ոչ հոտել ոչ էլ սեանալ մեր ձուկի նման...

— Էիմի էդ ապրանքումն էլ եղ չե մնացել — յայտնեց իր հեղինակաւոր կարծիքը Դօդոշեանը, — ես էս զարիբների մօտ գնում եմ, տեսնում եմ: Վուղին երեք կօպէկ աշխատանքով սարզա են ծախում: սա էլ առեւտուր է:

— Աղբեր, բէս էս քարի տները ինչպէս են շնորհում: Տեսնում ես, զալիս են մի ինչ որ ջանաղամի տակից, մի երկու տարի կօմիս-

սիայով են պարապում, յետոյ իրանց գործն են  
բացում: Չէ, ինչ ուզում ես ասա, աշխատաւոր  
ապրանք է:

Զարմանալի է մարդկանց հակումը—տեսնել  
ուրիշի շեւղը, իսկ չնկատել իր աչքի գերանը:  
Դօդոշեանը, որ ինքը հարստացել էր զանազան  
անարդար միջոցներով, այդ մոռանալով, այժմ  
քննադատում էր օտարական հայերի հարստա-  
նալու մօտիվները և զլիովին վերագրում էր  
անարդարութեան:

— Իստակ ձանապարհով հիմի փող չեն աշ-  
խատիլ — տաքանում էր նա, — նրանց բանը  
մենք անել չենք կարող: Ապէանք են վերցնում,  
րուբեին 20 կոպէկ են տալիս, հազար մի օյին-  
ներ են հանում:.. Դու կանե՞ս, եղբայր...  
— Հա՞... մռնչաց Բբուկեանը:

— Նրանք հինգ հոգի մի նումրայում են ապ-  
րում, տասը մարդ մի սերտուկով է եօլա զր-  
նում, — շարունակում էր Դօդոշեանը տաքանալ:

Բբուկեանը, տեսնելով որ Դօդոշեանը շատ է  
զբաղվում օտարականներով, ձանձրացաւ և  
խօսքը փոխեց: Նա երբէք չէր կարողանում  
մի խնդրի վերաբերմամբ մի քիչ երկար խօսել.  
Նրա ուղեղն այդ բանից յօդնում էր, այդ պատ-  
ճառով նա շուտ-շուտ թռիչքներ էր անում  
մի հարցից դէպի միւսը, այնպէս, ինչպէս թի-  
թեռնիկը մի ծաղկից դէպի միւսը:

— Յետոյ ի՞նչ կայ Նիմնում, — հարցրեց նա  
կրկին զիմելով Ոսկերչեանին, որն այդ միջոց  
խորասուզվելով հաշուեմատեանների մէջ՝ մի  
ինչ որ բացատրութիւն էր տալիս Մայիլեանին:  
— Եյս բօպէիս, — բարձրացրեց զլուխը Ոսկեր-  
չեանը, — այս բօպէիս վերջացնում ենք:

— Լաւ, լաւ, վերջացրէք, որ գործ ունիք,  
իսկ ես մի կինամ բանկ: Չես դալիս, — դարձաւ  
նա Դօդոշեանին, բարձրանալով տեղից:

— Գնանք, զնանք, ես էլ պէտք է տեսնեմ  
Աբիսողոմեանին. զարմանալի բան է, փողերս չեմ  
կարողանում սազացնել էլի:

Այդպէս խօսելով երկու ընկեր դուրս եկան  
զրասենեակից:

— Դուք, ինդիեմ, վաղինան պատրաստէք հա-  
շեւները, — խօսեց Մայիլեանը, սրանց գնալուց  
յետոյ, — հարկաւոր է այդ վաճառած ձուկի  
հաշեւը յստակել:

Տալով այդ պատռէկը ներ՝ Մայիլեանը դուրս  
եկաւ զրասենեակից:

Մի քիչ անցած ներս մտան երկու մտեմիկ,  
որանք տեսնելով Ոսկերչեանին՝ զլուխ տուեցին  
և անխօս կանգնեցին:

— Հէ, ի՞նչ է, ձուկ էք բերե՞լ  
— Հրամել էք... զլուխ տուին մուժիկները:  
— Նատ լաւ, շատ լաւ, նատեցէք:  
— Ոչինչ մենք կկանգնենք:

— Այդ բոլորը լաւ է, — դորձնական եղանակ  
ընդունելով նկատեց Ռսկերչեանը, — բայց ապ-  
րանքը դին չունի, իմանում էք: Միամիտ մուժիկները, որ հետաքրքրված էին  
միմիայն իրանց ապրանքով, բոլորովին տեղե-  
կութիւն չունենալով բորսայի տրամադրու-  
թիւնից, հալած իւղի աեղ ընդունեցին Ռսկեր-  
չեանի ասածները: Առ այսուհետք մի ու խոյ

Զկնորսական աշխարհում կարմի սովորու-  
թիւն, որ բանւորները ծառայելով միատեղում  
մի տիրոջ մօտ, թէեւ պարտաւորվում էին բո-  
լոր բոնած ձուկը հասցնել այն տիրոջը և սրա  
համար կանխիկ վարձ էին ստանում, բայց և  
ծախում էին ծածուկ կերպով կողմնակի և  
այդ փողերն իրանց սիփականացնում: Թէեւ վա-  
տագայի տիրոջ կողմից լինում է խիստ հսկա-  
ղութիւն, բայց և այնպէս պատահում են, և  
այդ ոչ սակաւ անդամ, ծածուկ փախցնել ապ-  
րանքը և ծախել ուրիշ Փիրմայի:

Ահա թէ ինչ գողնովի ձուկ էին բերել Ռս-  
կերչեանի մօտ: մասն սղմ հացն ՀՅ

Ինչ ասել կուղէ, Ռսկերչեանը աշխատում էր  
գնել էժան գնով: Այդ մտքով նա յայտարա-  
րեց, որ ապրանքը դին չունի, որպէս զի էժան  
կարողանայ գնել:

— Ի՞նչ ձուկ էք բերել հարցրեց նա:

— Սուզակ:

— Շատ է: Ըստ մաս բարս ու սխալը  
— 50 պուդ: առքամ աղոյ սժրուս և զգունք  
— Շատ լաւ: Գինը 80 կոպէկ է, իմանում էք:  
— Շատ էժան է, նկատեցին դժգոհութեամբ  
մուժիկները ծոծորակները քորելով, — զոնէ մի  
լուրիով վերցրէք:

— Ոչ ոչ, աւել չեմ տալ, այդ ձեզ եմ տա-  
լիս, որովհետեւ մշտական ինձ մօտ էք բերում:

Մուժիկները մի քիչ մտքերի փոխանակու-  
թիւն անելուց յետոյ՝ համաձայնվեցին, ծախե-  
ցին ձուկը և գուրս եկան զրասենեակից:

— Կրղրես 1 րուբլի 50 կոպէկով պուզը, —  
գարձաւ նա որդուն բանւորների գնալուց յետոյ:

Այսօր միայն այդ աննշան դէպքն էր. բայց  
պատահում էր, և շատ յաճախ, այդ ձանա-  
պարհով բաւականին մեծ քանակութեամբ ձու-  
կը ձեռք բերել: Խեղճ գիւղացիներին ձուկն առ-  
նելուց խարում էին շատ ակսակ, խարում էին  
գնում, հաշւում, կշռում, բայց, չնայելով

այդ հանգամանքին, այդպիսի բերողների թիւը  
գնալով աւելանում էր: Որովհետեւ Ռսկերչեանը  
գրաւում էր սրանց և նրանով, որ բերած - բե-  
րածը գնում էր և հաշիւն իսկըն յստակում:

Գնելով այդպիսի ապրանք, ընկերութեան մի-  
նին երկու հաշեւ էր տալիս: Ոչինչ նրան չէր  
վրզովմաւմ: ընդհանական այդպիսի դէպքերում  
մի ժաղիա էր փայլում միայն նրա երեսի վրա:

Այդպէս էր այստեղ ամենայն օր սկսվում կեանքը և այդպէս շարունակվում զանազանութիւնը միայն նկատվում էր գոյների մէջ։ Ամենքը վերաբերվում էին այդ երեսյթներին սովորական աչքով։ Միայն Ալեքսանդրն էր, որ չէր կարողանում հաշտվել այդ աշխարհի այդ սովորական կողմերի հետ։

Նրան չէր գուր գալիս սրանց շատ ցինները։ Մանաւանդ հաշտվել չէր կարողանում դրանց մէջ առաջին տեղ բռնող կեղծիքի ռւսութի հետ։ Կօպէկի համար այդ մարդիկ աշխատում էին սրբել ցած բերել եղօրը խարել և, որ ցաւալին է, մօտաւորը խարեւթեան զոհ աւելի հեշտ էր դառնում, բարեկամական միամտութեան զոհ էր լինում։

Մաքուր, անխարդախ առեւարի գէմ միշտ առանձին եռանդով վեճում էր հայր - Ռակեր չեանը։ Երբէք նա չէր կամենում հաշտվել այն մտքի հետ, թէ կարելի էր առեւտուր անել առանց կեղծելու։ Նա միշտ ասում էր, որ մինչև չխարես, երբէք չես կարող մէջքդ պնդացնել մինչև մի սար չքանդվե, մի հոր չել լքցվել։ և կեանքի մէջ նա աշխատում էր չհեռանալ այդ սկզբունքից։ Ալեքսանդրը տեսնում էր, որ բանւորների հետ պայմանը կռելու ժամանակ, աշխատում են խմբագրել այնպիսի կէտեր, որ ստով և զլիով փաթաթվում էր գիւղացին

սրանց ցանցերի մէջ։ Հէնց անցեալ որսի ժամանակ նա նկատեց, որ բանւորներին տալիս էին ստորագրութիւն և այդ նպատակով կազմում էին պայմանագիր, բայց չէին դնում սառրագրութիւնը։ Թէ սա իրանց գրասենեակի գործ չէր, բայց դէպքը տեղի ունեցել էր։ Մի կողմից զիւղացու անտաշ աղիտութիւը, միւս կողմից վաճառականների ծայլայեղ լրտութիւնը չափազանց վերաւորում էին Ալեքսանդրին։ Եւ այդպէս վարվում էր ոչ միայն հայր, այլ և ռուսը, հրեան և հէնց ամեն մի մարդ, ով որ սա էր դնում այդ աշխարհը։ Մի և նոյն մարդիկ զարմանալի կրօնակը էին։ Նրանցից ամեն մէկը ամեն կիրակի պարսք էր համարում դնալ եկեղեցի, նուրիրատուութիւններ էր անում այնպիսի հաստատութիւնների, որաեղեց խոշոր տառերով շնորհակալութիւններ էին տպում, աշխատում էին ծառայել այնպիսի հիմնարկութիւններում, որտեղ կարելի էր ստանալ մեդալներ և խուսափում էին այնպիսի տեղերից, որտեղ իրանց գրպանի օգտին չէր սպասվում ոչ մի կօպէկ։

Ընթերցանութեամբ սրանք չէին հետաքրքրվում և եթէ ստանում էին տեղական թերթը, այն էլ այն նպատակով որ տեսնեն թէ որտեղ ոստիկանութիւնը սանիտարական — առողջապահական օրէնքները խախտելու համար տաւ-

դանելէ, մի հանգամանք, որ շատ էր տեղի ունենում այդ ասպարիզում։ Մի խօսքով ամեն քայլը նպատակ, շահասիրական ձգում, անձնական փառք, պատիւ—ահա թէ ի՞նչ էր այդ աշխարհի նպատակը, դաւանանքը։ Ընդհանուր ձրդումներ դրանց անմատչելի էին։

Ընկերութեան մէջ ամենից շատ համակրութիւն էր վայելում Ռակերենանը, նրա մէջ նկատվում էր առելի եռանդ և նրան պատում էին, իբրեւ այդ ընկերութեան հեղինակ։ Եւ իսկապէս, սա ամենից շատ գործողն էր, ամենից շուտ գալիս էր զլատենեակ, ամենից ուշ զընում էր։ Նա էր ապրանք ընդունողը, վաճառողը։ Միւս ընկերներից եռանդուն կպշել զիտէր Մայթեանը, բայց սա էլ մեծ մասը քաշաքաից բացակայում էր։

Ընդհանուր աղայութիւն վայելում էր թըրուկեանը։ Սրա առաջ առենքը պատկառում էին, որ այդպիսի հարուստ մարդ չի զլացել այդ հատակում ընկերութեան մէջ մտնել։ Բայց յատրում էին նրանով, որ նա կամեցել է փողը բանի զցել և սրանով մի քանի մարդու հացտալ այլ ոչ թէ ուրիշների նման փողի տոկոսով ապրել։ Ոչ ոք չէր բացատրում հոգերանական այն տեսակետից, որ թրուկեանը մօտ կէս դար պարապելով վաճառականութեամբ, այն աստիճան խրված էր այդ աշխարհի տիղմի

մէջ, որ պալսապ լինելը առաջ էր բերում նրա հոգեկան աշխարհում տաղտկութիւն, նցյն խսկակարութիւն։ առ մայխապից ըստ Ամենից շատ տապակվողը Խօզշեանն էր, բայց միշտ անօգուտու։ Նա շատ խօսում էր, շատ զրդում, բայց ձեռքից ոչինչ չէր գալիս։ Նա շատ վախում էր, որ զործի դրած իր գումարը չքսվի։ Նա վարված շահասիրական մենչով՝ մտաւ այդ ընկերութեան մէջ և ամեն ամիս հետաքրքրվում էր հաշուարարական գրքերով և աշխատում էր ստուգել թէ ինչ միաս կամ արդիւնք ունի ընկերութիւնը։

Ահա թէ ինչ էր ներկայացնում Ալեքսանդր Ռոկերենի առաջնրա պաշտօնատեղին։ այսու պահանջարութիւններից մայխամզում լիսի Ա.

**Յ**ուսահատված, յոգնած օրվայ անախորժ տպաւորութիւններից, Ալեքսանդրը վերադառնում էր տուն հոգեկան անտանելի տպաւորութեան տակ։ Օրվայ ընդհարումները, վէճերը ցնցում էին նրա ուղեղը և նրա դիմում դեղերում էին առեւտրական աշխարհի բոլոր բացառիկ, տխուր կողմերը։ Նա մտաւ այդ ընկերութեան մէջ այն յուսով, որ կամաց կամաց կաջողվի նրան համոզել այդ մարդկանց մաքուր առեւտրի առաւելութիւնը։ իսկ այժմ կարծես

Համովլում էր այն մաքի հետ, որ ինքը կատարելապէս անզօր է մի բան անելու. զգում էր իրան թոյլ այդ հսկայական ծուռ հայեացքների առաջ, իսկ թէ ուր և դէպի որպիսի քայքայում էր տանում գործի այդ ուղղութիւնը, — այդ միայն Ալեքսանդրն էր կարողանում զգալ ու հասկանալ:

Ամեն մի քայլ ամեն մի գործ զյվում էր այնպիսի հիմքերի վրա, որ եթէ տեղի ունենար մի թեթև անաջողութիւն, քայքայումն անխուսափել էր:

Բայց ի՞նչ գեր էր խաղում ժամանակը, կարողանում էր արդեօք հասկայնել այդ վաճառականներին իրանց յետամացութիւնը: Ի՞նչ կարող էր անել ժամանակի ողին և պահանջը, երբ գեռ այդ հասկանալու համար պէտք էր սկսել այբբենական ճշմարտութիւնները տարրացնել այդ մարդկանց մէջ: Ի՞նչ կարող է անել կեանքի նոր պահանջը, երբ այդ մարդիկ չեն ուղղում հասկանալ նրան, չնայելով որ այդ շհասկանալու պատճառով չարաշար տուժում են: Քանի քանի վաճառականներ փակել են իրանց խանութները. քանի քանի ձկնորսական վատագաններ ահագին վնասներ են պատճառել իրանց տէրերին նրա համար միայն, որ սրանք մի քայլ առաջ տանել գործերը նոր ուղղութեամբ չեն կամեցել:

Եւ ովկ է մատածում մի նոր հսանկը ստեղծել այս աշխարհում: Ի՞նչ համապատասխան կրթութիւն է արվում սրանց. ովկ է աշխատում սանձահարել շահասիրական ձգտութիւնը. ի՞նչ է անվում այդ ուղղութեամբ: Եւ ի՞նչ կարելի է անել, երբ ամեն քայլում մեծ և ուժեղ վաճառականը ձգտում էր Ճնշել փոքրին, իսկ փոքրը չգիտէր միանալ իր նմանի հետ— և այդպիսով առեւտուրը տեղական վաճառականների ձեռքից ընկնում էր ու քայքայվում իսկ ի՞նչ էին անում մեծ Փիրմանները: Նրանք իրանց զրպանները լցնելու համար աստիճանաւ բար առաջ էին բերում արհեստական թանգութիւն և ձուկի նուազութիւն: Ձուկի պակասութիւններ, արհեստական ոչնչացումը մի սովորական երեսյթ էր համարվում: Դուռ անցեալ որսին Փիրմաններից մէկը միլլիօններով ձուկ էր թաղել փչացրել՝ որպէս զի այդ միջոցով հնար չուայ այդ ձուկին ուրիշի ջրերն անցնելու: Այդ արել էր հետեւեալ կերպով. վատագանն ձուկ էր բռնել անհամեմատ աւել որբան կարող էր նա հաւաքել և փոխանակ գետը յետքաց թօղնելու՝ ձուկի ահագին քանակութիւնը թաղել էր և այդպիսով «ձկային գամբարաններ» էր առաջ բերել: Եւ ի՞նչ է մնաւմ անել այդ տեսակ բարբարոս արարքի գէմ: այդ տեսակ զժոխային վարմունքի

դէմ: Ակամայից մարդու մէջ առաջ են գալիս  
յուսահատութիւն և հաւատի կոյուտս:  
Ծանր և յուղիչ մաքեր: Տ մատուցութիւնը այդ  
Տօնավաճառից վերադառնալուց յետոյ այդ  
կամայական ողուիշխանութիւնը կարծես սաստ-  
կացաւ, գործերն այնպիսի ընթացք ընդունե-  
ցին, որ ընկերութեան կարգադրութեամբ վճռո-  
վեց: Ալեքսանդրին ուղարկել վատագա: Այդ  
առիթը տուել էր այն հանգամանքը, որ Ալեք-  
սանդրի երկու եղբայրը, որոնք մերձաւոր հսկող-  
ներ էին վատագայում, ընդհարվել էին բանւոր-  
ների հետ և վերջիններս դադարեցրել էին որ-  
սալը: Այսաեղից առիթ ծագեց տեղն ու տեղը  
ուժութեամբ անբաւականութիւնները: Ալեք-  
սանդրը կատարեց իր վրա դրած պարտակա-  
նութիւնը և բանից երեաց, որ ամեն ինչ ծա-  
գել է վատագայում ամիրող անշնորհք կարգե-  
րից, որոնց մի անգամից Ալեքսանդրն առաջար-  
կում էր վերայնել:

Երկար վիճարանութեան տեղեք տուին Ա-  
լեքսանդրի առաջարկած նորութիւնները, բայց  
ընկերութիւնը ստիգմած եղաւ ընդունել և ահա  
այժմ Ալեքսանդրն այդ առիթով շուտ շուտ  
գնում է վատագան, շարաթներով մնում է  
այնտեղ և շնորհիւ խելացի միջամտութեան,  
կարծ ժամանակում գործերն ընդունում են սո-  
վորական ընթացք:

Գործերի այդ շարժումը կարծես մի քիչ վա-  
րատեց Ալեքսանդրի ախրութիւնը և նա իրան  
զգում էր մի քիչ միսիթարված: Մանաւանդ  
նա ուրախ է այսօր, որովհետեւ ընկերութեան  
անդամները, բացի իր հօրից, խօսք են տռեել գալ  
վատագա և գլուխ քաշել գործերին և նոր  
կառուցած շենքսերին: Մանաւանդ նրա ներքին  
աշխարհում այդ փափոխութիւնն առաջ էր  
բերել և այն որ այս անգամ հիւր է գալիս  
վատագա և օրիորդ եւգինէն:

Որովհետեւ Սոկերչեանի տունը վատագա գնա-  
ցող շոգնեաւին աւելի մօտ էր, այդ պատճա-  
ռով նշանակված էր այգտեղ ժողովվել:

Հայր-Ասկերչեանն առաւօտը շուառվ արգեն  
գնացել էր զրասենեակ, իսկ Ալեքսանդրը մնա-  
ցել էր տանը և կարգադրութիւններ էր տալիս  
իր երրորդ եղբօրը՝ Ախմօնին:

Այս բօսէ կինաս, կընդունես մեր գնած  
տախտակները, կդարսես բարժա ու իսկցն  
ձանապարհ կընինես վատագա: Այնտեղ սպա-  
սում են տախտակներին: Գէորգին էլ կասես,  
որ մի քիչ ընդունարանը մաքրել ասյ ու պատ-  
րաստի, որովհետեւ այսօր գալու են ընկերու-  
թեան անդամները և օրիորդ եւգինէն: Կրինում  
եմ զարձեալ բանւորների հետ մեղմ վարվեր,  
առանձին կարգադրութիւններ մի արեք: Այս  
անգամ թեթև պրծանք, բայց միշտ այդպէս

չի կարող լինել, Այ, Ն վատագայուս, զիտես  
 ի՞նչ արին բանւոլները, բոլոր վատագան հրդե-  
 հեցին: Զի կարելի շատ կոշտ վարվել նրանք  
 էլ մարդիկ են. Սիմօնն, որ նոյնպէս մի նիհար երիտասարդէր,  
 զլուխը ցած դցած լսում էր եղօր պատուերները,  
 որոնք նրան շատ էլ չէին դուր գալիս, բայց նա  
 ոյլ կերպ վարվել չէր կարող օրովհետեւ Ալեք.  
 սանողը նշանակված էր սրանց վրա առագ: Բայց  
 և այնպէս օգտվելով արիւնակցական յարաբե-  
 րութիւնից, նա վստահացաւ արլարացնել իրան:  
 — Ինչ էլ որ նրանք ասեն, դու պիտի պաշտ  
 պանես մեղ—տասաց նա, — թէ ես և թէ Գէորգը  
 այնքան ոսկոր ենք կոտրում ընկերութեան հա-  
 մար, էլի անբաւական են:  
 — Նու, դու էլի քո երգն սկսեցիր: Հիմա ինչ  
 եղել է, եղել է, քեզ ասում եմ, իմացիր: Այդ  
 տախտակիները պէտք է բանեցնել սեղանստան  
 կտուրի համար, մարդ ենք, ևթէ այսօր չեկայ,  
 ասա Գէորգին, կարգադրութիւն անի, կտուրը  
 ծածկել տայ:

Ալեքսանդրի և երկու եղօր հետ ունեցած  
 յարաբերութիւնները մտերմական չէին, իսկ  
 այդ հանդամանքը լարում էր նրա ջղերը, թու  
 լացնում եռանզը:

Ճանապարհ զցելով եղօրը, նա սկսեց զբաղ  
 վել գնալու պատրաստութիւնով:

Ահա եկան և ընկերութեան անդամները:  
 Սենեակի մէջ իսկոյն աիրեց մի ջրալի կե-  
 դանութիւն:

— Կարծեմ աւշացանք, — ասաց Մայիլեանը,  
 — բայց մեղաւորը մեր Սելիգէյ Խրիստափօրիչ  
 Քօդօշեանն է, մի ժամ է, որ սպասում եմ նրան:  
 — Ես չեմ մեղաւորը, ես էլ սպասում էի  
 Մակար իվանիչն:

— Բայց եթէ իմանայիք, թէ ինչ օյին էլ  
 եկի գլուխս, չէիք մեղագրիլ — ասաց Բաւկ-  
 եանը: — Ես զիշեր տունս գող էր մտել: Դու  
 ասա, թէ ինչպէս էր վստահացել ես որ այդ-  
 պէս հսկում եմ դռներին, երեխ, անիծածը ա-  
 ռաջի իրիկունից էր մտել: Ամա ես էլ ինչ օյին  
 բերի նրա գլուխը կերած հացին փոշմանած  
 կնի: Երեւակայեցէք, անիծածը մտել էր խո-  
 հանոյ, ռանդս որ չտեսաւ՝ սկսեց վիախչել: Ասա  
 ուր ես գնում: Աստուած էնքան շշկացրել էր,  
 որ մտաւ ախոռ...

— Յետոյ ի՞նչ արիք, բռնեցիք, — քաղաքավա-  
 րութիւնից գրգված հարցրեց Ալեքսանդրը...

— Տես հալա... .

— Ճանապարհին, Ճանապարհին կպատմես,  
 որհնած, կուշանանք, — ասաց Դօդօշեանը:

— Զէ, չինք ուշանայ: Քանիսն է ո՞ր...

— Մի ժամ աւել չեմ մնացել, — ասաց Մայիլ  
 եանը:

— Հա. կհասնենք: Ենա՛, տղան էս դողին բըռ-  
նեց—թուրք էր, ջահիլ տղայ, շատ-շատ 20  
տարեկան, չե 25, բայց կերած-խմած տղայ էր:  
Ենա՛. ախմախ տղաս բռնել է, ուղում է տանի  
շատ: Ասացի, աղքեր, շատը օրան ի՞նչ պէտք է  
անի, մի երկու օր պիտի պահի, յետոյ բաց թող-  
նի.—բռնեցի եախայից, մի լաւ ոտ դրի՝ քո-  
թուկի նման զլորվեց: Յետոյ վրան նստեցի՝ դե՛,  
զորս դու պատուիրեցեր—քու փայի միսն այն-  
պէս չեր ջարդի—քիչ մնաց աղիքները փո-  
րեց թափիլին:

Ամենքն սկսեցին ծիծաղել: Դժար չեր պատ-  
կերացնել թէ Բբուկեանի ինն ու կէս պուգա-  
նոց կազմուածքն ի՞նչ պիտի արած լիներ գողին:  
— է՛, խօսքը չի կշտացնիլ. ժաժ էկէք, կու-  
շանանք:

— Աղա՛, ինչ ես շտապում: Ես զարմանում  
եմ քո վրադ, ինն ամիս ի՞նչպէս ես համբերել:  
Ալեքսանդրը և Եղինէն այդ խօսքերի վրայ  
աչքերը ցած զցեցին և սկսեցին ականջ չդնել  
— ես կարծում եմ, որ գնալու ժամանակ է,  
— ասաց Ալեքսանդրը:

Արդէն կէս օրվան մօտ էր, երբ խումբը կառք  
նստելով՝ ուղևորվեց դէպի շողենաւ: Փոքրից  
յետոյ նա մօտեցաւ գետափին և Ալեքսանդրը  
շտապ ցած զալով կառքից՝ վերցրեց Եղինէնի  
ձեռքը և բարձրացրեց նրան շողենաւ:

Ուղեղ սրանց զիմաց փոփում էր նոյն Վօլ-  
գան:

Կէս ժամից յետոյ շողենաւը թողնելով քա-  
ղաքի ափերը՝ սլացաւ գէպի ցած, դէպի ծովի  
կողմը:

Օրն էլ կարծես ժապում էր. աշնան ջերմա-  
ցնող արել և թեթե քամին շոյում էին սրանց  
ինքնասիրութիւնը:

Այդ ժանապարհի վրա էին գանվում Վօլ-  
գայի վրայի յայտնի կապալաջրերը: Էին ժա-  
մանակներն այդ ժանապարհն այն կենդանու-  
թիւնը չեր ներկայացնում, ինչ որ այժմ: Այս-  
տեղ բնակութիւն էին հաստատել Ծուսաս-  
տանի խորքից գաղթած գիւղացիներ. կային և  
տեղական զալմուղներ, որոնք բացառապէս ի-  
րանց ուժը ծառայեցնում էին քաղաքի հա-  
րուստ ֆիրմաներին: Զկնորսութեան շնորհիւ  
այդ ժաշճու ափերում զցյացել էին վատագա-  
ներ, զիւղեր և զիւղաքաղաքներ, որտեղ ծախ-  
սրփում էին միլիօններ, շնչում էր հազարաւոր  
բանակների կեանք:

Այսաեղ էր գտնվում և ընկերութեան վա-  
տագան, ուր այժմ զիմում էր մեր ծանօթ  
խումբը:

Նոգենաւը սլանում էր: Անցյշ քամին և  
ջրային ահազին մակերևոյթը աշխոյժ և եռանդ  
էին պարզեւում Ալեքսանդրին:

— Այս ի՞նչ աւազաններ են — հարցրեց Եւ-  
զինէն Ալեքսանդրին:

— Նօրէլինն է, — պատասխանեց Ալեքսանդրը:  
— Մի քանի տարի առաջ այստեղ ոչինչ չկար,  
իսկ այժմ մի ահազին կօճնիա է՝ խանութով  
ակումբով, զրադարանով և դպրոցով:  
— Ի՞նչով է պարապում:

— Նաւթն է: Բագուխց բերում են նաւթը  
ահազին քանակութեամբ և այդ աւազաննե-  
րում պահում են. իսկ այստեղից մատակարա-  
րում են քաղաքը: Այս, օտարները մեր մեջ  
բան շինեն. . . Այդքան տարի ոչ մի աստրա-  
խանցու խելքից այդպիսի խելօք բան չդուրս  
եկաւ, իսկ մի շվեդացի հազարաւոր վերստերից  
գալով կարողացաւ այդպիսի հարստութիւն  
ձեռք բերել:

Նրանց առաջ փովեցին լայներախ, սպիտակ  
գոյնով ներկած աւազանները:

Եւզինէն մի ինքնարաւական կերպով պի-  
տում էր այդ աւազանները:

— Այս, հսկայական քայլ է:

— Էհ, նրանց բանն ուրիշ է, — նկատեց  
միամստաբար Դօգօշեանը:

— Ինչու պէտք է շվեդացին կարողանայ, իսկ  
մեր աստրախանցին ծանօթ լինելով տեղական  
պայմաններին՝ չկարողանայ, — հարցրեց Եւզինէն:

— Նրանց բանն ուրիշ է, — կարծ կապեց Դօ-

դօշեանը, բոլորավին հրաժարվելով բայցարե-  
լուց՝ թէ ի՞նչու է այդպիս:

— Նօրէլի բախտը բանեց այն ժամանակ, —  
փսփսաց Բրուկեանը, — երբ ուրիշը չկար և նա  
այդպիսով մարդ դարձաւ:

Նրանիք մօտեցան շագենաների մի քարաւանի:

— Այդ ի՞նչ է, — հարցրեց Եւզինէն:

— Արևելքան ընկերութեան քարաւանն է, —  
բայցարեց Ալեքսանդրը:

Հեռում ատատանվում էին մի քանի տաս-  
նեակ նաւեր, բարժաներ, նաւերից մեկի վրա  
բանորները մազութ էին գարդակում, իսկ նաւի  
միւս կողմից երկու բանոր քթոցը լիքը կեղ-  
տոտութիւններով բերին ու շուռ տուին դեար:

Մի խուլ ձայն տարածվեց և ամեն ինչ ան-  
հետացաւ ջրի տակ. մակերեսյթի վրա միայն  
մեաց նաւեթի բաղադրութիւնը որ լուծվելով  
գունաւոր շերտի ձեռվ հոսեց ալիքների վրայով:

— Այս ի՞նչ կեղտոտութիւն է, մի՞թէ թոյլ  
է տրվում գետն ածել այդպիսի կեղտոտու-  
թիւններ, — վրդովվում էր Եւզինէն:

— Ի՞նչ անես:

— Գետը կտանի, կտանի, — խօսեց Բրուկեա-  
նը, — գետը այս չէ որ, ինչ ուզում ես, կտանի.  
Էս վօլգայի ջանը սաղ լինի. . .

— Բայց մի՞թէ այդ նաւթը վնաս չի հաս-  
ցնում ձկներին, — հարցրեց Եւզինէն:

Դուք էլ բժիշկների խօսքն էք կրկնում: Ի՞նչ վնաս: Բժիշկներն իրանց օղակի համար են այդպիսի զյիններ մակոնում: — Խօսեց Դօդոշեանը, — հաւատացէք, որ ոչ մի վնաս չկայ. ձուկը գալուց գալիս է, որ ոչ քո նաւթիցդ է վախում, ոչ կեղտից: Դուք զարմանում էք. եթէ տեսնէք աչքով չէք զարմանալ: Պատահում է ահազին տարածութեան վրա այնպէս խոր ու խիս է գալիս, որ կարծէք կղզի լինի: Այդպիսի մի քանակութեան նաւթն ի՞նչ անի: — Ասենք, նորերո փորձ են արել և ապացուցել են, որ այդ նաւթը վնաս չի տալիս ձուկին, — ասաց Ալեքսանդրը, — բայց ես կասկածում եմ:

— Ես էլ չեմ հաւատում, — ասաց Մայիլեանը: Այդպէս խօսելով՝ նրանք չնկատեցին ինչպէս շոշենաւը մի պայտ գործեց և հեռուից երեկցաւ իրձիթների մի կոյտ: Դա լնկերութեան վատագան էք:

## 9.

**Գ**ալով վատագա, խումբն սկսեց ման զալ և զիտել շնութիւնները: Բոլոր բանւորները ժողոված սպասում էին հիւլիրին: Ամեն

մէկը զգում էր իրան անհանդիսա: Ալեքսանդրի երկրորդ եղբայրն առաջ գալով ողջունեց իսկ ամբողջ գործի գլուխ անցաւ արխմեին, իսկ ամբողջ գործի գլուխ անցաւ արդին Ալեքսանդրը, որ իր այցելութեամբ և միջամտութեամբ մտցրեց բոլոր բանւորների մէջ մի լարված տրամադրութիւն և լրջութիւն: Նրան խկոյն շրջապատեցին և ծառայական դիրք ընդունելով սպասեցին նրա հրամաններին: Եւզինէն դիտում էր Ալեքսանդրի արած կարգադրութիւնները և իր սրտում զգում էր մեծ բաւականութիւն: Նա մի առանձին հաճոյմած բայց գիտում էր Ալեքսանդրի ամեն մի քայլը: Նա տեսնում էր, որ 50 հոգուց բաղկացած խումբը Ալեքսանդրի իւրաքանչիւր խօսքի կարգավորութեան առաջ պատրաստ էր ամեն ծշութեամբ հնազանդվել: Ամեն անգամ, երբ նա մի հարց էր տալիս կամ մի կարգադրութիւն էր անում, խումբը մի առանձին բաւականութեամբ կալչում էր գործին և տուած հրամանին: Մի քանի հարց ու փորձից յետք Ալեքսանդրը և հիւլիրը գնացին դիտելու: Նրանց առաջ զիտի ուղղութեամբ վուգած էին մեծ և փոքր նաւեր: Միայն մի տեղում մի տուն իր վերնա-

յարկով, կարծես, իշխում էր միւսների գիւմայց:  
Սյամեղ էր տեղաւորվում զբասնեակը և ըն-  
դունարանը. այստեղ էին բնակվում և Ասկեր-  
շանի երկու կրասեր որդիքը՝ իբրև վատագայի  
մերձաւոր կառավարիչներ; Սրանից քիչ հետու  
դանվում էին վատագայի միւս շնուածքները՝  
բղուզների (չանների) ամբարները, ձուկ չորաց  
նելու տեղերը, բանւորների բնակարանները, ձա-  
շարանները, սորոնք գեռ կիսաշէն դրութեան  
մէջ էին:

Իսկ դրանց շուրջը բոլորաձեւ ուղղութեամբ  
զրկել էր Վօլգան: Այդ աեղն էր խակապէս այն  
գանձը, սրտեղից հանում էին միլիօնաւոր հա-  
րսառութիւն:

Մարդարածին նուագ զարմանում էր, թէ  
ինչպէս կարող էր այն մի աննշան աեղը պա-  
րունակել իր մէջ այդքան հարստութիւն: Բո-  
լոր տեսարաննը չէր ներկայացնուամ ոչ մի հսկա-  
յական պատկեր, այլ ամեն ինչ անգոյն, սրվո-  
րական մի տեսարան: Շուրջը տիրում էր դրէթէ  
կատարկալ լուսութիւն: Միայն մի կողմում բան-  
տօրները կարկատելով ուսուհանները՝ մի ինչ որ  
երդ էին քրթմնջում: Ոչ մի ընդհանուր ովեռ-  
որդ տեսարան, ոչ մի մարդու հետաքրքրու-  
թեան: յագուրդ առւող բան չկար այստեղ:  
Կարծես մարդու աշխատանքն այստեղ մեռած  
էր և մարդ զարմանում էր, թէ այդ աեղն որ-

քան կոհեների և ընդհարութների անդիք էր  
աւլիս մեր վաճառականների մէջ:

Ի հարկէ, մասնագէտի համար զնահատելի էին  
ոչ թէ արտաքին տեսքը, այլ այն հարստու-  
թիւնը, որ թագցրած է այստեղ:

— Թէ յը որտեղ պատրաստնեք, — հարցրեց  
ծառան Գէորգից:

— Ի՞նչ տեղ կկամենաք, — դիմեց Գէորգը  
խմբին, — սենեակներում, թէ վերնայարկում:

— Մի և նոյն է, մի և նոյն է, — մէջ ընկաւ  
իրուկեանը, — միայն թէ շուտ արա, ծարաւ եմ:  
Այդ ի՞նչ է, դեռ կիսատ է, — դարձաւ նա Ար-  
ևկբսանդրին, ցոյց տալով բանւորների ծաշ-  
րանը:

— Այս օրերս կվերջացնեք: Տախատկները  
բերեց Սիմօնը, — հարցրեց Ալեքսանդրը Գէորգին:

— Այս: Ես այն կողմն եմ զցել տուել:

— Շատ լաւ. բայց ուր է ինքը:

— Ես նրան ուղարկեցի միւս վատագա:

— Ասկ այդ լասար վերջացրած է, — հարցրեց  
Գօդոշեանը:

— Այս: Խաց մե ոչի Նուադիզն չեն պա-  
— Գնանք, տեսնենք:

Նրանք ուղերովեցան դէպի գիտը: Այնտեղ  
աչքի էր ընկնում մի ընդհարձակ ամբար, որ-  
տեղ կանայք տղամարդու շորեր հագած՝ աղջում  
էին ձուկը: Այդ տեղը ձուկն ընդունելու լասան

էր, որ գտնեռում էր ուղիղ գետի վրա, զետի կողմից բացվում էր մի դուռ, նաև աները գտնուի էին, կանգնում էին և այդտեղ էլ ձուկը հշում, ընդունում:

—Միայն զեռ կշռքը չենք փոխել: Ես լուեմ համարում նոր ձեի կշռք գնել:

—Սա ի՞նչ է, եօլա չի տանիլ ի՞նչ է, ունկատեց Թօդօշեանը:

—Զէ, չի, բանի նման չի, —միջամտեց Մայթեանը, —պէտք է անշուշա նորը դնել կեղտոտ է, կարող են տուգանել: Զէ, ես անձամբ շատ բաւական եմ, —ասաց նա, —մանաւանդ մաքրութիւնի օրինակելի է:

—Երէկ մեր դրացի վատագային 500 մանեթ տուգանել են, —ասաց Միմօնը, —բղուղները շատ կեղտոտ են եղել:

—Ի՞նչպէս է ձուկը գալիս, —հարց տուեց Բրուկեանը:

—Առ այժմ չի նկատվում, —ասաց Գէորգը, ահա այդ է մեր հիմիկվայ բռնածը:

Նա ձեռքով ցցց տուց մօտեցող նաւակը, որի մէջ թրփրտում էին մի քանի տասնեակ սաղաններ:

—Ոչինչ ոչինչ այ, կփչի ծովային քամին, —ասաց Մայթեանը, —այն ժամանակ ուրիշ կլիին: Կարծեմ մի բան երևում է, եւ իսկապէս, հարաւից բարձրացաւ մի թե-

թե քամի, որի հարուածները գնալով սաստկանում էին: Խօւմբը շարունակում էր անել իր դիտողութիւնները: Փոքր ինչ հեռու կանայք մաքրում էին ձուկը:

Եւզինէն մօտեցաւ նրանց: Նա զարմացած դիտում էր նրանց ամեն մի շարժումը: Երկու բանեար մի մեծ նաւակից, որի կողքերը կարտած էին, որպէս զի ջուրն անցնի նրա միջավ և մաքրվի, սիւզգաներով հանում էին ձուկը և բերում թափում այդ մաքրող կանանց առաջ:

—Եյդ ձուկը պատրաստում են երկու տեսակ, —բացատրեց Ալեքսանդրը, —խոշոր ահաւկից հանում են փորոտիքը, բաժանում են խաւեարը, իսկ միւս մանր տեսակը տրացնում են՝ առանց այդ պրօցեսը կատարելու: Բայց խընդրեմ, զգոյշ ուսներդ չաղաօտէք, այստեղը թաց է:

Եւզինէն մի քիչ յետ քաշվեց և մեծ զգաւշութեամբ սկսեց դիտել: Թէ կանանց հազիքաթանից կարած տղամարդու շորերը, թէ ձուկին հասցրած հարուածները և փորոտելը մեծ հետաքրքրութիւն էին պատճառում օրիորդին:

—Դիտիր, զիահիր, —մօտեցաւ Մայթեանն, իր աղջկան, տեսնում ես, ձեր պէս կանայք են, բայց ի՞նչպէս են բանում:

Եյդ միջաց մի բանեար անքալով բերեց մի սիւզգա ձուկը, թափեց լաստի վրա և կրկին գնաց զէպի նաւակը:

— Ջուր սրսկի՞ր, ջուր սրսկի՞ր, — նկատեց Ալեքսանդրը բանւորներից մինին:

Երկու բանւոր մօտեցան և սկսեցին ջուր շաղ տալ ձկների վրա: Ձկները թրփրտում էին, բայց կալչելով յատահին, թռուլանում էին և մնում անշարժ:

— Այդ ի՞նչի համար էք ջուր սրսկում, — հարցրեց Եւգինէն:

— Նրա համար, որ ձուկը չնուաղի, չքնի:

— Ի՞նչ ես քնել ընտրութիւն արա, — շտապեց վրա գալ իր կարգադրութիւններով Գէորգը:

— Մի քիչ մեղմ, մի քիչ մեղմ, — նկատեց Ալեքսանդրը:

— Զե, ախր իմանում են, բայց սպասում են, որ ամեն ինչ յիշեցնես:

Բանւորները սկսեցին ջոկջոկել խոչորը մանրից, իսկ կանայք շարունակելով մաքրել ձուկը, անխնայ կերպով թափում էին փորոտիքը և կիսած վօրլան զցում էին մի անւաւոր քարշակների մէջ: Յետոյ մօտեցան ուրիշ բանւորներ և աշխատով տարան զտած ձուկը:

— Այդ ո՞ւր են տանում, — հարցրեց Եւգինէն:

— Տանում են, զցեն բղուղները: Այդ լաւ տեսակն է, սրանց այդպէս են կարօվատ անում: Կամենում էք դնալ տեսնել այդ բղուղները, — դիմեց Ալեքսանդրը խմբին, — այդ արդէն շենած վերջացած են:

— Աղքեր, Էլ ինձ ուր էք տանում, ես շտահ չունեմ, — բողոքեց Բրուկեանը, — զնացէք զուք, ես կդհամ, մի քիչ թէք կընկնեմ:

— Լաւ, կհասնես, Եկ դնանք, ահսնենք, աեսնենք,

— վերցնելով Բրուկեանի թեան՝ տասց Դօղօշեանը:

— Գնանք, այս Էլ տեսնենք, յետոյ... Ես Էլ գալիս եմ: — տասց Մայիլեանը:

Նրանք եկան մի այլ ամբար: Մի արշենաշափ մէկմէկուց հեռու, գետնի մէջ թաղված էին լայներախ բղուղները, որոնց մէջ լցված աղաջրից մի անտխորժ հոտ էր բուրում: Այն բանւորները, որոնք վերցրել էին կտրտած աւ զտած ձկները, բերեցին և իրանց քարշակները շուռ տուեցին դէպի բղուղները: մի և նոյն ժամանակի մի այլ բանւոր երկար թիւն ձեռքին՝ հաւասարեցնում էր ձկան կրյակը:

— Քանի օր է մնում ձուկը սրա մէջ, — հարցրեց Եւգինէն:

— Երկու:

— Օրիորդն ուղում է սովորել: — նկատեց Դօղօշեանը, — ամեն քայլով հետաքրքրվում է: Դուք մնացէք, զիտեցէք, աղքեր, շատ լաւ է, շատ լաւ է, ես Էլ գնում եմ...

— Խնդրեմ, հիմա տեսէք, թէ ինչպէս ենք շնել զրասենեակը և մեր բնակարանը:

Բայց ես կկամենայի աեսնել թէ ինչպէս ես որտում ձուկը:

— Դուք գնացեք, դիտեցէք, — ասաց Մայիլ  
եանը, — մենք կոնանք թէյ խմելու: Շատ լաւ  
է, շատ լաւ է, իմ առանձին բաւականութիւնս  
եմ յայտնում, չգիտեմ միւսներն ինչպէս են  
գտնում, ես շատ բաւական եմ:

— Ի՞նչու չէ, լաւ է, լաւ է, — փափաց Թրուկ-  
եանը, — իմ կողմից էլ յայտնիր: Հալա մի զր-  
նանք, թէյ խմենք: Յետոյ մեղ այսօր ձուկի  
խորոված ուտացնում ես, թէ դարդակ ես ձա-  
նապարհելու:

— Խոնդրեմ, խոնդրեմ, բոլոր պատրաստութիւն-  
ները տեսնված են: Զեղ այս քանի օրը թող-  
նողը չեմ...  
Ընկերները գնացին թէյ խմելու: Իսկ Ալեք-  
սանդրը եւդինէի հետ ուղևորվեցին գէպի գետը:

— Եկէք, ես հէնց ձեր աչքի առաջ զցել  
կտամ ուռկանները:

— Խոնդրեմ, եթէ նեղութիւն չէ ձեղ համար:

— Առանձին բաւականութիւն է մինչև ան-  
դամ:

— Շնորհակալ եմ:

Նրանք մօտեցան գետի ափին: Ալեքսանդրը  
պատուիրեց ուռկան զցել և 15 հոգի բանուոր-  
ներ պատրաստվեցին զործի: Նրանք բոլորն էլ  
զալմուղներ էին, որոնց ցցված այտերը, նեղ ու-  
կեռ աչքերը, կեղաստված շոլերը և բոլոր պատ-  
րաստականութիւնը մի զարմանալի կերպով ար-

տայայտում էին գործելու հռանդ և արամա-  
գրութիւն: Եւզինէն մի առանձին հետաքրքրու-  
թեամբ դիտում էր այդ ջրի ու կեղտի մէջ  
իրանց կեանքը մաշող հլու մարդկանց:

Մի քանի դալմուղ վեցրին ուռկանը, որի  
երկարութիւնը կլինէր գետի մինչև կէսը, իսկ  
լայնութիւնը մինչև խորութիւնը, պցեցին մի  
փոքրիկ նաւակ և սկսեցին սլանալ գետի հո-  
սանքի առաջ: Նրանցից երկուսը թիավարում  
էին նաւակը, իսկ մէկը՝ ուռկանաձիզը զցում էր  
ուռկանը: Այդ գործը նա կատարում էր մի ա-  
ռանձին ձարպիկութեամբ և հմտութեամբ: Նա  
աջ ձեռքով զցում էր ուռկանի մի մասը. իսկ  
ձախով կուչ բերած պահօւմ էր նրա միւս  
մասը և սպասում էր աջ ձեռքի գործողութեան  
և իր հերթին:

Մի և նոյն ժամանակ նաւակը թիավարում  
էին առաջ: Երբ որ այդպիսով հասան գետի  
մէջ տեղը, ձկնորսաձիզը զցեց մայր ուռկանը,  
մատնեան \*), որպիսի գործողութիւնից յետոյ  
նաւակի ուղղութիւնը ծուեցին գէպի ցած և  
սկսեցին ուղևորվել գէպի ափը՝ կազմելով ամ-  
բողջ ձանապարհի վրա մի մեծ կամարաձե-

\*) Մատնեա կոչվում է ուռկանի մէջ տեղում շինած  
մի առանձին տողարակածն ուռկան, որի մէջ և ուղնոր-  
դում է ծուկը: Մենք այդ կոչեցինք՝ մայր ուռկան:

շրջան։ Բանւորներից մէկը մնալով ափում՝  
պահում էր ուռկանի մի ծայրը և երբ որ ուռ-  
կանաձիգը միւս կողմից մօտենում էր ափին,  
այդ բանւորը կամաց - կամաց մօտենում էր և  
գալիս էր առաջ ուռկանաձիգին և այդպիսով  
ուռկանի երկու ծայրերը մօտեցնում էին մի-  
մեանց։ Զուկն ընկնելով այդ կամարաձև ուռ-  
կանի մէջ՝ ակամայից ուղղվում էր դէպի մայր-  
ուռկանը, մատնեան, և մտնում էր նրա մէջ,  
որտեղից արդէն նա դուրս գալու հնար չէր  
ունենում։ Շարունակելով քաշել ուռկանը՝  
դուրս բերեցին մատնեան։ Այդ միջոց երկու բան-  
որ գետի մէջ քաշելով ուռկանը՝ աշխատում  
էին պահել նրա ծայրերը գետի հունին, որպէս  
զի ձուկը հնար չունենայ տակից դուրս գալու։

Բանւորները, որ հագած ունէին կաշուէ շո-  
րեր, դուրս եկան ջրից։ Նրանց վրայից ջուրը  
սկսեց թափվել։ Սփին մի քանի սաժէն չհա-  
սած՝ ուրիշ բանւորներ սիւզգաներով սկսեցին  
հանել ձուկը մատնեայից և ածել պրօրէդ  
(կողքերը կտրտած նաւ), որտեղից բանւորների  
մի այլ խումբ տանում էր փորոտելու։

— Աստուած լաւ որս տուեց, — խօսում էին  
բանւորները, այս ու այն կողմը վազգվելով, —  
ձեր ոտը թեթեւ է։

Ալեքսանդրն ու Եւգինէն երկար նայեցին այդ  
գործողութեան։ Նրանք այնքան հետաքրքրվել

էին այդ գործով, որ բոլորովին մռացել էին  
թէյլ։ Ի հարկէ, Ալեքսանդրի հետաքրքրութիւ-  
նը ունէր աւելի ուրիշ մօտիվ, քան թէ ձկնոր-  
սութիւնը։ Այդ հետաքրքրութիւնը նրա համար  
կազմում էր օրիորդ Եւղինէի ներկայութիւնը,  
որ մի առանձին բաւականութիւն էր պատճա-  
ռում նրան։

Է.

**Ս**րանք մնացին լուռ։ Երկար ժամանակ։  
Վերջապէս, Ալեքսանդրը վճռեց խղել լուռ-  
թիւնը։ Նա բառեր էր պարտում և չգիտէր  
ինչեց սկսել։

— Ի՞նչպէս էք զտնում այդ գործը, — մի բան  
ասած լինելու համար յանկարծ ասաց նա։

— Ես շատ հետաքրքրվում եմ։ Մինչև ան-  
գամ շատ նախանձում եմ ձեզ։

— Ինչո՞ւ համար։

— Ի՞նչպէս. միթէ դուք ինքներդ չէք նկա-  
տում։ Զեղանից կախումն ունի, այսպէս ասած,  
մեքենայի շարժումը. և միթէ բաւականութիւն  
չէ այն, երբ մարզս զգում է, որ մի գործ կա-  
տարում է... Իսկ ի՞նչ ենք մենք՝ կանայք։

— Ձեր ասածներն ձիշա են, բայց մասնաւո-  
րապէս, իսկ եթէ իմանաք մարդ որքան դժուա-

բութիւնների է հանդիպում, մինչև որ, այսպէս առած, ամենահասարակ կարիքները զլուխ է բերում:

Դուք կամենում էք առանց անախորժութիւնների գործ տեսնել.

Երբէք. բայց շատ ցաւալի է, որ մենք սովորած ենք միայն ակամայից գործնական քայլի դիմել: Դուք կարծում էք հէնց այդ աննշան փոփոխութիւնները կմտցնվէին, եթէ բանւորների բողոքը տեղի չունենար: Ուրիշ օրինակ բերեմ: Այստեղ, ուր որ կանգնած ենք, այդ լաստի տակում, գիտէք որքան հաղարներ է փշանում... Ասեմ ձեզ—մեր այդ ջրերում պատահում է սարդինի նման ձուկ. նու, մի խօսքով սարդին է: Ես առաջարկում եմ այդ ձուկը ուսումնասիրել և, եթէ կարելի է, փորձեր անել սարդին պատրաստել ինչպիսին որ ստանում ենք արտասահմանից: Ի հարկէ, զրա համար պէտք է վարպետ բերել տալ կամ թէ զնալ արտասահման այդ գործն ուսումնասիրելու համար: Վերջապէս, ես կամք եմ յայտնել որ ուրախութեամբ կդնամ արտասահման, եթէ ծախսերն ընկերութիւնն իր վրա առնի: Ի՞նչ էք կարծում, ի՞նչ ընդունելութիւն է գտնում իմ առաջարկութիւնը: Բայց ձեր հօրից, մնացածը բոլորը վրաս ծիծաղում են. իսկ Դօլոշեանը, լսէք, ի՞նչ է ասում: «Դու, ասում է, ֆրանցուղ

ես, ֆրանցուղ ֆրանցուղի մսկեր ես առաջարկում, աեղումդ ծանր նստիր, սա մեր բանը չէ. եղածն էլ կառավարենք, այդ էլ բաւական է: Ֆրանցուղի բաներ մեղի հարկաւոր չեն: Տեսնում էք, մարդ ծաղը առարկայ է դառնում: Իսկ այդ ձուկի ահազին քանակութիւնը փչանում է հէնց այդ լաստի տակում...

—Այո, շատ հասկանալի է, որ այդ մարդկանց գժուար է մի անդամից բան հասկացնել: Մրա համար ժամանակ է հարկաւոր, բայց այն էլ միսիթարական է, որ մի քայլ էլ է անում են:

—Ներեցէք, ասեմ ձեզ, որ առեւտրի մէջ կրիայի քայլերով գործ տեսնել չի կարելի: Ամեն բօպէից, դէպքից պէտք է օգտվել: Դուք ասում էք ժամանակով բայց, գիտէք, ժամանակով ի՞նչ կարող է լինել: Այժմ մերոնց բախտն է, որ մեր քաղաքը կապված չէ երկաթուղով բայց հէնց զլուխ է եկել երկաթուղին, կզան եւրօպացիք և իրանց ձեռքը կառնեն մեր ձուկի գործն էլ ինչպէս այդ արել են Բագուի նաւթը: Իսկ այդ շատ հեշտ կարող է լինել: Զէ, ի՞նչ ուզում էք ասէք, մենք հայերս ընդունակութիւն չունենք առեւտրի մէջ: Հա, դուք ուզում էք ասել որ հայերը հին ժամանակներից յայտնի են իբրև ճարպիկ վաճառականներ. դուցէ մեղանից մի քանի սերունդ առաջ այդպէս

եղել ին, չգիտեմ, բայց ոչ այժմ: Մերոնք չզիտեն ընթանալ ժամանակի հետ:

Եւգինէն այլ ևս չվեճարանեց, միայն ասաց, որ այսուհետեւ նա շարունակի նոյն եռանդով, գործից չսառչի, դժուար րօպէներում յիշել իր խօսքը, որ պէտք է չսառել այլ գործել: Յիշել, որ ինքն էլ ամեն բաւականութեամբ ինուիրվէր գործին, եթէ թոյլատրվէր:

Այդ անմեղ խորհուրդը միացած նրա թախծալից երեսի արտայայտութեան հետ՝ մի աշխոյժ և եռանդ տուեց Ալեքսանդրին: Նա իրան այժմ շատ բաւական համարեց, տեսնելով գնահատված այդպիսի օրիորդի կողմից:

Մինչեւ անգամ նրա մեջ ցանկութիւն յղացաւ մի անգամ էլ տանել ման ածել և կրկն ցցց տալ իր եռանդի շնորհիւ գլուխ բերած գործերը:

— Ես ձեզ վաղը ցցց կտամ ճաշարանները, եթէ կուզէք:

— Շատ ուրախ եմ: Կամենաք, հենց հիմա:

— Ոչ այժմ ուշ է, գնանք թէյ խմելու, ընթրիքն էլ պատրաստ կլինի:

— Ինչպէս կկամենաք:

Նրանք գնացին դէպի սեղանատուն:

— Դուք այսօր ինձ մեծ բաւականութիւն պատճառեցիք, — ասաց Ալեքսանդրը ճանապարհին:

— Ի՞նչով:

— Նրանով, որ արժան համարեցիք այդպիսի ուշաղութեամբ գնահատել իմ արածները:

Եւգինէն մի սիրալեր հայեացք գցեց Ալեքսանդրի վրա: Նրա յարդեայ զլսարկը հովանաւորելով զլուխը, մի տեսակ զրաւչութիւն էր պարզեւում նրա սիրուն երեսին, որ այդ միջոցին արտայայտում էր ներքին խաղաղ բնաւորութեան մի ակներև գիծ:

Այդ անմեղ հայեացքն արժանացաւ Ալեքսանդրի առանձին ուշաղրութեան: Նա այժմ զգաց, թէ որքան միսիթարված է զգում իրան, երբ տեսնում է իր մօտ իրան հասկացող և տպաւորութիւնները բաժանող մի խօսակից:

— Եթէ դուք թոյլ տայիք, ես մի առանձին յարգանքով կկամենայի գնահատել ձեր խօսքերը:

— Բոլորօվին զուտ ծշմարտութիւններ են իմ ասածները:

— Իսկ ես ինձ շատ երջանիկ կհամարէի, եթէ այդպիսի ճշմարտութիւններ յաճախ լակուրախուտ ունենայի:

Եւգինէն չպատասխանեց: Նա արագացրեց իր քայլերը: Երեւում էր, որ այդ խօսքերը օրիորդն ընդունեց իր սրտին շատ մօտ: Այդ նկատվում էր նրա երեսի վրա սահող շառագումից: Այդ ժամանակ նա կարծես մոռացաւ Ալեքսանդրի

և իր մէջ եղած եղայրական յարաբերութիւնները: Բայց այդ րօպէական կիրքը նա շտապեց խլացնել և թաղել արտայայտվող լոռութեան մէջ:

Բայց երբ լոռութիւնը սովորականից երկար թվաց նրան, նա արագացնելով քայլերն՝ ասաց.

—Գնանք շուտով, մեզ կսպասեն թէյի:

—Իսկ ես կիամենայի ձեզ հետ դարձեալ մի քիչ զբունել: Մենք ձեզ հետ համարեա նոր ենք տեսնվում: Զէք կամենալ այն կողմն անցնել:

Ալեքսանդրը ձեռքով ցոյց տուեց հեռուն: Նրանց առաջ ամբողջ տարածութիւնը ծածկված էր կանաչով. իսկ ետեից հասնում էր Վոլգայի թարմ և կաղդուրող զովութիւնը:

—Եկէք, գնանք, —կրկնեց Ալեքսանդրը իր առաջարկութիւնը:

—Ուրախութեամբ կդայի, բայց շատ ենք ուշացել: Կարող է մեր ուշանալն աչքի ընկնել: Ուրիշ անդամ:

—Ե՞րբ: Դուք վաղը գնում էք, իսկ ես պիտի մնամ այստեղ դարձեալ մի երկու շաբաթ:

—Գուցէ, վաղը կմնանք:

Նրանք մօտեցան պատշգամբին: Ընկերութեան անդամները թէյը վերջացնելով՝ դուրս էին և կել հովանալու:

—Մենք արդէն թէյը վերջացրինք, —ասաց Թօդօշեանը, —դուք նոր էք դալիս:

Ալեքսանդրը շատ նեղացաւ այդ անտեղի պատահմունքի վրա, բայց քաղաքավարութիւնից ստիպված՝ ծածկեց իր բարկութիւնը և սկսեց բարձրանալ պատշգամբը:

—Զահիներ են, ջահիներ են, —ասաց Բբուկեանը գլխարկով հովանաւորելով երեսը, —ես նրանց հասակին թէյ էլ չէի խմում: ՈւՓ, այդ ինչ շոդ է. չեմ իմանում, ինձ պէս շոգող էլի կայ աշխարհիս երեսին: Դուք, Եւգինէ, ինչպէս երեսում է, չէք շոգում:

—Եյժմ բաւականին հով է, ի՞նչու. այնքան էլ շոդ չէ:

—Ի՞նչ է, ձուկ որսան էլք նայում, —դիմեց իր աղջկան Մայիլեանը:

—Եյն, հայրիկ, և որքան հետաքրքիր է, ես այդպէս չէի կարծում: Ես, հայրիկ, կկամենայի մի անգամ էլ տեսնել:

—Վաղն առաւօտը շուտ վեր կաց, կարող ես տեսնել:

—Ուռաւօտը կորսան:

—Սովորաբար երկու անգամ ենք ուռկան գցում, —միջամտեց Ալեքսանդրը, —առաւօտը կանուխ և երեկոյեան, երբ արեգակ չի լինում:

—Գնացէք, գնացէք, թէյ իմէք, —ասաց Թօդօշեանը:

—Իսկ ես, աղբեր, քաղցած եմ: Ալեքսանդր,

մի տեսնեա, թէ ի՞նչ եղաւ խորովածը: Սիմօնը  
գնաց ու մնաց:

Ալեքսանդրը գնաց խոհանոց: Այլ ևս նրան  
չյաջողվեց մենակ մնալ Եւզինէի հետ: Թէյլ  
շտապ խմելով, նա նստեց ընթրիքի, որի ժա-  
մանակ Բբուկեանը շարունակ իր սրախօսու-  
թիւնն էր անում, իսկ Դօգօշեանն ընտրել էր  
լաւ մասը՝ շարունակ կոնծում էր և ուտում  
ձուկի խորովածը: Բնթրիքը տեսց բաւականին  
երկար, գրեթէ մինչև 12 ժամը գիշերվայ, որից  
յետոյ հիւրերը ցրուեցին քնելու:

Մենեակի մէջ փոքրիկ լամպան տարածում  
էր իր մռայլ լոյսը: Շուրջ մենեակներում տի-  
րել էր խաղաղութիւն: Ըստ երեսյթին, ամենըը  
քնել էին:

Զէր քնած միայն Ալեքսանդրը: Նա գեռ օր-  
վայ տպաւորութիւնների տակ էր: Ամեն րօպէ  
նրա երեակայութեան մէջ կենդանանում էր  
Եւզինէն: Այսօրվայ խօսակցութիւնից յետոյ  
նրա զլիսով անցաւ նոր միտք, թէ ի՞նչ կլե-  
նէր, եթէ Եւզինէն լինէր հեռու, անծանօթներից  
մէկը: Եւ նա սկսեց նկատել որ օրվայ խառն  
ի խուռն տպաւորութիւնների ֆօնի վրա մի  
փայլուն գիծ կայ միայն և այդ—Եւզինէն է:  
Արդիօք նոյն քաղցր տպաւորութիւնը ինչ որ  
թողել է Եւզինէն, փոխաղարձարար զգում է  
ինքն օրիորդը, թէ ոչ—ահա թէ ի՞նչ խնդրի

շուրջը Ալեքսանդրը կենարոնացրեց իր ուշա-  
դիութիւնը: Այդ միտքը հանգստութիւն չէր  
տալիս նրան:

Նրա ուշքն ու միտքը զրաւված էր Եւզինէի  
հետ ունեցած խօսակցութիւնով: Ալեքսանդրը  
շատ անգամ խօսակցել է Եւզինէի հետ, բայց  
ի՞նչու միայն այս անգամվայ խօսքն ու զրոյցն  
այդպէս խոր են տպաւորվել նրա զլիսում: Ի՞ն-  
չու միայն այս անգամ նա սրտի մէջ զգում է  
մի այրոց, որից և ամբողջ մարմնով տարած-  
վում է մի տեսակ ախորժ զգացմունք:

Ուղեղ Ալեքսանդրի առաջ գանվում էր այն  
սենեակի դուռը, որտեղ առանձնացել էր Եւզի-  
նէն հանգստանալու: Ալեքսանդրն աչք զցեց  
այդ գռնին և մի ինչ որ փոթորկալեց ուրա-  
խութիւն տիրեց նրա սրտին: Նա չհամբերեց,  
մօտեցաւ այդ գռնին. այդտեղ կանգնեց և սկսեց  
ականջ զնել: Իսկ զռան ետեից հասնում էին  
մի ինչ որ շարժումների ձայներ և շշուկ: Ըստ  
երեսյթին, Եւզինէն զեռ չէր քնել:

Այդ ձայները տիրապետեցին Ալեքսանդրի հո-  
գուն և նա լարելով իր ուշադրութիւնը՝ շնչա-  
սպառ սկսեց ականջ զնել: Բայց ահա և վեր-  
ջին ձայներն էլ կտրվեցան, նա հեռացաւ զռնից  
և խորասուզվելով իր մաքերի, իր ցնորքների  
մէջ, սկսեց ականջ զնել իր սրտին... Իսկ այդ-  
տեղ այդ բարախող սրտում, մի զօրեղ մղու-

մով զլուխ էր բարձրացնում մի ցանկալի և  
երջանկութիւն յուսադրող տենչանք...

Նրա միաքը սլացաւ գէպի հեռաւոր ապա-  
գան—և այդ հեռանկարի մէջ նա զրեթէ մինչև  
առաւօտ գծադրում էր իր ապագայ երջանկու-  
թիւնը և բախտաւորութիւնը:

## Ը.

Աւելքսանդրի մէջ արթնանում էր մի զգաց-  
մունք, որի ալեհոծման տակ նա ճնշվում էր:  
Որքան նա կամենում էր վանել այդ ցնորքները,  
բայց չէր կարողանում:

Նա նկատում էր, որ այժմ կայ միայն մի  
անձ, որի մասին մտածելուց, նա առանձին  
քաղզրութիւն է զգում; ամբողջ էռթեամբ  
ձգտում է դէպի այդ անձը, դէպի նրա փայ-  
փայանքը, ձգտում է նրա սիրոյ մէջ որոնել  
ընդհանուր պատկերներ:

Այս, Ալեքսանդրի մէջ արթնացել էր սէրը և  
այն էլ առաջին երիտասարդական սէրը:

Բռնված այդպիսի յօյզերով, նա ձգտում էր  
դէպի եւդինէն: Նա շարունակ որոնում էր ա-  
ռիթներ պատահէլ օրիորդի հետ, բայց այդ չէր  
աջողվում նրան: Միւս օրը, ծիշտ է, եւդինէն  
մնաց վատագայում, բայց Ալեքսանդրին չաջող-

վեց գործից աչք բացել և մենակ մնալ իսկ  
երրորդ օրը խումբը վերադարձաւ քաղաք: Ան-  
ցաւ ամբողջ երկու շաբաթ և այդ երկու շա-  
բաթվայ մէջ ամեն օր, զրեթէ առաւօտից մին-  
չև երեկոյ, Ալեքսանդրը թէե նուիրվում էր վա-  
տագայի գործին, բայց ձեռքը բանի չէր գնում:  
Եւդինէի գնալուց յետոյ նրա ջերմ վերաբերու-  
մը գէպի գործը, կարծես, մի անգամից սպան-  
վեց: Խորին անհամբերութեամբ և տիրութեամբ  
սպասում էր նա քաղաք վերադառնալուն:

Միայն երկու շաբաթից յետոյ Ալեքսանդրը  
վերջնականապէս կարգի բերեց վատագայի գոր-  
ծերը և վերադարձաւ քաղաք:

Գալուն պէս՝ նա զնաց օրիորդին այցելութիւն:  
Ալեքսանդրը նստած Մայիլհանց տանը՝ ծը-  
խում էր: Եւդինէն տանը չէր, միայն նրա հօ-  
րաքոյր տ. Շուշանն էր, որ զբաղեցնում էր Ա-  
լեքսանդրին: Տիկինը պատմում էր նրան օրվայ  
մի ինչ որ հրատապ խնդիր, բայց Ալեքսանդրը  
վառված լինելով օրիորդի կարօտով և ուշքով  
դեղերելով ուրիշ մթնոլորդի մէջ, բոլորովին  
չէր լսում տ. Շուշանի պատմածները: Եւ երբ  
որ օրիորդը ներս մտաւ և աշխոյժ կերպով դիմեց  
Ալեքսանդրին, ողջունելով նրա գալուստը, Ա-  
լեքսանդրը զգաց իր մէջ միաժամանակ երկու  
տարբեր զգացմունք. մէկ՝ որ նա տապակվելով  
կարօտից, կամենում էր մնալ մենակ և բացա-

տրել նրան, թէ որ աստիճան զժուար էր և  
անտանելի այդ երկու շաբաթվայ բացակայու-  
թիւնը, երկրորդ՝ ուրախացել էր, որ վերջապէս  
տեսնում է իր սիրած առարկան, իր սիրած  
անձնաւորութիւնը: Նրա սրտում մի աւելորդ  
անդամ վառվեց ցանկութիւն, որ առաջին հետո  
յարմար րօպէում բաց անի իր սիրու օրիորդի  
առաջ և յայտնի նրան, թէ ոքքան ժամանակ  
է, որ եռում է նրա կրծքի տակ մի նոր քաղցր  
զգացմունքի վառ ցանկութիւն... նա սպասում  
էր այդ յարմար րօպէին, բայց օրիորդն ամ-  
բողջ ժամանակ չէր հեռանում ա. Շուշանից  
և պատմում էր նրան, թէ ի՞նչ է տեսել ում  
է պատահել դրօսավայրում և այդ անում էր  
նա այնպիսի քաղցրութեամբ և զրաւչութեամբ,  
որպիսին Ալեքսանդրի նկատմամբ նա երբէք  
չէր արած: Պատահեցաւ, որ օրիորդի հայեացքն  
ընկաւ Ալեքսանդրի երեսին. Եւզինէն նկատեց,  
որ այդ խօսակցութիւնը չի հետաքրքրում Ա-  
լեքսանդրին և նա թողեց ու հեռացաւ դահլիճ:

Յանկարծ դահլիճում թնդացին դաշնամուրի  
ակնորդները: Եւզինէն նստել էր գործիքի ա-  
ռաջ և նուազում էր Chopin-ի նօկտիւրնը:  
—Ի՞նչու չես անցնում դահլիճ, —ասաց ա.  
Շուշանը, —գնա, գնա, ջահիլներ էք, զբաղուե-  
ցէք, ինձ մի նայիր, ևս այս րօպէ նստում եմ  
կար ու կարկատանի:

Ալեքսանդրն անցաւ դահլիճ: Եւզինէն նստած  
դաշնամուրի առաջ, ազատ կերպով խաղացնում  
էր իր մատները դաշնամուրի ստեղանքի վրա:  
Տեսնելով Ալեքսանդրին՝ նա մի քաղցր հայեացք  
դցեց նրա կողմը և շարունակեց նուագելը:  
Ալեքսանդրն ընդունել էր մի այնպիսի ձըն-  
շուած տեսք, որ օրիորդը կիսատ թողնելով  
կտորը, հարցրեց.

—Ի՞նչ է եղել ձեզ, որ ոչինչ չէք խօսում:  
Երկու շաբաթ է, որ չէք պատահել միթէ չու-  
նիք նորութիւն:

—Շատ բան ունիմ, Եւզինէ:

—Օրինակ:

Ալեքսանդրը լոեց: Եւզինէն դցեց իր աչքերն  
Ալեքսանդրի երեսին: Ալեքսանդրը մօտեցաւ օ-  
րիորդին այն աստիճան, որ զգում էր նրա  
մարմնի թարմութիւնը, անոյշ բոյրը: Նրա սրտի  
մէջ վառվեց մի կախարդական զգացմունք, ա-  
րիւնը եռալ սկսեց: Մի քանի րօպէ առաջ նրա  
մաքում ծագած վստահութիւնը, որ առաջին  
յարմար րօպէում բաց անի օրիորդի առաջ իր  
սիրու, անհետացաւ, ինչպէս ծուխն օդի մէջ:

—Մի բան կայ, որ ծածկում էք, ասացէք,  
մի ծածկէք...

Բայց յանկարծ օրիորդի ձայնն էլ դրդաց և  
նա ցած դցեց իր սիրուն աչքերը: Նա արդէն  
զուշակում էր, թէ ի՞նչ բանի առաջ է կանդնած.

Ալիքսանդրի միտքը և նրա երեսը թեթև շառագունեց:

Ոչ մի խնդիր մարդու համար այնքան ծանր չէ հաղորդել որքան սէրը և ահա այդ հանգամանքն էր, որ երկուսի լեզուներն էլ մի րօպէ կապեց—և երկար ժամանակ ոչ մինը նրանցից չէր վստահանում խօսք բացել չնայելով որ երկուսի համար էլ արդէն պարզ ու ակներև էր, թէ ի՞նչի են կարօտում այդ սրտերը:

—Ուրիշ անգամ... ես ձեզ եւգինէ, ունիմ հաղորդելու մի նորութիւն և, եթէ թոյլ կտաք, և չէք նեղանալ...

—Այդ ի՞նչ բան է, որ պիտի նեղանամ:

—Ոչ եթէ միայն խօսք կտաք:

—Ցոյս ունեմ, որ դուք չունէք մի այնպիսի խօսք, որ վերաւորանքի տեղի տար:

—Կինում են բուքէներ, երբ ես տանջվում եմ, չարչարվում եմ միայն նրանով, որ չեմ տեսնում ձեզ. Այս երկու շաբաթվայ բացակայութիւնն աւելի որոշեց իմ հոգու աշխարհը: Երեկոները, երբ մութը պատում էր երկիր, ես շտապ մտնում էի անկողին, որ ինձ չտանջէ այդ միտքը: Ա՛խ, եւգինէ, միթէ կարելի է այդ բոլորի բացատրութիւնը տալ. պէտք է կրել այդ տանջանքը... Ա՛խ, ոչինչ ես չէի ցանկանալ միայն թէ նոյն զգացմունքը դուք էլ զգայիք, որպէս զի իմանայիք...

Նրա ձայնը խղվեց և նա չկարողացաւ շարունակել:

—Ո՞րտեղից գիտէք, որ ես չեմ զգացել — հանդարդ նկատեց եւգինէն — և նրա ձայնի մէջ ևս լսուեց մի գողղոջիւն ելեէծ, իսկ աչքերի արտևանունքը թեր ուղղութիւն սասացան: —Բայց, ափսոս, ափսոս, ես ձեզ չեմ կարող ասել չեմ կարող ասել զուցէ հէնց այն պատճառով որ դուք կարող էք թոյլ չտալ... Օ՛, եթէ իմանայիք, որ ինձ թոյլ կտրվի... Ի՞նչ կլինէր որ:

—Այն ժամանակ ես կատէի այն, կբացէի այն գաղտնիքը, ինչ որ շարունակ կոծում է իմ միրաբը: Եւգինէն ուղղակի նայեց Ալիքսանդրին, յետոյ վեր կացաւ գաշնամուրի առաջեկց և մկանց ման գալ գահինեռում: Նրանք սկսեցին միասին անցուղարձ անել:

Առաջին անգամ իր կեանքում եւգինէն զգաց, որ խօսում է մի մարդու հետ, որը հասկանում է նրան: Առաջին անգամ նա նկատեց, որ այդ մարդու խօսքերի մէջ շնչում է ինքը կեանքը: Մինչև այսօր նա չէր սպասում, որ երբ և իցէ կտանվի մի մարդ, որին կարողանայ հազորդել այն ամենը, ինչ որ եռում է նրա մէջ և ինչ որ նա համարում է սուրբ: Իսկ այժմ եւգինէն տեսնում է իր առաջ կանգնած իրան

Հասկացող մի անձ... Այժմ նա գտնում է, որ եթէ Ալեքսանդրի ուշադրութիւնը չլինէր դարձրած նրա վրա, նա չէր կարող հասկանալ կեանքի քաղցրութիւնը: Եւ այդ մտածողութիւններից յետոյ Եւզինէի առաջ պատկերանում էր մի երջանկութիւն, մի բախտ, որ կարծես արեգակի լուսի ու ոսկեփայլ ճառագայթների պէս ջերմացնում էր նրան:

Եւ այդ րօպէները նրա մէջ առաջ բերին մի կատարեալ յեղափոխութիւն: Նա մինչև կեանքի վերջը չի մոռանալ ներկայի քաղցր և խոր յուղմունքը: Այն թանգ զգացմունքը, որ վառեց Ալեքսանդրը նրա սրտում, շանթեց նրան ամբողջապէս: Եւզինէն զգաց մի եռման լաւայի հոսանք իր երակներում: Նրա հոգուն և սրտին տիրեց մի բուռն զգացմունք, որին յաղթել այնքան էլ հեշտ չէր: Նա մօտեցաւ Ալեքսանդրին և այնքան մօտ, որ կարծես կամենում էր դիմչել նրա ձեռքին, բայց յանկարծ զսպեց իրան և յաղթելով իր յուղմունքին, ասաց.

— Ես ձեղ հասկացայ, Ալեքսանդր, բայց ձեր արած ու մտածած քայլը, իսկապէս ասած՝ սխալ քայլ է: Դա անկարելի մի բան է և, վերջապէս, կարող է անախորժութիւնների տեղեք տալ մեր ընտանիքներում: Ճիշտն ասած՝ տիսուր չեմ, որ արժանացել եմ ձեր պէս իրիտասարդի ուշադրութեան: Իսկապէս, ես ոչ ոքի հետ

չեմ զգում այն թեթևութիւնը, ինչ որ ձեղ հետ...

Նրա լեզուն դաւաճանեց. քիչ լուսութիւնից յետոյ նա դարձեալ շարունակեց.

— Ի՞նչ ծածկեմ, ես միայն ձեղ հետ կարող եմ այդպէս սրտէ ի սիրտ խօսել, որովհետեւ ես իմ կեանքում չեմ պատահել այնպիսի մարդու, որ ձեր պէս ինձ հասկանար: Ես հաւատում եմ, որ միայն դուք կարող ելք ստեղծել այն մթնոլորդը, որտեղ ես աղատ կշնչի. . .

Օրիորդն այնպէս յուղվել էր և այնպէս լարվել որ չէր կարողանում հանգստանալ: Եւդինէն ներկայացնում էր մի այնպիսի բնաւորութիւն, որ ստկաւ է խօսում, ծածկում է իր սրտի խորքում իրան տանջող միտքը, բայց երբ որ մի անգամ խօսում է, այլ ևս չէ կարողանում ծածկել իր սրտում ոչ մի կայծ: Ամենայն բաւականութեամբ նկատելով Ալեքսանդրի սիրալիք հայեացքը և կատարելապէս հասկանալով, թէ նա ինչ է ուղում ասել նա զգում էր մի պահանջ՝ ասել այն ամենը, ինչ որ մինչև անգամ այժմ նրա մէջ կուտակված է եղել:

— Ես գիտեմ, որ այդ բանն երբէք գլուխ գալ չի կարող բայց ես խոստանում եմ սուրբ պահել իմ մէջ այդ փոխադարձ զգացմունքը և ոչ ոքի առաջ վաճառ չհանել նրան:

— 0՝ ես կարծում եմ, Եւզինէ, դժուար չէ  
մեզ հեռացնել այդ արգելքը: Իսկապէս ասած՝  
մենք այնքան մօտ աղջականներ չենք, որ այդ  
լինի առիթ մեր երջանկութեան խանդարման:  
Միայն դուք մի կտրէք այն յոյսից, թէ երբ ե  
լոցէ ես կարժանանամ ձեր քաղցր ուշադրու-  
թեան: 0՝, Եւզինէ, ես այնքան բախտաւոր եմ,  
որպիսին ինձ չեմ զգացել երբէք: Գոնէ ասի՞ր,  
մի ծածկիր, կարող եմ սիրել քեզ... .

Ալքսանդրն առաջին անգամ աննկատելի  
կերպով խօսեց եղակի թւով։  
Եւզինէն բառեր էր պտրտում և ծանր շըն-  
չում էր ու յուզվում: Օրիորդի սիրտն այն-  
պիսի ողեռութեամբ էր բարախում կրծքի  
տակ, որ նա հազիւ կարսղացաւ զսպել իրան  
և պատասխանել.

— Ի հարկէ:

Նրանք կանգնեցին՝ մէջքով յենվելով դաշ-  
նամուրին: Երկուսն էլ խիստ յուզված էին:  
Ալքսանդրը խօսք չգտաւ, միայն վերցրեց Եւ-  
զինէի ձեռքը և սկսեց շյել նրան մի քաղցր,  
քնքոյշ շփումով, որպիսի գործողութիւնից յե-  
տոյ օրիորդի երակներով անցնում էր մի ջերմ  
և տաք զգացմունք:

Բայց յանկարծ տեղե ունեցաւ մի անսպա-  
սելի դէպք: Ալքսանդրը բոնեց նրա երկու ձեռ-  
քը և քաշեց դէպի իր գիրկը: Եւզինէն չղիմա-

դրեց. Նրանք գրկախառնվեցան. . . Ալքսանդրը  
մօտեցրեց իր կրակօտ շրթունքները օրիորդի  
երեսին. . .

Նրանք համբուրվեցան մի փոխադարձ բուռն  
և ջերմագին համբոյրով:

թ.

Դիրքին համեմատ՝ հայր-Ռուկերչեանը վա-  
րում էր և ընտանեկան փարթամ կեանք: Նա  
բնակվում էր մի մեծ բնակարանում և շրջա-  
պատել էր իրան այնպիսի արտաքին փայլով,  
որ շատերի նախանձը շարժում էր: Նրա հետ  
էին բնակվում և նրա որդիքը՝ մեծ օրդին Ա-  
լքսանդրը և միւս երկուսը՝ Գէորգը և Սիմօնը:

Այդ երկու որդուն էլ նա հետութեամբ կա-  
րողացաւ համոզել մտնել առետրական ասպա-  
րէզ: — Մեզ ձեռք է հարկաւոր, — ասում էր նա,  
— խօ մշտական մեր աղաների քմահաճոյքին  
չպէտք է ծառայել: Վաղը, միւս օրը, գուցէ,  
Աստուած կարժանացնի մեր սեփական գործերը  
կունենանք, այն ժամանակ, անշուշտ, հարկաւոր  
է մեր սեփական ձեռքը: Եւ այդ խօսքերը ու-  
նենում էին իրանց բարեբեր աղդեցութիւնը:  
Ոսկերչեանի երկու որդիքը՝ Գէորգն ու Սիմօնը՝  
լինելով մշտակէս վատագայում, ամեն կերպ  
ձղառում էին սովորել գործը:

Սեփական գործ ունենալու միտքը այն աս-  
տիճան նստել է հայր - Ոսկերչեանի գլխում որ  
նա այժմ գիշեր - ցերեկ սրա վրա է մտածում:  
Որ նա անշուշտ ձգտում էր անկախ դիրք ստեղ-  
ծել դա երեսում էր նրա ամեն մի շարժումից:  
Այն անգամ, երբ նա պատահում էր իր միակ  
ընկերներին, նա վրզովվում էր նրանց անընդու-  
նակութիւնը տեսնելով: Այդ անընդունակ մար-  
դիկը մինչդեռ քիչ է, որ հաւասար մասն ունեն,  
այլ և մի տեսակ գերակշիռ դիրք են պահում:  
Իսկ ինքը ունենալով այնքան ընդունակութիւն՝  
ստիպուած է սահմանափակել իր շահասիրա-  
կան նպատակները այդ ընկերութեան նեղ պատ-  
կերի մէջ: Միթէ սա տանելի է: Այդ դեռ քիչ  
է. նրա ականջին հասել է, որ Թօղօշեանը ա-  
ռաջարկելիս է եղել սոճիկ նշանակել և անգա-  
մութիւնից հանել նրան — և, եթէ այդ բանը  
գլուխ չե գալիս, շնորհիւ այն հանգամանքի,  
որ Թօղօշեանի առաջարկութիւնը հաւանութիւն  
չե գանում միւս ընկերների կողմից և նա դեռ  
շարունակում էր վայելել իր նախկին յարդն  
ու դիրքը: Իսկ այդ տրամադրութեան արդիւնքն  
այն էր լինում, որ նա բացարձակաբար կողապ-  
տում էր ընկերներին յօգուտ իր գրպանի:  
Զարմանալի կերպով այդ աջողվում էր նրան:  
Միայն նրա շահասիրական ձգտումներն երեսով  
էր տալիս դարձեալ Թօղօշեանը, մի մարդ, որի

ակնարկներն Ոսկերչեանն աւելի քիչ էր կարո-  
ղանում մարսել: Ոսկերչեանն, ի հարկէ, չէր  
լուսում այդպիսի ժամանակ և կռուի ուժով  
վերականգնեցնում էր իր վարկը: Պատահում  
էր, որ Բրուկեանը հաշտեցնողի դեր էր կատա-  
րում: Այդ մարդը զլիովին հաւատում էր Ոս-  
կերչեանին: Միայն նրան մի քիչ կասկածելի էր  
թվում Մայիլեանի յարաբերութիւնը: Այդ  
մարդը, կարծես, հակումն ուներ հաւատալու  
Թօղօշեանին, թէև մինչև այժմ նա ոչինչ չի  
ցցց տալիս:

Իսկ Մայիլեանի հայեացքները նրա համար  
ունէին մեծ նշանակութիւն: Ոսկերչեանը չէր  
ուզում, որ այդ մարդը խէթ հայեացք ունենայ  
նրա վրա, որովհետև Մայիլեանը գերակշռող  
հեղինակութիւն ունի ընկերութեան մէջ և  
բօրսայում: Արա հակառակութիւնը կարող էր  
մահացու հարուած հասցնել նրա նպատակնե-  
րին: Բօրսայում մեծ նշանակութիւն ունի այն  
հայեացքը, որ կազմվում է դէպի վաճառակա-  
նը: Կարելի է չունենալ մեծ գումար, բայց վա-  
յելել հաւատարմութիւն, բարի ու նպաստա-  
ւոր հայեացք և այդ հաւատարմութիւնից քա-  
ղել որոշ շահեր:

Իսկ այդ հաւատարմութիւնը դէպի Ոսկեր-  
չեանը գեռ չէր սառած՝ մի հանգամանք, որ ա-  
մենից շատ ցանկալի էր նրա համար: Եւ ինչ-

պէս էլ զարմանալ այդ բանի վրա, երբ նա 40 հաղարանոց մարդ է այժմ... իսկ քառասուն հաղարանոց մարդը կատարեալ իրաւունք ունի մտածել կողմնակի, ընկերութիւնից անկախ ջրեր վերցնելու մասին ու տիրող հաւատարմութիւնն իր շահերին ծառայեցնել... Այդ խնդրով նա վերջին ժամանակներս այնքան ոգևորվում էր, որ պատկերացնում էր իր առաջ այդ աջողութեան բոլոր մանրամանութիւնները և զրաւիչ կողմերը: Ինքնազլուխ ազայութիւնը և անկախ հարստութիւնը ներկայանում էին նրա առաջ իրանց զրաւիչ կողմերով: Եւ թշլ կտայ արդեօք հանդամանքը, կդայ արդեօք այն օրը, երբ նա կարող կլինի թօթափել իր վրայից կախումը: Եւ ի՞նչպէս կարելի է անտարբեր լինել դէպի այդ միաքը... Եթէ կայ ցանկութիւն դէպի հարստութիւն, դէպի արայութիւն, նա չպիտի յոյսը կարի և ձեռքերը ծալած նատի: Զեռք բերել այդ բանը նա շատ բնական էր համարում: Նա ի՞նչ վաճառական կլինի, եթէ կրաւականանայ իր ունեցածով և չի ձգտիլ դէպի խորը, հարստութեան սիրաը...

Այդ ցանկութիւնն օրէցօր ուռչում էր նրա մէջ և նրա զլսից չէր դուրս գալիս այն յարգն ու պատիւը, որ կապ ունի այդ անկախ առեարի հետ. իսկ այն հաստատամութիւնն և որոշ կամքը, որով նա նուիրվում էր այդ մաքին,

թվում էր Ոսկերչեանի աչքին մի ինչ որ անյապաղ իրագործելի մի գործ, մի գործ, որ անշուշտ պէտք է իրականանայ և զոյսւթիւն ստանայ: Մի տեսակ վարդագոյն օղակներ պատվում էին նրա առաջ այդ մտածմունքների ժամանակի: Նրան թվում էր, որ ահա իր աչքերի առաջնեց անցնում են սեփական վատագայի բանւորները, թվում էր, որ ինքը սաւառնում է մի ինչ որ տարածութեան մէջ, որտեղ վիստում են այդ գործից գոյացած հաղարները և այդ հաղարները շրջապատելավ նրան՝ սլացնում են մի հեռաւոր և անըմբանելի աշխարհ:

Նա գործ էր դնում բոլոր միջոցները, որ այդ պատկերներն իրականան նրա կեանքում: Ըստ երեսյթին, ամեն ինչ նրա կեանքում խոստանում էր ընթանալ իր մի անգամ ընդ միշտ վճռածին ու ցանկացածին համեմատ: Մինչև անգամ մարդկանց յարաբերութեան մէջ նա գտնում է մի աչքի ընկնող փոփոխութիւն...

— Ահա թէ ինչ է նշանակում մէջքը պնդացնել, — մտածում էր նա: — Երբ որ ես հասարակ բախկալչի էի, ինձ վրա նայող չկար, իսկ այժմ... Այժմ, երբ նա յայանփում է բօրսայում, հարուստ վաճառականներն իրանք են մօտենում, առնում նրա թեկից, մի կողմ քաշում և առեարական գաղտնիքներ հաղորդում: Պատիւ են համարում նրա հետ գնալ հիւրանոց ձա-

շելու կամ խմելու... Յիշում է նա, դեռ ինչ  
պէս անցեալ ձմեռ նրան ընտրեցին մի ինչ որ  
ընկերութեան հոգաբարձու. նա մերժեց այդ  
առաջարկութիւնը, որովհետեւ Ոսկերչեանը բա-  
լորովին ուրիշ հայեացքներ ունէր այդ դիրքաւոր  
պաշտօնեաների վրա: Նա ոտն ու փէշը հեռու  
էր պահում այն տեղից, որտեղից շահ չէր  
սպասվում:

Վերջերս մի անակնկալ դէպք անսպասելի  
կերպով խոստանում էր այդ մարդու յարգան-  
քը սաստկացնել: Մայիլեանի տանը հրաւելք  
կար: Ոսկերչեանը առաջին անգամ նկատեց որ-  
դու և եւդիմէի մէջ եղած մօտ յարաբերու-  
թիւնը: Սյդ հանգամանքը բացեց նրա աչքերը:  
Նա իր գիւտի առաջ մինչեւ անզամ ժպտաց:  
Եթէ մտածէր անզամ, այդպիսի նպաստաւոր  
օղակ չէր կարող հնարել որբան անակնկալ  
դէպքը մեծ ծառայութիւն է անում նրա շա-  
հասիրական նպատակներին: Նա սկսեց մտածել  
թէ ի՞նչ կլինի, եթէ զլուխ բերի այդ ամուս-  
նութիւնը: Սրանով իր դիրքը կամրացնի ըն-  
կերութեան մէջ և այն ժամանակ դիւրին կեր-  
պով կարող է հաստատ հիմքերի վրա դնել իր  
ապահովութիւնը: Սրանով նա իր կողմը կը-  
գրաւի Մայիլեանին, իսկ սրանից յետ Դօդօշեանի  
ոտք տափ չի տեսնիլ թէ ինչպէս կցանի նրան  
ընկերութիւնից —և այդ ձանապարհով նա դու-

ցէ աէր կդառնայ նոյն իսկ ընկերութեան ջրե-  
րին: Բրուկեանին նա վտանգաւոր ախոյեան վկ  
համարում այլ մի կթան կով որի գոյութիւնը  
նրա համար նոյն իսկ ձեռնտու է: Հիանալի  
միտք էր, բայց առաջ հարկաւոր էր այդ ա-  
մուսնութիւնը զլուխ բերել: Այդ առիթով նա  
կամեցաւ որդու հետ խօսել և ահա երեկօյթի  
հէնց հետեւեալ օրը, երբ Ալեքսանդրն եկաւ հօր  
առանձնասենեակը սովորական պատուերները  
ստանալու, Ոսկերչեան հայրը նրան կանգնեցրեց  
և խիստ խորհրդաւոր կերպով նկատեց.  
— Աղախիմները խօ այստեղ չեն: Ես նկա-  
տում եմ, որ դու բաւականին յաճախ այցե-  
լութիւններ ես անում Մայիլեանց առնը: Ի հար-  
կէ, ես չեմ մեղադրում, դա շատ հասկանալի է:  
Նա ունի մի աղջիկ, որի գեղեցկութեան, եթէ լի-  
նէր մի քանի տարի առաջ ես էլ չեմ դիմանալ...  
Ոսկերչեան որդին, կարծես, հարուածից ձըն-  
շվեց: Նա դեռ զանվում էր նախընթաց երեկոյ-  
թի ապաւորութեան տակ: Նրա զլխում դեռ  
գեղերում էին օրիորդի հետ ունեցած խօսակ-  
ցութիւնները, բայց երբէք չէր սպասում, որ  
այդպէս շուտով հայրը գուշակէր նրանց յարա-  
բերութիւնները. և մի՞թէ նրա հայրը մի բան  
նկատել է: Նա միայն կարողացաւ ասել շատ  
սովորական բառեր, թէ նրանց մէջ ոչինչ պա-  
խարակելի երևոյթ չկայ:

—Ես ոչինչ չեմ ասում, դու հասկացիր, որ  
իմ խօսքը քո օգտի համար է: Եթէ ոչինչ չկայ,  
դու պիտի այնպէս անես, որ լինի, վերջապէս,  
ստեղծես: Հասկացիր, որ Մայիլեանը Աստծու  
կրակի տէրն է: Ամուսնանալով նրա աղջկայ  
հետ, դու մի զիշերվայ մէջ հարստանում ես:  
Ճշմարիտ է, նա մեզ ազգական է, բայց կհաս-  
նի... Ուրեմն ինքդ այժմ իմացիր: Իմ ծնողա-  
կան պարտքն էր քեզ զգուշացնել: Քո շահերդ  
էլ պահանջում են, որ այդ ամուսնութիւնը  
դլուխ դայ: Մեր ընկերութեան վրա յշոյ դնել  
չե կարելի, վաղ թէ ուշ նա կքայքայվի, իսկ  
քանի այդ չե եղել մենք պէտք է մեզ այն-  
պէս ապահովենք, որ ուրիշի ձեռքի մտիկ չա-  
նենք... .

Երբ Ոսկերչեանը սկսեց խօսել որդու հետ,  
նա ամեն ինչ մոռացել էր. չեր մոռացել միայն  
իր որոշ նպատակը, որի առիթով նա խօսք էր  
բայել: Նա առևտրական ասպարիզում ձեռք էր  
բերել մոքերի արագ կենդրոնացնելու և նրանց  
պարզ արտայայտելու շնորհը: Նա չեր ձգտում  
իր մոքերից խլել շահասիրական ձգտումները,  
այլ ամենն որոշ կերպով բացարում էր որ-  
դուն և նկարագրում էր իր նպատակների ա-  
ռաւելութիւնը: Ալեքսանդրը լսում էր, բայց  
երեւում էր, որ հօր խօսքերը նրան չեին դուք  
դալիս:

Դա չիլի ոչ նախանձ ամ վանաձ ըստ  
ըստ մշեց պատ վերաբ ճուղար դանաշ մայր  
աւագ անձ պատասխան անձ կամ անձ մայր  
է. Ալեքսանդրի համար: Նա, որ ջերմ, մաքուր  
սիրով նույիրվել էր օրիորդին, երբէք չեր սպա-  
սում, որ հայրն այդ հանգամանքն էլ ծառա-  
յեցնէր իր շահասիրական նպատակներին: Այդ  
բանը բաւականին վերաւորեց նրա ինքնասիրու-  
թիւնը: Նա առանց այն ևս չեր կարողանում  
հաշտվել հօր խարդախութիւնների հետ և միայն  
ծնողական պարտքն էր ստիպում լռել առ-  
այժմ, մինչեւ մի յարմար գործ գտնելը:

Առհասարակ Ալեքսանդրը շահասէր չեր: Նա  
չեր զրաւվում շացնող մետաղով: Ճիշտ է, բօր-  
սան, առետուրը, մի խօսքով ամբողջ գործը  
շոյում էին նրա ինքնասիրութիւնը, բայց հօր  
արարմունքը ստեղծում էին նրա սրտում մի ինչ  
որ ասելութիւն դէպի այդ աշխարհի մարդիկը:

Ալեքսանդր չեր հաւատում հօր քարոզնե-  
րին, որ կայանում էր հետեւեալ արաղիցիական  
նախաղասութիւնից՝ «առետուր է», չե կարելի  
առանց խորամանկութիւնների»: Ալեքսանդրը  
կասկածում էր, որ վաղ թէ ուշ հօր սիրները  
կրացվեն և նա ստիպված կլինի խայտառակ  
կերպով հեռանալ բայց որպէս զի բանն այն

տեղ չհամնի, նա մտածում էր ուրիշ տեղ իրան համար պաշտօն ձարել: Բայց օրերն անցնում էին, իսկ Ալեքսանդրը դեռ ոչինչ չէր մտածել ոչ մի կտրական քայլ չէր արել Դրա պատճառն օրիորդ Եւզինէն էր:

Ալեքսանդրը զբաղված լինելով այն բանով, թէ ինչպէս պէտք է գլուխ բերել այդ ամուսնութիւնը, չէր կարող իր բոլոր ուշադրութիւնը նուիրել հօր գործին: Մի և նոյն ժամանակ նրա յարաբերութիւնները դէպի օրիորդը ստանում էր բաց բնաւորութիւն: Ոչ ոքից արդէն չծածկվեց, որ նրանք սիրում են միմեանց: Այդ բանին դէմ չեղաւ նոյն իսկ Մայիլեանը: Նա իր աղջկանն այն աստիճան էր սիրում, որ չէր կարող չյարգել նրա զգացմունքները: Մի և նոյն ժամանակ նա շատ հաւանում էր և Ալեքսանդրին: Մի խօսքով երկու ծնողների կողմից նա չդտաւ ոչ մի արգելք, բայց հաւանութիւնից: Բայց սրանց արգելք եղաւ այլ կողմից, որտեղից նրանք աւելի քիչ էին սպասում: Դա նրանց ազգակցական կապիրն էին, որոնց պատճառով և հրաժարվում էին նրանց պսակել:

Այդ հանգամանքը շատ վշտացրեց Ալեքսանդրին և Եւզինէին: Նրանց սիրոյ առիթով փոխադարձ յարաբերութիւնների մէջ նոր վշտեր բացվեցան, նրանց երջանկութեան օրերը կարձատե եղան, նրանք երբէք չէին կարող կարծել

որ իրանց մաքուր յարաբերութիւնները այդքան բարդութիւններ կառաջացնեն: Եւ մի՛թէ երբ և իցէ նրանք ժամանակ ունէին այդ բանը նախատեսելու. նրանք զգում էին իրանց մէջ մի փոխադարձ սէր և այդ զգացմունքի միացման մէջ ձգտում էին գտնել իրանց երջանկութիւնը, երբէք չնախատեսնելով եղիպտական ծիփն ու մարտը այն արգելքների դէմ, որ արձանացնում էր նրանց առաջ «Համական խնդիրը»:

Երիտասարդ Ոսկերչեանը այժմ տեսնում էր, որ եթէ ուղենան, նրա առաջ մեծ թումբ կը ստեղծէն և որպէս զի հնար լինի յաղթել այդ դժուարութիւններին, հարկաւոր կլինի գործ գնել մեծ աշխատութիւն և չխնայել ոչ մի միջոց: Այդ բանից անքում էր նրա սիրու, բայց ի՞նչ անէր նա, քանի որ ուրիշ ելք չկար: Գուցէ հանգամանքները ստիպէին նրան զիմել այնպիսի միջոցների, որ բարեյաջող պայմաններում նրա զլխով անցնելիս չլինէր:

Նա շատ ցաւում էր և չէր կարողանում ըսբոնել թէ ինչպէս մալպիկ կարող են սահեծել արգելքներ մարդկային զգացմունքների դէմ, բայց դեռ նա բոլորովին յուսահատված չի համարում իրան, որովհետեւ դեռ յօյս ունի, որ կթոյլատրվի նրան իր սիրած առարկային տիրանալ:

Ալեքսանդր Ոսկերչեանը կամենում էր անձամբ աշխատել և զիմել ուր հարկաւոր է,

բայց նրա հայրը կամենալով ինքը գործել, բոլոր ծանրութիւնն իր վրա էր վերցրել: Բայց այդ խոստումից անցել էր բաւականին երկար ժամանակ, իսկ հայր Ոսկերչեանը ոչ մի գործացուցիչ պատասխան չէր տալիս և այդպիսով մեծ կասկածմանք և անհանգստութիւն պատճառում որդուն: Ալեքսանդրի համբերութիւնն արդէն հատել էր և նա պատրաստվում էր ինքն սկսել իր գործը, երբ մի օր հայրը խօսք բացեց այդ առարկայի մասին:

Կիրակի առաւօտ էր: Ալեքսանդրը թէյը խըմել պատրաստվում էր անից դուրս դալ և զնալ եւզինէի մօտ, երբ հայրը նրան կանգնեցրեց:

— Ո՞ւր ես գնում, Ալեքսանդր, ես կամենում էի քեզ ասել որ այսօր տանը լինես, ես ձաշվայ պատրաստից յետոյ կամենում եմ գնալ սրբազնին, քեզ էլ հետո եմ ուղում վերցնել: Քո գործի մասին է: Զկարծես, որ ես մինչև օրս ձեռքերս ծալած նստած էի. ոչ այլ միայն ուշանում էր նրա համար, որ ես կամենում էի մինչև այդ՝ քահանաների հետ տեսնվել...

— Ի՞նչ են ասում նրանք, — հետաքրքրութեամբ ընդհատեց Ալեքսանդրը, — ի հարկէ, արգելում են...

— Այդ կտեսնենք:

Ոսկերչեան - հայրը դեռ սրբազնից վերջնական պատասխանը չիմացած՝ չէր կամենում քահանաների մերժողականը յայտնել որդուն:

Ալեքսանդրի սիրտը մի երկիւղ ընկաւ. նա արդէն գուշակեց, որ մի ինչ որ արգելք իսկապէս կայ նրա փափագելի խնդրում:

— Ես շատ փոշմանեցի, — ասաց Ոսկերչեան - հայրը, — որ հէնց սկզբելից չղիմեցի սրբազնին, աւելի ժամանակ կորցրի... Ասում էի, որ բանը, դործը շատ չծանրացնեմ: Ամենից առաջ այստեղ մեծ դեր պիտի խաղայ փողը. ես մի հաղար մանեթից ձեռք քաշել եմ...

— Իսկ եթէ սրբազնն էլ թոյլ չտուեց, հայրիկ, այն ժամանակի...

Հայրը նեղ զրութեան մէջ զգաց իրան, չղիտէր, ինչ ասէր. գործը նրան այնպէս էր թվում, որ սրբազնն էլ կարող էր մերժել:

— Ոյն ժամանակ, — ասաց նա՝ կամենալով միթարել որդուն, — հարկաւոր կլինի դիմել էջմիածին:

Երիտասարդ Ոսկերչեանը մի բօպէի չափ մնայ տատանաման մէջ: Ի՞նչ էր մնում նրան անելու, եթէ ոչ դարձեալ սպասել:

Օրը մի տխուր պատկեր էր ներկայացնում: Երկինքն առաւօտից ծածկվել էր մոխրագոյն ամպերով: Արեգակն ողքան աշխատում էր թափանցել իր ձառագայթներով այդ մթութեան

միջեց, բայց և այնպէս տեղի տալով ամպերի յամառութեան, փարատվում էր և սահում նրա շերտերի վրա: Շուրջը տիրում էր տաղտկութիւն: Ոսկերչեանները կառք նստեցին և ուղերձիցան եկեղեցի:

Կառքը շիթրա անելով և ցեխի կոյտերն ամեն կաղմը շպոտելով՝ սլաշաւ քաղաքի զիսաւոր փողոցսվ:

Նյոն խոնաւութիւնը, նյոն ամայութիւնը ծանր կերպով ծանրանում էին ամեն տեղ: Այդ մթութեան մէջ հեռուում գծաղրվեցաւ առաջնորդարանի տիսուր, քայքայված շինութիւնը: Այդ շնչքսն իր անզրջըհեղեղեան արտաքինով մի տեսակ զայրոյթ արթնացրեց Ալեքսանդրի սրտում: Միթէ այստեղեց պիտի ծագէ նրա համար լոյսը: Այդ նրան անշաւատալի էր թըլ վում:

Զարմանալի է իսկապէս, որ միմիայն յուսահատութեան րօպէումն է մարդուս աչքին ընկնում առարկաների կամ երևոյթների մռայլ և տիսուր կողմերը: Ճշմարիտ է, առաջնորդարանն իր արտաքինով, իր ճաշակի և գոյնի անշքեղութեամբ ընդունակ էր զարթեցնել մարդու մէջ զայրոյթ, բայց գեռ սա չի նշանակում, որ ուրիշ ժամանակ և այլ հանգամանկում Ալեքսանդրն այդ կնկատէր: Եւ քրքրեցէք ձեր սիրութ, կտեսնէք, որ շատ անդամ բազմաթիւ է-

լոյթներ գնում-դալիս են ձեր առաջեկց իրանց կատարեալ անգունութեամբ և սրանք չեն զլրգում ձեր ներքին աշխարհը, բայց երբ մի և նոյն առարկան փոքր ի շատէ առնշութիւն է ունենում ձեր սրտի հետ, դուք իսկոյն վիրաւորվում էք և ցաւում այդ անգոյն երևոյթների վրա. Դուք սկսում էք պարել սրանց սկզբնապատճառը, այն անփոյթ ձեռքը, որը սպանում է երևոյթների բարեփոխման ընթացքը: Սրդեօք մենք օժտված ենք ուշացած մտածողութեամբ, թէ մեր զգացմունքները բթացել են այն աստիճան, որ մենք ամեն ինչ նկատում ենք միայն այն ժամանակ, երբ գործը վերաբերում է մեր անձին, երբ վերաւորված ենք տեսնում մեր «եսը», — թէ պէտք է սրա պատճառները որոնել մեր կեանքի միապաղադ երևոյթներում: Ալեքսանդրը շատ անգամ է անցել այդ առաջնորդարանի առաջեկց և երբէք նա այդ աստիճան չի վրդովուել նրա արտաքինով: Նա միայն շատ կցանկանար, որ երբէք ինքը կախումն չունենար այդ տանից:

Բայց ահա կառքը մտաւ եկեղեցու բակը և կանգ առաւ նյոնպէս ճարտարապետական շուքից զուրկ եկեղեցու տառաջ:

— Դեռ կէս ժամ աւել ժամանակ կայ, — մտածեց նա, երբ մտաւ եկեղեցի՝ լսելով «Տէր ողորմեան»:

Եկեղեցում կանգնած էր մեծ բազմութիւն։  
Նրա առաջը կտրել էր արտասուալից դէմքով  
և երկար, սպիտակ միրուքով մի ծերունի։  
Նա խորին երկիւղածութեամբ խաչակնքում էր  
երեսը։ Արա դէմ առ դէմ, մի քանի քայլ հե-  
ռու, մի այլ ոմն արդէն բաւականին համար-  
ձակ, աքաղաղային կլկրոցով երգում էր «Տէր  
ողորմեան», բոլորովին ուշադրութիւն չդարձ-  
նելով, թէ որպիսի անհամ զիսսօնանս է մըտ-  
ցնում ընդհանուր երգի ներդաշնակութեան մէջ  
իր տգեղ կլկրոցով։ Ալեքսանդրին զրգում էր  
և այն հանգամանքը որ բոլոր ժողովուրդը  
խոնված էր դռան մօտ և անցնելու տեղ չէր  
տալիս, մինչդեռ եկեղեցու մէջ տեղում ընդար-  
ձակ տեղ կար։ Ալեքսանդրն այդ հանգամանքի  
շնորհիւ ստիպված եղաւ դռան մօտ կանգնած  
մնալ։ Բայց հազիւ նա կենդրանացրեց իր ուշա-  
դրութիւնը դէպի երգեցողութիւնը, ահա նրա  
առաջ ըուսաւ մի հաստափոր քահանայ՝ երեսի  
մի բնորսշ-պաշտօնական արտայայտութիւնով  
և այնպիսի եռանդով զցեց նրա առաջ բուռ-  
վարը, որ Ալեքսանդրը մի տեսակ ճնշում զգաց.  
Նա դեռ չէր պատրաստվել մեքենաբար ձեռքը  
տարաւ զրպանը փող հանելու. քահանան էլ  
այդ իսկոյն ըմբռնելով՝ կանգնեց և աւելի եռան-  
դով երկու անգամ աւել նրա առաջ բաւովար  
զցեց։ Զանցաւ մի քանի րօպէ, նրա առաջնելից

անցաւ ժամկոչների քարաւանը, իրանց զլուխ  
ունենալով մի առանձին քահանայ։ Արանցից  
ամեն մինն իր ձեռքում բռնած ուներ՝ թաբաղ  
գանձանակ, մատուցարան և շարունակ կրկնում  
էին՝ «յօգուտ եկեղեցու», «յօգուտ էջմիածնայ»  
բառերը։ Իոկ այդ ժամկոչների շըրը, նրանց  
վրայի կեղտը մի կատարեալ դժգոհութիւն  
առաջացրեց նրա մէջ։ Նա իր աչքերը հեռացրեց  
այդ անախորժ տեսարանից և հայեացքը զցեց  
սեղանի վրա։ Պատարագիչ-քահանան այդ ժա-  
մանակ առաջ եկաւ և պատրաստվեց հաղոր-  
դելու։ Թէև մեծ պաս չէր, բայց կային մի քանի  
կանայք, որոնք մօտենում էին սրբութիւնն  
ընդունելու։ Ահա մի չամիչ պէտ չորացած պա-  
ռաւ կին՝ տրորփելով հեռանում է սեղանի ա-  
ռաեցից։ Նրանից յետոյ մի ցիգանի նման կին,  
կապոյտ ապրշումի դերիան հազին, երեք արշեն  
շէյֆը ետեկից զցած՝ անցաւ տղամարդկանց  
առաջեկց, հաղորդվելուց յետոյ էլ վերաբարձաւ  
միւս դասից, այնպէս որ նրան տեսան բոլոր  
ժամաները։ Ալեքսանդրն այլ ևս չկարողացաւ  
զսպել իրան, այս անդամ մի ակամայ ժպիտ  
անցաւ նրա երեսի վրայով։ Ահա թէ ի՞նչ է  
նշանակում հաղորդութիւնն այդ տեսակ մարդ-  
կանց համար։

Բայց ահա զարձեալ մի այլ տեսարան։ Քա-  
հանաներից մինը սկսեց քարոզել։ Ալեքսանդրը

սկզբից ուրախացաւ, որ եկեղեցու բնից կլսի խելօք խօսք, բայց յետոյ սահպուած եղաւ հիասթափվել: Քահանան հանեց ծոցից մի թերթ և սկսեց կարդալ: Առաջ կարդաց սիրոյ մասն, յետոյ ինչպէս եղաւ, որ սկսեց բացատրել թէ ի՞նչ է երկնքի արքայութիւնը. այդ նիւթից յետոյ անցաւ վաշխառուներին, յետոյ նկարագրեց կրթութեան բացակայութիւնը ընաանիքներում:

Քարողի ոչ մի կէար այնքան ծիծաղելի չժայց նրան, որքան վերջին կտորը: Նրան այնպէս էր թվում, որ այդ քարողեցը ինքը կարօտութիւն ունի դեռ ամենատարրական կրթութեան, ուր մնաց, որ նա ինքը խօսի այդ նիւթի մասին: Բայց ամենից շատ անտանելի թայց նրան այն, որ ժողովուրդը ամենայն ուշադրութեամբ լսելուց յետոյ, դուրս գալով եկեղեցուց, առանձին հրձուանքով դովում էր իր լոածը: Այդ կրիտիկան նա արդէն տանել չկարողացաւ:

Մի բօպէ նա կարծես մռացաւ իրան հետաքրիող հարցը և զքաղվեց այն ինդրով, թէ ահա այդպիսի անձնաւորութիւնները, որպիսին է քարողեցը, պիտի որոշեն նրա բախտը: Նա սրանց համարում էր ընդունակ ամեն բանի, միայն թէ ոչ զգացող մերձաւորի վեշար ու ցաւը...

Եկեղեցուց դուրս գալով, Ոսկերչեանները զը-

նացին սրբազնին: Գլխաւոր դռան մօտ ծառան բայցելով դուռը, մի քստմնելի ժպիտով ընդունելով հիւրերին, հրաւիրեց դաշլեճ: —Նորին սրբազնութեան մօտ էք չնորհ բերել:

—Այդ: —Խողիմ, արդէն ընդունում է. Համեցէք ընդունարանն...

Երիտասարդ Ոսկերչեանի սիրու սկսեց բարխել:

Ընդունարան գնալու համար հարկաւոր էր անցնել մեծ դաշլեճը: Թէ սենեակը և թէ ներքին բոլոր զարդարանքը մի կատարեալ ներքին դաշնակութիւն էին կազմում տան արտաքինի հետ:

Եպիսկոպոսի մօտ կանգնած էր մի քահանայ, որ սրանց մանելուն պէս, խոնարհ դլուխ իջեցնելով հեռացաւ ընդունարանից:

—Ասացէք, որ չե՛ կարելի, —կրկնեց սրբազնը քահանայի ետևից, —սա տուրք է, որ զանը քահանայի համար պիտի հատուցանէ: Զարմանալի մարդիկ են, —դարձաւ նա Ոսկերչեաններին, —այդ մարդկանց մարդ ստիպված է շարունակ կրկնել մի և նոյն բանը:

—Ի՞նչ բան է, —քաղաքավարութիւնից պրոված հարցրեց Ոսկերչեան: Հայրը: —Դղլարի համար քահանայ եմ ձեռնադրել...

Սրբազնն այլ ևս չչարունակեց. նա իր զեղցիկ և առաղջ իրանը իջեցրեց բազմացի վրա: Նրա տնդշյն աչքերը նայեցին հեռուն և տիրեց խորհրդաւոր լոռութիւն:

— Ի՞նչով կարող ենք ձեզ օգնել — հրաւիրելով նստելու, խզեց վերջապէս լոռութիւնը սրբազնը, տեսնելով թէ հիւրերը չեն սկսում խօսել — չլինի՞ ձեռնապրութեան խնդիր է:

— Ոչ սրբազն հայր, ես եկել եմ ձեզ մօտ մի կարևոր խնդրով:

— Ասացէք, կարողութեանս չափ պատրաստ եմ օգնել:

— Ու իմ որդիս է և կամենում է ամուսնանալ:

Սրբազնը ժպտաց:

— Թվե թէ չհասութեան խնդիր կա՞յ:

— Հանդամանքներն այնպէս են բարդվիլ սրբազն հայր, որ ես ինքս պիտի ամեն կիրակ աշխատեմ գլուխ բերել այդ ամուսնութիւնը: Ազգականութիւնը . . . . աստիճանի վրա է: Ես շատ էի մեղաղբում, բայց երիտասարդ մարդիկ իրար յածախ պատահելով, մէկ - մէկու այցելով՝ բանն այնքան հեռու է գնացել որ անշուշապիտի ամուսնութիւնով ծածկել . . .

Նա կանգնեց և, կարծես, սկսեց որսնել յարմար նախադասութիւններ: Սրբազնի յօնքերի միջով առաջացան ծալքեր, նա մի շարժում

դործելով տեղում, աւելի մօտեցաւ, որպէս զի աւելի լաւ կարողանայ լսել խնդրատուին:

— Մեծացել է առանց մօր հսկողութեան, իսկ իվան Ստեփանիչը մեր շրջանում միակ տունն էր, որին մենք մօտ էինք:

— Իվան Ստեփանիչ Մայիկեանցը, — հարցրեց սրբազնը, — այդ յայտնի ձկնորսավաճառը:

— Այո՛, մենք ընկերներ ենք:

— Ի՞նչպէս, գուք նրա ընկերն էք:

— Այո՛, մենք առևտրական տուն ենք կազմում:

— Ուրախալի է, շատ ուրախալի է, — մի քիչ լոռութիւնից յետոյ, կրկնեց մի և նշյն բառը սրբազնը: — Այո՛, մայրերը կազմում են ընտանիքի սիւները, այո՛, կարող եր շատ հեշտ պատահել... Մի պատմեցէք, շատ հասկանալի է: Գիտէք, ես չեմ կարող թշյլ տալ ազգակցական այդ աստիճանի ամուսնութիւն... պէտք է դիմել էջմիածին...

Այդ խօսքերից յետոյ երիտասարդ Ոսկերչանի սրախց, կարծես, մի բան պոկեցին: Նա, որ մինչև այժմ լոռում էր, աւել չկարողացաւ շապել իրան: Անյուսալի կերպով մի շարժում զործեց տեղում և հազեւ զսպեց իր արտասուքը:

— Բայց որպէս զի ես իմ կողմից ձեզ օգնած լինեմ, — ասաց սրբազնը, — կդրեմ էջմիածին, կխնդրեմ իմ կողմից:

Հաստ երկոյթին, սրբազնը հասկացել էր, որ  
հիւրերը պատրաստ են խնդրել նրա աջակցու-  
թիւնը:

—Բայց, սրբազն հայր, էջմիածնին դիմելը  
շատ ուշ կլինի, պիտի ամիսներ սպասել, իսկ  
և ձանձրացայ այդ աննօրման զրութիւնից:  
—Բայց ինչպէս անենք. կարծում էք, ես շատ  
ուրախ եմ, որ բանն այդպէս է եկել:

—Մեր միակ յօյսը, սրբազն հայր, դուք  
էք, եթէ կարելի է մի կերպ օգնել, կիսնդրէի...  
Երիտասարդ զգայուն սրտեր են, շատ հասկա-  
նալի է զրութիւնը:

—Խնդրեմ, խնդրեմ ինչ որ կարելի է... ես  
ձեղ իմաց կտամ...

Ուկերչեանները վերկացան:

—Դազար, — ձայն տուեց սրբազնը ծառա-  
յին, — Ճանապարհիք պատուական հիւրերին:

Դազարը քծնելով ու մանրիկ քայլերով ա-  
ռաջ վաղեց, վերցրեց շորերը և սկսեց ծառայել:

—Թողլ կտաք շնորաւորել, — քծնեց նա, որ  
դռան ետեւ բոլոր խօսածը լսել էր, — յօյս ու-  
նեցէք, սրբազնը լաւ մարդ է, Երևանում  
նրան ձեռքի վրա էին ման ածում:

Ալեքսանդրը հանեց մէկ հատ մանէթանոց և  
տուեց ծառային: Դազարը աւելի խոր քծնե-  
լով տուեց նրանց վերարկուները և տասն ան-  
գամ դլուխ տալով՝ Ճանապարհ զրեց:

Փառական այս ծրաբնույթ ըստ անտար  
ինքը ձեռ դու պարզունակ ուժուն դու ժամանու  
նարա ուժ ձեռ եւույթ առաջ նույն անդամական գույթին:

Ալեքսանդրը քանի գնում էր աւելի ու  
աւելի էր յուզվում և գրգռվում մարդկանց  
անարդար վերաբերմունքից: Նրա արդար կար-  
ծիքով այդպէս էին վարվում այն մարդկանց  
հետ, որոնք չգիտէին զիմաղրել այդ անարդա-  
րութիւններին և որոնք իրանց խաղաղ բնաւո-  
րութեան շնորհիւ հեռու են փախչում վէճե-  
րից, փէշերը հեռու պահում անբաւականու-  
թիւններից: Նրա օրելով, նախկին առաջնորդի  
ժամանակ, եղել է աւելի մօտ ամուսնութեան  
դէպք, բայց այն ժամանակ այդպիսի արգելք-  
ներ չեն առաջ բերել: Այդպէս՝ այդ պաշտօնա-  
կան տեղերում, նա նկատում էր, որ ամեն մի վսեմ  
խնդրի կախված էր տրամադրութիւնից, բօպէի  
տպաւորութիւնից, այլ ոչ թէ բղիսած սըկզ-  
րունքից: Նրան թվում էր, որ ամեն ինչ կեղ-  
ծիք է և ցաւալին այն էր, որ այդ պաշտօնա-  
կան մարդիկ ձեւանում էին սրտացաւներ, ազ-  
գասէրներ... Այդ ամենը տեսնելով՝ Ալեքսանդրը  
կորցրել էր իր հաւատը դէպի այդ մարդիկը և  
նրանցից ոչինչ չէր սպասում: Նա մտածում էր  
ուրիշ Ճանապարհով տիրանալ իր Եւգինէին,  
բայց որքան գլուխ էր ցաւեցնում, ոչինչ չէր

գտնում... Բայց յանկարծ նա վայր թռաւ մի սոսկալի նոր մաքից, մի մաքից, որ թէև այժմ չկազմակերպված նրա գլխում, թէև գեռ սաղմի մէջ, բայց և այնպէս խոստանում է նրան դուրս գալ այդ նեղ զրութիւնից: Մի՞թէ ստորութիւն է սիրել. մի՞թէ պէտք է կանգնել այդ մաքի առաջ... Գուցէ այդ միտքը կմնայ իր սաղմի մէջ, բայց և այնպէս նա գտնում է, որ եթէ իր եկեղեցին չտայ նրան իր Եւղինէին, նա ձեռք կը երէ նրան օտար եկեղեցու միջնոցով... Եւ մի՞թէ նա մեղաւոր կլինի այն ժամանակ... Ամեն մի արեգելք, ամեն մի մերժում մի աւելորդ զարկ էր նրա վշտին: Եւ նա, ո գիտէ, քաններորդ անգամ խորասուզվելով իր մաքերի մէջ՝ կանգնում էր միայն այս վճռի վրա... Ի՞նչու նա պիտի ճնշվի և սահմալած լինի ծածկել իր սերը, երբ նա այնքան մաքուր է: Դեռ շատ և շատ ցաւեց հօր խօսքերի վրա, երբ սա սրբազնի մօտ նկարագրելուց՝ սրանց յարաբերութիւնները շատ մութ կողմից էր բացատրում: Զնայելով որ հայրն ասում էր, թէ միակ մի ծոցը սա է, սրովհետեւ եթէ եղել են զեջողութիւններ այդպիսի հանդամանքներում, միայն այսպիսի պայմաններում... Ցաւում էր Ալեքսանդրը, որ իր արդար նպատակին հասնելու համար սահմալած է կեղծել, ստել և անբիծ օրիորդի վրա ստուեր դցել, որպէս զի կարողա-

նայ արժանանալ նրա ձեռքին... Այդպիսի ժամանակ նրա սրտից գուրս էր գալիս մի րօպէ առաջ կուտակված արդար բարկութիւնը եկեղեցու դէմ: Ի՞նչ մեղաւոր է եկեղեցին, երբ նրա պաշտօնեաները վատ են... Պատահելով Եւղինէին՝ Ալեքսանդրը շարունակ խնդրում էր նրա ներողամութիւնն իր ծնորհիւ պատճառած դժողովութիւնների համար, խնդրում էր այդ հազար անգամ և այդ խնդիրներից յետոյ քնքոյշ և զգուշաւոր հայեցք էր միայն զցում օրիորդի վրա, կարծես սրանով կամենում էր փոխարինած լինել նրա անդորրութիւնը... Իսկ այդ խօսքերն աւելի էին վառում Եւղինէի սիրտը և ջերմութեան մի նոր հոսանք բերում նրա մէջ, իսկ երբ նա մնում էր մենակ, Ալեքսանդրի խօսքերը խոլ յուղում էին նրան: Նա խնդրում էր ներել... Բայց ի՞նչ է արել նա... մտածում էր Եւղինէն: Նրա ականջում Ալեքսանդրի ոչ մի խօսքը այնքան քաղցր չէր շնչում, որքան այդ մեղայական յականը: Ամեն ինչ պարունակում էին այդ խօսքերը — և միիթարութիւն ներկայ տխուր օրերի, և բուռն, խոր, զգայուն սէր... Այո՛, Ալեքսանդրը գնահատում էր նրան, նրա հաւատարմութիւնը — և այդ հաւատարմութիւնը նա մինչև գերեզման կը կրի իր մէջ: Նա ըդգում էր, որ այդ ծանր չկ լինիր նրա համար...

Իոկ երբ իր սիրած անձը կյաղթի արդելքներին և երբ նրանք միասին Աստուծու սեղանի առաջ կարքագործեն իրանց յարաբերութիւնները—օ, Աստուծած, որպիսի վառ յօյսերով է նա սպասում այդ օրին—միայն այդ ժամանակ նա կատանայ այն ամենն, ինչց այժմ իրան զրկված է համարում... Բայց յանկարծ յիշելով իր անորոշութիւնը, խեղճ աղջիկը ընկնում էր հոգեպէս—ամեն ինչ չքանում էր... Նա նոյնպէս մտածում էր իրանց դրութեան մասին, բայց նրա մաքում երբէք չէր ծագել այն նորութիւնը, ինչ որ Ալեքսանդրի:

Միակ միսիթարութիւնն առ այժմն կազմում էին նրանց տեսութիւնները: Երեկոյեան գէմին, երբ փակվում էր գրասենեակը, Ալեքսանդրը գալս էր եւզինէի մօա: Նրանք յաճախ դուրս էին դալիս զրօսնելու. Նրանք անցնում էին քաղաքից դուրս, հեռու ազմկալից և անզգայուն կեանքից գէպի Վոլգայի ափերը՝ շոգենալների վրա, որտեղ մտնելով մի անկիւն, խորասուզ վում էին իրանց մտքերի մէջ:

Նրանց առաջ բացվում էր լայնածաւալ գետը, հեռուն և երեկոյեան դուրեկան դյոները, որոնք մի ընդհանուր ներդաշնակութեամբ ընդունակ էին զրաւել մարդու, բայց եւզինէն և Ալեքսանդրն այդ չէին նկատում: Բազմաթիւ շոգենալներն, աննշան փոքրիկ նսւակները, խլա-

ցնող սուլոցները, ծխնելոյզներից դուրս ցայտող պէծերը, հեռուում թմրող զետափը, պարզ աստղալից երկինքն—այդ բոլորը, բոլորը միախառնվելով՝ զլորվում անցնում էին նրանց ուշագրութիւնից: Այդպէս մնում էին նրանք մինչև շոգենաւի գնալը, մինչև խոր երեկոն, և այդ ժամանակ միայն նրանք ստիպված էին լինում վեր կենալ և ուղղել քայլերը դէպի քաղաք դէպի նոյն աղմուկը, նոյն միապաղապութիւնը: Ճանապարհը նրանց թմրում էր մոայլ, ամեն ինչ ընկղմած մեռելութեան մէջ: Տեղ-տեղ պսպղում էին լապահերները: Տները, փողոցներն երկու կողմից, կարծես, արձանանում էին նրանց առաջ, ինչպէս քարի պատճէները: Քաղաքի այդ մասում գտնվում է բերդը իր ատամնաւոր պարիսպներով, որոնք թուրքերի տիրապետութեան օրերից մինչև Հիմա պահպանած են իրանց բնորոշ ինքնուրոյնութիւնը: Այդ բերդի հին պատերը, կարծես, կախ էին ընկած օղի մէջ... և այդ իւրաքանչեւր առարկայի մէջ նրանք գտնում էին մեռելութիւն, անշարժութիւն: Զէ՞ որ այդ աների ամեն մի պատի ետեթագաւում էր մեռած կեանք, անտարբեր հօգի, բացառութիւնները նրանց աչքում շատ աննշան էին թմրում: Այդ տպաւորութիւնների տակ մարդկանց չարութիւնն աւելի ու աւելի էր բարձրացնում իր զլուխը և ընդունում մի

սպառնական կերպարանք։ Նրանք սթափվում էին, կարծես, մոռացութիւնից և անորոշ երկիւղց նոր Ճնշում զգում։ Երբեմն նրանք պատրաստ էին հաւատալու, որ ամեն ինչ կանցնի և նրանք կարժանանան միմեանց և այդ միտքն այնպէս էր ոգեւորում նրանց, որ պատրաստ էին մոռանալ ամեն մի նեղութիւն, բայց յետոյ նրանց սիրալ կրկին ու կրկին լցվում էր վշտով ու ցաւով։ Զէ՞ որ եթէ մարդիկ աւելի զգայուն լինէին, այդքան ցաւ չէին պատճառի նրանց սրտին։

Ի՞նչ էր նրանց պահանջածը—մի անդորր և խաղաղ կեանք՝ և ուրիշ ոչինչ... Ի՞նչու չի արգելվում բուռն ձգտումը դէպի հարստութիւնը, եղօր թշուառացումը, իսկ հալածվում է այն սկըր, որը մի ինչ որ ծրապրած և բիրտ սրտից թելազրած կեղծ բարոյական կանօններից Ճանաչվում է ապօրինի...。

Ալեքսանդրը դեռ կարողանում էր զսպել իր բարկութիւնը, բայց այդ չէր կարողանում անել զիւրազգաց Եւզինէն։ Նրա սիրուն աչքերում մարում էր կրսկը, փայլը և ծածկվում էր մի յուսահատ մթութեամբ։ Այդպիսի ժամանակ նա աւելի ջերմ էր վառվում դէպի իր սիրած ամուսինը և սրանով մի տեսակ թեթեւութիւն զգալով՝ թմրում էր նրա կրծքի վրա... Բայց միւս օրը դարձեալ նոյն տպաւորութիւն-

ները, նոյն արեգակը, նոյն միակերպ տները, բալը շարունակում էին միատեսակ տաղտկութիւն սփոել նրա հոգեկան աշխարհում։ Այդպիսի ժամանակ նա դուրս էր գալիս, անցուդարձ էր անում մի քանի փողոցներով այցելում էր ազգականներին, բայց և ոչ մի տեղ չգտնելով կեանքի մի որ և՛ է նշալ կրկին վերադառնում էր առւն, կրկին խորասուզվում էր իր մոքերի մէջ... Այդպէս էին անցնում այդ երկու երիտասարդ սրտերի օրերը՝ սկսած այն օրից, երբ սրբազնի մօտ այցելութիւն էր զնացել Ալեքսանդրը։

ՃԲ.

**188.** թուականն էր։ Աստրախանի հասարակական կեանքը մի կատարեալ մեռելային անապատ էր ներկայացնում։ Աղբային եկեղեցական գործի զլուխ կանգնածները ոչնչով չէին հետաքրքրվում, բացի իրանց անձնական և փառասիրական միտումներից։ Երէցփոխ, հոգաբարձու, քաշանայ, նոյն իսկ վիճակի առաջնորդը մի զարմանալի համախմբութեամբ բացառապէս կաղմված էին անդժն մարդկանցից։ Այդ հանգամաննքը կաղմում էր մի լաւ ժամանակի նախապուշտ միջոց։ Այդ մարդկանց շնորհիւ էր,

որ ամեն մի գործ հսկայական քայլելով յետադիմում էր: Եկեղեցական կալուածները աչքից թողնվում, քայքայվում: Ժողովները մասնաւոր ընտանեկան բնաւորութիւն կրում, իսկ տգետքահանաների հոսանքն այն աստիճան թնդացել էր, որ հեղեղել էր հասարակական բոլոր կրթական գործերը: Ի լրումն այս ամենայնի, անխնայ կերպով հալածվում էին այն մարդիկ, որոնցից, այսպէս կամ այնպէս, երկիւղ էր սպասվում: Մի խօսքով՝ հասարակական կեանքը ներկայացնում էր մի կատարեալ ճահիճ:

Սրտացաւ մարդիկ սպասում էին մի աջող հանգամանքի, երբ հիմնովին կփոխվի ամեն ինչ և իրանց յուսալից հայեացքը դարձրել էին դէպի էջմիածին, որտեղից և սպասում էին հին հոսանքի դադարեցման:

Մինչդեռ Աստրախանում կատարվում էր շատ սովորական երեսյթ: Ժողովուրդը գտընվում էր մեռելային անշարժութեան մէջ, նաև չէր հետաքրքրվում ոչ մի խնդրով ոչ մի սրտի մօտ գործով, իսկ գործի գլուխ անցած մարդիկ օգտվելով հասարակութեան միամտութիւնից, ինչ ուզում էին անում էին: Երիտասարդների կեանքը շատ աննշան էր: Նոր, յուսալից բան շատ քիչ էր նկատվում, իսկ հնամոլները իրանց ձեռքը տարածել էին ամեն կողմը: Որքան գործ է տուժել որքան մարդիկ վնասվել այդ ժամա-

նակ—ով է յիշում, ում բան ու գործն է մնացել: Այդ ժամանակ լոել էր բողոքը, խեղպվել էր արդարութեան ձայնը: Ուրեմն չպէտք է զարմանալ որ շատերը յուսահատութիւնից զիմում էին ծայրահեղ միջոցների, միջոցների, որոնք իրանց ծանրութեամբ մեծ վնաս էին տալիս հասարակական գործին:

Ահա այդ ժամանակն էր, որ յարուցված էր Ալեքսանդրի ամուսնական խնդիրը:

Իսկապէս ասած՝ նրա խնդրի մէջ չհասութիւն չկար, բայց նրան չէր աջողվում ձեռք բերել թոյլաւութիւն:

Սրբազնն իր խոստման համեմատ՝ մի պատասխան չուուեց, այնուշետե նա հրաւիրվեց էջմիածին և նշանակվեց ուրիշ թեմի առաջնորդ, իսկ Աստրախանի հոգեոր գործերի ղեկը մնաց տէրտէրների ձեռքում:

Անցնում էին օրերը, գործը մի և նոյն զբութեան մէջ էր, իսկ ի՞նչ դրութեան մէջ էր Ալեքսանդրի սիրաը:

Նա շարունակ մտածում էր մի միջոց, որպէս զի կարողանայ յաղթել այդ արդելքները: Իսկապէս ասած՝ հոգեոր վարչութիւնից նա յցմը կարել էր և այդ այն աստիճան, որ չէր ուզում դիմել էջմիածին:

Նա կրում էր հոգեկան մի անտանելի տանձնք: Նա համեմատում էր իր ներկան այն

մօտալուտ անցեալի հետ, երբ առաջին անդամ բացեց իր սիրտը օրիորդի առաջ: Եւ ով էր կարծում, որ այդքան դժուարութիւնների կը պատահի նա: Բայց ելով իր սիրտը օրիորդի առաջ, նա կարծում էր, որ ոչ մի արդելք չի լինի նրա բախտաւորութեան: Եւ ով կարող էր արգելել երբ նրանք փոխադարձաբար սիրում էին միմեանց: Անցեալի այդ քաղցր յիշողութիւնը արթնացրեց նրա մէջ բուսն զգացմունք և նա ամբողջովին վառվեց այդ քաղցր յիշողութիւններով: Նա յիշեց անցեալի անմեղ ժամանակներն, երբ նրանք շոգենաւի վըա, Յարիցինից վերադարձի ժամանակ, անմեղ դրուցում էին, մտաբերեց այդ ճանապարհը... և այդ յիշողութիւններից յետոյ մեխի նման ցցուեցան նրա դլխում ներկայի անտախորժութիւնները և ապագայի անորոշութիւնը: Ի՞նչ է ապասում նրան վաղը: Եթէ ստանայ նա մերժում, ի՞նչ պիտի անէ, միթէ պիտի թողնել այդ փայփայած միաքը: Նրա ուղեղը բորբոքվում էր այդ պիտի մտածմունքներից յետոյ: Թողնել Եւզինէին նա չէ կարող: Ալեքսանդրն ամբողջ էութեամբ շնչում է միայն այն յուսով որ ապագայում կյաղթի այդ դժուարութիւններին, բայց թէ ի՞նչպէս— այդ դեռ նրա համար վճռված չէր: Էինում են անելանելի դրութիւններ մարդու կեանքում, որի առաջ կանդնում են

թոյլ կամքի տէր մարդիկ, իսկ Ալեքսանդրը իրան թոյլ չի զգում: Նրա միտքը կանգ է առնում մի ելքի վըա, միայն նա դժուարանում էր այդ ճանապարհով գնալ: Եւ այդ միտքը երկու ամիս է վերջնականապէս բորբոքում է նրա ուղեղը: Նա կամենում էր որոնել իր բախտը աղատ սիրոյ մէջ: Այդ էր որոնել իր բախտը աղատ սիրոյ մէջ: Այդ էր աղան Ալեքսանդրի համար հեշտ չէր: Նա սիրում էր Եւզինէին, սիրում էր բոլոր սրամի բայց և այնպէս նա չէր վստահանում իր սիրած առարկային առաջարկել այդպիսի բան: Առանձին վճռողականութեամբ չէր վերաբերվում այդ մաքրն և ինքը Եւզինէին: Վերջապէս, նա մի մաքրն և ինքը Եւզինէին: Պարզ էր, որ յուսահատական լառութիւնը: Պարզ էր, որ օրիորդին դուր չէր գալիս Ալեքսանդրի յաւսահատական վճռուը: Ես կարծում եմ ձեռք կրեվի թոյլաւութիւնը, — ասում էր Եւզինէին, — հարկաւոր է մի քիչ էլ համբերել: Բայց, Եւզինէ, մենք չորս ամիս է, որ ապասում ենք: Ի՞նչ անենք, կարող ենք ապասել մի այդ քան ևս, — ի՞նչ կայ շատապելու... Իսկ ինքը յուսահատութիւնով լի աչքերը յած էր զգում, որպէս զի սրանով մանի իր ներքին յուղմունքը:

Նա կարճ կապեց:  
 Հայ կինն այլ կերպ է հասկանում ազատ սէրը: Նա կարծում է և հաւատացած է մինչեւ անգամ, որ զբանով անպատճում է նրա գյութիւնը, նրա պատիւը: Եւ դա զարմանալու է, նա սնվել ու մէծացել է իր տան մէջ, ազգային սովորութիւնների շրջանում և սովոր է իր դարերով դժագրված կանօններից դուրս չփալ: Հաղիւ կարիք է ներկայանում ոտնակոխ անել սրբադրութված սովորութիւնները, նա իրան համարում է ստորացած, անպատճած: Այդ հայ կնոջ գովելի առանձնայատկութիւնն է: Ահա թէ ինչու Եւգինէն որքան և սիրէր Ալեքսանդրին, չըր վստահանում այդպիսի քայլ անել և այդ ոչ թէ նրա համար, որ վախենում էր, թէ Ալեքսանդրը կթողնի նրան: Նա լաւ զիտէ, որ արարողութիւնները և ծէսերը չեն մարդկային զգացմունքների միակ լարողը ու կապողը, — բայց նա այդ առաջարկի մէջ գտնում էր կնոջ պատիւը ստորացնող մի ելք:

Ալեքսանդրը լսում էր. նա չէր կամենում շօշափել օրիորդի յոյսը և ամեն կերպ աշխատում էր ծածկել խնդրի դժուարութիւնը, բայց որ նա ոչինչ չէր սպասում հոգեօր վարչութիւնից, զրան ապացոյց կարող էր լինել այն, որ նա ոչ դիմում էր քահանաներին և ոչ էլ աշխատում էր այդ շրջանում: Մի անգամ

արած փորձը դառն կերպով ապացուցեց սրանց միջամտութեան անձեռնշասութիւնը:

Անյաւ դարձեալ մի քանի շաբաթ, նոյն իսկ ամիս, գործը նոյն զրութեան մէջ էր: Ալեքսանդրը բոլորովին յոյսը կարեց քահանաների շրջանից:

Այդ ժամանակ էր արդէն, որ նա վերջնական խօսակցութիւն ունեցաւ հօր հետ իր խնդրի վերաբերմամբ:

— Ուրեմն մենք այլ ևս յոյս ունենալ չենք կարող մերոնցից:

— Ի՞նչ կարելի էր սպասել այդ ակրակրներից:

— Բայց մի՞թէ եպիսկոպոսը օգնում էր:

— Նա միայն ձգձգում էր, բայց, գուցէ, կօգնէր:

— Եթէ կուգես, սպասիր մինչեւ նոր առաջնորդի նշանակվելը, իսկ եթէ ոչ արա այն՝ ինչ որ մտածել ես — դէմ չեմ:

— Բայց, հայրիկ, ես չէի կամենալ...

— Հիմա ի՞նչպէս անենք. կայ ուրիշ ելք — ասա՞...

Ալեքսանդրի երեսի վրա եկաւ, ծածկեց մի թախ-ծալից և վշտալից յուսահատութիւն ստուեր:

Ճ.

**Գ**րասենեակում ժողովվել էին ընկերութեան չորս անգամները, որոնք տաք վիճաբա-

նութիւն էին անում առաջեկայ աճուրդի առիթով: Միայն Ալեքսանդրն էր առ բացակայում էր, օրովհետեւ նա հեռացել էր ընկերութեան գրասենեակից:

Ամենից շատ տաքանում էր Թօգոշեանը: Նո հակառակ էր իր ընկերների կարծիքներին:

—թէ ինձ կլսէք, մի վերջրէք, խորհուրդ չեմ տալ—առում էր նա անցուղարձ անելով գրասենեակում,—մենք առանց այն ևս բաւականին գործ ունենք. տասը ձմելուկ խօ մի ձեռք չենք առնիլ:

—ի՞նչու չվերցնել երբ այնքան արդիւնալից ջուր է, —ասաց Ոսկերչեանը, —փառք Աստուծոյ, չորս հոգի ենք:

—Այո, այո, ես ուզում եմ վերցնել—ասաց Բրուկեանը, —ես համաձայն եմ քեզ հետ:

—ի՞նչ ասել կուղե, —միացրեց իր ձայնն էլ Մայիլեանը, —ի՞նչպէս կարելի է չվերցնել... եթէ ընկերութիւնը չի ուզում, այն ժամանակ ես ինքս առանձին կվերցնեմ:

—Հա, եթէ բոլորդ ուզում էք, ես հակառակ չեմ, միայն իմ ասելիքս այն է, որ գժուար չլինի:

—Ինչու պէտք է դժուար լինի, —ասաց Բլրուկեանը, —փառք Աստուծոյ, իսկ չունենք, թէ փող չունենք, ումից ենք պակաս:

—Ի հարկէ, ի հարկէ, —միացաւ Մայիլեանը: Ապա ուղղակի անցնելով գործին՝ նկատեց:

եթէ ինձանից էք հարցնում, խորհուրդ եմ տալիս անպայման վերցնել այդպիսի ջրեր բայ թողնելը Աստուծոյ առաջ մեղք է: Այդ ջրերից քանի քանի մարդ ոտքի է կանգնել: Եթէ մենք չվերցնենք, այն ժամանակ կիոշմանենք:

Թօգոշեանը մի շարժում արեց, կամեցաւ դարձեալ մի փորձ անել ջրելու, բայց հանդիպելով Բրուկեանի հայեացքներին, լոեց:

—Իմ կարծիքս է, —թէ առնելով ասաց

Ոսկերչեանը, —իմ կարծիքս այն է, որ պէտք է վերցնել միայն թէ մեծ զին չտալ...

—Յետոյ որ ձեռներիցս տարան, —կարեց

Մայիլեանը:

—Կողմանակի առեկեկութիւններից ես զիտեմ, որ Զ., նախկին կալուածատէրը, չկ ուզում ջրերը պահել կամ թէ պահի էլ չկ աւելացնելու:

—Ինչու եթէ շահաւէտ ջրեր է, ինչու է բաց թողնում, —հարցրեց Թօգոշեանը:

—Որովհետեւ եղայրները միմեանց հետ չեն հաշտում, իսկ մենակ պահելու միջոց չունի:

—Կեցցես, —ասաց Բրուկեանը, —առանձում ես, ես միշտ ասել եմ, որ Ոսկերչեանը մեղամնքիս ծարաւ ջրի կտանի: Այդ ի՞նչպէս իմացար... այսքան տարի միամիտ ապրել ենք:

—Ի հարկէ, ես պնդել չեմ կարող բայց որքան հնարաւոր է, առեղեկացել եմ:

— չա, ի հարկե, — պնդեց Մայիլեանը, — որքան հնարաւոր է:

Ոսկերչեանը ոգեսրվեց և մի խորհրդաւոր ժաղիտ սահեցաւ նրա նիշար երեսի վրա:

— Երկու ամիս է, — ասաց նա, — պառյա եմ անում և հետաքրքրվում այդ խնդրով և այդ հաղիւ երեկ իմացայ, որ ջրերը չեն ուզում վերցնել այնպէս որ եթէ մի չենչեն բան աւելացրել ենք, ջրերը մեղ վրա կմնան ու կմնան: — Քանով են ջրերը, — հարցրեց Մայիլեանը: — 8000 ով:

— Ուրիշն 10,000 կարելի է դնել:

— Շատ է, — բողոքեց Թօդօշեանը, — եթէ վերցնում էք՝ 9000-ից աւել զարուլ չեմ: Էս մինն իմ ասածը լինի:

— Երեխայ բան մի՛ խօսիր, — ասաց Մայիլեանը, — այդ ջրերը 15,000 էլ արժեն:

— Ի՞նչ ասել կուզի, — ասաց Ոսկերչեանը, — ես էլ համաձայն եմ: բայց որովհետեւ ջրերը վերցնող չկայ, կարծում եմ 9000 կարելի է դնել:

Թօդօշեանը շատ ուրախացաւ Ոսկերչեանի այդ կարծիքի վրա: Այդ նա վերագրեց իր աջողութեան:

— Կարծում եմ, եթէ այդ մարդն ասում է, որ վերցնող չկայ, ուրեմն ի՞նչու հազար մանեթ աւել տալ:

Ոսկերչեանի նիշար երեսը կենդանացաւ և աչքերի մէջ երեսցաւ վառ կրակի նշյլ: — Ինչպէս կամենաք, — ասաց Մայիլեանը: — Տասը հազար պէտք է դնել: Ո՞վ է իմանում, ի՞նչ կարող է լինել: Դուք եկէք փորձնաւմ, ի՞նչ լսեցէք՝ 10,000 զրէք: Մի քանի հազար ձուկ ջրից աւել հանեցիր՝ էս քո հազարը:

— Սիր, հազար չէ, պէտք է վեց հազար հաշեել ջրերը վեց տարով են տրվում:

— Սահեք թէ վեց հազար է, ինչ անենք. մի ամառվայ մէջ կհանենք. երանի՛ քեզ, ձուկ չէ մի. . .

Տիրեց լռութիւն: Ոսկերչեանն իր յատուկ որոշակի մոքերով աշխատում էր իր ասածն առաջ տանել: Մի րօպէ առաջ նա կարծում էր, որ իր մտածածը բոլորովին կընկնի և նա ստիպված կլինի հրաժարվել իր մոքերից: Բայց որ մի միտք որոշվում էր նրա զլխում, այդ երեսում էր նրա այն զեջողութիւնից, որ նա ցոյց տուեց Թօդօշեանին, մինչդեռ այդ մարդու հետ նա միշտ եղել է անհաշտ:

Աշրդով տրւող ջուրը համարվում էր յայտնի կապալով տրւող ջրերից մինը: Այդպիսի աճուրդ եղած ժամանակ առևտրական աշխարհում առաջ է գալիս արտակարգ իրարանցում: Շատերն երկիւղ են կրում, որ իրանց տարինե-

բով պահած ջրերը ձեռներից կդնայ և օրանով  
մեծ վնասներ կտան գործին, շատերն էլ դի-  
մում են ղանաղան խարսխախ միջոցների, որպէս  
զի խլեն ուրիշի արդիւնաւէտ ջրերը: Այդպիսի  
դէպքերում գործ են զրվում զարմանալի խա-  
րամանկութիւններ, ճարմպկութիւններ, և այդ-  
պիսով ջրերը մնում են նրա ձեռում, ով աւել  
հնարագէտ է գտնվել:

Ահա այդպիսի ժամանակ պէտք է տեսնել  
վաճառականների երեսի արտայայտութիւնը,  
կը լ նրանց հոգեկան դրութիւնը, ապա թէ  
խմանալ ի՞նչ իրարանցում է առաջ բերում  
այդ աճուրդը: Իսկ այդ անգամից ջրերն աւելի  
մեծ աղմուկի տեղիք են առնել: Մի ամբողջ  
ամիս է Ոսկերչեանը մի առանձին եռանգով հե-  
տաքրքրվում է ամեն մի տեղեկութիւններով:  
Կաշառում է մարդիկ, հիւրանոցներ է տանում  
և հիւրասիրում է այն բանուրներին, ձկնորս-  
ներին, ումից կարելի էր մի որ և է զաղանիք  
դուրս քաշել: Նա շատ հետքրքրվում էր իմա-  
նալ ընկերութեան կարծիքը այդ ջուրը վեր-  
ցնելու մասին: Յնկասկած էր, որ Ոսկերչեանը  
ունէր իր առանին նպաստակները: Այսքանը  
պարզ էր, որ եթէ ընկերութեանն աջողվեր վեր-  
ցնել ջրերը, նա սախալված կլինէր առ այժմ  
հրաժարվել իր մտքերից: Բայց վճաբլով ան-  
պայման իր համար մի անկախ դիրք ստեղծել

նա չէր կամենում, որ այդ ջրերը անցնի ընկե-  
րութեան ձեռքը:

— Բաւական է, ինչ որ շնորհ եմ ցոյց տուել  
այդ ընկերութեան: Թող հասկանան, որ տոանց  
ինձ ոչինչ չեն, կարող անել: Ժամանակ է, որ  
մի քիչ էլ մեղ համար մտածենք: Սուրբ աւե-  
տարանը ասում է՝ «առաջ քո բաղը ջրիր, յե-  
տոյ, եթէ կարող ես, ուրիշինը»: Եւ ինչ յիմար  
բան է վեղ թիքել...

Ոսկերչեանը ընկղմվելով իր մտածմունքների  
մէջ շատ ուրախացաւ: Ծնկերները թողեցին ու  
դուրս գնացին, որովհետև խորհուրդն արդէն  
վերջացած էր համարվում: Ոսկերչեանը կրծում  
էր իր բեխերը, ըստ երեսյթին, նրա զլուխը  
խիստ զործունէութեան մէջ էր: Նա մի ինչ որ  
բան մրթմրթում էր քթի տակ և նայում էր  
ընկերների գնացած ճանապարհին:

Նրա երեսի վրա երեսում էին խիստ խորհը-  
դաւոր գծեր,...

## ՃՊ.

Անցաւ երկու շաբաթ: Հասաւ աճուրդի օրը:  
Զինորսական վարչութեան դաշլիճում խրա-  
նվել էր ձկնորսների մեծ բազմութիւն:

Ամբողջ դահլիճը և նախասենեակը գրեթէ բռնված էր մարդկանցով և ամեն կողմից լըս-վում էր խօսք և շարժում: Երևում էր, որ աճուրդը զրաւել էր զրանց ամբողջ ուշադրութիւնը: Դրեթէ ամենքի երեսի վրա կարդացվում էր խորհրդաւոր և բանուկ արտայայտութիւն: Երևում էր, որ շատերին ձնշում էր այն միտքը, թէ ում վրա կմնան ջրերը և ահա այժմ, մի քանի ժամկց յետոյ, մի քանի մանէթների, երբեմն կոպէիների տարբերութիւնը շատ-շատերի տրտմելու կամ ուրախանալու տեղիք պէտք է տայ:

Ահա հեռուում զրած են սեղանները և նրանց առաջ ձկնորսական ընկերութեան պաշտօնեաները, գրագիրները, որոնք մի անախորժ և ձանձրացուցիչ հայեացքով նայում են այս՝ դէսից-դէնից հաւաքվածների վրա: Մի քիչ հեռու, մի առանձին սեղանի առաջ կանգնած էր զլիսաւոր կառավարիչը: Նա կարծես զիտմամբ էր բռնել այդ տեղը, որ հեռու լինի մարդկանց սխալատութիւնից: Ահա այդ զլիսաւոր սեղանի առաջ զլուս էին ծռում և անհամբեր սպասում էին, թէ ինչ կասվի այդ տեղից. վախով և երկիւղով էին վերաբերվում կառավարչի իւրաքանչեւր շարժմանքին, որովհետեւ այդտեղից պիտի վՃիռ կարդացվի՝ թէ ումից է խլվում և ում է յանձնվում այս ինչ ջուրը և այս ինչ վատաղան:

— Եյս անդամ սովորականից աւելի են ժո-ղովիկ—ասում էր Դօդոշեանը Ոսկերչեանին, մտնելով ձկնորսական ընկերութեան դահլիճը —ինչպէս տեսնում եմ, այս խնդիրը դժուար թէ այսօր վՃովի:

Ոսկերչեանն այն աստիճան զբաղված էր իր որոշ և իրան հետաքրքրող խնդրով, որ չսեց մինչև անդամ Դօդոշեանի ասածները: Նրան նշյնպէս զբաղեցնում էր ժողովվածների բազ-մութիւնը: Նա մինչև անդամ սկսեց լերահաւատութեամբ վերաբերվել իր բոլոր սարքած-ների աջողութեան: Իսկ դահլիճում խռնվող վաճառականները նմանում էին հետաքրքրութիւնը արտայայտող մի ամբոխի: Ամեն մինը սրանցից աշխատում էր առաջ անցնել և գըլ խաւոր սեղանի մօտ տեղ բռնել: Հարկաւոր էր մի անդամ նայել այդ ժողովվածներին, որ իսկոյն նկատել թէ սրանցից աւելի շահագրգռուված մարդիկ չկային աշխարհիս երեսին: Ամեն մինի աչքերը վառվում էին շահասիրական այն-պիսի կրակով, որ մարդ մնում էր զարմացած:

Եյդ միջոցին դռան մօտ երևեցաւ նոր անձնաւորութիւն: Նա մի առանձին փնչոցով և մեծ նեղութեամբ աշխատում էր առաջ գնալ Դօդոշեանն իսկոյն նկատեց զրան: Նա Ստոլին ֆիրմայի զլիսաւոր կառավարիչն էր, որ վայելում էր ձկնորսատէրերի մէջ մեծ համակրութիւն:

— Աա ի՞նչու է յայտնվել մի՞թէ նոյնապէս  
ուզում է վերցնել — տասայ Դօդոշեանը մեծ գար-  
մանքով: — Քանի գնում են աւելանում են: Ահա  
եկաւ գարձեալ մինը:

Ոսկերչեանը, որ սկզբից թերահաւատութեամբ  
էր վերաբերվում այդ նորեկների յայտնվելաւն,  
որովհետեւ նրանցից ոչ մինը մի մեծ ֆիրմայի  
տէր չէր, բայց տեսնելով Ստոլին ֆիրմայի ներ-  
կայացուցչին, զգալի կերպով կասկածանք ըն-  
կաւ սիրտը: Ճիշտ է, նա չի լսել որ այդ ֆիր-  
ման աչք ունենար այդ ջոկրի վրա, բայց միթէ  
կարելի է բոլոր գաղանիքների մէջ թափանցել:  
Այդ ժամանակ մռւժիկին աջողվեց առաջ  
անցնել նա մօտեցաւ պաշտօնեաներից մինին,  
սեղմեց նրա ձեռքը և սկսեց մի ինչ որ բան  
խօսել:

Դօդոշեանը բաւականին յուղվեց:

— Ինչպէս երեւում է, հաստատ է, ջրերից  
ձեռք քաշենք, — ասաց նա:

Ոսկերչեանը մի տխուր ժպտով պատասխա-  
նեց նրա հարցին:

— Ես կիմանամ, — ասաց նա, դիմելով դէպի  
մռւժիկը:

Դօդոշեանը մի անհամբեր հայեացքով նայեց  
նրա ետեից:

— Զէ, որա հետ ոտք ձգելը դժուար է, —  
մռածում էր նա, — այդ մարդը որ մէջ ընկաւ

թքիր բանի մէջ: Ուրիշ այնպիսի բան չի երևում:  
Նա մի փորձնական հայեացք գոյեց իր շուրջը,  
աչքն ընկաւ Ոսկերչեանի վրա և նկատեց, որ  
մռւժիկն արդէն խօսում էր նրա հետ: Դօդոշ-  
եանը աշխատում էր նրանց երեսի արտայայ-  
տութիւնից և շարժմունքներից մի բան գուշա-  
կել, բայց չկարողացաւ:

Ահա իրարանցումը տեղի տուեց լուսթեան:  
Բոլորի ուշաղրութիւնը կենդրոնացաւ սեղանի  
առաջ կանգնած աստիճանաւորի վրա, որն այդ  
միջոցին սկսեց բայց ծրարները: Դօդոշեանը  
քանի գնում էր, անհամբերութեամբ էր վեր-  
բերվում աճուրդի ձևականութիւններին: Երե-  
ւում էր, որ նա այժմ աւելի քան երբ և իշէ  
չէր ուզում հրաժարվել ջրերից. այդ բանը նա  
իրանց ընկերութեան համար նոյն իսկ ատորաց-  
նող մի երեսյթ էր համարում: Նա, որ ընկե-  
րութեան խորհուրդի ժամանակ տատանվում էր  
վերցնել ջրերը, այժմ պատրաստ էր ինքն ա-  
ռաջինն հակառակել նոյն իսկ զժգոհութեամբ  
կվերաբերվէր, եթէ մէկն առաջարկէր ձեռք քա-  
շել ջրերից:

Ահա նրա մտածմունքների թելը կտրեց աս-  
տիճանաւորի ձայնը, որ շարունակ շեշտում էր  
ծրարներից զուրս եկած զումարները:

Ահա նա բացեց նախկին կալուածատիրոջ  
ծրարը, կարգաց նրա մէջ նշանակած գումարը:

Դօգօշեանը լսեց, որ այդ ծրարի վրա տեղ-տեղ տարածվեց ուրախութեան շշուկ։ Ուրան ուրախութիւն պատճառեց նրան, որ ջրերը չմնացին այդ տիրոջ վրա, այնքան էլ նա ցաւեց նրա մասին, թէ որքան խախուտ է կալուածատիրոջ զրութիւնը։ Տասն երկու երկար տարիներ ջրերը պահելուց յետոյ մարդը ստիպված է հրաժարվել թէ ջրերից և թէ բոլոր շինուածքներից և սարքերից, որոնք կառուցվում են վատագայում։

Դարձեալ լսվեց աղմուկ, նրա ականջին հասան թուեր 5000, 6000, որից յետոյ տարածվեց կրկին խուլ քրքիջ ու ծիծաղ։

Դօգօշեանը լսելով այդ գումարները, մի շարժում արաւ իր տեղում ներքին բաւականութիւնից, որովհետեւ բոլոր այդ գումարները ցած էին իրանց զրածից։

Բայցվեց դարձեալ մի ծրար, այնուհետեւ երկրորդը, երրորդը, չորրորդը, որոնց գումարները ինն հազարից աւել չէր անցնում։

Վերջապէս բացվեց ընկերութեան ծրարը։

— Տասը հազար, — գոչեց ծրարների բացողը մի առանձին շեշտով։

Ամենը վճռեցին, թէ դա միակ ծրարն է, որ դուրս եկաւ այդպիսի խոշոր գումարով։

Դօգօշեանը կանգնած տեղում քիչ մնաց առաջ վաղեր ուրախութիւնից։

Այնուհետեւ գուրս եկան դարձեալ մի քանի ծրարներ, բայց այնպիսի աննշան գումարով, որ ընդհանուրի ծիծաղը շարժեց։  
— Վերջին ծրարն է, — լսվեց նոյն աստիճանաւորի ձայնը։

Ընդհանուրի ուշագրութիւնը գրաւել էր այդ ծրարը, որովհետեւ բոլոր քիչ-շատ յայտնի ֆիրմաների ծրարները դուրս էին եկել և ամենքին հետաքրթում էր, թէ ումը պէտք է ինէր։

Ընդհանուր լարված արամադրութիւնների մէջ ոչ չէր նկատում, թէ ինչպէս մի մարդ մի ուրախ և ինքնաբաւական տրամադրութեամբ մօտեցաւ աստիճանաւորի սեղանին։ Դա Ոսկերչանն էր։ Առուրդի վախճանը նրան էր միայն բաւականութիւն խոստանում, որովհետեւ այդ նրա ծրարն էր, որ իր մէջ պարունակում էր դուրս եկած և բացված բոլոր ծրարների գումարներից բարձր գումար։ Ոսկերչանը տեսնելով այդ, մի թեթևութիւն զգաց իր մէջ։ Այժմ նա զիտէ, թէ ինչպէս պիտի սաքի կանգնի։

— Տասն մէկ հազար, — գոչեց աստիճանաւորը, — և ջրերը մնում են ալ։ Ոսկերչանի վրա։

Մի ընդհանուր իրարանցում, յուսահատական շարժում տեղի ունեցաւ դաշլիճում։ Մի ինչ որ տիսուր ոգու իշխանութիւնը, կարծես, եկաւ տիրապետեց այդ մարդկանց վրա։ Ամենքը

վերաբերվեցին առելութեամբ դէպի Ոսկերչեանը,  
որ այդ րոպէից արդէն ողք էր գնում աքելի  
հաստատ առևտրական ամուռ պատրւանդանի  
վրա: Ծուտով դժգոհութեան ձայներն առելի  
սաստկացան ժողովվածների մէջ իսկ երբ որ  
Ոսկերչեանը ուրախ ժպիտն երեսին մօտենում  
էր զօնին, նրա առաջ տեղի ունեցաւ դժգոհու-  
թեան մի կատարեալ ցոյց: Դադի դրանունքից

Բայց ոչ մինն այն աստիճան չէր կատադել  
որքան Թօգոշեանը: Նա մի անգամից իրան զգաց  
կայծակի հարուածի տակ: Այժմ նրա հա-  
մար նոր սրալուեց, թէ ինչ ստոր մտրդու ա-  
ռաջ երեք հոգի խարված են: Նա սկսեց սր-  
տը տեղել իր հակառակորդին և, ակամայից շուռ  
գալով, աչքն ընկաւ Ոսկերչեանի վրա, որ այդ  
միջոցին արդէն պատրաստվում էր ոտքը դուրս  
դնել:

Ստոր, գարշելի արարած, — ուղղեց իր բա-  
ցականը թիւնը: Ոսկերչեանի հասցեին ինձնան  
— Պարոններ, լսում էք, — զարձաւ Ոսկեր-  
չեանն իր մօտ կանգնածներին: Վկայ թէք,  
խնդրեմ: Հասաւ ընդունակ դարաւ իմ մասն —

— Այս, կրկնում եմ, — առաքացաւ Թօգոշեանը,  
— զաւածան, մեր փողերով մարդ դժրձար և  
մեզ զաւածանեցիր: Իւր վրան և անծաց մայ  
Ամենը շուրած մնացին, իսկ Թօգոշեանը  
շարունակ փրփրում էր երարկանում: այս

— Խնդրեմ, վկայ եղէք, — կրկնում էր Ոսկեր-  
չեանը, զիմելով իր մօտ կանգնած վաճառա-  
կաններին, — Խնդրում եմ, լաւ լսեցէք, թէ որ  
աստիճան անտեղի վերաւորանք է հասցնում  
ինձ:

### ՔՊԱԳՊԱՅ ՃԱՋ

#### ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ ՎԵՐՁԷ



Վեհաբ բազ մատ հայուս մանեցչս  
ով ցայս արդան դի և ուց չուց  
վաղմացմարդար դաւառափ  
վատայ, գրաքան դամիզաթ  
խոյ քաղմրդոր դի ծայիծած  
մայ ցուռար ծառասար խոզելիք իշեմը  
դասիամանց մայրաբան ծմե - ծմե միմ և ուց  
դաս մային ուրդց միմասառ ժառ վրամբառար  
ցմանենա զզմառ մայսի մայմու միմ և ուռամքաղ  
ար միմ և ուռամք զզմին դասիամառ մարտար  
մա ծուր և ուռամք ժառար խոյ ուրդմասառ  
ցմի ու մզրան միմ դի և ուռամքան այս վայ  
և ուռամք զզմին մայմու մայմու ուրդց վրամբան միմ

Դամական պատճենի վեց առաջ առաջինը  
առաջինը ծութեամբ տօն գլ իրամեց պատճեն  
ու թի գեղու առ առ առ առաջինը մեջնունը  
և առաջինը և զնաղուաղը միքամա մանական  
առաջինը առաջինը մատուցակի առաջինը առաջինը  
**ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ.**



Ա.

**Ս**կերչեան որդու տան շքեղ դահլիճը  
շյոււմ էր մարդու աչքը իր  
փառաւոր զարդարանքներով.  
Պարկետի մաքուր յատակը  
ծածկված էր գորգերով, իսկ  
գեղեցիկ թղթերով պաստառած պատերը տրն-  
քում էին մեծ - մեծ թանդազին շըջանակաւոր  
պատերների տակ. առանձին շքեղութիւն պար-  
գեում էին տրոպիկական ծառերը. արմանները  
բարձրանում էին զրեթէ մինչև օձոռքը, իսկ  
զանազան ծաղեկաւոր թփերը բռնում էին պա-  
տուհանները, իսկ պատի տակում դրած սե-  
ղանի վրա ծանրանում էր թէյի սարքն ու ինք-  
նաեռը. մի կոյտ վաղաներ, անդրիներ լրացնում  
էին սենեակի շքեղութեան ամբողջութիւնը:

Այդ փառաւոր դահլիճում, թէյի սեղանի  
առաջ նստած էր եւգինէն, իսկ նրա մօտ՝ Ա-  
լքսանդրը:

Նրանց աչքերում փայլում էր կատարեալ  
բախտաւորութիւն և երջանկութիւն:  
Երջանիկ զշդ. նրանք չեն հեռացնում մէկ-  
մէկու վրայից աչքերը: Դեռ մօտ անցեալում  
նրանք չեն երազում այդ փայլուն օրերին. իսկ  
այժմ... Անսահման ուրախութիւնը, ջերմու-  
թիւնը, մի խօսքով այն ամենն, ինչ որ կրում  
է իր վրա բախտի կնիք, գեռ անցեալ ամառ-  
վանից թագաւորելով նրանց վրա, ջերմացնում  
է նրանց մի առանձին սիրով և բաւականու-  
թեամբ:

Նրանք վայելում էին առաւտեան թէյլ:  
Խօսակցութիւնն, ըստ երեսթին, ընդհատվել  
էր: Նրանք այնքան էին խօսել որ կարծես իրանց  
զգում էին յոցնած: Երբեմն - երբեմն կարծ նա-  
խադասութիւնները, ջերմ համբոյրները, թէյի  
կլկալի հոսալը և ինքնաեռի խշխշալը խանդա-  
րում էին սենեակի մէջ տիրած խորհրդաւոր  
լռութիւնը, —բայց ահա այդ լռութիւնը խզեց  
Ալքսանդրը:

—Եյ՛, իմ ցանկութիւնն այժմ գտել է բա-  
ւականութիւն, —ասաց նա, բարձրացնելով իր  
գլուխը կնոջ ուսի վրայից. — ես ունիմ էին,  
որին փափագում էի ունենալ բայց... օ, թող-

նենք... և չեմ ուզում անցեալի յիշողութիւն-  
ներով խանգարել այդ քաղցր բօպէները:  
Նա վեր կացաւ, մօտեցաւ պատուհանին և  
բացեց նրա փեղկերը:

Պատուհանը նայում էր դէպի բակը:

Արեգակի ծառագայթները խաղում էին բակի  
մէջ զտնված հսկայական ծառերի վրա: Տեղ-  
տեղ ստուերներն արդէն կորցնում էին իրանց  
մոխրագոյն փայլը և ներկվում արծաթագոյն  
գունով Վերջապէս արևն աւելի բարձրացաւ.  
ստուերները աւելի արագացրին իրանց քայլերը:

Մեծագագաթ հակակին խոնարհվելով քամու  
առաջ մի երկայն մոխրագոյն շերտ արճակեց տան  
վրա և այդ շերտը սիրուն աղջկայ ժպտի նման  
բաժանվելով ծառից գործում էր մի ցանկալի  
տպաւորութիւն:

— Ո՞չա կրկին բարձրացաւ արելո. բննու-  
թիւնն, այդ ծառերը վայելում են նրա կենդա-  
նարար ծառագայթների ջերմութիւնը, ինչպէս  
ես քո քաղցր սէրը, սիրելիս: Ոյն, այժմ դու  
ինձ մօտ ես, այլ ևս ոչ մի ուժ մեղ չի կարող  
բաժանել...

Եւգինէն հանգիստ լսում էր իր ամուսնու  
սրտի զեղմունքը. բայց և նկատում էր, որ մի  
ինչ որ ծանր բան ձնշում է Ալեքսանդրի սիր-  
ութ. թէև նա չէր ասում, թէ ինչ է այդ ծան-  
րութիւնը, բայց ծածկել ևս չէր կարողանում.

Իսկ Եւգինէի համար պարզ էր և հասկանալի,  
թէ ինչ խորին վիրաւորանք է զարգանում և  
ամրանում նրա ողառւմ: և ով, բացի իրանից,  
պարտական է թեթևացնել սիրած ամուսնու  
միրար:

— Ասիր, — հանդարտ ասաց նա, — ես տես-  
նում եմ քեզ ինչն է վշտացնում: Դու չէիր  
ցանկանալ այն դուռը, որ ստիպված եղար բե-  
րելու մեր այսօրվայ երջանկութեան համար,  
կամ դու երբէք չէիր սպասում այդպիսի քայլը.  
այնպէս չէ... .

Ալեքսանդրը լսում էր մեծ ուշադրութեամբ:  
Նա նկատեց, որ Եւգինէն ինքն ևս յուզվեց,  
երբ խօսքն ընկաւ այդ խնդրին, բայց բօպէա-  
կան ժամանակամիջոցում յաղթելով իր կանացի  
յուզմունքին՝ աշխատում էր վանել իրանից  
այդ խնդրի ամբողջ ծանրութիւնը:

— Դու դարձեալ աշխատում ես ինձ մսի-  
թարել, — անցաւ Ալեքսանդրի մտքով և նրա  
աչքերը բեւեռվեցան կնոջ երեսին:

— Դու կարծում, ես, որ դրանով մեծ վիրա-  
սորանք ես հասցըրել մեր ինքնուրոյնութեան,  
մեր առանձնայատուկ կեանքին: Ոյն, ես տես-  
նում եմ այդ մտածողութիւններն են վիրաւո-  
րում քո սիրար:

— Ոյն, այն, — պատասխանեց Ալեքսանդրի  
հայեացքը:

— Լոի՛ր, — շարունակեց Եւգինէն, — պատցէ զու  
մեծ սխալ ես գործել աւելի մեծ քան թէ  
սպասելի եր, բայց յիշեր մեր ծանօթութեան  
առաջին օրերը: Քեզ մօտ էր մինն այն անձնա-  
ւորութիւններից, որը նուիրվեց քեզ ամբողջ  
սրաով ամբաղջ կեանքով: Մեր սրաերը մօ-  
տեցան, հասկացան միմեանց առանց կանխակալ  
շահերի... իսկ այդպիսի օրինակներ կարծում  
ես շատ են լինում... և մի՞թէ մենք երբ և իցէ  
մոտածում էինք, որ զրանով մենք մի սխալ  
քայլ ենք անում... ձիշտ է, մեր շրջապատող-  
ները... մի նշին գծուծ արարածներ են նրանք  
— դու զիտես իմ կարծիքն ու հայեացքները  
նրանց վրա — անդպայ, շահասէր, սկզբունքներից  
զուրկ... երբէք այդ մարդկանց մէջ չի վառվել  
բանական հասկացողութիւնը և լայն հայեացք-  
ները... իսկ մե՞նք — մի՞թէ մենք փոխադարձ հա-  
մաձայնութիւնով չարհամարեցինք այդ մարդ-  
կանց... Յիշեր այդ ամենը և յիշեր, որ քո  
մօտ է գտնվում քո կիանքի ընկերը, որը քո  
երջանկութիւնն ու հանգստութիւնն ամենից  
բարձր է գնահատում — և իմացիր, որ քո այդ  
ընկերն իրան համարում է շատ բախտաւոր,  
զգում է իրան շատ թեթեացուծ և երբէք չի  
մեղադրում, որ քո արած քայլը մի սխալ էր՝  
առաջացած քո անձնական անփորձութիւնից  
և անհեռատեսութիւնից: Ուխտենք, որ մենք

միշտ հաւատարիմ կմնանք մեղ և ոչ մի մար-  
դու ձեռք չի կարող փոխել մեր սկզբունքները...  
Նա շարունակ խօսում էր: Եւգինէի խօսքերը  
թափանցում էին Ալեքսանդրի սրտի խորքերը  
Այդպիսի խօսքերից յետոյ նա իրան զգում էր  
հանգստացած և մսիթարված: Նա միայն կա-  
րողացաւ ասել.

— Սյո՛, այո՛, ես դիտեմ, հոգիս, ինչ անենք.  
քո սէրը կթեթեացնէ ինձ այդպիսի մտած-  
մունքներից: Օ՛, սիրելիս, որքան եմ ես քեզ  
սիրում:

Եւ նա մօտեցաւ կնոջը, զրկեց նրան, կրկին  
ու կրկին համբուրեց. նրանց շրթունքները  
խառնվեցան մի երջանիկ փոխադարձ զգացմուն-  
քով: Յետոյ Ալեքսանդրը բռնելով կնոջ ձեռ-  
ները՝ շարունակ պահում էր իր ձեռքերի մէջ  
և կարծես ուղում էր ասել — այսպիսի կնոջ  
հետ մոռացվում է ամեն մի վիշտ:

Եւգինէն նոյնպէս կանգնած էր պատուհանի  
առաջ. նա մի զրաւիչ ժպտով նայեց իր ա-  
մուսնուն. նրա ձկուն, բայց առողջ հասակը  
աւելի շտկվեց: Ալեքսանդրը մի անգամ էլ բռնեց  
կնոջ պարանոցն իր երկու ձեռքով և սկսեց  
համբուրել նրան:

— Բաւական է, բաւական, — մրմնջացին Եւ-  
գինէի շրթունքները, — չուշանաս. . .  
Նա դուրս եկաւ Ալեքսանդրի զրկից:

0՝ այժմ ես աւելի թեթևացած սրտով  
գնում եմ պաշտօնատեղիս։ ողաք չէ զոհ ար  
Ալեքսանդրը թողեց կնոջը, հագաւայիր վե-  
րաբերն և ուղևորվեց գետի դռառը։ Այս անգամ  
սրա երեսի վրա արդեն պարզ նշմարվեմ էին  
բաւականութեանն հետքեր։ Մոռան մեջ անամի  
քիչ էլ տատանվեց։ յուս ապարատ  
Եւդինէն բացեց դուռը և ասացա ոյմ  
Գնակ գնակ բաւական է, կաւշանապատ ոց  
Եւդինէն մնաց մենատիւնա մօտեցած պատու-  
հանին, նայեց դուրս. ամուսինը հեռանում էր։  
Թուրմն արեղակը քանի գնում էր բարձրա-  
նում էր։ Եւդինէն քաղցր տպաւորութիւնների  
տակ, մօտեցաւ հայելուն։ Նրա սիրուն, առա-  
ւեան զգեստը ձևափած էր, կուրծքի վիայի  
կուծերը կուտակվում էին թանձր ծալքերավ  
որի տակ չքնաղ կռւրծքը մի յուղիւ ելեւջ էր  
կատարում։ Նա ուշազրութեամբ նայում էր  
այն պատկերին, որ անզրադառնում էր ապա-  
կու մեջ։ Նրա երեսի վրա դեռ վառվում էին  
քաղցր համբոյրների հետքեր։ ուզ մասն ան  
Որքան քաղցր է լինել սիրված, բայց ափ-  
սու որ։ այդ երջանկութիւնը և երջանկու-  
թիւն... այդ բանի մասին նա ամենից շատ է  
մտածում։ Եւ որպիսիս անյագ կերպով նա  
զգում էր այդ երջանկութեան, սիրոյ պահանջը։  
Եւ որպիսի փայլավ պատրաստ են վառվել այդ

աչքիրը, եթէ այդ երջանկութիւնը լինի յարա-  
տե և առանց մթագնացնող երևոյթներին  
Ուրիշ ոչ մի քարձատրութիւն իր ամուսնա-  
կան կեանքում նու չի փակիազում։ Եւ միթէ  
այդ անկաքելի է, ա իսկ այդ նոյնքու զում  
Բայց մարդիկ և հանգատամնքները կարծեն,  
նրա համար են, որ մի մուժ ստուեր զցեն մի-  
մեանց երջանկութեան մակեանքից անդորրու-  
թեան վրա։ Եւ ահա այդ ժամանակներա մըտ-  
քով անցան այն հանգամնքները որ առիթ  
են առաջիս Ալեքսանդրին վշտանալու... ճանգա-  
մանքները նա անդիտակցար ենթարկվեց ան-  
ցեալի յիշողութեան և այն անցքերին, որոնք  
իրանց զարմանալի յաջորդականութեամբ առեղի  
ունեցան կարծ ժամանակայ մէջ մասու բա-  
խուն հանդամանքները և նրանց առաջաց-  
րած անախորժութիւնները մկսեցին ձնշելու  
նրա փափուկ ու զգայուն սիրութ։ Այն մարդը,  
որ նրան այնքան բախառառութիւն էր շնոր-  
հել, չարչարկում էր և մաշում այդ ծածուկ  
հոգածերից և վշտից։ Բնուն սէրք գետի իր պաշ-  
տած առարկան ստիպեց Ալեքսանդրին գործել  
մի ձնշող քայլ—դիմել օտար նկեղեցուն կա-  
թօլիկութեան զիրկի։ Բայց նա այնպիսի պա-  
հանջ էր զգում եւդինէի զգուանքներին, որ  
չկարողացաւ շանել այդ Ահա այդ հանգամնքը  
ձնշում է Ալեքսանդրին և Եւդինէն այդ նկա-

առամ է և ուզում է փարատել այդ մտած-  
մունքը: Ահա այդ միտքը յուղեց եւզինէին: Նա  
զեռ նայում էր հայելուն. նրա շրթունք-  
ները յուղվում էին, իսկ աչքերի մեջ մի խոր  
մտածմունք աշխատում էր վերջ տալ այդ  
ձնշող մտքերին: Երեսի ամբողջ արտայայտու-  
թիւնը կարծես մտածում էր, թէ ինչ պէտք է  
անել որ նրա ամուսինը միշտ և յարատե ըդ-  
գայ նորապահներին յատուկ քաղցրութիւն: Այդ  
այնքան էլ անկարելի չէ, — յանկարծ  
բացականչեց նա, — և կարծեմ ինձ աջաղվեց այ-  
սօր մի քիչ փարատել նրա այդ մտածմունքները:  
Նա կրկին վառվեց մի բուռն ցանկութեամբ  
և այդ բօպէին կրկին իրան զգաց երջանիկ,  
բախտաւոր: Պէտք է այնպէս անել, որ այլ ևս  
երբէք այդ մտածմունքները չպաշարեն նրան:  
Գլուխաւոր պայմանը՝ պէտք է չփոխել առաջվան  
գոյնը և լինել ազնիւնախկին առանձնայտկու-  
թիւններում: Եւ միթէ այդ հասարակ ձեակա-  
նութիւնն, որ պահանջեցին նրանցից ընդու-  
նակ է մեռցնել նրանց մեջ այդ սրաին մօտ  
ինքնուրոյնութիւնը: Ոչ, նա դրա վրա այլ ևս  
չի մտածում: Նա խոստանում է քաղցրացնել  
ամուսնու սիրութ իր անխարդախ, մաքուր սի-  
րով: Այս, եւզինէն կանի այդ: Ալեքսանդրն  
արժանի է այդ շնորհին:

Դու պիտի լինիս բախտաւոր, իմ սիրելի  
Ալեքսանդր: Այս աստղակամ չէ մենա հայրի  
Նա մի կտրական և լուրջ խոստումով մի  
անդամ ևս ուխտեց քաղցրացնել ամուսնու  
օրերը իր, անշէջ բուռն սիրով և անկեղծ զը-  
գուաններով: Այս մենա ըյուդ չ գահա գտայ  
ու զիմանացի հիւաց մի զանա՞դ դրսմօջ  
ան և ավելանա՞ չ աշխադմուն մերելու: Կ  
Կարնան սկիզբն էր: Բնութիւնը նորից  
կենդանացաւ և մի առանձին կեանք, ներշնչեց  
մարդկանց մեջ: Ոչ մի տեղ գարնան այդպիսի  
անհամբերութեամբ չէին սպասում, որքան Աս-  
տրախանում: Այս մարդկան մախաղանք:

Սա ունի իր հիմնաւոր պատճառը:  
Վօրդա գետը տարվայ չորս ամիսը սառած է  
լինում և երկաթուղու բացակայութիւնը ա-  
ռակտրական աշխարհում մեջ դադար է առաջ  
բերում: Եատ վաճառականներ, աշունը վերջա-  
նալուն պէս, թողնում են Աստրախանը և վե-  
րադառնում «ջրաբացին»:

Ձկնորսութիւնն էլ ինչ ասել կուղի, ահազին  
կենդանութիւնն է ստանում գարնան հետ: Այդ  
ժամանակ ամեն մարդ աշխատում է պատրաստ  
լինել: Ահազին գումարներ է ծախսվում, մեծ  
թիւ բանւորներ է բռնվում, որովհետեւ երբ որ

ձուկը սկսում է գալ այդ ժամանակ արդէն պիտի ամեն ինչ պատրաստ լինի: Ահա այդ առիթով բօրսայում վարձվում են բանւղբներ, որնք իսկոյն ուղարկվում են վատագաներ: Բանւղբների վրա է ձևորսատերերի յժյար. սրբանք պէտք է զետից հանեն այն ահագին միշտ լիօնները, որի համար մի քանի ֆիրմաների գոյութիւնն անհրաժեշտ է համարվում: Ահա այդպէս ևս շարժվեցան նաւակները այդ անգամ էլ թափվեցան ուռկանները, ուտելու պաշարեցները և բանւղբների ազադաները, ուրախութեան ձայները տարածվեցան օդի մջում: Ճանապարհ ընկան և Ոսկերչեանի պատրաստած նաւակները:

Ձևորսական հորիզոնի վրա երեսում էր նոր աստղ: Նաւերը բարձած շարունակ ձուկ էին բերում քաղաքի ափին և սրանց մէջ պատկառելի տեղ բռնում էին Ոսկերչեանի նաւերը: Եատ շատերն ապշում էին այդ քանակութիւնից, շատերը զարմանում էին, թէ այդպէս կարծ միջոցում լինում է աջողութիւն ձեռք բերել: Եատերն ամեն բան վերագրում էին բախտին, աջողութեան և միխթարվում էին նրանով, որ վաղը, միւս օքը կարող են իրանց ջրերն էլ այդքան հարասութիւն արտադրել Ամենքի խօսքն ու զբացը Ոսկերչեանն էր: Նրա այդ աջողութիւնը մի անգամից դրաւեց ամբողջ քա-

ղաքի ուշաղրութիւնը: Նրան սկսեցին ճանաչել բօրսայից դուրս, մինչև անգամ Վօլգայի ափերից շատ հեռու: Գիւղերում բոլոր գիւղացիք զիտէին, որ նոր ֆիրմա է առաջ եկել և այդքան աջող պայմաններում: Իսկ յայտնի ձևորսատերերն արդէն սկսեցին մտածել թէ ինչ կերպ այդ ջրերն իրանց ձեռքը գցեն և այդ նախատակով սպասում էին ժամանակամիջոցի լրանալուն, չնայելով որ գեռ վեց տարի պիտի սպասէին: Իսկ բօրսայում նրա դրամական աջողութիւններն առաջ էին գնում հսկայական քայլերով. նրան համարում էին առաջնակարգ վաճառական: Կարծես ինքն Ոսկերչեանն էլ նկատում էր, թէ ինչպէս իր դիրքը բարձրանում է քաղաքացիների աչքի առաջ:

Մյուսան աջողութիւններից յետոյ նրա հարստութեան ծարաւը դարձեալ չյագեցաւ: Նա տիրապետեց ջրերին, հեռացաւ ընկերութիւնից և դրանով առիթ տուեց այդ ընկերութեան քայլայման, բայց դարձեալ ուղում է գնալ աւելի հեռու, բարձրանալ աւելի վերև: Նա մտածում էր դարձեալ մի գործ բացել: Նա կամ էլեքտրական լուսաւորութեան կօնցեսվան վերցնել բայց նրան մերժեցին: Մյուս ժամանակ նա մտածեց մանու վակառուպային գործ բացել: Միայն այդ գործը զլուխ բերելու համար նա ա-

ուանձին միջացներ չունէր: Ջրերը վատագան խլել էին նրանից մեծ գումար: Այժմ հարկաւոր էր փող գտնել: Ալդ մաքի առաջ էլ նա երկար չկանգնեց: Նա գտաւ փողի տեղը և շատ զիւրին ճանապարհով: Բռնած ձուկը նա ծախում էր Ստոլին ֆիրմային, որ յայտնի էր քաղաքում սակաւթիւ առաջնակարգ ֆիրմաներից մին: Այդ ֆիրմայի հեա Ոսկերչեանը ծանօթ էր վաղուց դեռ ընկերութեան ժամանակ նա այդ ֆիրմային ձուկ է վաճառել: Իսկ սեփական ջրերը վերցնելու ժամանակ այդ ընկերութեան կառավարիչը խոստացել էր Ոսկերչեանին գնել նրանից բոլոր որսը և այդ պատճառով կանխավճար էր տուել մինչեւ անգամ: Ոսկերչեանն էլ պայմանաւորվել էր բոլոր ձուկը կողմնակի չծախել այլ անշուշտ տալ այդ ֆիրմային՝ կանխաւ որոշված գնով:

Մինչեւ բօրսայում ձուկի գնուը օրէցօր բարձրանում էր և Ոսկերչեանը ձուկի մի մասը վճռել էր ծախել կողմնակի, իսկ միւս կէս մասը միայն տալ Ստոլին ֆիրմային: Այդ ճանապարհով նրա ձեռքը գալիս էր կրկին մի պատկառելի գումար, որը նա ուզում էր ծառայեցնել մանուֆակտուրային գործին: Այժմ այդ ծրագիրը պէտք է գլուխ բերել բայց Ոսկերչեանը մի՛թէ երբ և իցէ գժուարացել է մի որ և է գործ վլուխ բերելու առաջ: Այժմ այդ միտքը նա

այնքան է հաւանում, որ երբ սկսում է մտածել զրա մասին՝ նոր ուժ, նոր եռանդ է ստանում:

## ¶.

**Ս**տոլին ֆիրմայի ձկնորսական գրասենեակում, որ գտնվում էր Վոլգա գետից ոչ հեռու, և մի փառաւոր շէնք էր կազմում, գրասեղանի առաջ նստած էր մի հասակաւոր մուժիկ, որի զիմաց կանգնած էր մի ակնոյաւոր երիտասարդ: Ստեփան Ստեփանիչ Ստեփանօվը (մուժիկը) մի գեր մարդ էր և բաւականին ծանրաշարժ: Նա հագած ունէր մի երկար սերտուկ: Նրա առողջ կարմրած քիթը ապացուցանում էր, որ այդ մարդը սիրահար է կոնծարբանութեան: Բայց այդ հանգամանքը չէր արգելում նրան իր մեծմեծ գործերը կառավարել որովհետև մուժիկը զիտէր և կոնծել և գործել: Իսկ երիտասարդը նրա առաջ մի ինչ որ տեղեկութիւններ էր հաղորդում այդ գեր կառավարչին:

— Դուք ասում էք, որ Ոսկերչեանը միայն ձուկի կէսն է առաջարկում: և դուք չսասացիք, որ նա պարտաւոր է բոլոր ձուկը բերել և տալ...

— Ասացի: բայց նա ասում է, որ այդքան է բոնել: կառավարիչ-մուժիկը մի շարժում արաւ տեղում, չուեց իր աչքերը և մեքենաբար

տարաւ ձեռքը ծոցը, կարծես, կամենալով այն-  
տեղից մի մուրհակ հանել:

— Անկարելի է, — ասաց նա, — միթէ մի միլ-  
լիօն տարեխ է բռնել: Այդ ջրերը մինչև օրս  
երեք միլլիօնից պակաս ձուկ չեն տուել: Ափառս,  
որ այդ ջրերը բաց թողեցինք, անիժածը մի հա-  
զարով ատարաւ... հա... Սուտ է ասում, չա-  
ւատաք:

— Ի՞նչ անենք, որ այդպէս է ասում:

— Դուք ի՞նչ ասացիք, ընդունեցի՞ք ձուկը:

— Ոչ չընդունեցի, — ասացի, որ ձեզ հետ  
անձամբ տեսնվի:

— Եատ լաւ էք արել: Զե, այդ մարդը գործի  
սկզբից հենց սկսում է օյխներ հանել: Որքան  
փող է նա վերցրել մեղանից:

— 20,000 բուրլե:

— Եւ այն պայմանով, որ բոլոր ձուկը մեզ  
տայ:

— Այս:

— Հա:

Կառավարիչը լռեց և մի մատածողական դիրք  
ընդունեց:

— Խարվեցանք, այս, խարվեցանք... Արմա-  
քա-ն մեղ խարեց. պէտք է այսուհետև զգոյշ  
լինել:

— Ինչպէս կպատուիրէք:

— Այս, անշուշո պէտք է զգոյշ լինել: Իմ

կարծիքով այս անդամ չպէտք է մի առանձին  
ձև ցոյց տալ. ապագայում պէտք է մի բան  
անել: Ի՞նչ կարող ենք այժմ անել շատ կընե-  
ղենք, այս էլ չի տալ իսկ մեզ ձուկ է հար-  
կաւոր: Այսօր ևս հեռագիր ստացայ, պէտք է  
շատ միլլիօն տարեխ ուղարկել Յարիցին: Զեռքի  
տակ ունենք այդ չափ:

— Ոչ:

— Տիսնում էք:

— Իսկ տակառները պատրամտ են:

— Որքան շտապեցնում եմ, դարձեալ չի լի-  
նում: Խոստացել են այսօրվան պատրամտել  
բայց մինչև հիմա դեռ չկայ:

— Ի՞նչ անհս, պահանջը շատ է, պէտք է  
սեփական գործարան ունենալ: Դուք հեռախօ-  
սով իմաց տուեք ֆօրպօստի \*), կառավարչներ:  
Այդ այդպէս. բայց և այնպէս, ես մինչև այժմ  
չեմ կարողանում զլիսի ընկնել, ինչպէս այդ  
մարդուց կարողանանք պոկել բոլոր որսը: Բօր-  
սայում ում բերանը ուղղում ես բացիր, ասում  
են հինգ միլլիօն է բռնել... Ի՞նչպէս էք կար-  
ծում, ի՞նչ կարելի է անել:

— Ինչ կարելի է անել եթէ ձուկը իր պայ-

\*) Ֆօրպօստը զիւղ է Աստրախանի ղիմաց, Վոլգայի  
միւս ափում. այստեղ կան վատագաններ և տակառի գոր-  
ծարաններ:

մանաւորված զնից էժան լիներ, կրերէր բոլոր  
որսը, մինչև անգամ կողմանակի էլ կգներ ու  
կբերէր։ Պէտք է այդ կանխավճար տալու սո-  
վորութիւնն ոչնչացնել։

— Ինչպէս ես ոչնչացնում, երբ ուրիշները տա-  
լիս են... Ե՞րբ է նա գալու։

— Ես նշանակեցի տասը ժամին, արդէն քա-  
ռորդ էլ անցել է, որտեղ որ է, կդայ։

— Շատ լաւ, ուրիշն դուք զբաղվեցէք ձեր  
գործերով, և ինչպէս կդայ, ուղարկեցէք ինձ  
մօտ, տեսնենք։ . . .

Երիտասարդը անցաւ իր բաժինը։ Մնալով  
մենակ, կառավարիչը սկսեց զբաղվել ինչ որ  
հաշիւներով, բայց այդ չկարողացաւ երկար շա-  
րունակել որովհետև սինեակ մտաւ Ոսկերչեանը։

Կառավարիչը տեսնելով Ոսկերչեանին՝ մի ծի-  
ծաղելի դէմքով դիմեց նրան։

— Եյդ ի՞նչ է, եղբայր, փող ստանալու բան  
եղաւ, ինքներդ էք դալիս, իսկ երբ որ հարկա-  
ւոր չկազմու էք պահում։

— Հա, պէտք է խնդրեմ ներողութիւն։  
— Զէ, չէ, լաւ դինի կիմեցնես, կներեմ։

— Աչքիս վրա։

— Եւ լաւ էլ խորոված, ձեր հայկական խո-  
րովածից։ Ասենք, դուք հայերդ ժլատ էք։ Տօ-լի  
մէլո մէնք, դյան առաջանակ! Բայց ինչ  
ուզում ես արա, խորովածը պէտք ուտեցնես—

թէ չէ, ախակեր, դրա գւասին ի՞նչ եղաւ, նոր  
վատագա, փառք Աստուծոյ, հէնց առաջին  
տարվանից գործն էլ լաւ գնում է, հինգ միլ-  
լիոն վօրլա ես բռնել մի էսքան էլ տարեխ։ . . .

— Թշնամու խօսք է, թշնամու խօսք, բոլորը  
կոչոշեանի տարածած լուրերն են. այս րօպէ  
ես էլ բորսայում լսեցի մի և նոյն լուրը։

— Քանով առել եմ, այնքանով ծախում եմ;  
չգիտեմ։

— Սուտ է, սուտ։

— Լաւ, տսենք թէ սուտ է, Աստուծած տայ,  
ապագայում Ճիշտ լինի։ Ի՞նչքան ես, վերջա-  
պէս, բռնել դրա Ճիշտը մի իմանանք։

— Ես արդէն ձեր հաշուապահին ասել եմ։  
Մի միլիոն տարեխ կարող եմ տալ։

— Եյդ ի՞նչ հաշիւ է դուրս գալիս։ Սա քիչ  
է, որ ստացած փողիդ ապրանքը չես տալիս,  
այլ վրադ էլ մի բան մնում է։

— Դեռ ես ուզում էի մի բան էլ ձեզանից  
ինըրել։

— Տես, տես, ինչ օյիններ է հանում։

— Իսկապէս, — ասաց Ոսկերչեանը, — առաջին  
տարիս է, դուք պէտք է օգնէք։ Եկող տարի,  
Աստուծած կարժանացնի, աչքիս վրա, բոլոր  
պարտքը կթափեմ։

— Եղբայր, այսքան սուտ չի կարող լինի, ինչ  
բռնել ես, դէ բեր էլ բոլորը. . .

— Թշնամու խօսք է, թշնամու խօսք...  
 — Ուրեմն սուտ է:  
 — Զգիտեմ, եթէ բռնած լինէի, առաջ պարտքո  
կտայի:  
 — Ո՞վ զիտէ: Զէ, իսկապէս, Աստուած եթէ  
տուել է, բեր տուր, մեղ էլ ձուկ է հարկաւոր:  
 — Զուկ ում հարկաւոր չէ: Մեր բախտն մեղ  
հետ է, այնքան ձուկ բռնեցինք, որ պարտքներս  
տալ չկարողացանք: Ես այսօր հէնց ճաշից յետ  
ձուկը կուղարկեմ...  
 — Դէ, ինչ անեմ, ուղարկիր, ուղարկիր...  
ասում ես աւել չկայ, ինչ անեմ:  
 — Բայց ես ձեզանից էլի մի տասը հազար  
մանեթ կանուխ ուղում էի ինդրել:  
 — Ինչու. փող չունեմ, ինչ է:  
 — Որտեղից, դեռ շարունակ ծախսում ենք:  
 — Զէ, ախպեր, փող չեմ տալ:  
 — Շատ խօ չէ, չնչին գումար է: Տին հաշուի  
հետ կանի 40,000. այդ գումարի մուրհակ  
կղբենք, հինը կապառենք:  
 Մուժիկը մոտածման մէջ լնկաւ:  
 — Բայց այդ առուտրից մեր ֆիրմային ի՞նչ  
օգուտ, — ասաց նա: Զէ, ախպեր, աւելի լաւ է  
թող այդ 10,000-ը կորչի:

Ոսկերչեանը ընկաւ մտածման մէջ բայց մի  
բարից, որից յետոյ նա համարեց ամենայարմար  
ժամանակը իր գալու նպատակն երեան հանելու:

Լաւ, ինչ օգուտ սրանից, — ասաց նա: —  
մինչդեռ եթէ դուք տաք այդ գումարը, ևս կա  
րող եմ բացել մանուփակտուրային գործ և  
ձեր փողը լրիւ հատուցանել: — Մանուփակտուրային գործ: — Այսուհետու մի գործ բացել: — Այս, մեծ որդուս համար ուղում եմ մի  
գործ բացել: — Բայց նա ծառայում է իր աներոջ մօտ:  
 — Ի՞նչ անենք. ո՞վ չի ուղել անկախ գոր  
ծել:  
 Կառավարիչը, ըստ երեսյթին, պատրաստ էր  
զիջողութիւն անել, որովհետեւ այժմ նա իր  
փողերը աւելի ապահոված էր համարում:  
 — Շատ գեղեցիկ, լաւ ես մտածել եթէ որ  
այդպէս է...  
 — Խնդրեմ ասպահով եղէք, — ընդհատեց Ոս  
կերչեանը, — այսքան տարի անուններս եթէ  
տափով չենք տուել էլի չենք տալ: Ուրեմն ե-  
թէ կարելի է, բերէք մուրհակները փոխենք...  
 Կառավարիչը զանգահարեց, նոյն երիտասար-  
դը մտաւ ներս: Մուժիկը պատուիրեց մուրհա-  
կը զլիել:  
 Կէս ժամից յետոյ Ոսկերչեանը ստանալով  
իր ցանկացած գումարը, գուրս եկաւ զրամե-  
նեակից գոհ և բաւական: Այժմ մնում էր զրա-  
ւել Սլիքանդրին: Այդ նպատակով նա հինց  
նոյն օրը երեկոյեան գնաց որդու մօտ: Ալեք-

սանդրը նստած էր կնոջ հետ և քաղցր զուցում էր, երբ մտաւ Ոսկերչանը:

—Հայրիկ, խնդրեմ,—առաջ գնաց Եւդինէն, վերցրեց Ոսկերչանի ձեռքից և նստեցրեց:

—Դուք էլ է չգաք, ես գոնէ հարցնեմ:

—Ներեցէք, մենք հէնց այսօր ուզում էինք դաշ—ասաց Եւդինէն, —նստեցէք, ես գնամ թէյի պատրաստութիւնն տեսնեմ:

—Գնա, գնա, եթէ կարելի է ուտելու բան էլ մի մոռացիր, քաղցած եմ:

—Այս րօպէիս, այս րօպէիս ամեն ինչ:

—Դործերով այնքան զբաղված ենք, որ չենում,—ասաց Ալեքսանդրը կնոջ հեռանալու յետոյ:

—Հաւատում եմ, հաւատում եմ, նրանք մարդու սատանի մշակ կշինեն, հէնց սրա համար էլ ես մեր ընկերութեան կարգերը չէի հաւանում: Դէ, ասա տեսնեմ, ի՞նչպէս է պաշտօնատեղիութիւնից անբաւական էիր, դատար արդեօք նոր պաշտօնատեղումդ աւելի յարմարութիւններ:

—Այս, հայրիկ, այստեղ գոնէ չկան այն թիւրիմացութիւնները, որոնք յաջախ տեղի էին ունենում մեր ընկերութեան մէջ:

—Հըմ, զարմանք չէ, քանի որ այնտեղ չորս հոգի էնք՝ չորս զանազան խելքի ու բնութեան մարդիկ, չորս էլ զանազան հայեացքներ, իսկ

այստեղ մի մարդու խելք է, խանգարողներ չկան: Բայց աւելի լաւ, աւելի բաւականացուցիչ է այն ժամանակ, երբ մարդու ինքն իր համար է, ոչ ոքի ձեռքին չի նայում, ոչ ոքից կախում չունի, երբ ուզում է, վեր է կենում, երբ ուզում է, պարապում է:

—Ինչ ասել կուզի, բայց երբ մարդ չունի միջոց իր համար առանձին գործելու, մնում է մի բան՝ ծառայելը—և եթէ համեմատենք այստեղի ծառայութիւնն իմ նախկին ծառայութեան հետ՝ մեծ զանազանութիւն կայ:

—Ուզում եմ քեզ ասել, որ ես վճռել եմ մի առանձին մանուֆակտուրային գործ բացել և ամբողջապէս յանձնել ձեր երեքից մինին. մինը ձեզանից զբաղվի սրանով, իսկ ես միւսների հետ լինեմ վատագայում,—բայց ինչպէս երեւում է, քեզ այդ այժմ չի հետաքրքրում:

Ալեքսանդրի աշքերի մէջ մի ինչ որ անսովոր կրակ երեւեցաւ. նա աւելի լարեց իր ուշադրութիւնը և մինչև անզամ մօտ քաշեց աթոռը և մի փորձնական հայեացք զցեց հօր վըա:

—Սրա համար միջոցներ են հարկաւոր, —ասաց նա:

—Ճիշտ է, բայց ես այդ անգամվայ ձուկից այնքան եմ աշխատել, որ կարող եմ արձակ բացել այդ գործը, բացի սրանից, ես կրկին կանխավճար եմ ստացել մինչև տասը հազար

բուրլիք: Հիմա, ասա, մնալով մեր ընկերութեան  
մէջ այդ կարձ միջոցում ես այդպիսի գումար  
կաշխատեի: Եւ ինչու այսուհետև էլ գործերը  
չընդարձակել երբ միջոց ունինք: Ես չեմ զար-  
մանում, որ դու գերադասում ես ոռօճկով ծա-  
ռայութիւնը, դա հաստատ, անհոգ ծառայու-  
թիւն է, չեպահանջում ծառայողից մտածմունք  
և կենդանի կեանք, — բայց եթէ իմանայիր ինք-  
նազլուխ գործելու առաւելութիւնը նրա պատ-  
ճառած հոգեկան բաւականութիւնն, այդպէս  
չէիր խօսիլ:

Ասկերչեանը լռեց, մինչդեռ Ալեքսանդրի ինք-  
նասիրութիւնը վերաւորված էր արդէն: Իսկա-  
պէս, ծառայելով ուրիշի մօտ, մարդս զրկում է  
իրան ինքնազործունեութիւնից, մինչդեռ այդ  
դէմ է նրա բնածին հակումներին:

— Դու խօ գրաւոր պայման չունիս կապած,  
կարող ես ամեն անգամ սեփական գործդրանալ:

— Անկասկած: Ես, ի հարկէ, կարող եմ զնալ  
բայց չեմ ուզում, սրանով կմիրաւորեմ հայ-  
րիկին:

— Ես չեմ ուզում պատճառ գառնալ քո  
հեռանալուն, բայց ասեմ քեզ որ մի և նոյն  
կերպ էի մտածում, երբ ընկերութեան մէջ էի:  
Բայց միթէ կարելի է յաւիտեան ուրիշի մօտ  
ծառայ մնալ ինչ է, որ տէրը կմիրաւորվի զուրս  
գալու վրա: Այդ տէրերը այնպիսի մարդիկ են,

որ որքան էլ լաւ ծառայես, դուրս եկար, քե-  
զանից անբաւական կլինեն և աւել պակաս կա-  
սեն վրադ: Ինչպէս կամենում ես, ի հարկէ,  
բայց ես լինէի, երբէք չէի ցանկանալ ծառայել  
ուրիշի մօտ, երբ կարող ենք ունենալ սեփա-  
կան գոլիծ:

— Ոչ աւելի լաւ է հեռու լինել աղմուկներից:

— Ինչպէս կուղես, բայց ես քեզ ասում եմ,  
որ ես վճռել եմ անպատճառ մանուֆակտու-  
րային խանութ բացել, որա համար մինչեւ ան-  
գամ հեռազրով մարդ եմ բերել տալիս Ռօս-  
տովից և այժմ կամքը արդէն ստացել եմ, ա-  
հա... (Նա հանեց գրանից հետազիրը) եթէ  
դու չես ցանկանալ այն ժամանակ ես կյանձնեմ  
Գէորգին, իսկ նրա տեղ կբերեմ ձինորս իվա-  
նօվին... .

— Իվանօվի՞ն:

— Այն, նա հոգով յօժար է ձեր վատազա-  
յից ինձ մօտ գալ - բռնվիլ. . .

Ալեքսանդրը, որ առանց այն ես յօւղվում  
էր, լսելով հօր պատմածները, չկարողացաւ  
զսպել իրան, վեր կացաւ տեղից և սկսեց ան-  
ցուդարձ անել:

— Ովէ է այդ սարդը, որին հրաւիրում էք,  
— հարցրեց նա:

— Զե՞ս յիշում թումաս Արտեմիչ Յարմա-  
ղեանին:

— Շարմաղեանին — Մատինեանենց գլխաւոր  
գործակատարը:

— Այո, էր մի ժամանակ:

— Իսկ այժմ:

— Եռն թակելով ման է գալիս, պարապ է:  
Այո, ինչպէս ուզում ես, տես, ես միայն քեզ  
իմ վճիռը յայտնելու համար եմ եկել եթէ  
շես ուզում, այն ժամանակ ուրիշ բան է, այլ  
ևս չմեղաղբես, որ ուրիշի ձեռքով բան եմ  
բռնում: — Միթէ պէտք ամբողջ կեանքդ ծա-  
ռայես:

— Ա! ս, ոչ ովէ ծառայելու, — սթափվելով  
իր մտածմունքներից, ասաց Ալեքսանդրը, — ես  
վախում եմ անախորժութիւններից:

— Ի՞նչ անախորժութիւններ կարող են լինել,  
ոչինչ: Կհրաւերենք այդ մարդուն, նա հիանալի  
մասնագէտ է, կդայ, գործը կսարքի, դու կհսկես,  
կգնաք ապրանքի, քո ձեռքումդ կլինի փողդ,  
իսկ նա ապրանքի ընդունովը: Միայն լաւ հրա-  
կիր, որ գործարանատէրերի հետ չպայմանաւոր-  
վի, ապրանքը թանգ չառնի: Եւ եթէ յօժար  
ես, հենց հիմա վճռենք, որ ժամանակը չկոր-  
ցնենք, հիմա խրիդի լաւ ժամանակն է... Ի՞նչ  
կասես... թէ կնոջդ հետ դեռ չես խորհրդա-  
կել...

— Ոչ այդ չէ, խորհրդակցելու կարիք չկայ:  
— Ուրիշն համաձայն ես:

— Ի՞նչ անենք:

— Այդպէս չե կարելի: Պէտք է օրինաւոր  
վճռել որ ես ել վաղվանից իմ խմացածը կա-  
րողանամ անել:

— Համաձայն եմ: — Նրանք զնացին սեղանատուն ընթրիք անելու,  
որ եւգինէն արգէն պատրաստել էր սեղան:

**Պ**սկերչեանի գործերը հսկայական քայլե-  
րով առաջ էին գնում: Ամենից հետաքրքիրն  
այն էր, որ նա աջաղ կերպով ծախել էր բռնած  
բոլոր ձուկը, իսկ այդ հանգամանքը տուել էր  
նրան պատրաստելի արդիւնք:

Այժմ Ոսկերչեանը զբաղված էր իր մանու-  
ֆակտուրային գործով: Այդ օրերս նա ստացաւ  
հեռագիր Թումաս Արտեմիչ Շարմաղեանից, որ  
իր կողմից առաջարկում էր իր պայմանները:  
Ոսկերչեանն ընդունելով այդ պայմաններն, երկ-  
րորդ հեռագրով վերջնականապէս հրաւերեց այդ  
մարդուն: Այժմ նա օր աւուր սպասում է նը-  
րան: Ոսկերչեանի թէ այդ գործը և թէ միւս  
քայլն, այն է՝ քաղաքային խորհրդարանին  
տուած յայտարարութիւնը տրամվայի և էլեք-  
տրական լուսաւորութեան մասին (որը թէև

շատայաւ ցանկալի լուծում) բօրսայում նպաստաւոր լուրերի ծնունդ տուին:

— Այս ի՞նչ վլուխ է այդ մարդու զլութը, ախաղեր, սրա խելքը անգլիացու խելք է, — խօսում էին բօրսայում, — մեզնից ո՞րի խելքը կը կտրէր արտավայ սարքելու: Զկնորսավաճառն ով տեխնիկական գիտութիւններն ով: Զէ, սա մի արտակարդ մարդ է: Այդ վերջին լուրն էլ մի քանի թերահաւատների մէջ հաստատեց այն փաստը, թէ Ոսկերչեան պատիկ մարդ չէ: Նոյն իսկ նրա հակառակորդ Դօգօշեանը կորցրել էր իր գլուխը. նա ևս սկսեց համոզվել որ իր հակառակորդն իսկապէս զօրբա մարդ է եղած: Եւ Դօգօշեանն այնպէս ընկաւ հոգով, որ այժմ մի միջնորդ դար և հաշտութիւն առաջարկէր, նա կընդունէր ամեն ուրախութեամբ, նոյն իսկ եթէ սա ձեռնտու պայմանով էլ չինէր նրա համար: Իսկ այդ ժամանակ Ոսկերչեան - հայրը նստած իր տանը՝ առանձին պատուէրներ էր տալիս իր երկրորդ որդուն:

— Այս անգամի Գէորգ, քեզ եմ ուզում թողնել վատագայում, ևս պէտք է մնամ քաղաքում... մինչեւ վլուխ չքերեմ խանութի բացումը, չեմ գալ: Վաղը առաւօտք ձանապարհ ընկիր, իմացիր, երկու օրից յետոյ յունիսի 15-ն է. այդ օրից թշյլ է արփում որսն ըսկել...

— Հանգիստ եղէք, հայրիկ, բան չենք բաց թողնիլ:

— Հա, կարծեմ ուրիշ պատրաստելու բան չունենք: Ո՞ւր է, Աստուած այս անգամ էլ լուս տայ, բաններս լաւ կլինէր:

Այդ միջոց ծառան ներս բերեց մի այցետում: Ոսկերչեանը առնելով այցետումնը և կարգալով աղդանունը, մի ուրախ շարժում անելով տեղում, բացականչեց:

— Խնդրի՛ր, խնդրի՛ր:

Ներս մտաւ մի յաղթանդամ մարդ: Նա այնքան խոշոր կազմուածքի տէր էր, որ մանդալու ժամանակ իսկ տատանվում էր իր ծանրութեան տակ: Բայց այդ գերութիւնը նրան չէր աղեղացնում, ընդհակառակը նա դրաւիչ արտաքինի տէր, աղամարդ էր: Դա թումաս Արտեմիչ Շարմաղեանն էր:

— Գալներդ բարի՛, գալներդ բարի՛, պարզելով իր ձեռքը, վեր կացաւ Ոսկերչեանը, խնդրեմ նստէք, ե՞րբ էք եկել:

— Մի ժամ կլինի, — ասաց Շարմաղեանը, — նոր իրերս ցած դրի հիւրանոցում:

— Ինչո՞ւ այստեղ չքերիք, մի քանի օրով ինչ էր լինելու որ:

— Աչ ինչու աւելորդ նեղութիւն պատճառել:

— Յետոյ, ե՞րբ էք դուրս եկել: Ճիշտն ասած՝ ձեզ այսօր չէի սպասում: Կարծում էի վաղը կզաք:

— Այնպէս էլ պիտի լինէր, բայց բարեբախտաբար ծարիցինում իսկըն շողենաւին հասայ; — Յետի՞ ինչպէս էք, թէյ կկամենաք: Բայց աւելի լաւը, եկէք ես ձեզ տանեմ իմ որդումօտ. դուք ծանօթ չէք նրա հետ, կծանօթանաք, այնտեղ էլ թէյ կիմենք:

— Ինչպէս կկամենաք:

— Տեղ խօ չէք գնալու: Եթէ այսօր չէք կարող կարելի է վաղը:

— Ոչ ոչ գնանք, որքան գործն առաջ գցենք, այնքան լաւ:

— Դուք էլ ինձ նման անհանդիսառ բնաւորութիւն ունիք: Գնանք, գնանք... Նրանք դաւրս եկան և ուղևորվեցան Ալեքսանդրի մօտ: Ալեքսանդրը կնոջ հետ նստած էր պարտիզում և վայելում էր թէյ: Նոր ձամբորդի դալը մի իրարանցման պատճառ եղաւ: Սովորական բարեներից յետոյ, Ոսկերչեան - հայրը անցաւ գործին:

— Այս պարոնը այսօրվանից համարվում է մեր ընտանիքի մարդ: Խնդրեմի մեզ համար էլ թէյ ածէք, մենք շատ ծարաւ ենք:

Եւգինէն ամենի համար թէյ ածեց, յետոյ կանչեց աղախնուն, ինքնահոփ գլուխը լրնել տուեց և առաջինը սկսեց հետաքրքրվել նորեկով:

— Թէւ մենք ձեղ առաջին անդամն ենք պատահում, բայց և այնպէս մենք ձեղ ծանաչում

ենք: Դուք չեիք Մատինեանց գլխաւոր կառավարիչը:

— Այո, տիկին, բայց այս վերջին ժամանակներս եղբօրս պատճառով թողեցի այդ խանութը:

— Մի՞թէ ձեր եղբօր պատճառով, — հարցրեց Ալեքսանդրը զարմացած:

— Ես մի բան լսել եմ, — ասաց Ոսկերչեան - հայրը, բայց Ճիշտ տեղեկութիւն չունեմ: Եթէ նեղութիւն չէ, պատմեք:

— Ոչ ի՞նչ է նեղութիւն: Եթէ որ ձեզ հետաքրքրում է... Գիտէք, իմ եղբօրս մէջ ծագած անբաւականութիւնների պատճառը ունի բաւականին անցեալ: Պէտք է սկզբից պատմեմ որ հասկանալի լինի:

Շարմաղեանը շատախօս էլ էր: Նա երբ որ սկսում էր խօսելու, սկրում էր, որ իրան լսէն և չընդհատեն: Այդ պատճառով նա լաւ համարեց նախազգուշացնել լսողներին և երբ ձեռք բերեց նրանց համաձայնութիւնը, սկսեց.

— Մենք արմաւիրցի ենք:

— Մի՞թէ, զարմացաւ Ալեքսանդրը, — ուրեմն մի քաղաքացի ենք... Շատ ուրախ եմ:

— Հա, և մի՞թէ իմ խօսակցութիւնից չի նկատվում, — ասաց Շարմաղեանը, — ես հսյերէն և ուռասերէն խօսել նոր եմ սովորել: Ընտանիքում խօսում էինք չըբքէղերէն: Այդ ասում

եմ նրա համար, որ ներողամիտ լինէք իմ որ-  
խաներին:

— Քայդ գուք շատ ազատ խօսում էք:

— Մի՞թէ: Քայց զիաէք երկու տարի է, ինչ  
որ ևս սկսել եմ խօսել: Այժմն էլ շատ յաճախ  
է պատահում, որ մոռանում եմ խօսքերը: Այդ-  
պիսով ուրեմն խնդրում եմ ձեր համբերու-  
թիւնը: Ես ծառայում էի Սկրմաւրում եղք.  
Մատինեանների խանութում, իսկ իմ եղբայրը  
պարապում էր խաշնաբածութեամբ:

— Խաշնաբածութեամբ, ընդհանեցին Ու-  
կերչեան ամուսինները զարմացած:

— Հապա: Հէնց այդ է պատճառը, որ մինչեւ  
այժմն էլ նոյն բոխն է... Կարծեմ այնպէս ասացի  
բոխ, չը, այսինքն, նու կոշտ, կոպիտ, խօսքը դեռ  
չլսած, կտաքանայ, հէնց կարծում է թէ գոյլերի  
հետ գործ ունի: Այս, պարապում էր խաշնա-  
բածութեամբ: Ես կամեցայ օդնել նրան, և մաս-  
մաս առեցի նրան մինչեւ 4000 ըռութիւնով որ  
այդ գումարով գործը մեծացնի, իսկ ինձ բա-  
ժին պահանջեցի միայն աշխատանքի կէսը...

— Հա, ի հարկէ, իրաւացի պահանջ է, — մըրթ-  
մըրթաց հայր: Ասկերչեանը:

— Իսկ իմ եղբայրս փողերս բանեցնելով զըր-  
կում է ինձ իմ մասից: Ուրեմն հասկանալի է,  
որ այստեղից մեր մէջ պիտի ծագէին անբաւա-  
կանութիւններ:

— Շատ պարզ է, — կյեց եւզինէն: ուն-  
— Տարիների ընթացքում, — շարունակեց  
նարմաղեանը աշխուժով, — եղբայր Մատինեան-  
ները բաժանվում են միմեանցից: Ես մնում եմ  
եղբայրներից մինի մօտ. ինչ ասել կտւղի, միւծ  
եղբայրը կամենում էր ինձ զրաւել իր մօտ:  
Այս, գեռաց այն ժամանակ ինձ համարում էին  
մանութակտուրային գործի մասնագէտ: Ես չեմ  
համաձայնվում տեղափոխուել իսկ այդ եղբայրը  
որպէս զի իր բաժանված եղբօրը վնասած լինի,  
ինձ անպայման ուղում էր իր մօտ զրաւել:

— Հասկանալի է, ովք էլ լինէք, այդպէս կվար-  
վէր, — ընդհանեց Ոսկերչեանը, լսկով իր սրտին  
մօտիկ վերաբերում:

— Այս, ի հարկէ, բայց ես հաշեւ չունեի տե-  
ղափոխվելու, իսկ այդ եղբայրը չի գաղաքում  
իր ցանկացածը զլուխ բերելու և որպէս զի ան-  
պատճառ իր կամեցածը արտած լինի, նա նոր  
ելք է մտածում: Նա ինձ առաջարկում է բա-  
ցել խանութ մի ուրիշ քաղաքում, ի հարկէ,  
իմ զեկավարութեանը: Արանով աջողվում է  
ինձ զրաւել մանաւանդ որ այդ ծանապարհով  
կարող էի եղբօրս էլ ինձ մօտ բերել: Այս, որ-  
քան նա ինձ վնաս հասցրեց, բայց ես դարձեալ  
կամենում էի նրան լաւութիւն արած լինել:  
Իմ առաջարկութիւնը եղբօրս մասին Մատին-  
եանք ընդունում են: Այստեղ գարձեալ եղօրս

հետ կարծիքներով չենք գալիս: Երբ որ մեզ առաջարկվում է ընտրել քաղաքը, ես հաւանութիւն եմ տալիս Աստրախանը՝ իրրեւ աւելի մեծ քաղաք, իսկ եղբայրս՝ Ղզլարի կողմնակից է դուրս գալիս:

— Ղզլարի՞, շատ զարմանալի է, — բացականչեց հայր - Ոսկերչանը, — Ղզլարն ի՞նչ է որ, մի օր էլ ջուր կդար, ամբողջ ապրանքը կփչացնէր: Ամենքը ծիծաղիցին:

— Զարմանում էք, ձեզ բան եմ ասում, վերջին տարիներս մանաւանդ: Ղզլարցիների ձեռքում ճար լիներ, իրանք կթողնեին, կփախչեին, ուր մնայ, որ այնտեղ նոր գործ բացել չէ սրանով մի անդամից երեսում է ձեր եղբօր զլուխը: Յետոյ, յետոյ, շատ հետաքրքիր է:

— Մատինեանք մեզ երկուսիս էլ ուղարկում են Աստրախան և Ղզլար՝ որպէս զի մենք տեղնու տեղը ուսումնասիրենք երկու քաղաքի առաւելութիւնը: Երբ որ դալիս ենք Աստրախան, եղբայրս ինձ հետ համաձայնվում է և Ղզլար չենք գնում: Սյուպիսով խանութի հիմքը դրովում է Աստրախան:

Գլխաւոր կառավարութիւնը մնում է իմ վրա, իսկ եղբօրս նստեցնում ենք կասսայում: Սյուտեղից ծագում են կրկին անհամաձայնութիւններ: Եղբայրս, երբ որ փոքր իշատէ ծանօթանում է գործին, սկսում է անհամու-

թիւններ անել՝ թէ ինքը մեծ եղբայր լինելով՝ ստիպված է լսել ինձ և որպէս զի ինքը զլուխ կանգնի, ծածուկ նամակներ է գրում Մատինեաններին և ինձ ամբաստանում Սյոյ բանը իմանալով, ես, ի հարկէ, թողնում եմ պաշտօնա...»

— Միթէ ծիշտ է ձեր եղբօր արածը, — հարցրեց Եւգինէն զարմացած:

— Կանի, կանի, — ընդհատեց հայր - Ոսկերչանը, — նա այնպիսի հոգի է երեսում:

— Ես նամակն ինքս անձամբ կարդացի Մօսկվայում, — ասաց Նարմաղեանը, — այն ժամանակ, երբ Մատինեանը ինձ համոզում էր մնալու պաշտօնում, ամելով որ չի հաւատում նրա զրածին: Բայց ես թողեցի ու հեռացայ: Յետոյ իմ տեղ Սիմֆերոպոլի խանութից նշանակում են մի այլ գործակատար — կառավարիչ: Իսկ ինձ տեղափոխում են Սիմֆերոպոլ՝ տեղափոխվածի տեղը: Մի խօսքով՝ ինչ երկարացնեմ: Եղբայրս Մատինեանց մօտ չմնայ և զուրս եկառ. կրկին ինձ հրաւիրեց Աստրախան և առաջարկեց միամին խանութ բացել: Սյուտեղ էլ գործը չկարողացաւ գնալ: Մենք բաժանվեցինք՝ միմեանց լածեծ տալուց յետոյ:

— Իսկ ի՞նչպէս դուք Խօստով ընկաք:

— Երբ որ եղբօրիցս բաժանվեցի, գնացի Խօստով ինձ համար գործ ծարելու և այնտեղ ստացայ ձեր առաջարկութիւնը:

— չա, շատ ուրախ եմ, որ զործն այդպէս  
եկաւ, — սկսեց հայր. Ոսկերչեանը, տեսնելով, որ  
Շարմաղեանը վերջացրեց իր պատմութիւնը —  
և այժմ ես կամենում եմ մի այդպիսի մանու-  
ֆակտուրային գործ բացել: Դուք, ի հարկէ,  
ինչպէս Մատինեանների գործը սարքեցիք, այնպէս  
էլ յօյս ունեմ, մեղ համար սաքի կկանգնեցնէք:  
Այս իմ մեծ որդիս կլինի խանութում: վարձէք  
զործակատարներ, որոնեցէք խանութ, գնացէք  
խրիդի, մի խօսքով ինչպէս որ խմանում էք:

Զեր անձնական աշխատութեան համար, ինչ-  
պէս որ հեռագրել էի, կտանաք 3000 բուրլի  
տարեկան. ի հարկէ, համաձայն էք:

Շարմաղեանը կրկնեց իր համաձայնութիւնը:  
Ալենքը ստքի կանգնեցին, երեսներն խաչ արին  
և կրկին բռնեցին իրանց տեղերը:

— Ուրեմն այժմ կարող ենք մի բան ուտել  
— ասաց հայր. Ոսկերչեանը:

— Արդէն սեղանը պատրաստ է, — ասաց Ալեք-  
սանդրը, — խնդրեմ միւս սենեակ:

Արդէն բաւականին ուշ էր, երբ թօռման Արտե-  
միք Շարմաղեանը դուրս եկաւ նոր տէրերի տանից:

Ե.

Շարմաղեանը շատ էր աշխատում, որ նոր  
գործը դրվի օրինաւոր հիմքի վրա: Գալու հե-

ակեալ օրը նա սկսեց աչք մանացնել թէ որ-  
ան կարելի է խանութ վարձել: Մի շարաթից  
արդէն նա վարձեց քաղաքի յայտնի հրապա-  
րակի վրա խանութ և սկսեց տեսնել միւս պատ-  
րաստութիւնները: Ալեքսանդրը միշտ նրա հետ  
էր, մասնակցում էր ամեն գործին: Գործն ա-  
րագ քայլերով առաջ էր գնում: Մի և նյոյ  
ժամանակ քաղաքում տարածվեց այն լուրը  
թէ Ոսկերչեանը նոր խանութ է բացում: սկսե-  
ցին գալ մարդիկ իրանց առաջարկութիւններով,  
մեկը նրանցից առաջարկում էր գործակատարի,  
մի այլը՝ զրագլի պաշտօն:

Շարմաղեանը շատ փորձված մարդ էր: Բոլոր  
գիմաղներին նա ընդունում էր սիրով, խօսում  
էր, լաւ ծանօթանում էր, կամ ինչպէս ասում  
են՝ թափ էր տալիս, բայց ընտրութիւն անելու  
չը շտապում: Բաւական էր մի քանի րոպէ  
խօսելը, որ նա համազգած լինէր, թէ որ պատի-  
ճան աեղ խնդրով համապատասխան է իր  
պաշտօնին: Բայց Շարմաղեանի միտքը և ծրա-  
գիրը այլ էր — նա աչք էր ման ածում փորձ-  
ված գործակատարների: Իմանալով, որ գործա-  
կատարը մեծ զեր է խաղում առետրի մեջ  
մուշտարի զրաւելու խնդրում, նա ուզում էր  
իր մօտ զրաւել յայտնի խանութի գործակա-  
տարներին, նյոյն խկ եթէ կարելի էր քելքարք  
Մատինեաններից», որտեղ ինքն առաջ ծառա-

յում էր: Այդ գժուար չեր տնելու: Նա մի քանի  
ըուբլի աւելացրեց և այզպիսով իր փարախը  
դրաւեց երկու յայտնի գործակատար: Մնացած  
ծառայողները կարող էին լինել և իտամ մար-  
դիկ, ուստի և միւսներին վարձեց բաւականին  
ձեռնուու պայմաններով:

Նա յշյո ունէր, որ իր փորձված ձեռքի տակ  
այդ խամերն էլ կարծ ժամանակում մարդ  
կդառնան:

Գործակատարների առաջ զլիսաւորապէս պայ-  
ման էր դնում իրան անպայման հնազանդել:  
Պէտք է ասած, Շարմաղեանը դտնում էր, որ  
գործակատարներն անպայման մէկին պիտի լսեն,  
նոյն պայմանին պիտի ենթարկվէր և Ալեքսանդ-  
րը: Շարմաղեանը չեր սիրում հակածառու-  
թիւն: Տարիների փորձը և առևտրական բարդ  
ասպարէզը նրան բերել էին այն համոզմունքին,  
որ գործակատարն անշուշտ պիտի զուրկ լինի  
իր սեփական դատողութիւնից և հայեացքնե-  
րից: Շարմաղեանը հին վաճառականի աղայա-  
կան բնաւորութիւնը չունէր, բայց այդ իրնու-  
րում կազմել էր իր սեփական բնորոշ հայեացքն,  
որ ի գէպ ասած, շատ քիչ էր զանազանվում  
հին աղայականից: Մի և նոյն ժամանակ գործա-  
կատարները նրա մօտ վայելում էին և յայտնի  
աղատութիւն: Նրանց հետ նա խօսում էր, վե-  
ճում էր իրրե ընկեր և միայն վերջնական վը-

միւն անպայման վերապահում էր իրան: Աա  
մի աննշան զեջողութիւն էր համարվում գոր-  
ծակատարների աշխարհում և այդ էլ պատ-  
ճառը, որ Շարմաղեանի մօտ ուրախութեամբ  
տեղափոխվում էին ուրիշ խանութից: Նրա ա-  
նունն այնքան յայտնի էր քաղաքում, որ բոլոր  
մանր վաճառականները սկսեցին լուրջ կերպով  
վախենալ: Զէ՞ որ նրանց աչքի առաջ էր Մա-  
տինեանց բացած հսկայական խանութը: Եյն  
ժամանակ գեռ շատ մանր վաճառականներ, ո-  
րոնք գտնվում էին Մատինեանի խանութի փո-  
ղոցում, ստիպված եղան փակել իրանց գործերը,  
նոյն գէպքից վախում էին և այժմ այն վա-  
ճառականները, որոնք գտնվում էին Ոսկերչեա-  
նի խանութին կից: Շարմաղեանը չեր խնայում  
մանր վաճառականներին: Նրա կազմիքով որանք  
բոլորը անընդունակ խանութպաններ էին, որոնք  
երբէք չպիտի գիմանային ժամանակի ողու պա-  
հանջներին:

Ահա թէ ինչ մարդու ձեռքով էր գործ  
սկսում Ոսկերչեանը: Իսկ երբ որ խանութը  
վերցրեց և նրա ճակատին խիեց ցուցանակը—  
այդ բանն արդէն սարսափ ազգեց մանր վաճա-  
ռականների վրա:

Զէին ցանկանում մեր տեղական վաճառա-  
կանները թօթափել իրանց վրայից առևտրա-  
կան հինաւուրց ձեւ, ընկերութեան նախաձեռ-

Նող ոգին էր մի բացակայում ալանց մէջ, թէ համողված էին իրանց անսխալականութեան վրա, — միայն այնքանը նկատելի էր, որ սրանք հոգով և մարմնով խուսափում էին ժամանակի պահանջներից և խխունջի նման կուշ զալով իրանց խուցերի մէջ, բարւոք էին համարում ոչ մի ակտիւ կտրական, դիմադրութիւն ցոյց չառ իրանց ներսը սողող վտանգին, այլ կորագլուխ իրանց բախտը յանձնել ժամանակին և ժակատագրին:

Սյդ երկչոտ զրութեան մէջ էր առետրական աշխարհն այն ժամանակ, երբ Ասէերչւանը մի մեծ մանուֆակտուրային գործի հիմք էր ու զում զնիլ Քաղաքում այդ ժամանակ յայտնի էր երկու ֆիրմա, իսկ մնացած տասնեակ խանութները հօղեարքի մէջ էին:

Խրախուսվելով առետրականների այդ ժուռ լութիւնից, Շարմաղեանը աւելի եռանդով էր գործում: Հոգու մի առանձին աշխատավով նա պատրաստվում էր գնալ իրիդի:

Մի շաբաթ ևս — Շարմաղեանն Ալեքսանդրի հետ ընկան ժանապարհ դէպի Լօձ և Մօսկվա:

## Զ.

**Ա**եանքը բօրսայում սկսել էր եռալ իր սովորական կերպով: Վաղ առաւտվանից վօլ-

դայի ափի մօտ, ուր գտնվում էր բօրսան, խըռնիվել էր վաճառականների ահագին բազմութիւն, ուր նրանք գալիս էին, սովորաբար, մէկ - մէկու հետ տեսնվելու նպատակով: Փողոցի ամբողջ առարածութեան վրա այստեղ ու այնտեղ անցուդարձ էր անդւմ վաճառականների մի այնպիսի սոուար հոսանք, որ կառքերն իրանց սովորական ընթացքով չէին կարողանում կտրել այդ փողոցը:

Սյստեղ մի մայթի վրա կանգնած էին երեք հոգի և առաք - առաք վիճաբանում էին: Սրանք էին մեզ ծանօթ Դոդոշևանը, Մայիլեանը և Ստոլին ֆիրմայի գլխաւոր կառավարիչը: Մտեփանովը:

Մայիլեանը արդէն կանգնած խօսում էր մուժիկի հետ երբ մօտեցաւ Դոդոշևանը:

— Ես ծանձրացայ օրա մասին խօսելուց ասաց Մայիլեանը, ձեռքերով մի շարժում անելով տարածութեան մէջ:

— Ինչպէս, ինչպէս, — գրգռվեց Դոդոշևանը, — ինչպէս կարելի է անտարբեր լինել: Կառավարիչը իր համաձայնութիւնը արտայայտեց զլսի շարժումով:

— Դէ, խօսէք, վիճէք, իսկ նա իր անելիքն անում է, ահա բացում է մի ահագին մանուֆակտուրային խանութ, իսկ զուք ձեղ միթարելով՝ խօսում էք միայն: Ես ձեղ ասում

և մ, թողէք աննպատակ տաքանալը, եկէք, միացէք ինձ հետ, մենք դարձեալ գործ իշխնենք. տեսնում էք, Մակար իվանիչը թքել է և կրկին մեր ընկերութեան մեջ մասնակցում է. — Տէրը մի արացէ, տէրը մի արացէ, մի անգամ սխալվեցինք, երկրորդ անգամ արամադրութիւն չունեմ:

**Մայիլեանը** վեր քաշելով ուսերլու թօղեցու հեռացաւ:

— Սյոյ մարդու խելքին նայես. նա ամեն ինչ ոչինչ է համարում, նրան խարելին, նա շատ սառը կերպով տանում է այդ: Հիմա էլ ընկերութեան մեջ է հրահիրում:

— Բայց մի՞թէ Բրուկեանն էլ միացել է...

— Սյոյ, վերջերս միայն...

— Բայց ասէք, խնդրեմ, մի՞թէ Ոսկերչեանը խանութն արդէն բացել է, — փոխեց խօսքը մուժիլ:

— Սյոյ, մեր փողերով անպիտանն ոտքի կանգնեց:

— Ես գիտեմ, որ բացելու մատք ունէր, բայց չգիտէի, որ այդպէս շուտ արդէն գործը զլու է բերել:

— Արդէն մի ահազին էլ ցուցանակ է խփել:

— Կեցցէ, ախատեր, ինչ ուղաւմ ես ասա, այդ մարդու ձեռքից բան գալիս է: — Ուրիշի փողերով միայն, ուրիշի փողերով

միայն. դուք գիտէք — մեղանից գողացաւ միայն 30 հազար:

— Ո՞վ է մեղաւոր բերաններդ ինչու էք բացում: Իմանում էք, առածն ասում է՝ «Դյուրակъ даётъ, умный беретъ»:

— Ես շատ էի ասում, բայց ինձ լսողը չկար, մենակ ինչ կարող էի անել:

— Բայց ինչով վերջացաւ ձեր զատը. լսել էի, նա ձեր վրա խնդիր էր տուել:

— Ինչ լինի, ևս էլ մեղաւոր մնացի, վճառել են երկու շաբաթ արեստ... Հիմա գործը «Ըեթզձ» եմ տուել, տեսնենք, այնտեղ ինչպէս կնայեն գործին:

— Ոխր դու էլ չափից դուրս էիր եկել այնպիսի խօսքեր մի՞թէ կարելի է ասել այնքան մարդկանց մեջ: Սա ածուրդի օրփայ դէպքի համար չէ:

— Սյոյ, եղայլ, դու էլ մեղաղըում ես, մարդ ենք թէ չէ: Մեղ մօտ մանելուց հազում փախան չկար, այսօրվան օրը մարդ է գառնում, վեր է կենում մեղանից ծածուկ ջրեր է վերցում, և մենք էլ պէտք է լռինք:

— Ինչ անես, բանն այդպէս է եկել դիտես, օրէնքով չի կարելի մարդկանց մեջ վերաւորել:

— Զգում եմ, զգում եմ, որ յիմարութիւն էր իմ արածը: Բայց վերջը, ես նրա հախից կդամ: Հիմա տեսնենք, թէ այդ խանութը եր-

կար կտեի՞։ Մի քանի տարիից էլի մի օյին կը-  
հանի, երկրորդ խանութը կբացի։ Այ, այդ խա-  
նութն էլ շինել է որդու անունով. մի ուրիշն էլ  
կընի միւս որդու անունով։ Եետոյ ըուբլին  
10 կոպէկ կտայ. . .

Այդ խօսքերի վրա մուժիկը կիտեց յօնքերը  
և մի ինչ որ թերահաւատութեամբ ասայ. —

— Ի՞նչպէս։ Միթէ դա հաստատ է։

— Ի՞նչպէս որ ես ձեղ իմ առաջ կանգցած  
եմ տեսնում։ այնպէս էլ հաստատ է այն, ինչ  
որ ձեղ ասում եմ։

— Թէ ի՞նչ։

— Որ խանութը շինել է մեծ որդու անունով։  
— Զի կարող լինել. — բայցականչեց Ստեփա-  
նովը։ Եետոյ նկատելով Դոդոշեանի զարմանքը,  
մի քիչ մեղմացրեց։

— Դուք կարող եք չհաւատալ բայց ես ա-  
սում եմ, ուղիղ է։

Դոդոշեանը բարկացաւ և սկսեց ձեռքի փայ-  
տով մայթի քարերին հարուածներ տալ իմկ  
մուժիկի երեսի վրա սկսեցին առաջանալ կար,  
միր ակօսներ, յետոյ երեացին խորշոմներ։ Նա  
մինչեւ այդ բոլոր խօսակցութիւնը լսում էր հե-  
տաքրքրութիւնից զրպված, իսկ այժմ նա լարեց  
ուշագրութիւնը։ Նա այժմ Ասկերշեանի վիճա-  
կով տւելի հետաքրքրվեց։ Եւ դա հասկանալի  
է, որովհետեւ նա փող է տուել և սրանով մի.

ջոց էր ստեղծել Ոսկերչեանի համար, որ այդ  
գործով կարող կլինի հաստուցանել սրարաքը,  
իսկ այժմ լսելով, որ խանութը բացել է որդու-  
անունով, նա իր պլանները խախտված էր հա-  
մարում։ Եւ միթէ այդ մարդուց նա խարվել է  
կընի։ Այդ պատճառով նա յետախցյա աչքե-  
րով նայեց Դոդոշեանին և կարծես նրա հա-  
յեացքների մէջ կամենում էր կարդալ ասած-  
ների ծշտութիւնը. . .

— Այն, զազան է, զազան, — բայցականչեց Դո-  
դոշեանը, տեսնելով մուժիկի զարմանքը, բայց  
չհասկանալով նրա մոտածման պատճառները. —  
Կթէ ես լինէի, մի օր նրան չէի պահիլ։ Բայց  
հա՛, լսել եմ, — յանկարծ խօսքը փոխեց նա, —  
ձեղ էլ է փող տալու, Ճիշտ է։  
— Ճէ. այս, տալու է։

— Տեսէք, չխարի. շատ է։

— Անշան գումար է։ Դուք հաստատ գիտէք,  
որ խանութը որդու անունով է։

— Թղթերը չեմ կարդացել բայց դա հաս-  
կանալի է։ Որդին արդէն խրիդի է գնացել դոր-  
ծակատարի հետ։

Այդ միջոց մի չարաճճի տղայ մօտեցաւ, հանեց  
իր ձեռքում բոնած գունաւոր թղթերից մի  
թերթ և տուեց Դոդոշեանին, միւսն էլ մուժիկին։

— Ահա, տեսնում եք, ի՞նչ օյններ է, —  
խօսեց Դոդոշեանը՝ բարկութիւնից պաօշները

կրծելով:—Կարդացէք, տեսէք թէ ի՞նչը է ա-  
նում: Զէ, սա խելագարութիւն է: Մեր աշխար-  
հում այդպիսի օյիններ չկային:

Եւ նա կարդաց. «Գերագոյն — ինտելիգենտ  
մագաղին», նոր բացված այս ինչ տեղում: ստաց-  
ված են սեղօնի կտորներ. Սասուն, Զէյթուն  
Զէփիւռ...

— Այդ ի՞նչ բաներ են:  
— Ով է իմանում:

Եւ խկապէս յայտարարութեան վրա խո-  
շոր տառերով զրած էին այն ժամանակվաց  
քաղաքական աշխարհի հրատապ խնդիրների  
բառերը, որով մլրտվում էին զանազան կտոր-  
ները:

— Տեսնո՞ւմ էք ինչ ձարպիկ րեկլամ է, —  
խօսեց Թօդոշեանը, — ամերիկացիք անդամ չեն  
կարող հնարել... խանութի անունն էլ զրել է  
«Ինտելիգենտ»:

Ստեփան Ստեփանիչը գնալով յուղվում էր  
ու գրգռվում յատկապէս իր յիմարութեան  
վրա: Իր ունեցած հաւատարմութիւնը դէպի  
այդ մարդն ոտնակոխ էր անվում: Եւ այդ բա-  
նում նա մեղաղրում էր միայն իրան, որ այդ  
շափ միամտաբար հաւատ էր ընծայել.

— Այո՛, նա որ կայ, օձ է, Օձին տաքացրու,  
նա զարձեալ կուղե թունաւորել տաքացնողին:  
Մուժիկը զարձեալ կամեցաւ մի բան առել,

բայց չկարողացաւ և առանց մի խօսք ասելու,  
ձեռքով մի շարժում արաւ ու հեռացաւ:

Գալով գրասենեակ՝ նա դեռ չէր հանգստա-  
նում: Նրա սրտի մէջ ծագած կասկածները զնա-  
լով բարդվում էին և նա արդէն որոշ կերպով  
մի տեսակ ատելութիւն զգաց դէպի Ոսկերչեանը:  
Մի աւելորդ անգամ նա բարկացաւ իր յիմա-  
րութեան, սխալի վրա:

— Որ այդպէս է, հիմա ես քեզ հետ կխօ-  
սմ՝ — ասաց նա, մի նախատական բառ ուղղե-  
լով Ոսկերչեանի հասցէին:

Գրասենեակում գործակատարներն արդէն  
սկսեցին ցրվել: Ստեփանովը չնկատեց մինչեւ  
անգամ իր միայնակութիւնը: Նա խոշոր ու  
հարուածաւոր քայլերով չափում էր սենեակի  
անկիւնները: Արիւնը նրա գլխին էր տուել: Մու-  
ժիկը շատ զիջողաբար էր վերաբերվում դէպի  
մարդկանց սխալութիւնները բայց շատ անողոք  
էր, երբ նրան համբերութիւնից հանում էին:  
Նա այդպիսի դէպիքերում վարվում էր քէնա-  
ռութեան նախանձով և այդ պատրաստում էր  
այնպիսի նուրբ ձևերով, որ չնկատի նրա հա-  
կառակորզը:

Այժմն էլ նա ծրագիր էր կազմում մի կերպ  
սաղացնելու իր փողերը և երկրորդ՝ պատճելու  
աղուէսին, — բայց ի՞նչպէս անել, ո՞ր կողմից  
այդ աղուէսին, — բայց ի՞նչպէս անել, ո՞ր կողմից  
սկսել: Իսկ եթէ նրան չաջողվի այդ գայլին իր

Թակարդը գցել։ Այդ մոքից նրա արիւնը զլիսին  
էր տալիս և նա խոշորացնելով քայլերը՝ կրկին  
ու կրկին անդամ խորասուզվում էր իր մըտ-  
քերի մէջ։

Է.

Ստեփան Ստեփանիչի կասկածանքները,  
կարծես, արդարանում էին։ Այն օրից, երբ նա  
պատահեց Դօգօշեանին, որքան նա ցանկանում  
էր Ոսկերչեանին գցել իր ցանցերի մէջ, սաղաց-  
նել իր փողերը, բայց և պյառէս այդ չէր աջող-  
վում նրան։ Այժմ միայն նա համոզվում է, որ  
իր նպատակների մէջ չարաշար սիսալված է։  
Գուցէ լաւ կանէր, որ հէնց սկզբից հրաժարվէր  
մի մասից, բայց զըկվել այն գումարից, որը  
այժմ նրան պարտ է Ոսկերչեանը, այնքան էլ  
դիւրին չէր։ Իսկ մուժիկը հաւատացած էր, որ  
այն ժամանակ Ոսկերչեանից ոչինչ չէր դուրս  
գալ, նա երբէք չէր երևակայում, որ Ոսկեչեանն  
խսապէս այդքան գումարի տէր է։ Բայց այժմ  
վերաբերվել այնպէս անտարբեր և սպասել ժա-  
մանակին, նա չէր կարողանում։ Բայց մի և նշն  
ժամանակ նոր մանուֆակտուրային գործն օրէ-  
ցօր մեծանում էր։ Մուժիկն այժմ կասկածում  
էր, որ վատագայից գցացած գումարները մըտ-

նում են խանութ։ Երեսյթները քանի գնում,  
այդ կասկածանքները հաստատում էին։  
Որքան էլ զրութիւնը կասկածելի լինէր, նա  
լաւ համարեց սպասել ձինորսութեան ժամա-  
նակին — երբ որ կդար օրը հաշիւը յստակելու։  
Գուցէ Ոսկերչեանն այդ ժամանակ հաշիւը կվեր-  
ջացնէր, կմաքրէր, այնուշետե մուժիկի գեօրա  
ինչ թէ մում անունով է բացած խանութը։ Մինչ  
դեռ խանութի գործը Շարմաղեանի շնորհիւ խ-  
կապէս գրաւում էր քաղաքացիների ուշաղրու-  
թիւնը։ Արդէն բոլոր վաճառականների մէջ մէծ  
խլատում ընկաւ։ Շարմաղեանը խանութին մի  
արտակարգ շքեղութիւն առւեց։ Նա խանութը  
լուսաւորեց էլեքտրական լուսով (դա առաջին  
փորձն էր Աստրախանում), խանութի գիմացի  
փողոցը ասվալատով վերցրեց։ Այդ անսովոր նո-  
րութիւնները թերահաւատ վաճառականների  
կասկածաւոր երևակայութիւններին առատ նիւթ  
էին, մասակարարում։ Ամեն անկիւնում նրանք  
խօսում էին, թէ այդ խանութն երկար չի տեիլ  
ծախսերի տակից չի դուրս գալ։ Բայց քանի  
որ սառարանում էին անհեթեթ ենթադրու-  
թիւններն, այնքան ևս աւելի առաջ էր գնում  
խանութի գործը…

Դուան առաջ միշտ կանգնած էին լինում  
կառքեր, խանութ յաճախորդների բազմութիւ-  
նից մտնել չէր լինում։ Իսկ խանութում ման

Մ

էր գալիս ինքը Շարմաղեանը և կարգադրութիւններ էր անում, յաճախորդների հետ էր զբաղվում, մօտենում էր կասույին, որի առաջ նստած էր Ալեքսանդրը, առաջարկում էր յիշատակարան անց կացնել այն պակասը, որ նկատվում էր առեւտրի ժամանակի: Խանութում լայն կրեղիք էր բացած ինտելիգենտ—պրօետարիստի համար: Այդ հանդամանքն առիթ տուեց նոր հոսանքի: Այդ ամենի վրա աւելացաւ և էժան գնով ծախելը: Ի՞նչ ասել կուզի, այդ աջող առեւտուրը նորից առանձին խօսակցութիւնների տեղիք տուեց վաճառականների աշխարհում: Գտնվեցան այնպիսիները, որ արդէն ասում էին, թէ Ոսկերչեանը 20 կօպէկ է տուել մանէթին, եթէ ոչ երբէք չէր կարող այդպէս էժան գնով ծախել: Առհասարակ վաճառականները չէին կարողանում ըմբռնել թէ ինչպէս կարելի է էժան գնով ծախել այն տիսակ ապրանք, որը ենթարկվում է մօգայի տատանման, ի՞նչ պէտք է անել եթէ բոլոր գնածը չի ծախվի:

—Ես կարծում եմ, որ այդպիսի գնով առեւտր անողները մնասվում են, —ասում էր մի վաճառական:

—Զկարծես, —հերքում էր ուրիշը, —նա խորամանկ է, առաջին տարին այդպէս էժան գընով է ծախում, որ մուշտարի չաղ անի, յետոյ, երբ որ մուշտարուն սովորեցրեց, երկու զին

կառնիք: Մուշտարին քոռ մարդու օրումն է, ինչ տեղ սովորաւ, այնտեղ զնում է, դու հազար նրան ասա, որ կողքի գուքանում նկանից էժան է, բայց նա էլի իր սովորած տեղը կդնայ: Եւ այդպէս երկար ժամանակ Ոսկերչեանի նոր խանութը խօսակցութեան առիթ էր տալիս: Իսկ այդ ընդհանուր ֆօնի վրա զծաղրվում էր Դօգօշեանի կիրքը... Խսկապէս այդ մարդը հորաշքներ էր գործում, —մտածում էր նա, —և միթէ ես ոչ մի կերպ նրա հախից չեմ կարող գալ: Իսկ Ոսկերչեանը քննածիծաղ էր տալիս այդ խլբառներին, ձեռքերն էր շփում իր մտածած յաջողութեան վրա և մտածում էր աւելի ու աւելի ընդարձակել իր գործերը: Այդ աւելի ու աւելի ընդարձակել իր գործերը: Այդ առիթով նա մինչև անգամ խորհուրդ կազմեց: առիթով նա մինչև անգամ խորհուրդ կազմեց: Խորհրդին, ինչ ասել կուզի, մաշնակցեց Շար- խորհրդին, ինչ ասել կուզի, մաշնակցեց Շար- մաղեանը, Ալեքսանդրը, Եւգինին և մինչև ան- գամ երկու միւս որդիքը, որոնք կառավարում էին վատագայի գործերը:

Բոլոր ժողովվածների արամադրութիւնը խիստ ուրախ էր: Յաջողութիւնը թէ վատա- գայում և թէ խանութում այնքան բարեկեր էր, որ այդ ընտանիքի արամադրութիւնը լարել էր շատ ցանկալի կերպով:

—Մինչև այժմ գուք ողքան օբօրօտ էք ա- րելք—հարցրեց Ոսկերչեանը որդուց և Շարմա- ղեանից:

— Բոլոր գնած ապրանքը համարեա՛ վաճառքածէ, — ասաց Ալեքսանդրը:

— Կարծում եմ, որ կարելի է այժմ, նոյն իսկ հարկաւոր է ձմեռվայ խրիդի գնալ — ասաց Շարմաղեանը:

— Միթէ, — զարմացաւ հայր՝ Ոսկերչեանը. — շուտ չէ:

— Ոչ, ամենալաւ ժամանակն է. մինչև կրգնանք, մինչև պատուէր կտանք և մինչև էլ կտանանք՝ կլինի լաւ ժամանակը:

— Ինչպէս որ իմանում էք: Փող ողբան ունէք:

— 30,000, — ասաց Ալեքսանդրը:

— Սյու գումարը բաւական չէ, — զիմեց Ոսկերչեանը Շարմաղեանին:

— Ինչպէս կամենաք: Եթէ կարելի է, լաւ կլինէր, աւելի մեծ գումար գործ դնել: Ձմեռվայ ապրանքը թանգագին ապրանք է:

— 10 հազար, կարծեմ, կարող ենք էլի տալ, — զիմեց նա երկրորդ որդուն:

— Եատ հետ, — ասաց Գէորգը, — եթէ որ բոլոր ձուկը չտանք Ստոլինին: Սյաօր իսկ ինձ պուդին 75 կ. աւել էին տալիս:

Երկու տարի էր, որ Գէորգը վատագայումն էր, բայց այդ աշխարհի բոլոր նրբութիւններն արդէն լաւ հասկանում էր: Նրա բարձր, նիշար հասակը, մտածողական՝ մի քիչ էլ յանդուգն աչքերը

ոկտումբին զրաւել բոլոր վաճառականների ուշազրութիւնը: Ճշմարիտ է, նրա ժողովրդականութիւնն առ այժմն վատագայի բանւորներից զէնը չի անցել բայց և այդքանն էլ սկզբնական քայլերի համար քիչ բան չի համարվում: Գէորգի երակներում խոստանում էին զարթնել հօր շահամիրական ձգտութիւնները: Նա սովորել էր քաղաքային զարոցում և աւարտելուց յետոյ՝ սիրով մտել վաճառականտիկան առպարհէց: Նա հօր հետ նոր էր վերադարձել վատագայից և, իմանալով որ հայրը պարտաւորված է ձուկը տալ միմիայն Ստոլին Փիրմային, չէր կարողանում հաշտվել այդ հանդամանքի հետ: Թօրայում ձուկի զիմնը բարձրանում էր, իսկ նրանք պիտի այդ պարզ առաւելութիւնից զբկված լինեն:

— Ես կարծում եմ, ձուկի կէսը կարելի է կողմակի ծախել և սրանով մենք շատ հեշտութեամբ նոյն իսկ 20,000 կարող ենք դնել այդ գործում:

— Սյու ես զիտեմ, — ասաց հայրը, — տեսնենք... Եւ Ոսկերչեանի երեսի վրա փայլեց բնորոշինքնաբաւական արտայայտութիւն: Նա աչք զցեց եւզինէի երեսին և նրա վրա նկատեց զժգոհութիւն: Ոսկերչեանը զիտէր, որ այդ խօսակցութիւնը զուր չի զալիս տիկնոջը, այդ պատճառով նա կարծ կապեց և միայն մի խորհրդաւոր հայեացքով նկատեց.

— Ի՞նչ է, մուժիկի՞ն ես խնայում: Է՛հ, նա  
այնքան փող ունի, որ մի քանի հազարը ոչինչ  
նրա համար:

— Ի՞նչ էլ լինի, ես կարծում եմ, նրա պարաքը  
պէտք է տալ, վերջացնել — ասաց Ալեքսանդրը, —  
մենք կարող ենք այդ անել, միջոց ունինք:

— Կարծում ես, էնի գօրա էլ մեր ծախսերն  
են: Վերջապէս ձուկի դործում շատ զգոյշ  
պէտք է լինել այս տարի օգավեցինք, միւս տա-  
րի կարող է լինել անաջող որս — պէտք է փաքր  
ի շատ է ապահովութեան մասին չմոռանալ:  
Նոյնը ես կարող եմ ասել խանութի վերաբեր-  
մամբ, պէտք է նրա շահից անշարժ կայք ձեռք  
բերել: Իսկ աները միշտ մեծ տոկոս են բերել:  
Ես վաղը պիտի գնամ մուժիկին, տևանենք, կա-  
ջողվի՞ ինձ մի քանի հազար էլ ձեռք բերել  
կամ ձուկի կէտը տալ: Ուզում ես, դու էլ եկ  
ինձ հետ, որովհետեւ քեզ մօտ նա աւելի հա-  
ւատարմութեամբ կվերաբերվի:

Միւս օրը նրանք գնացին մուժիկին:

Մուժիկն այս անգամ ընդունեց աւելի սառը.  
այդ բանը մի քիչ զարմացրեց Ոսկերչեանին և  
նա հարց տուեց.

— Ի՞նչ է եղել այսօր ջոկ հանգի էք:  
— Ի՞նչ լինի, եղայր, — ասաց մուժիկը, — ձեզ  
լաւութիւն են անում: — Իսկ դուք փոխարէնը՝  
երախտամոռ էք լինում:

— Օրինաճկ:

— Ասսուած ձուկ է տուել դուք դալահալ  
ծախում էք ուրիշին: Տիմա, գիտեմ, կասէք  
բռնածն այս... ախր, այդպէս չել լինիր...

— Ես զարմանում եմ, Ստեփան Ստեփանիչ  
որտեղից էք լսում այդ լուրերը:

— Համեցէք վաղը բօրսա և կհամազվէք ամեն  
անկիւնում:

— Եյդ Դօղօշեանի օյիններն են. հաւատա-  
ցէք, նա ուրիշ զէնք չգտնելով, այդ միջոցով է  
իմ գէմ թակարդներ լարում:

— Զէ, թողնենք այդ ամենը, դուք ինձ ասա-  
ցէք, քանի միլիօն էք բռնել:

— Միլիօն ու կէս.

— Տեսնում էք, իսկ ես կարող եմ հաւա-  
տացնել որ չորս միլիօն էք բռնել:  
Ոսկերչեանը ծիծաղեց մի այնպիսի կեղծ ծի-  
ծաղով, որպիսին գուրս է գալիս այն լոպէում:  
երբ նրա նման մարդիկ չեն գտնում խօսք:

— Տեսնում էք, ծիծաղում էք. իսկ ես  
կրկնում եմ, որ ամենահաստատ աղբեւլներից  
գիտեմ, որ Ցարիցինից եկած Հրէաներն արդէն  
ուզում են գնել ձեզանից ձուկ: Վերջապէս, ա-  
սէք տեսնեմ: Ի՞նչքան ձուկ էք մտադիր տալու:

— Որքան բռնել եմ, համեցէք բոլորը:

— Եյսինքն:

— Միլիօն ու կէս:

— Բայց այդպիսով ձեր վրա 40,000 մանեթ պարտք է մնում:

— Համեցէք, մուրհակ տամ ձեզ. Եկող տարի, Աստուած կարժանացնի, աւելի աջող որս կլինի, բոլորը կստանաք, սա որ կայ ձուկ է. մի էլ տեսաք, մի օրում Աստուած այնքան տաւեց, 40,000 չե, որ հարիւրն էլ կծածկի: Համեցէք, ստացէք 40,000 -ի մուրհակը...

— Զե, բոլոր որսն ինձ տուր:

— Զարմանալի անհաւատ էք դարձել, Ստեփան Ստեփանիչ կարգադրեցէք նորից արտադրել մուրհակը, ապացոյց, որ ես չեմ փախչում իմ պարագից:

Մուժիկը կանչեց գործակատարին, պատուիրեց մուրհակը զրել իսկ ինքը շարունակեց.

— Եյդ էլ վերջին անգամ, այլ ևս զիջողութիւն չեմ անիլ, չմեղադրէք: Համոզեցէք ձեր հօրը, որ բոլոր որսը տայ, — զիմեց նա Ալեքսանդրին:

Ալեքսանդրն, որ ամբողջ ժամանակ դժգոհութեամբ էր լսում այդ վիճաբանութիւնը և նայում էր պատում խփած կասպից ծովի քարտէզին, ակամայից շուռ եկաւ և ասայ.

— Հաւատացէք, որ ես չգիտեմ, թէ որքան ձուկ է բռնած:

— Իսկ ձեր խանութի գործն ի՞նչպէս է զընում, — խօսքը փոխեց մուժիկը, — լսում եմ, լաւ

է, շատ ուրախ եմ: Տեսնում էք, այդ գործով ևս մասամբ պէտք է շնորհակալ լինէք ինձ:

Եյդ միջոց հաշուապահը բերեց մուրհակը և զրեց մուժիկի առաջ:

— Դէ, ինպրեմ:

Ոսկերչեանը կարդաց մուրհակը, վերցրեց զըսակոթը և ստորագրեց:

— Տեսնում էք, դուք կասկածում էք. Ես ձեզ ասում եմ, որ մաքուր մարդ եմ:

— Ես ինպրում եմ ստորագրել և՛ պ. Ալեքսանդրին:

— Եյդ ի՞նչու համար, — զարմացաւ Ոսկերչեանը:

— Զէ՞ որ դուք փող էք տալու, միենցն չէ, որ ձեր որդին էլ ստորագրած լինի:

— Ասենք թէ, — սկսեց ծռմռվել Ոսկերչեանը, բոլորովին հասկանալով մուժիկի խորամանկառաջրկութիւնը, — բայց, կարծում եմ, աւելորդ է:

Եյդ խօսակցութիւնից միայն բան չէր հասկանում Ալեքսանդրը: Նա զիտէր, որ հայրը պարտ է այդ գումարը և ապացոյցն այն, որ նա ստորագրեց մուրհակը, բայց բոլորովին չէր հասկանում իր ստորագրելու առաւելութիւնը: Նա մինչեւ անգամ մուժիկի պահանջը արդարացի համարեց:

— Եթէ կարեորութիւն կայ, ես կստորա-

զրեմ, — ասաց նա, — ես այստեղ մի վտանգ չեմ  
տեսնում:

— Բոլորովին ոչ մի վտանգ չկայ, — ասաց  
մուժիկը, — այլ սա մի առևտրական ձեւակա-  
նութիւն է, որ պէտք է կատարել:

— Ես թոյլ չեմ տալ, — ասաց հայր՝ Ուկեր-  
չեանը:

— Կրինում եմ, ես այս բանից վտանգ չեմ  
տեսնում: Կամենում էք, ես հօրս պարտքը ինքս  
կտամ, միայն այդ մուրհակները բաժանեցէք  
մասերի:

— Այդ հարկաւոր չէ, որովհետեւ մենք միշտ  
կարող ենք նորից գրել: Խնդրեմ...

Ալեքսանդրը վերցրեց մուրհակը և ստորա-  
դրեց, չնայելով հօր զիմալրութեան:

— Բաւականին ախմախ ես, — դուրս գալով  
զրասենեակից՝ ասաց հայրը, — որ չես իմանում  
բանն ինչումն է, ի՞նչու ես մէջ ընկնում:

— Ոչ, հայրիկ, դուք չափից դուրս կասկա-  
ծանքով էք վերաբերվում: Հէ՞ որ մենք այդ  
գումարը պէտք է հատուցանենք, ի՞նչ նշանա-  
կութիւն ունի, որ ես էլ ստորագրեմ:

— Տեսնում ես, որ ասում եմ մի ամիտ ես:  
Ո՞վ է նրան փող տալու:

— Ի՞նչպէս, — զարմացաւ Ալեքսանդրը:

— Այնպէս: Այդ գումարն ինձանից չէ՝ պա-  
հանջելու:

— Այո:

— Թող տեսնեմ ինչպէս էր ստանալու, երբ  
ես բոլոր վատագան արդէն շինել եմ Գէորգի  
անունով: Հապա, զարմանում ես... մինչև մի  
արուց նա ուշքի կգար, արդէն վատագայի  
տէրը կլինէր Գէորգը: Իսկ հիմա զուսպով և  
զլխով ընկած ես, պէտք է այդ գումարն ինքդ  
տաս:

Ալեքսանդրը շատ վշտացաւ հօր խարդախու-  
թիւնները լսելով, բայց արդէն ուշ էր: Չնա-  
խատեսնելով այդպիսի ելք այդ գործից, նա  
ստորագրեց մի մուրհակ, որը յետոյ նրան շատ  
թանգ նստեց:

Այր՝ Ուկերչեանի շահասիրական կրակը  
գնալով աւելի ու աւելի էր վառվում: Նրա  
մինչեւ այժմ արած քայլերը, մանաւանդ իրանց  
աջողութեամբ, ուղղութեամբ, էին նրա մէջ այն  
համոզմունքը, թէ նա գնում է ուզեղ գծով:  
Այդ հանգամանքը նրան այն աստիճան էր խը-  
րախուսում, որ նա դարձեալ սկսեց որոնել  
աւելի ևս հարստանալու միջոցներ: Բայց  
աւելի ևս հարստանալու միջոցներ: Բայց  
մենից առաջ նա կամենում էր վերջ տալ Ստո-  
լին ֆիրմայի պարտքին: Եթէ նրան աջողվի

այդ պարտքը չտալ մի անգամից ամբողջ խանութ յետ կզյի: Բայց թէ ի՞նչպէս պէտք է այդ անել ահա սրա վրա է, որ նա երկար ժամանակ մտածում է: Ոսկերչեանն արդէն սկզբնական քայլերն արել էր, վատագան դարձրել էր երկրորդ որդու՝ Գէորգի անունով և բանն այնպէս աջող էր գնում, որ եթէ Ալեքսանդրը չստորագրէր մուրհակը, Ոսկերչեանն արդէն եր նպատակին հասած էր համարում: Նա շատ վրդովված էր իր մեծ որդու անտակտ վարմունքից, մանաւանդ անտանելի էր թվում Ալեքսանդրի միամտութիւնը: Բայց և այնպէս Ոսկերչեան հայրը անհանգստանում էր հենց նրա համար, որ այդ ստորագրութիւնը կարող էր հիմնովին փոխել նրա նախամտածած ծրագիրների ուղղութիւնը: Զինէր այդ չարաբաստիկ ստորագրութիւնը, հայր - Ոսկերչեանից ոչինչ չէր կարելի պահանջել, որովհետև նա այժմ օրինական կերպով վատագայի տէրը չէ և ինքն էլ ոչինչ չունէր: Շատ - շատ, մի քանի ամիս պիտի կրէր անձնական արգելարանք պատիժը և գործը սրանով վերջանար:

Իսկ ի՞նչ է այդ պատիժը — մի չնչին բան այն ապահովութեան հետ համեմատած, որ ձեռք է բերում նա: Մինչդեռ հիմա քանի որ ստորագրել է և Ալեքսանդրը, նրա դրութիւնը բաւականին խախուտ է: Շատ հիշտ կարող են Ալեք-

սանդրի խանութը զրել: Այդ դրութիւնից դուրս գալու համար կար միջոց և Ոսկերչեանը վերջին ժամանակներս զբաղված էր այդ խնդրով: այժմ նա ուղղում էր հաղորդել Ալեքսանդրին, բայց նրա ձեռքը պահում էր այն հանգամանքը, որ որդին կարող էր չյօժարվել: Այդ պատճառով Ոսկերչեանն ընկաւ խոր մտածմունքների մէջ:

Մինչդեռ ժամանակը գնում էր: Տարիների սարքած գործը սպառնում էր քայքայվել: Մի ուրիշ հանգամանք ևս քիչ չէր վշտացնում Ոսկերչեանին: Այդ մուրհակը ստորագրելու օրվանից որդու և հօր փախարզարձ յարաբերութիւնների մէջ մի տեսակ սառնութիւն էր մտել: Մրանից մի քանի ամիս առաջ նա յըս ունէր, որ նրան կաջողվի մուրհակը նորից ստորագրել և այդ ժամանակ գուցէ, կարող կլինի միայն իր ստորագրութեամբ տալ: Բայց այժմ պատող լուրերից նա ստանում է այն տպաւորութիւնը, որ հաղիւ թէ այդ վերջին միտքն էլ կարողանայ իրագրութել: Ահա այդ հանգամանքների ծնորհիւ նա դարձել էր չափազանց նեղսիրա և զիւրագրգիտ:

Մանաւանդ նա շատ նեղացած է այսօր, երբ բօրսայում հաստատ լուրեր հասան նրա ականջին, թէ ֆիբման միտք ունի մուրհակներն անշաւշտ բողոքել, եթէ Ոսկերչեանները ժամանակին չտան պարտքը:

Սյդ զիշերը մինչև անգամ նա անքուն անց կացրեց։ Առաւօտը շուտով կանչեց նա իր մօտ Գէորգին։

— Ի՞նչ են խօսում բօրսայում։ Նոր ի՞նչ ես լսել…

— Առանձին ոչինչ կրկին նոյնը։ Երէկ ես պատահեցի մուժիկին անձամբ և նա ինձ ասաց, որ յօյս այլ ևս չդնենք, պահանջը յետաձղելու չեմ…

— Եւ այդ ինքը ասաց։

— Այօ։

Ոսկերչանը բարկութիւնից օկսեց կրծել իր բեխերը և վայր թռնելով տեղից, մի այնպիսի շարժում արաւ ձեռքերով, որ կարծես թէ կամենում էր բռնել իր որդուն և դուրս չպատել։

— Ուղարկիր Սիմօնի ետեից, ամա չէ, հարկաւոր չէ։

Գէորգն արդէն մի քայլ արել էր, կանգնեց։ Տիրեց լռութիւն և բաւականին երկար, տեսողական լռութիւն։ Վերջապէս Ոսկերչանը կրկին բռնկեց։

— Կնշանակի խախտվում է մեր դօվերիան։ Բաւական է, որ մինը պրօտեստ տայ, իսկոյն նրա ետեից կհետեւն միւս զործարանատէրերը։ Եւ այդ արդէն պարզ է. սա Դօլոշեանի տարածած լուրերն են, մուժիկն երբէք այդպիսի անհաւատարմութեամբ չե վերաբերվել։ Սյդպէս

չէր լինիր, ի հարկէ, եթէ յիմար եղայրդ չատուագրէր մուրհակը։ Տե՛ս և սովորի՛ր… Հիմա եկ ու էշին ցեխից հանիր….

— Ես կարծում եմ, հայրիկ, չարկին այնքան էլ անուղղելի չէ. կարելի է խանութը շուռատալ իմ անունով… մինչև անգամ յետին ամսաթուով… այն ժամանակ ամեն վտանգ անցած է…

— Սյդ վերջին բանն է, ես այդպէս էլ ուղում եմ անել տեսնեաք։ Իսկ դու յետոյ հօրդ մեզք չե՞ս անիլ… Օ՛, եթէ ինձ կաջողվի այդ անախորժութիւնները հեռացնել այն ժամանակ, տե՛ս, թէ ինչ եմ բերում այդ յիմար Դօլոշեանի դլուխը։ Նա ամեն կերպ բօրսայում իմ պատիւը վայր է գցում։ Մի տարի առաջ բօրսայում իմ անունը լսելուց դողում էին, ինքը ֆիրման մեծ յարգանքով էր վերաբերվում, իսկ այժմ այդ մարդիկ աշկարայ իրանց հակակրութիւնն են արտայայտում։ Ի՞նչ է հիմա մուժիկի մտածածը։ Նա կասկածում է և ես միջոց չունիմ նորից նրա հաւատարմութիւնը ձեռք բերելու։

— Բօրսայում, ծմարիտ է, խօսում են, բայց այնքան էլ չէ, որքան դուք կարծում էք, հայրիկ։ Վերջապէս Դօլոշեանը ինքը ինչ է, որ կարողանայ այդ աստիճան վնասել։

— Մուկը ինքը մի բան չէ, բայց որ ընկնում

է կարասը՝ մուրարում է, — դառնութեամբ բացականչեց Ոսկերչեանը:

— Յյո՛, վաճառականութիւնը ամեն մարդու խելքի բան չէ, — նորից սկսեց Գէօրգը, — հարկաւոր չէր Ալեքսանդրին այդպիսի գործի գնիլ:

— Կարծում ես ուրիշ տեղ զլուխ կհանէ՞ր Այստեղ զլիսին կանգնած ես՝ ինչ է անում, որ ինքնազլուխ ինչ անի: Ես կամենում էի ապահովել ձեզ, սրա համար գիշերներ եմ լուսացրել մտածել եմ ու մտածել և քիչ աջողութեան չեմ հասել, և այսօրվան օրը ես պիտի իմ փառքից ընկնիմ և բոլոր ձեռք բերածից զրկվեմ... Օ՛, ես խեղվում եմ այդ զրութիւնից:

— Դեռ յօյս կայ, հայրիկ, ի՞նչու էք այդպէս ասում:

— Յյո՛ս, այո՛, կայ, բայց շատ աղօտ. այս ես նախատեսնում եմ: Որտեղից չէիր սպասում հարուած, այնտեղից քար է ընկնում զլմիդ: Երբէք ինձ մեր գործերն անհանգստութիւն չեն պատճառել, որքան ներկայումս... էլ ինչ է մնում... Ջրերի վրա յօյս գնիլ չե կարելի, որովհետեւ նրան ձեռներիցս կտանեն: Մայիլեանն արդէն կեռիք է զըճացնում: Սրա համար էլ ես ուղում էի գոնէ խանութն ապահովել բայց այդ էլ չաջողվեց...

Բայց յանկարծ նա մեղմացաւ և սկսեց խօսել բոլորովին ուրիշ եղանակով:

— Հիմա ինչ անենք, — ասաց նա, — պէտք է նեղ զրութեան մէջ խելք բանեցնել հարկաւոր է առ այժմն համբերիլ: Կաշխատեմ մի կերպ ուղղել ատեսնենք: Դու ծածուկ պահիր մեր խօսածները... Բայց առաջ պէտք է նարմաղեանին ուղարկել քաղաքից, նրա ներկայութիւնը կարող է խանգարել և ապագայում նոյն իսկ վտանգաւոր լինել: Տեսնենք: Յոյսս դու ես: Իէ, ուրախ եղիր, ես էլ կաշխատեմ չիմանալու գնել որպէս զի չնկատվի գործի ծանրութիւնը: Տես, եթէ աջողեցրի, հօրդ չզրկես, չմոռանաս... Լաւ, լաւ, հաւատում եմ, մի առարկիր... զլնա... շատ ապրես...

Եւ հայր ու որդի բաժանվեցան:

### թ.

— **Պ**ործը լաւ հետեանք չի խոսանում... Այզպիսի խօսքերով Ալեքսանդրը մտաւ իր տուն երկու շաբաթ անցած այն օրից, երբ հայր - Ոսկերչեանը ճանապարհեց նարմաղեանին խրիպի:

— Ի՞նչ է պատահել, — անհանգիստ կերպով հարցրեց Եւզինէն, առաջ գալով ամուսնուն իւ ննջարանից:

— Էլ ինչ պատահի, — մրմիջաց Ալեքսանդրը,

յոզնած ձայնով և նստելով բազմոցի վրա, —

այն, որ հայրիկը դարձեալ մի նոր օյխն է հը-  
նարում:

— Ելի ի՞նչ:

— Ոչ այդ անկարելի է, — վեր թռաւ Ալեք-  
սանդրը, — լաւ հետեւանք չի խոստանում:

— Մի ասա տեսնեմ, թէ բանն ի՞նչումն է:

— Հայրիկը հրաժարվում է ֆիրմայի պարագը  
հատուցանելուց և կամենում է խանութը դարձ-  
նել Գէորգի անունով:

— Այդ նշանակում է մեզ բոլորովին զըկել  
և թողնել առանց միջոցների:

— Հապա... Եւ Գէորգը այնպիսի պտուղ է,  
որ այդ հանգամանքից իսկոյն օգուտ կքաղի:  
Նրա աչքերը հիմիկուց վառվում են: Մենք  
չարչարվում ենք, իսկ նա թեթև կերպով մեջ  
տեղ ուզում է ջրվե... .

— Զէ որ փողերը հայրիկի ձեռքումն են, նա  
պարտաւոր է պարտքից դուրս դալ:

— Ասում է, փող չունեմ... Ես յիմարս բո-  
լոր առեւտից գոյացած փողերը կունդ - կունդ  
տանում էի մօտը:

— Ո՞վ կմասձէր այդ տեսակ բան: Ես քեզ  
խորհուրդ կտամ սպասես մինչև Շարմաղեանի  
դալը:

— Զի սպասում: Նա ուզում է այս օրերս  
դորձը վերջացնել:

— Մի յօժարվեր... .

Տիվեց լոռութիւն:

Ալեքսանդրը վրդովված էր այն ասաիձան, որ  
չէր կարողանում հանգիստ նստել իսկ եղի-  
նէն կանգնած, մատներով թխկթխկացնում էր  
սեղանի երեսը:

Սյդ միջոցին սեղանի վրա դրած ժամացյցը  
զարկեց ութն անգամ: Ալեքսանդրը մի զժոհ  
հայեացք զցեց ժամացյցի վրա և ձեռքով մի  
շարժում անելով՝ բացականչեց.

— Եկ գնանք, ես ասացի, որ մինչև 8-ը կը-  
գամ:

— Ես գամ՝ ի՞նչ անեմ:  
— Ես գիշեր պէտք է վերջնականապէս այդ  
խնդիրը վճռվե. գու էլ անձամբ կլսես նրա ա-  
ռաջարկութիւնները:

Եւգինէն խորին դժգահութեամբ հափնվեց:  
Նրանք եկան հայր - Ոսկերչեանի մօտ:

Այստեղ արդէն նստած էին Ալեքսանդրի միւս  
կրիու եղբայրը՝ Գէորգն ու Միմօնը:

Հայր - Ոսկերչեանն իր գէմքին պարգևել էր  
մի տխուր կերպարանք, կամենալով այդպիսով  
զործի ծանրութիւնը աւելի ընդգծել: Եյսօրվայ  
«մի բաժակ թէյի» հրաւերից կախված է շատ  
բան, այդ պատճառով և նա վերաբերվում էր  
հրաւերվածներին լրջութեամբ: Հազիւ թէ հա-  
ւաքվել էին հիւրերը, ինչպէս պատրաստվեց թէ-  
յի սեղանը:

Ոսկերչանը մօտեցաւ սեղանին և հրաւիրեց  
տեղ բռնել սեղանի շուրջը: Իսկ ինքը շարու-  
նակ կառավարում էր սեղանը: Մէկ - մէկ շռայ-  
լում էր հանագներ, ուղղելով մուժիկի և Դօ-  
գոշեանի հասցեին սրախօսութիւններ:

—Միայն ընդհանուր համերաշխ միութեամբ  
կարող ենք գործի գժուարութիւնը հեռացնել:  
Մարդ չկայ, թշնամի չունենայ: Քրիստոս ինքը,  
մեռնեմ նրա զօրութեան, թշնամիներ ուներ:  
Ես հաւատայած եմ, որ սա Դօգոշեանի գործն  
է... եթէ մենք կիմանանք, մենք նրան կջախջա-  
խենք... Սու նստէք: Միմօն, թէյ ածա: Մենք  
պէտք է մի կերպ վճռենք: Ասա, ի՞նչ մտածե-  
ցիր, —գարձաւ նա դէպի Ալեքսանդրը:

—Համարեա ոչինչ:

—Բայց գու ամենից մօտ կանգնած մարդն  
ես. գու ես խանութիւնը, մենք ուղում ենք  
քո կարծիքն էլ լսենք... . . .

—Ինչ անենք, որ ես մօտ եմ; բայց անունով  
միայն, —խուսափական եղանակով յայտնեց իր  
գժգոհութիւնը Ալեքսանդրը:

—Զի՞ կարելի արդեօք սպասել Շարմազեա-  
նին, —ասայ Եւզինէն:

—Ընդհակառակը, մենք պէտք է ամեն ինչ  
այժմ վերջայնենք նրա բացակայութեան ժամա-  
նակ, քանի որ խանութում շատ ապրանք չկայ:  
Եյժմ կարելի է ենթալրել ամեն մի վաճառք:

—Եղբայրները լուեցին:

—Դուք այն պատճառով էք այդպէս երկիւ-  
ղով վերաբերվում, որ առեարական կեանքին  
անձանօթ էք, —խզեց լուութիւնը Ոսկերչանը:  
Ես չեմ ասում մեզ այժմ վտանգ է սպառ-  
նում, բայց ես գործին նայում եմ ուրիշ կող-  
մից — իսկ այդ չենշանակում, որ մենք խարդա-  
խութիւն ենք անում: Մենք գործին տալիս  
ենք այն ուղղութիւնը, որ առաջ է գալիս բնա-  
կան ընթացքից: Մեզ կմեղաղրեն, եթէ մենք  
չկարողանանք պահել մի խանութ: Բայց ես  
ասում եմ, որ վաղը, միւս օրը, երբ կարտա-  
յայտվի պահանջ, մի կարծէք, որ մուրհակնե-  
րը զիւրութեամբ կարտազրեն... Տեսէք, ինչ-  
պէս իմանում էք, միայն իմ վրա յըս մի  
կապէք:

Տիրեց կրկին լուութիւն:

—Թէյ ածեմ, — շարցրեց Գէորգը, կամենա-  
լով սրանով ցոյց տալ որ բոլորսին սովորա-  
կան կերպով և անվրդով սրաով է վերաբեր-  
վում արծարծվող խնդրին:

Նրան չպատասխանեցին.

Ոսկերչանը կրկին շարունակեց.

—Լուրերին և հանգամանքներին նայելով  
մենք պէտք է պատրաստ լինենք: Այս, սրա հա-  
մար էլ հենց հրաւիրեցի ձեղ այսօր, որ խոր-  
հրդակցենք, թէ ի՞նչ անենք, որ պատրաստ

լինենք այն դէպքում, եթէ չկամեցան մեր մուրհակները արագագրել:

— Ես միաք չունեմ խարդախութիւններ առելու, — ասաց Ալեքսանդրը, — ես պարագը կամենում եմ լրիւ հատուցանել միայն այժմս ես չեմ կարող այնքան գումար չունեմ. եթէ դուք հայրիկ, մի մասը տաք, վասնգն անցած է:

— Ուրախութեամբ, — ասաց հայր. — Ոսկերչեանը, — բայց ես այժմ ոչինչ չունեմ: Վատագայի տէրը այժմս սա է: Զգիտեմ մենք փող ունինք, թէ չչ... և նա այդ խօսքերով դարձաւ դէպի երկրորդ որդին:

— Ո՞րտեղից:

— Տեսնում էք: — Բայց պարտքը ո՞րքան է, կամ գումարի կարիքը ո՞րքան է, — հարցրեց Եւզինէն:

— 40,000 .ի, — ասաց Ալեքսանդրը:

— Եյդ միայն մուժիկի պարտքն է, բայց կան էլե ուրիշ պարտքեր:

— Նրանց մուրհակներին դեռ ժամանակ կայ:

— Իսկ մեզ այժմս աւելի, քան երբ և իցէ, փող է հարկաւոր — վաղը միւս օրը ապրանք կտուցվե... .

Հայր. — Ոսկերչեանը մի առանձին ուշագրութեամբ հետեւում էր մեծ որդու իւլաքանչեւր խօսքին: Եյդ խօսքերի մէջ նա գտնում էր յուսահատական և երկիւղալի հառաջանքներ:

Եյդ միջոցին ամենքը թէյի սեղանից վեր կացան և անցան դահլիճ: Այսաեղ նրանք նրասեցին: Ալեքսանդրի սիրտն այդ տհալանի առաջ մի տեսակ գող ընկաւ: Բայց և այնպէս նա աշխատեց աւելի սառն վերաբերվել և սպասել համբերութեամբ խօսակցութեան վերջին: Տպաւորութիւնների այդ խառնութեան տակ Եւզինէն էլ կարծես ընկառւց հոգւով, բայց այդ նա աշխատում էր ծածկել որպէս զի ամուսնու վրա չգործի աւելի ծանր տպաւորութիւն: Երկու ամուսիններն էլ կարծես, աշխատում էին մէկ - մէկուց ծածկել իրանց սրտերի յուղ մունքը:

— Վերջապէս, ասացէք տեսնենք, թէ ի՞նչ է մնում անելու այդ զրութիւնից դուրս գալու համար: Իսկ ես կարծում եմ, որ միակ ելքը այդ անախորժութիւնից դուրս գալու համար, — նոր ուժով շարունակեց Ոսկերչեանը, — մնում է անել այն, ինչ որ սովորաբար անում են այդպիսի գէպքերում՝ պէտք է փոխել խանութիւնները: Մա անվում է շատ սովորական կերպով: Պաշտօնական թղթերը կարող են լինել մէկի անունով, իսկ մնացած բաներում առն ինչ աւել դարձեալ կմնաս դու... .

Եյդ վերջին խօսքերով նա դարձաւ դէպի Ալեքսանդրը: Միայն այդ խօսքերից յետոյ հայր. — Ոսկերչեանը զգաց մի տեսակ թէթեսութիւն:

Ունկնդիրները մի տեսակ շարժում արեցին,  
բայց ոչինչ չառարկեցին: Գէորգը մի ինչ որ  
բան մըթմիթաց քթի տակ, բայց նրա վրա ու-  
շաղրութիւն դարձնող չեղաւ:

— Դուք լսեցէք փորձված մարդուն, — ասաց  
Ոսկերչեանը, — սա է միակ և շատ սովորական  
ձանապարհը: Մենք խանութը կշինենք ուրիշի  
անունով և վաղը, միւս օրը, երբ մուժիկը  
կարտայայտի իր պահանջը, ոչինչ չի ունենալ  
ստանալու. իսկ հակառակ դէպքում, ես ասում  
եմ առանց քաշվելու, նա կարող է զրել խա-  
նութը և տեսէք, թէ սրանից ինչ է առաջ  
դալիս, ինչպիսի խայտառակութիւն: Բոլոր  
թշնամիները կուրախանան: Դու կարծում ես,  
այն մեծ ֆիրմաները չեն դիմում այդ ձանա-  
պարհին: Ես քեզ հաստատ խօսք եմ ասում,  
արդար ձանապարհով և աղնութեամբ ոչինչ  
չես անիլ. սա որ կայ՝ առետուր է... .

Գէորգը չփիմացաւ. նա վեր կացաւ և մի պա-  
տետիկ շարժումով բայցականչեց.

— Հայրիկը ճիշտ է ասում. ես կատարելա-  
պէս համաձայն եմ նրա առաջարկութիւների  
հետ:

Տիրեց խորին լռութիւն, որին հետեւ Ալեք-  
սանդրի խոր հառաջանըը: Մինչդեռ հայր՝ Ա-  
կերչեան աւելի թեթեանալով՝ ասաց Գէորգին.  
— Դու սպասիր ես մի վերջացնեմ... .

Բայց Գէորգը չկարողացաւ զսպել իրան և  
շարունակեց.

— Կայ մի ուրիշ ելք, — ասաց նա:

Ս.մենքը սրեցին իրանց ուշազրութիւնները:

— Կարելի է այդ խանութը թազնել հէնց  
այդպէս, — շարունակեց նա, — բայց ֆիկտիվ  
մուրհակ տալ մէկին: Ասեմ՝ թէ ինչպէս: Երբ  
որ մուժիկը պահանջ կանի, նա կարող է իր  
գումարը լրիւ ստանալ այսինքն՝ մանեթին մա-  
նեթ, քանի որ խանութում կայ բաւականին  
ապրանք. իսկ եթէ մենք տակից գուրս կրեմնը  
ուրիշ մուրհակ, այն ժամանակ նա փոխանակ  
մանեթի, կստանայ կօպէկներ: Օրինակ՝ թողէք  
Ալեքսանդրը տայ մէկին՝ ասենք հէնց ինձ,  
մուրհակ մօտաւորապէս 40,000 -ի, այն ժա-  
մանակ մուժիկին կմնայ ստանալ մի չնչն գու-  
մար, որովհետեւ ընդհանուր պարաքը կլինի  
80,000: Բայց որովհետեւ խանութից կգցանայ  
30—40 հազարի ապրանք, ուստի այդ գումարը  
հաւասար կբաժանվի: Կարող էք մինչև անգամ  
աւել տալ, այն ժամանակ մուժիկին հասնում  
է շատ չնչն գումար, որովհետեւ առիւծի բա-  
ժինը դարձեալ կհանի մեզ:

Ոսկերչեանին գուր չեկաւ այդ առաջարկը, ո-  
րովհետեւ նա չէր ուզում խանութի ոչ մի մասից  
զրկել բայց նա դժոհութեան ձեւ ցոյց չուուեց,  
այլ հաղալով՝ մաքրեց իր կոկորդը և շարունակեց.

— Ես կարծում եմ, որ աւելի լաւ կլինի վոխանակ մուրհակի թղթերը շուռ տալ Գէորգի անունով, որովհետև Գէորգն, իբրև տղամարդ, ձեզ կարող է պէտք դալ օգնել Եւ այդպիսով մենք ստիպված չենք լինիլ նոյն իսկ մի որոշ մասն էլ տալ: Քո առաջարկածով խանութի կէսն է դնում, իսկ իմ ասածով՝ մեզ աջող վում է ամբողջ գումարը պահել մեր ձեռքում:

— Բայց հս ստիպված կլինեմ նստելու, — ասաց Ալեքսանդրը:

— Չենք թողնիլ քո տեղ ես կլրեմ այդ պատիժը, չէ՞ որ ես էլ եմ ստորագրել այդ մուրհակը: Վերջապէս, ինչպէս իմանում էք, — վեր կացաւ Ոսկերչանը տեղից և գժղոհութիւն արտայայտելով, — այնպէս էք վերաբերվում ասածներիս, կարծիս, երէկ՝ մէկէլորդայ երեխայի առաջարկութիւն էք լսում: Այսքան տարի այդ ասպարիզում կեանք ենք մաշել միթէ պիտի չիմանանք... Չեք ուզում, մի՛ վոխեք, թողէք մնայ, միայն թէ վաղը, միւս օրը, երբ կզայ մուրհակի ժամանակը, իմացէք, որ խանութի պահելը դժուար կլինի:

— Կատարելապէս ճիշտ է, — մէջ ընկաւ Գէորգը:

— Գոնէ մի քանի օր ժամանակ տայիք մեզ մտածելու, — խօսեց Եւղինէն:

— Քանի օր է, որ ես ասում եմ — և եթէ

այսօր չվճռեցինք, վաղը գնում եմ... Միայն այս գործը չէ, չեմ կարող ձեր գործի պատճառով միւս գործերն էլ թողնել:

Ալեքսանդրն ընկաւ մնածմօւնքների մէջ: Ինչ ասել կուզի, նա այդ առաջարկութիւնը չէր հաւանում: Այժմ նա տեսնում էր, որ ինքը անել զրութեան մէջ է, ուզում էր գոնէ կնոջն ապահովէր: Ի՞նչ կլինի ինոջ զրութիւնը, եթէ նրանից բոլոր խանութն անցնի: Ահա այդ պատճառով նա չէր համաձայնվում հօր ծրագրին, բայց մի ուրիշ ելք ևս զտնել չէր կարողանում: Երկար տատանվելուց յետոյ նա այնուամենայնիւ ստիպված եղաւ հօր առաջարկածի վրա կանդ առնել:

Միայն միւս օրը, հօր զնալուց յետոյ, երբ պէտք էր խորհրդի վճիռը գլուխ բերել նրա զիխում ծագեց մի նոր միտք, որի պաշտպանութեան համար նա ամեն կերպ ծիգ թափեց: Այդ նապատակով նա ասաց իր եղբօրը, երբ այս վերջինս թղթերը փոխելու նպատակով եկել էր նրա մօտ:

— Ես տեսնում եմ, որ այդ թիւրիմացութիւնները ոչ մի եղբակացութեան չեն բերում: Ես ուզում եմ առաջարկել մի աւելի լաւ միջոց: Կարելի է խանութը շինել քո և Եւղինէի անունով: Այս, հս այս զիշեր մտածեցի և սրանից աւելի լաւ միջոց չեմ գտնում:

Բարեբախտաբար առաջարկութիւնն ընդունեց եղբայրը: Նա միայն ասաց.  
— Արդեօք հայրիկը համաձայնի՞:  
— Հակառակ դէպքում, ես համաձայն չեմ:  
Մի ժամկց յետոյ երկու եղբայր զիմեցին իրանց վճիռը զլուխ բերելու:

Ժ.

**Ա**լեքսանդրն արգէն վերջացրել էր խանութիւնի մի գոփերի փոփոխութեան գործը: Նա համոզված էր, որ սրանով ապահովել է իրան և իր կնոջը: Յատկապէս այդ բանն էր, որ նրա մտածման առարկան էր դարձել վերջին ժամանակներս: Սյժմ հանգստանալով այդ հոգսից, նա նուիրվել էր գործին այն յուսով, որ ապագայում կարողանայ թափել իր պարագը: Երբ կաջողվել նրան զնել խանութիւնի այն մասը, որ պատկանում էր եղբօրը, Ալեքսանդրը կրկին կդառնայ նրա միակ տէրը:

Սյդպիսի ոգեսրութեամբ նրա համար սկըսվում էին օրերը: Մինչև անգամ նա նկատում էր, որ օրերն իրանց ընթացքն անդամ արագացրել են: Սյդպիսի մի օր նա վեր կացաւ և զգալով հոգեկան մի առանձին բաւականութիւն՝ մի առանձին ուրախութեամբ պատրաստվում

էր թէյ խմելու, երբ նրան յայտնեցին, որ Թոմաս Արտեմիչը վերադարձել է:  
Ալեքսանդրը յետ դարձաւ և տեսնելով գոան մէջ Շարմաղեանին, վեր կացաւ նրան զիմաւրելու:  
— Եւդինէ, Եւդինէ, Թոմաս Արտեմիչն է եկել:

Գալներդ բարի, — Հնչեց Եւդինէի ձայնը, — ինչ լաւ ժամանակի եկաք, թէյը պատրաստ է, ինդրեմ այս սենեակը, — Հրաւիրեց Եւդինէն՝ ընկատելով Շարմաղեանի կոտրված տեսքը:

— Միթէ դեռ թէյ չէք խմել — հարցրեց Շարմաղեանը մի յոզնած հոգոց քաշելով:  
— Այո, ի՞նչ զարմանք, դեռ ինը ժամը չկայ... Բայց այդ ի՞նչ է ձեր հայեացքը, կարծես թէ յոզնած էք... .

— Այո, Մօսկվան յոզնեցրեց:  
— Ենչպէս, ի՞նչ է եղել:  
— Ի՞նչ պէաք է լինի, իրիդ անել չաջողվեց: Ալեքսանդրը և Եւդինէն շատ անհանդիսակ բարպով լարեցին ուշադրութիւնները:  
Ինձ խոստացան ապրանք բաց թողնել բայց... .

— Բայց ի՞նչ:  
— Փողերս առան, ապրանքը կապեցին, բայց յետոյ չթողեցին, ասելով որ ապրանք այլ եւ կրեղիտ չնկը կարող բաց թողնել:

Մի՞թէ, բացականչեց Ալեքսանդրը սպառդ  
նելով: — Ո՞վ այդպէս վարվեց:  
— Թաւիշի և ղրապի ֆարրիկանտները: Քիչ  
մնայ, որ միւսներն էլ նոյն ձեռվ վարվէին, բայց  
ինձ աջողվեց նրանց համողել: Շատ անսպասիլի  
վերաբերում էր: Այստեղ գուցէ մի բան գրել  
են, կամ մի բան եղել է, որ ես չըգիտեմ:  
— Մի առանձին բան չի եղել, շարունակեց  
Ալեքսանդրը առաջ կերպով: — Միայն խանութը  
փոխեցինք Եւզինէի և Գէորգի անոռնով:  
— Ի՞նչպէս, ինչո՞ւ, — զարմացաւ Թօմաս Ար-  
տիմիչը:

— Պարտքի ժամանակը մօտենում է, փող  
չկայ, իսկ Հայրիկը վախում էր, որ խանութը  
չդնայ ձեռներից: Կամենում էր փոխիլ խանու-  
թը եղօրս անունով բայց ես վախեցայ, որ մի  
գուցէ եղայրս ինձ զրկի և ես ստիպված լինեմ  
պարտքը մենակ տալ լաւ համարեցի Եւզինէի  
անոռնով էլ շնորհ առաջ լաւ չարի:

— Ցաւօք սրտի պիտի ասեմ, որ ոչ լաւ չէք  
արել:

Ալեքսանդրի երեսը և կզակը ձգվեց ու ընդու-  
նեց մի երկու կերպարանք:  
— Ինչով, — Հարցրեց Եւզինէն:  
— Ես մի քանի խօսքով չեմ կարող այժմ  
ասել: Բայց եթէ կլակը ինձ, խորհուրդ կամ  
հաշտութիւն կայացնել պարտքատէրերի հետ:

— Միայն այժմ փող չկայ:  
— Պէտք է ճարել և հաշտվել...  
— Բայց նստենք, թէյ խմենք, — Հրաւիրեց  
Եւզինէն, — թէյի վրա կխօսենք:  
Նրանք նստեցին:

Մինչդեռ խանութի փոփոխման գործը կայ-  
ծակի արագութեամբ անցաւ բերանից բերան:  
Թշնամիները ձեռքերն էին շփում ուրախու-  
թիւնից: իսկ Թօգոշեանը եօթերորդ երկնքումն  
էր զգում իրան, երբ իմացաւ, որ Մօսկվա զրած  
նամակը իր ազգեցութիւնն արել է: Կային, որ  
մեղադրեցին Ալեքսանդրին նրա մեծ մեծ ծախ-  
սեր անելու համար: Զարմանալին այն էր, որ  
Ոսկերչեան հօր ստուերն էլ կասկածանքի մէջ  
չէր:

Ալեքսանդրն այդ լսելով՝ խեղդում էր իր  
զժողովութիւնը: Հարկաւոր էր սառնութիւն և  
զգուշութիւն պահպանել որպէս զի Փիրմայի  
առաջ զցի իր վարկը, որովհետեւ այդ միջոցով  
միայն հասրաւոր էր վտանգի առաջն առնել:

Այդ ժամանակներն էր, որ Ոսկերչեանը մի օր  
կանչեց իր մօտ Շարմաղեանին:  
Պատահելով նրան՝ Հայր - Ոսկերչեանը հարց  
ու փորձ արաւ խանութի զրութեան, բօրսայի  
տրամադրութեան մասին: Նա կամենում էր

սրանով իմանալ. թէ ի՞նչ քայլ է արել մուժիկը, բայց համոզվելով, որ դործելը նախկին դրութեան մէջ են, խօսքը դարձրեց ուրիշ առարկայի վրա:

—Ես ձեղ իսկապէս այսօր կանչել եմ մի կարևոր գործով, —ասաց նա: —Ես շատ եմ մտածել բայց ձեզանից աւելի յարմար մարդ չեմ դաւել: Օ՛, ես հաւատացած եմ, որ գուք հաւատարիմ կլինէք: Բանը նրանումն է, որ ես ունիմ մօւրհակներ՝ մինչև 12,000 բուբլու...

Սյդ խօսքերից յետոյ նա ձեռքը տարաւ ծոցը, կարծես, մի բան հանելու մարդով, բայց յանկարծ տեսնելով Թոմաս Արտեմիչի աչքերի ուրախ փայլը, մի տեսակ կասկածանքով վերաբերվեց —և խօսքը կտրեց:

—Խոզրեմ; խնզրեմ; —ասաց Շարմաղեանը, —ես ձեղ խօսք եմ տալիս, որ այդ կմնայ գաղտնիք իմ մէջ:

—Հաւատում եմ: Ես այդ մօւրհակները կամենում եմ փոխել տալ մէկի անունով որպէս զե ինձանից պահանջ չլինի:

Շարմաղեանը չուց աչքերը:  
Ոսկերչեանը հանեց մօւրհակները ծոցից և ցոյց տուեց Թոմաս Արտեմիչին: Բոլորը երեք հատ մօւրհակ էր 4000 բուբլուց իւրաքանչեւրը, որոնցով պահանջ ունիր ինքը Ոսկերչեանը:

—Ահա այդ մօւրհակներն են, որ ուզում եմ զրել տալ ուրիշի վրա: Հասկանում էք, սրանց հարկաւոր է անշուշտ փոխել և որա մասին կամենում էի ձեզ հետ խօսել խորհրդակցել: ում անունով խորհրդու կտաք. գիտէք իսօ, ինչպէս է անվում: մօւրհակի ետևում կմակազեմ՝ «Եթե օօօրու ու մենք», կյանձնեմ մէկին, իսկ սա ստանալուց յետոյ՝ փողերը պէտք է ինձ գարձնէ: Ի հարկէ, սրա համար ես պարաստ եմ մի յայտնի տոկոս տալ: ոչ ոք ոչ ոքի համար պարտական չէ մօւֆաայ ծառայութիւն անելու: Գիտէք, եթէ այդպէս չանեմ ինձանից այդ գումարը դատաստանը կդրաւի յօդուա ֆիրմայի, հասկանում էք.

—Ինչպէս չէ:

—Պէտք է լինի այնպիսի մարդ, որ ստանալով այդ փողերը՝ գարձնի ինձ: Ի՞նչ է ձեր խօսքը կարելի է հաւատալ: Գէորգի անունով չեմ ուզում, վախենում եմ սրանով կասկածանքների տեղեք չտամ: Ի՞նչ կասէք:

—Ամենից լաւ առ Եւգինէի անունով գարձէք: —ով կկասկածի, նա կարող է օժիա բերած լինել մի այդպիսի գումար և գնած լինել այդ մօւրհակները...

—Սյդպէս է, —ասաց Ոսկերչեանը, —ես այդպէս էլ մտածում էի սկզբից, բայց այժմ կասկածում եմ նրա հօրից, հասկանում էք, —ես

ձեղանից չեմ ծածկում,—նա կարող է աղջկան համոզել սեփականացնել.. Մեր յարաբերութիւնները այնպէս են, որ ես դժուարանում եմ նրա վրա վստահանալ...

—Հրմ.. —մռնչաց Շարմաղեանը, —ուրեմն դուք գեռ երկիւղ ունիք այդ մարդուց այն ժամանակ, երբ տիկնոջ և ձեր որդու դրութիւնը խախուտ է: Եօ այդ չգիտէի:

Շարմաղեանը կամեցաւ մի սուր խօսք ասել բայց իրան զսպեց: Նրա երեսի մկանունքները սկսեցին քաշքաշվել աչքերի մէջ վառվեց մի ինչ որ անսովոր կրակ: Մի խօսքով նրա ներքին աշխարհում տեղի էր ունենում մի ինչ որ սարսափելի կռիւ:

—Ի՞նչ պատահեցաւ, —հարցրեց մեծ երկիւղով Ոսկերչեանը, — տեսնելով Շարմաղեանի կրծքից դուրս վիժող խեղղոյը և խռապութիւնը:

—Ոչինչ ոչինչ, —աշխատեց ծածկել իր ներքին յուղունքը Շարմաղեանը:

—Հա, ուրեմն լսիր — այդ մուրհախներն ես կամենում եմ շինել քո անունով: Յօյս ունեմ, որ ստանալուն պէս՝ դու այդ փողերը կդարձնես ինձ...

—Ի՞նչ էք ասում; Ի՞նչ էք ասում; —չիմացաւ Շարմաղեանը, — ձեր որդին նեղ դրութեան մէջ է և դուք փոխանակ այդ դումարով

օվնութեան, համսկօւ, ուզում էք ձեղ սեփականացնել: Դանու մանձոր մանձոր անդնելու — ես առանց այն ևս նրանց համար շատ բան եմ արել: Մի ամբողջ խանութեամբ տուել:

Այստեղ Շարմաղեանը հասկացաւ, որ այդ մարդու հետ աւել խօսել չէր կարելի: Նա աեւնում էր, որ այդ մարդը չափազանց հեռու է գնում: Այժմ նա մնացել էր մէջ աշխարհի և զգիւտէր՝ ինչ անէր: Ընդունէր արդեօք Ոսկերչանի առաջարկած պայմաննը և սեփականցնէր այդ գումարը, թէ հեռանար այդ մաքից: Խանութի գործն, ինչպէս նա տեսնում էր, ստանում էր սուր կերպարանք և կարող էր կասկածանք ընկնել սրա վրա: Իսկ հեռու մնալով այդ առաջարկութիւնից՝ նա կարող էր մնալ իր տեղում: Խանութում, ծառայել ու ստանար լաւ ոռոճիկ: Մանաւանդ այժմ, երբ գործին անցել են առ Եւգինէի ձեռքը, նա ըկում էր իրան աւելի ապատ, ինչպէս մի կատարեալ աէր: Իսկ սրանից աւելի ի՞նչ է հարկաւոր նրան: Բացի սրանից՝ նա հաւատացած էր, որ Ոսկերչան հօրը կամ Սլեքսանդրին անշուշտ սպառնում է մի վտանգ և նա լաւ համարեց բռնկ աիկնոջ կողմը և, ըստ չափու կարողութեան, թուլացնել հօր աղղեցութիւնը խանութից: Անկասկած էր, որ Ոսկերչանը կա-

մենում էր իրան ապահովել թէկուղ այդ իր  
մերձաւորների զոհման գնով։ Շարմաղեանին այդ  
չափազանց գրգռում էր, մանաւանդ երբ նա  
տեսնում էր, որ իբրև զէնք՝ Ոսկերչեանը կամե-  
նում է ծառայեցնել իրան։ Թէև սպասելի չէր  
Շարմաղեանից՝ իբրև մի վաճառականից՝ այդպի-  
սի տատանում, բայց և այնպէս նա ունէր թագ-  
յրած իր սրտում որոշ առիթներ նա երկիւղ էր  
կրում իր անուան մասին։ Ամենքին յայանի էր,  
որ նա այդքան գռամարի տէր չի եղել և վաղը  
միւս օրը դատաստանը բացվելուն պէտ կարող  
էր լինէր, որ այդ վէպքը բացվէր, իսկ այդ բա-  
նից Շարմաղեանը շատ վախենում էր։ Առհա-  
սարակ ոչ մի բանից Շարմաղեանն այնքան չի  
վախենում, որքան դատաստանից։ Այդ պատճա-  
ռով նա սկսեց խորհուրդ տալ Ոսկերչեանին  
մուրհակները փոխել հարսի անունով։  
— Զէ, ես այդ չեմ կարող անել։  
— Բայց դուք չօգնելով՝ վտանգի էք մնթար-  
կում ամբողջ գործը։  
— Թքում կմ գործի վրաւ իմ ապահովու-  
թիւնն ինձ աւելի է հարկաւոր։ Երբ որ մեր  
շնորհով ոտքի էին կանգնում, այն ժամանակ  
մեր խորհուրդները տեղի էին, իսկ այժմ...  
Նա բարկութիւնից կրծեց իր պաօշները և  
տեսնելով, որ Շարմաղեանին չի լինում համո-  
զել խօսքը կարծ կապեց։

— Եատ լաւ, — ասաց նա մի քիչ հանգստա-  
նալուց յետոյ, — մի բան կանենք...  
— Գրողը ասնի այդ մարդուն, — միթմիթաց  
Շարմաղեանը դուրս գալով Ոսկերչեանի մօտից  
և ուղևորվելով դէպի Ալեքսանդրը, — այդ ինչ  
հրէշ է, կաւ է, որ մենք թաւաքալ չենք, թիէ  
ոչ մարդու գլխին մի այնպիսի փորձանք կրերի,  
որ Տէրն ինքը փրկի ու աղատի։ Ի՞ր սատա-  
նան ինձ զցաւ այդ ցաւի մէջ։ Գործ չեղաւ  
Աստծու պատուհաս հղաւ մարդու գլխին։  
Քանդվեն իրանց գործով։ Կո ի՞նչ մեղք ունիմ։  
Մուրհակները սեփականացնել գմուար չէր բայց  
որ բացվի թէ փիկափի արած է... Զէ, աւելի  
լաւ է մնալ այդ խանութում, հեռու այդ մար-  
դուց, քան թէ անհոգ գլուխը ցաւի մէջ զցել։  
Ոսկերչեանին արած այցելութիւնն այնպէս  
պղտորեց նրա միաքն ու սիրուր, որ նա զբաց իր  
սրտում մի ինչ որ թուլութիւն և չկարողացաւ  
շարունակել իր ձանապարհը։  
Քաղաքի աղմուեկը դեռ չէր վաղարել։ Նրա  
առաջնի ձանապարհը տանում էր դէպի մի  
փոքրիկ պարտէղ, որ շըջապատված էր մեծ-մեծ  
ծառերով։ Նա պէտք է անցնէր տուածնի մեծ  
ծառուղով։ Նա նստեց առաջին խոկ նստարանի  
վրա հանգստանալու։ Կէս ժամ մնաց նա այն-  
տեղ՝ մտածելով իր զրութեան վրա։ Նա յուղ-  
ված էր, քիչ մնաց չգայթակղվի, իսկ այդ միտ-

Քը նրան անասնելի էր թվում: Բայց և այնպէս փառք է առաջիս, որ չի ընկել ծուղակի մէջ... Յետոյ նա կարիք զգաց մէկի առաջ թափել իր բարկութիւնը և պատմել գէպքը, այդ պատճառով նա վեր կացաւ և ուղերդվեց Ալեքսանդրի մօաւ:

Ալեքսանդրը և Եւղինէն նստած էին անը՝ մի ինչ որ խոր մտածմունքների մէջ ընկղմված, երբ որ եկաւ Շարմաղեանը: — Օ՛, մի զարմանալի մարդ է ձեր հայրը, ասաց նա դառնալով Ալեքսանդրին. — այժմ ես նոր ճանաչեցի նրան: Նա ամսաթիւն ցույց տված է եղել:

— Դուք շատ անհամազինա էք երկում, — ասաց Եւղինէն, — նստեցէք, հանգատացէք, պամեցէք թէ ինչումն է բանը:

Շարմաղեանը նստեց: Երկային այս բնակուրը երկայիցեցէք ձեր հայրն ունի բաւականին խոշոր գումար, որով մենք կարող ենք մեր գործերը ոտքի կանգնեցնել: և նա այդ ծածկում է... .

— Ի՞նչպէս, ի՞նչ է եղել — հարցրին ամօւսին ները կարմացած:

— 12,000 ի ստանալիք ունի և այդ մաւրհակների իրաւունքը, նա կամենում էր իմ վրա փօխագրել որպէս զի յետոյ իրան կարձնեմ: Ի՞նչ էք ասում:

— Ո՞ւմից:

— Զգիտեմ, մի ինչ որ մօսկվայուց: Ես հաւատայած եմ, որ նա էլի փող ունի... Պատմեցէք, թէ ի՞նչ փող է:

Շարմաղեանը պատմեց գործի մանրամանութիւնը, յետոյ աւելացրեց.

— Ես կարող էի վերցնել այդ մուրհակները և փողերը չփարձնել բայց այդ չարի... Այս, ես չեի կարող այդ անել... ես այդպիսի մարդ չեմ... Շատ համոզեցի, որ ձեր անունով զրի, բայց նա յանձն շառաւ:

— Օ՛, Աստուած, — բացականչեց Ալեքսանդրը:

— Թողէք, ես կդնամ, կհամոզեմ, որ օգնէ, բարձրացաւ իր տեղից Եւղինէն, նա իմ խընդիրներին կղեջանի:

— Ոչ հարկաւոր չէ, — կանգնեցրեց նրան Ալեքսանդրը: Թող ի՞նչ ուզում է անի, ես նրա օգնութեան դիմել չեմ ուզում:

— Բայց ինչ պէտք է անել, երբ մօանում է մուրհակի ժամանակը:

— Ի՞նչ անել — մնում է փախչել: Սյու ասելով՝ Ալեքսանդրը զլուխը ցած ցցեց:

— Սրա մէջ վատնգ չեմ տեսնում: ասաց Շարմաղեանը, — եթէ ձեզ գտնեն այստեղ անշուշտ կկալանաւորեն, իսկ հակառակ գէպքում դուք կմնաք ազատ: Դուք, այս, լաւ կանէք, որ հեռանաք... կանցնի օրը, մաքերը մի քիչ կիս:

զաղվեն, էլե կարելի է դալ: Վերջապէս, կտեսնենք, մի բան կարելի է անել, շատ կարող է լինի, որ մուժիկը համաձայնի յետաձգել ժամանակը, կամ թէ մանէթին որոշ առկոսով վերջացնել դործը:

—Մի՞թէ ուրիշ ձանապարհ չկայ, —հարցրեց Եւղինէն:

—Դուք կվերցնէք արտասահմանի անցագիր, —շարունակեց Շարմաղեանը, —իսկ ինքներդ թաք կիենաք մի պիւղում: Պէտք է շտապել հէնց վաղը վերցնել անցագիրը, պէտք է բողոքի օրը այստեղ չլինէք: Ամենքը կկարծեն, որ դուք արտասահման էք: Ի հարկէ, դուք ձեր շուրեը կհանէք և հասարակ մուժիկի շոր կհագնէք...

—Ես էլ եմ դալիս հետո —ընդհատեց Եւղինէն:

—Զէ, ինչու, դու վտանգ չունիս, դու կարող ես մնալ այստեղ:

—Ի հարկէ, ի հարկէ, —պնդեց Շարմաղեանը, —մենք ձեզ հետ կաշիատենք դործը մի կերպ վերջացնել և բողոքի չհասցնել

—Ոչ ոչ ես կդամ, թէկուզ ինչ ուղում է լինի: Խանութը առանց ինձ էլ կկառավարվի:

—Խանութի մասին մի հսկացէք, խնդրեմ, հանդիսա եղէք: Ես, ի հարկէ, ձեզ շուտ-շուտ խմաց կատամ ամեն մի քայլի մասին... Մինչեւ անդամ ինքս անձամբ կդամ, առ պէտք է ծա-

ծուկ լինի նոյն իսկ գործակտարներից: Դեռ ամառվան ժամանակ է, երկու օրվայ մէջ ես կարող եմ ձեզ համնել իսկ ձմեռվան տեղը կարող էք փոխել: Աւելի լաւ է, որ տեղը շուտ-շուտ փոխէք:

—Եւ մի՞թէ միակ ձանապարհը սա է, —հարցրեց Եւղինէն:

Բայց նրան չպատասխանեցին: Թէ Ալեքսանդրը և թէ Շարմաղեանը խիստ տխուր տրամադրութեան տակ աշխատում էին զսպել իրանց տիրութիւնը տիկնոջ մօտ և նրա հարցերից խուսափել:

**ԺԱ**

**Վ**ոլգայի հարիւրաւոր ձիւղերից մէկի վըրացով, այն ձիւղերից, որ զնում է գետի ձախ կողմից զէտի հարաւ-արեւմուտք, զգուշութեամբ սլանում էր մի նաւակի:

Գիշերը բաւականին մօւթն էր: Լուսինը շարունակ քանի օր էր, որ չէր երեսում: Նաւակը մթութեան մէջ շարունակ աջ ու ձախ տառանմելով՝ ընթանում էր առաջ:

Երկու զբղը կառավարում էին նաւակը. մէկը նրանցից ձեռքում բռնած ունէր տռապատի չուանը, իսկ միւսը — զեկը:

Քարերախտաբարքամին փչում էր իրանց կողմից և առայնելով առագաստը՝ քշում էր նաւակը տատանումով:

Գետի մութ և սեացած ալիքները դլրվելով փախչում էին նաւակի տակից, շարունակ տատանման ենթարկելով նրան: Այս ու այն կողմում անմարդաբնակ կղզիները սլանում էին նրանց առաջնեից: Քամին շարժում էր կղզիների կարճահասակ և ցանցաւ կաղամախները: Նաւակի առագաստն այս ու այն կողմն թեքվելով՝ երբեմն երբեմն մի երկիւղալի տատանումն էր առաջնում նաւակի ընթացքի մէջ:

Նրա մէջ նստած երկու ուղևորները այդպիսի տատանման ժամանակ մի երկիւղալի ծիչ էին արձակում և մէկմէկուց բռնվելով, կարծես, սիրտ էին առնում իրար մերձաւորութիւնից: Գետը քանի զնում, ահռելի կերպարանք էր ընկունում: Իսկ նրա մակերեսի միջի վրա ուռչում և աղմլում էին ալիքները՝ պատրաստվելով մի ուժեղ ալեկոծման: Ամենավստահ նաւորդի սիրտն անգամ երկիւղ կընկնէր ամեն կողմ ջուր, ալիք, քամի... .

Իսկ մութը քանի զնում էր սաստկանում: Էր, ամպերը քանի զնում էին խտանում, այնպէս որ ամբողջ հեռաւորութիւնը մի սե միապաղաղ ջրային կըտ էր պատկերացնում: Ափերի շուրջը աւելի խիտ կերպով էր թագաւորում

խօլ խաւարը. Երկնքի և երկրի սահմանը մի անհշմարելի տարածութիւն էր պատկերացնում: Երկնքում կորչում էր պարզելու ամեն մի յոյտ: Պարզ էր, որ շուտով պիտի անձրեւք: Օդը քանի զնում էր, իրնաւանում էր և սառնանում: Ահա սկսեցին կաթկթել մի քանի կաթիլները... Իսկ նաւակը միատեսակ կտրում էր ալիքները և բարձրանալով ու ցածանալով՝ զնում էր ու զնում: Ահա մօտեցաւ մի փոքրիկ փարոսի, որի նմանները պատեղ շատ տեղերում որոշում են գետի ծանծաղուտները: Փարոսի նուազ լոյսը լուսաւորեց նստողների երեսները:

Սրանք էին Աղկքսանդրն ու Եւգինէն: — Ես աւել չեմ կարողանում տանել — խօսեց Եւգինէն: — ասա, որ դրւրս զանք ալիք: Կէս զիշերից արդէն անցած է երեսում, իսկ մենք առաջի իրիկունից է, որ երկիւղի տակ ենք: Ահա անձերի կաթիլները սաստկանում են... Այ, — յանկարծ մի ծիչ արձակեց Եւգինէն կայծակի լոյսից և աւելի փաթաթվեց իր ամուսնուն: — Եւ ուր ենք մենք զնում... .

— Ն զիւղը, որ քաղաքից 50 վերստ հեռու է, Ես կարող էի ընտրել աւելի մօտ տեղ և կարող էինք շոգենաւով զնալ բայց Ես զիտամի խուսափեցի շոգենաւոց: Նոգենաւի վրա մենք կարող էինք ծանօթ մարդկանց պատա

Հել... իսկ այս զրգոները բարի և միամիտ մարդիկ են: Սրանցից վառնդ չկայ և մասնաւանդոր մեզ չեն էլ ճանաչում: Մի ամսից մեր մուլտ հակի օրն է, մենք աւել չէինք կարող մնալ: Եւ ովկակարծի, որ մենք այդ տեղ ենք, ամենքը կկարծին, որ արտասահմանումն ենք: Կարող է լինի, որ թողնեն էլ որովհետեւ ամեն մի պարագատէր շատ էլ չե քրքրում գանել պարագապատնին... Դեռ շատ պէտք է գնանք, — յանկարծ դարձաւ նա զրզին:

— Է, չլինի թէ վախենում էք, — ասաց զըրդզը, — հաւատացէք, որ երկիւղ չկայ: Մենք սրանից աւելի անախորժ եղանակին ծովի երեսին ենք լողում:

— Դուք սովոր էք, — ասաց Եւղինէն:

— Բայց եթէ մենք չգտավնիք այդ քամուց, մի օրվայ ճանապարհը ստիպված կլինենք հինգ օրում կտրել:

Եւղինէի ձայնի մէջ լսվեց երկիւղալի դողդուն և նա ասաց.

— Բայց ես խնդրում եմ, որ մեզ տայիր ափը... Այ, ես վախում եմ, Ալկքսանդր... մօտ եկ... այ, աչքերս սեանում են.... Խնդրում եմ, ափը տուէք...

— Եյտեղ անկարելի է, սա մի ճահճային դատարկ ափ է, որտեղ գիշերը այդ անձրեին անհեար է: Սպասեցէք մի քիչ մենք մօտենում

ենք զրդզների վրաններին: Այստեղ կարող ենք իջևանել...

Եւղինէն դողալով ցրտից, մտնում է ամուսնու գիրկը:

Նրանք լոեցին և այլ ևս ոչ մի խօսք չասացին: Այդքանն էլ արդէն բաւական էր, որ բացատրվէր իրանց վախուստ տալու առիթը: Այժմ ամեն մի բառ աւելորդ էր համարվում և նոյն իսկ վիրաւորական այն նպատակի համար, որին ձգտում են: Սրանից յետոյ նրանք կրկումն էլ հանգստացան: Նրանք չեն կարող այլ ևս մնալ քաղաքում: Այդ օրը նրանց համար կը երէր աւելի մեծ վիշտ, կեանքի աւելի յաւալի այլանդակում, կալանաւորման ծանր ձեւակերպութիւնը, փաստաբանների և պարատէրերի յանդիմանութիւնը, մի խօսքով բոլոր այն անբաւականութիւնները, որոնցից Ճնշվում և ամաջում է՝ առանց կանխակալ մոքերի՝ սիրաը:

Ուրեմն աւելի լաւ է փախչել առաջ: Եթէ կորչելու են այժմ, եթէ կբայ նրանց զիսին բնութեան տարրերքի մէջ մի վտանգ, գոնէ նըրանք միասին են, այլ ոչ թէ մէկ մէկուց հեռու: Միայն թէ նրանք լինէին միասին, մի տեղ — մնացած նեղութիւնները ոչինչ են: Նրանք խաղաղ հանգստութիւն գտնում էին այն ժամանակի երբ ոչ մի արդելք չեր բաժանում նրանց:

Նրանք շարունակում էին գնալ:  
 Նաւակը ծովեց դէպի աջ և մտաւ մի նեղ  
 ձիւղի մէջ: Գետն այստեղ այնքան լայն չէր,  
 նրա երկու կողմով գնում էին գարձեալ ան-  
 մարդաբնակ կղղիներ՝ ծածկված ծառերով: Այդ  
 կղղիներից փշեց կանաչով լի բուրմունքով հող-  
 մը: Սկզբից քամու հարուածները անցան ծա-  
 ռերի միջով և անձրեւ կաթիլներ շպոտեցին  
 նաւակի մէջ: Այնուհետև քամին ընդունեց փո-  
 թորկի բնաւորութիւն: Նա կատաղի կերպով  
 մոնչալով ջոի մակերեսոյթի վրա, սկսեց իշխիլ  
 տարածելով շուրջը մի սառառալից շնչառու-  
 թիւն: Մառերը տնքացին նրա հարուածներից,  
 նրանց գագաթները կարծես թափվել սկսեցին.  
 Նաւակի կայմն այնպէս էր ձոճում, որ կար-  
 ծես, որտեղ - որ է, կկոտրվէր և կխորասէր մի-  
 ջե մարդկանց: Արդզներից մինը քաշեց առա-  
 գաստի չուանը, որպիսի գործողութիւնից յետոյ  
 առագաստը կանոնաւոր կերպով ուռից և նա-  
 ւակը կրկին բարձրացաւ ալիքների վրա: Այստեղ  
 նրանց առաջ ջուրը, կարծես, պտտվում էր:  
 Բայց ահա անձրել սաստկացաւ. լսվեցին անո-  
 րոշ ձայներ: Ալեքսանդրն ու Եւգինին ոչինչ  
 չէին տեսնում, բացի քամուց, անձրեից... նրանք  
 ամբողջապէս գտնվում էին բնութեան տարբեր-  
 քի գրկում: Նրանց առաջ կարծես նոյն վօշ  
 գան չէր, որ յայտնի է իր յատուկ խաղաղ

բնաւորութեամբ հանդարս ժամանակ. Նրանց  
 շրջապատում էր մի ինչ որ ջրային անդունդ:  
 Գիշերն էլ նրանց անվերջ էր թվում և կար-  
 ծես սպառնում էր վերջ տալ իր գրկում  
 գտնված ամեն մի առարկայի: Ալեքսանդրը և  
 Եւգինին խորասուզվելով այդ փոթորկալից աղ-  
 մուկի մէջ, կամենում էին մոռանալ այն ան-  
 բախտութիւնը, որ ծանրացել էր նրանց վրա:  
 — Ի՞նչու այդպէս ափի մօտ բռնեցիք, — հար-  
 ցրեց Ալեքսանդրը ղրղզներից, տեսնելով սրանց  
 նաւակի ծուելը, — չլինի թէ իջնելու տեղ է:  
 — Ոչ շոգենաւ է գալիս, մենք պէտք այսուել  
 կանգնենք, ափից չհեռանանք ու ձանապարհ  
 տանք շոգենաւին: Այստեղ գեար, տեսնում էք,  
 այնքան նեղ է, որ ուրիշ ելք չկայ. Եթէ մենք  
 այդպէս շանենք, կարող ենք փորձանքի գալ և  
 շոգենաւը պատասխանատու չէ իր հասցրած  
 վնասի համար:

— Բայց որտեղից է գալիս շոգենաւը:

— Կրասնիյ Եարից, — ասաց ղրղզը. — Մենք  
 նրա առաջեւից կանցնենք. զիւղաքաղաք է...  
 Այդ միջոց շոգենաւը հանդարտ և զդուշա-  
 ւոր գնացքով հարուածներ տալով ջոին, հա-  
 ւոր գնացքով հարուածներ տալով ջոին, հա-  
 զենաւի մերձաւորութիւնը և անիւների հա-  
 զենաւի մի այնպիսի երկիւղ բերեցին Եւգի-  
 նէի վրա, որ նա աչքերը փակեց:

Մինչդեռ ամսպերը կամաց - կամաց յըռուեցին,  
անձրեւ գագարեց, բայց քամին շարունակում  
էր փշել:

— Եղդ բոլոր թշուառութիւնները երբ և իցէ  
անցնելու են մեր զլիսից, — հարցրեց Եւզինէն: —  
Իմ հայրը կարող էր մեզ օգնել և հանել այս  
դրութիւնից... Նրա գործերն այնքան լաւ են,  
որ նա չի մերժիլ... Օ՛, Ալեքսանդր, թաղ, որ  
ես խնդրեմ նրան...

Նրա ձայնի մէջ լսվեց մի դառն հեկեկանք:  
— Թաղ, սիրելիս, դու մեղաւոր չես: Ամեն  
բանում ես եմ մեղաւորը, ես եմ բերել գործը  
այդ դրութեան մէջ զրկել: Բայց ես պատրաստ  
եմ տանել ամեն մի նեղութիւն... Միայն այն  
յօյսը, թէ դու ինձ մօտ ես, դու իմ դառնու-  
թիւնների և վշտերի հաւասար բաժանակիցն  
ես, այդ բանը թեթեացնում է իմ ծանր օրերը:  
Կը այ մի օր, ես յօյս ունեմ, և մենք կապացու-  
ցանենք այդ մարդկանց, որ մեղաւոր չենք: Ես  
չեմ ուզում քո հօրդ զիմել նրա համար, որ...  
և ասա ի՞նչ երեսով, երբ ես թողեցի նրա մօտ  
ծառայութիւնը կարեոր ժամանակ... և միթէ  
նա չուներ իրաւունք նեղանալու... .

— Ես հաւատացած եմ, որ նա քո վրա նե-  
ղացած չէ: Եւ ի՞նչեցն ես ենթադրում... Նու,  
մի քիչ տաքացաւ և չեր ուզում քո հեռա-  
նալը, աւել ոչինչ...

Ալեքսանդրը չպատասխանեց: Նրանք լոեցին:  
Նաւակը կրկին մատաւ Վօլգայի լայն թեր:  
Գետը գնալով լայնանում էր, այնպէս որ նրանք  
կրկին սկսեցին ընթանալ ուղեղ գծով:

— Ահա մենք շուտով կհասնենք զբղների  
վրաններին, — ասաց ղեկավարող զբով, — այն-  
տեղ կարելի է զիշելու:

Ալեքսանդրը նայեց հեռուն, բայց նրա ան-  
սովոր աչքը ոչինչ նկատեց: Անցաւ աւելի քան  
կէս ժամ նրանց առաջ, աջ կողմում փռվեց  
մի հողային շերտ՝ ծածկված կանաչով և հատ-  
հատ կախմախներով: Տեղ-տեղ երեսում էին  
սկզբանական էին: Ահա նըշ-  
սկզբանական էին: Ալեքսանդր էին: Ահա նըշ-  
մարվեց կրակի բոցը: Երկու զբով շուրջը նըշ-  
տած՝ մի ինչ որ բան էին պատրաստում: Նաւակը  
մօտեցաւ ափին, որը այնքան ցած էր, որ բոլո-  
րովին չէր բարձրանում ջրից: Միայն կանաչ  
խոռոք՝ գորդի նման փռվելով՝ վկայում էր այս-  
տեղ եղած մակերըթիւնը:

Նրանք կանգնեց նաւակի մէջ տեղ  
ուժին հարուածով ցած ցցեց առագաստը և  
նաւակի քիթը. մի հարուած տալով ափին՝  
կանգ առաւ: Ալեքսանդրը վեր կացաւ, վերցրեց  
կանգ առաւ: Ալեքսանդրը վեր կացաւ, վերցրեց  
կանգ առաւ: Նրանք ցած բերեց նաւակից: Նրանք  
կնոջ ձեռքը և ցած բերեց նաւակից: Նրանք  
գնացին առաջ: Նրանց ոտները ընկղմնում էին  
թիւն փշում երեսներին: Իսկ գորտերի ուժին

կոկսոցը մի տեսակ խանդարող էր հանդիսանում այստեղի լոռութեան:

— Այս կողմը անցէք, այս կողմը, — ասաց զրդզներից մէկը՝ դուրս գալով նաւակից, — այնտեղ ջուր է կոխած... այդպէս, այդպէս...

Նրանք մօտեցան կրակին. երկու ուղեկից զըդզները «սալամ» տալով իրանց կրօնակիցներին՝ կանգնեցին:

— Այս պարոնները կամենում են այստեղ գիշել, — ասաց մինք:

Նրանց ընդունեցին: Դրդզները նաւակից հանեցին կապոցները:

— Այստեղ գրսում կարելի է նստել երկինքը պարզվել է, — ասաց միւս զըդզը:

Եւ իսկապէս ամսերն արդէն ցրուել էին. աստղերը վառվում էին երկնքում. քամին դադարեց. շուրջը մի դուրեկան տպաւորութիւն էր գործում. կանաչի բուրմունքով լցուած էր օդը:

Կղզու վրա բնակվող վրանաբնակ զրդզներից մինը գուրս բերեց իր վրանից մի փալաս, փուց գեանի վրա, իսկ միւս երկուսը պատրաստեցին բացողեաց սեղան: Ալեքսանզը և Եւգինէն հետները վերցրել էին տապակած հաւ, պանիր, խաւար և օղի:

Իսկ հեռւում, կրակի շուրջը, զրդզների մի այլ խումբ թէյ էր պատրաստում: Կրակի բոցը լուսաւորում էր նրանց սևացած երեսները: Ա-

լեքսանզը և Եւգինէն առաջին անգամ ի մօտոյ հետաքրքրվեցին սրանցով:

Սրանք ձկնորս զրդզներ էին, որոնք այստեղ վրաններ գցելով՝ պարապում էին ձկնորսութեամբ:

Եւգինէն վախում էր այդ կիսավայրենիներից, բայց Ալեքսանզը գիտէր, որ այդ զրդզները բուրովին վտանգաւոր չեն. գուցէ կան նրանցից աւելի վայրենիները, բայց միայն ոչ այստեղ, այլ բաց տեղերում և այն ևս ոչ ներկայ ժամանակ, երբ այդ ցեղը զբեթէ բուրովին թողել մասնակ, իր նախկին կիսավայրենութիւնը: Այժմ այդ է իր նախկին կիսավայրենութիւնը:

Այժմ այստեղ մրանք թուով չորս հոգի էին: Նրանցից մինը կկզած կրակի առաջ՝ խառնում էր աթարը և կրակը չաղ անում քարերի վրա դրած կաթսայի տակ: Թէյ եփող զրդզը մի երկար շերեփը ձեռքին՝ խառնում էր եփ եկող թէյը: Նրանցից քիչ հեռու ձգված էր թաղին:

Յետոյ զրդզը հեռացաւ կրակից, բացեց իր մօտ գրած ոչխարի մարթու մէջ փաթաթած ոչխարի ձարպը, պատրաստվեց վերցնել ձեռքի շերեփով ձարպը, պատրաստվեց նրա մօտ նրա քիչ ձարպ: Բայց այդ միջոց նրա մօտ նրա մի քիչ ձարպ: Բայց այդ միջոց նրա մօտ առաջարպին և ձարպին մի փորձ արաւ մօտեցնել դունչը ճարպին և ճարպին անուշ ընթրիքից: Անո-

Դոք զըղղը մի և նոյն շերեվով, ինչով որ խառնում էր թէյլ, մի այնպիսի ուժգին հարուած հասցրեց շան դնչին, որ խեղճ կենդանին կերած հացին փոշմանից: Յետոյ զըղղը վերցրեց ձարպը և դցելով նրան կաթսայի մէջ, սկսեց թէյլ խառնել մի առանձին եռանդով՝ չչեռացնելով մի և նոյն ժամանակ իր սուր հայեացքը շանից:

Եւգինէն չկարողացաւ զսպկել իր դղուանքը. ծամածուելով իր սիրուն դէմքը՝ հեռացաւ այդ տեսարանից:

Յետոյ նրանք նստեցին ընթրելու, բայց երեւում էր, որ ընդհանուր անախորժ տպաւորութիւնների տակ ախորժակը խանդարվել էր: Ալեքսանդրը վերցրեց մի կտոր խաւեար, քսեց հացին, կերաւ, մի ըմպանակ օղի խմեց և դարձեալ ընկաւ դատողութիւնների տակ:

— Ոյտ, մեծ սիսալութիւն էր իմ կողմից, հարկաւոր չէր գոյացած գումարները աալ հայրիկին: Այժմ նա հրաժարվում է օգնելուց, կարծես ինքը ևս չի ստորագրել մուրհակը: Իմ սիրաը տուն է տալիս, որ խանութի գլխին մի փորձանք դալու. է. մանաւանդ որ հայրիկին էլ քաղաքում չի մնացել նա էլ դնացել է վասագա... Ասենք, նա փախուստ տալու միտք չունի... Եւգինէ, բաւականին սառն է, չմրսես, — յանկարծ փոխելով խօսքը՝ դարձաւ նա կնոջը, — դնանք, քիչ հանգստանանք, վաղը գուրս կդնանք կրկին

երեկոյեան ժամանակ. ցերեկը մի քիչ կհանդիսաւանանք... Ինչու բան չես ուտում, սիրելիս, ինձ մի նայիր, ես ախորժակ չունեմ:

— Ես էլ ուտել չեմ ուզում, բայց սաստիկ քունս է տանում: Մենք որտեղ պէտք է քննենք, այն վրանում...

— Ինչ անես, այս մի գիշերն է, վաղը տեղ կհանենք: Շաման է մնում այստեղց մինչև Նկիւղը, — հարցրեց Ալեքսանդրը զըղղեց:

— Հինգ ժամվայ ձանապարհ է: Միայն թէ մենք վաղը մինչև կէսօր գուրս գալ չենք կարող առագաստը պէտք է կարկտել քամին բաւականին դզգզել է:

Նրանք նորից սկսեցին ուտել բայց կրկին բերանները բան չեն գնում: Յետոյ Եւգինէն վերանդարձ բան չեն գնում: Յետոյ Եւգինէն վերանդարձ բան չեն գնում: Կացաւ, նրա ոտները ծալապատիկ նստելուց կացաւ. Նրա ոտները ծալապատիկ նստելուց յաւել սկսեցին: Նա դնաց, մտաւ վրան. Նրան յետեց ամուսինը:

Եւգինէն շուտով քուն մտաւ, իսկ Ալեքսանդրը գեռ չել քնած: Նրա անորոշ զրութիւնը, գործերի անակընկալ ընթացքը նրա թիւնը, գործերի էնակընկալ ընթացքը նրա փոքրնը փախցրել էին: Խանութի թղթերի փոքրնը կրկիւղը — այդ բոլորը խառնվելով նրա գոյի երկիւղը — այդ բոլորը խառնվելով նրա վիթէ նա սպասում էր երբ և իցե, որ այսօր Միթէ նա սպասում էր երբ և իցե, որ այսօր վան օրը պիտի այդպիսի նեղութիւններ քաշէ

և իր սիրած կնոջը այդպիսի վշտերի մէջ գյէ:  
Եթէ Աստուած արժանացնի նրան դուրս  
գալ այդ դրութիւնից, ո, այն ժամանակ նա  
զիտէ, թէ ինչպէս պէտք է վարվել և ինչ հի-  
մունքներով դործը շարունակել:

Յուսոյ մի չնչին նշոյլ անցաւ նրա սրտով:  
Վերջապէս յոգնածութիւնը իր անելիքը արաւ,  
դրսից՝ գետի կողմից, մի թարմ շունչ անցաւ  
վրանների երթիկներով և այդ զափութիւնը ա-  
րաւ իր ազդեցութիւնը, Ալեքսանդրի երեակա-  
յութիւնից նա վանեց անախորժ պատկերները  
և նա քուն մտաւ:

Առաւօտը, երբ վեր կացան նրանք, արդէն  
կէսօրվան մօտ էր: Սրեգակը բաւականին տա-  
քացնում էր. զըզզները կրկն իրանց կրակն  
էին վառել և ձուկ էին խաշում. իսկ երկու  
նաւորդները կարգի էին բերում առագաստը:

Եւդինէն սկսեց ման գալ խոսերի մէջ:

Տեսարանը շատ հետաքրքրեց նրան. նրանք  
գտնվում էին մի շերտ հողի վրա, որի լայնու-  
թիւնը մի վերտից աւելի չէր: Նրանց երեք  
կողմը ջուր էր: Սրանք վօլգայի զանազան ձիւ-  
զերն էին, որոնք հարթ ու տափարակ տեղերը  
հեղեղել էին ջրով և կազմել էին ճահճաներ:

Որ կողմը աչքը գցէիր, ամեն կողմը երեսում  
էր փաքրիկ կղզի՝ ծածկված կանաչով կամ ծա-  
ռերով, որոնց կիսից աւելի մասը գտնվում էր

ջրի մէջ: Այդ կպատճառը, որ Ճանապարհը  
համարվում էր շատ վասնգաւոր, մանաւանդ  
շոգենաւների համար: Ասենք, այդ կողմերում  
շոգենաւներ շատ չեն անցնում: Այդ տևարանի  
առաջ Եւդինէն սկսեց երկիւղ կրել արդեօք  
նրանց կաջողվի՞ խաղաղութեամբ դուրս գալ  
ջրային այդ լարիրինթոսից:

Վերջապէս իրիկվայ գէմ, նրանք կրկն նստե-  
ցին նաւակ և ճանապարհ ընկան: Ամեն ինչ լուել էր. լսում էին միայն թե-  
թե քամու հարուածները. օդը թոյլ կերպով  
հրում էր առագաստը առաջ: Նաւակը սլա-  
նում էր, բայց ոչ այն արագութեամբ, ինչպէս  
նախընթաց գիշերը:

Յուսով նրանք մօտեցան մի գիւղաքաղաքի,  
որի առաջ գետը մի քիչ լայնանում էր:  
— Սա որտեղն է, — հարցրեց Ալեքսանդրը  
զըզզեց:

— Կրասնիյ Եարը: Մենք այժմ կանցնենք  
այստեղը և մի քանի ժամից յետոյ կհանենք  
Ն գիւղը: Մեր բախտից քամին թնդվում է:  
Ճանապարհում այստեղ զրեթէ ոչինչ չկար:

Երբեմն երբեմն սրանց առաջ կարում էին  
ձկնորսների նաւակները, որոնք գաղտնի կերպով  
ձուկ էին որսում գիշերվայ ժամանակ:

— Անցեալ գիշեր այստեղ մի մեծ ֆիրմայի  
500 բուրլե տուգանք են դցել — ասաց զըզզը:

— Ի՞նչու համար, — հարցրեց Եւգինէն, զարմանալով այդ խօսքի վրա:

— Տեսնում էք այդ նաւակը. սա գողունի ձուկ է բռնում, իսկ այժմ արգելման ժամանակ է. եթէ սրանց նկատել են՝ կտուգանին...

Հաղեւ այդ ասաց թէ չէ, ինչպէս հեռուից լսվեց մի սուլոց և մի փոքրիկ շոգենաւ արտակարդ արագութեամբ սկսեց վրա հանել և ուղղակի մօտենալ սրանց նաւակին: Եւգինէն շատ վախեցաւ շոգենաւի մօտենալուց, իսկ զըզզները սկսեցին սիրտ տալ ասելով՝ որ ոչ մի երկիւղ չկայ:

Այդ միջաց շոգենաւը կանգնեց. մի աստիճանաւոր գոռող ձայնով պատուիրեց.

— Կանգնեցէք:

Նաւակը կանգնեց:

— Ի՞նչ էք շնուռմ այսաեղ:

— Մենք գնում ենք գործով:

— Ուր:

— Պուշկինօ, — ասաց զըզզներից մինը:

— Սուտ էք ասում: խուզարկել նաւակը, — պատուիրեց աստիճանաւորը:

Իսկոյն մի նաւաստի ցած եկաւ շոգենաւի երկաթեայ փոքրիկ սանդուղքով նաւակ և սկսեց դիտել ու խուզարկել:

— Ուռկաններ կան, — հարցրեց աստիճանաւորը:

— Ու:

— Մենք ձուկ չենք որսում, — ասաց զըզզը, — ձուկ որսում էին այ, այն նաւակով: Եւ նացոյց առւեց դէպի հակառակ կողմբ:

— Թողնել, — հրամայեց աստիճանաւորը:

Նաւաստին անցաւ շոգենաւ, որը մի քանի րոպէից յետոյ թողնելով նաւակը, սկսեց քշել դէպի երասնիյ Եար:

Ալեքսանդրը և մանաւանդ Եւգինէն սաստիկ վախեցան:

— Մեզ ձկնորսների տեղ ընդունեցին, — ասաց նոյն զըզզը շոգենաւի հեռանալուց յետոյ: Հսկողութիւնը վերջին տարիներս սաստիկ խստացած է: Անցեալ տարի մի ֆիրմայի իմաննում էք ինչպէս բռնեցին: Շրջեկը, օրէզդէկը շորերը փոխած՝ մեր զըզզե շորերով, մտել էր շալաշի տակ քնելու միասին բանւորների հետ: Ոչ ոք չէր կասկածիլ ի հարկէ, որ սա ձկնորսական վարչութեան մարդն է: Կէս զիշերին ձուկը բերում են և հէնց ընդունելու ժամանակ՝ իսեղձերը բռնվում են: Հինգ հարկեւր ըուբլի տուգանք տուեցին: Հիմա մեզ էլ կարծեցին, թէ գանք տուեցին: Հիմա մեզ էլ կարծեցին, թէ ձկնորսներ ենք... Ես դիմամար ուրիշ զիւղի անուն տուեցի — ասացի գնում ենք «Պուշկինօ»... Սա մի զիւղ է, որին այս լոպէ կհասնենք... Ծածկեցի նրա համար, գուցէ չք կամենք... Ծածկեցի նրա համար, գուցէ չք կամենալ որ իմանան:



գեց այն միտքը, որ եթէ չսաղանան փողերը,  
դոնէ զգալի կերպով պատճելը հարկաւոր է:

Այդ առիթով Ստեփան Ստեփանիչը լրվեց  
այնպիսի վրիժառութիւնով, որ կամեցաւ ան-  
պայման ջնջել Ոսկերչեանների ամբողջ գործու-  
նէութիւնը և մինչև անդամ պատուի նրանց:

Այդ նա կարող է հեշտ անել եթէ միայն ա-  
ջողվե հաստատել թէ խանութի փոփոխու-  
թիւնը զիտաւորութեամբ է արած:

Ահա այդ նախանձով էր նա այժմ վառված:

Ստեփանովը ստիպված համարեց իրան դի-  
մել այդ քայլին, որովհետեւ Ոսկերչեանի արար-  
քը չափազանց անտանելի էր նրա համար: Նա  
կարող էր այդպէս վարվել շատ առաջ, դեռ ա-  
ռաջին տարին, բայց այն ժամանակ Ստեփան  
Ստեփանիչը միտք չունէր նկատ տալ այդ մար-  
դուն: Իսկ այժմ նա դայլի նման սրել է ա-  
տամները և դայլի էլ արագութեամբ պատրաստ-  
վում է յարձակում գործել:

Նա մուրհակի մի ժամը չուշացրեց և բողո-  
քել տուեց:

Այժմ նա, կարծես, այն բարի և խաղաղա-  
սէր մուժիկը չէր, այլ մի չար ոսոխ: Նա ամեն  
քայլում մտածում է զարտն լարել, ամեն բօ-  
պէ աշխատում է թոյն ածել այդ մարդու ե-  
րակների մէջ: Բայց նա մի բօպէ հանգարտվում  
էր և մտածում, թէ ինչ կարել էր սաղացնել

իր ստանալիք գումարից, տեսնում էր, որ ա-  
մեն ինչ արդէն կորած է: Վատագան հօրից  
անցած է երկրորդ որդուն, ուրեմն հօրից պա-  
հանջել չի կարելի, քանի որ պաշտօնապէս նա  
հանջել չի կարելի, քանի որ պաշտօնապէս նա  
ոչ մի իլածի աէր չէ: Խանութիւնոյնպէս մեծ  
որդուն չի պատկանում, այլ նրա կնոջը և եղ-  
բօրը՝ Ոսկերչեանի երկրորդ որդուն, որոնցից  
ունին պահանջել ի հարկի, նոյնպէս չի կարելի:  
Այդ ժամանակ նա տեսնում էր, որ մի յիմար  
վրան վրայի մէջ է գտնվում: Տօրը պատճել բան-  
վրութեան մէջ է գտնվում: Տօրը պատճել բան-  
վրութեան մէջ է գտնվում:

Ստեփանովը բան չի շահում, որովհետեւ  
տարկել սրանով բան չի շահում, որովհետեւ  
այդ մարդը տանն անդամ էլ կնսոփի և ոչ մի  
անդամ չի կարմրիլ: Եթէ էլի մի բան դռւրս  
գոյց, այդ կարելի է նպասել Սլեքսանդրից որով-  
հետեւ կինը կամ աները՝ Մայիլեանը, որի գոր-  
ծերն այժմ լաւ զրութեան մէջ են, զուցէ չեն  
լուզնիլ և հաւանական է աշխատեն կայացնել  
լուզնիլ: Այդ պատճառով ամեն մի ձիգ  
լարեց, գէպի Սլեքսանդրը:

Ամենից շատ կատաղեցնում էր Ստեփանովին  
այն հանդամանքը, որ նա չկարողացաւ այդ  
օյինը նախատենել իր ժամանակին, մի քանի  
տարի առաջ, երբ պարտքը մեծ գումարի չէր  
հասնում: Իսկ այժմ՝ 40,000-ի կորուստ է  
նրա առաջեւում:

Նա վեր կացաւ, զանգահարեց և պատուիրեց  
կանչել հաշուապահին:

— Փաստաբանին կանչել տուեցէք:  
— Այս ըօպէիս:

Հաշուապահը մօտեցաւ հեռախօսին, հարց  
տուեց, նրան պատասխանեցին, թէ փաստա-  
բանը դուրս է եկել տանից և գալու է զրասե-  
նեակ:

Մինչեւ փաստաբանի գալը Ստեփան Ստեփա-  
նին իր սրտի բարկութիւնը բաժանեց հաշուա-  
պահի հետ:

— Եթէ խանութի ապրանքը զրել չաջողվե,  
մեզ գժուար կլինի մի բան սաղացնել:

— Անիծածը շատ ճարպիկ է վարվել: Եթէ  
աջողվե ապրանքը զրել դարձեալ չեմ կարծում:  
որ բան լինի նրանից պոկել: Գիտէք, Լոձի և  
Մօկվայի գործարանատէրերն էլ պահանջ են  
արել:

— Մի՞թէ, այդ ես չգիտէի: Ուրիմն մենք մնաս  
բարե ասենք մեր զումարին:

— Տեսնենք, ի՞նչ կասի փաստաբանը. նա երէկ  
ասում էր, որ կարելի է մի կերպ մի բան սա-  
ղացնել. եթէ ոչ բոլոր գումարը գոնէ մանե-  
թին 50 կամ 40 կոպէկ դուրս կգայ:

— Բայց կարող ենք մի զրել այդ ապրանքը,  
երբ խանութը նրա անունով չէ:

— Այդ խսկապէս չգիտեմ:

Խօսակցութիւն թելը կտրվեց փաստաբանի  
ներս զալով:

Սա մի համակրիլի տեսքով տղամարդ էր,  
աշխոյժ շարժումներով:

— Ես գտնում եմ, որ միակ միջոցը մնում  
է զիմել ուրիշ ճանապարհի, — ասաց նա պար-  
զելով իր ձեռքը, — այսպանն ուղեղ է, որ փող  
ստանալ մենք չենք կարող, որովհետեւ խանու-  
թը նրա անունով չէ: Բայց որքան թղթերից  
նկատեցի և ինչպէս թելադրում է իմ համոզ-  
մունքը, այդ փոփոխութիւնը ֆիկտիվ է:

— Այդ այդպէս է, բայց ի՞նչպէս հաստատել:  
Լաւ է, որ կարողանանք գործը տանել հակա-  
ռակ գէպքում ընկնում ենք նոր ցաւի մէջ:

— Իսկ եթէ հաստատենք, այն ժամանակ մենք  
նրան Սիրիր ենք աքսորում: Սիրիր — լաւ իմա-  
ցէք: Գիտէք, այդ ինչ յին է՝ դիտաւորեալ  
մնանկութիւն, իսկ որա հետեանքը շատ էլ դու-  
րեկան բան չէ:

— Բայց մի՞թէ ոչ մի յոյս չկայ մի բան սա-  
ղացնելու:

— Որտեղից, երբ խանութը կնոջ և եղբօր  
անունով է. նրանցից պահանջել չենք կարող  
իսկ հօրից բան չի դուրս գալ, որովհետեւ նա  
էլ ոչինչ տունի:

— Գոնէ հօրը բանարկենք:

— Իմ կարծիքով, աւելի լաւ է ընկնել որդու-  
թետեից: Այժմն նրա հեռանալը ոչ այլ ինչ է,

եթէ ոչ վախտուսոտ: Այդ հանդամաքն ինքն ըստ  
ինքեան մի աւելորդ կօղերէ մեր դատին: Սրա-  
նով մենք աւելի կհաստատենք մեր միտքը: Դուք  
թոյլ տուէք ինձ խանութը կնքել ինչ հար-  
կաւոր է անելու, ես կանեմ: Սրանից այնքան  
էլ երկիւդ չկայ: Դուք այն ժամանակ կտեսնէք,  
թէ ինչպէս նրանք կդան ձեզ մօտ: Երբ որ  
կողպէները կղմասինք և քաղաքում կտա-  
րածվեայդ խայտառակ լուրը, այն ժամանակ  
տեսէք, թէ ինչպէս ենք մօտենում մեր նպա-  
տակին:

Մուժիկն ընկաւ մտածմունքի մէջ և այժմ  
մի աւելորդ անդամ համոզվեց: որ միակ միջոցն  
է համաձայնվել վաստաբանի առաջարկածների  
հետ:

— Ուրեմն առում էք ինքենք, — անվճուղա-  
կան ձայնով հարցրեց նա: Իրա մասին առաջարկածների  
հետ:

Մուժիկն աւելի խոր մտուծմունքների մէջ  
ընկաւ:

— Իսկ որտե՞ղ է գտնվում Ալեքսանդրը և կինը:  
— Գոնէ ասում են, որ արտասահման են  
գնացել: Ես տեղեկացայ նահանդապեսի կանցե-  
լիարիայից, թէ վերցրած է այդպիսի անցագիր—  
բանից գուրս է գալիս, որ երեք ամիս առաջ  
է վերցրած: Ասենք նրա անհետանալը մի մեծ

հշանուվկութիւն չունի, մենք նրան կարող ենք  
գտնել. այդ գեռ յետոյ, առ այժմն պէտք է  
կնքել խանութը: Ես կարծում եմ միայն այս  
ձանապարհով մենք զիւրութեամբ կհանենք թէ  
փախտականին իր դարձնից և թէ կարող ենք  
փողերը սազացնել: Երևակայեցէք այդպէս վար-  
վելով նրանք երբէք չեն կարծել, որ խանութը  
կենթարկվե վտանգի: Հաստատ համոզված եմ,  
որ կնքել ենք թէ չէ, կդան ու կինդրին հաշ-  
տութիւն:

Ստեփան Ռահեփանից չէր կարողանում վա-  
նել տխուր նախազգացմունքները: Մինչև այդ  
գէպքը նա ինքն էր ինըրում փաստաբանին  
մի խխտ միջոց գործ դնելու մասին, իսկ այժմ  
երկիւղով է վերաբերվում իր արած քայլերին:  
Բայց այդ մի րօպէ միայն: Նրա մէջ կրկնն վառ-  
վեց վրիժառութեան նախանձը և նա մի ինք-  
նաբաւական և արագ շարժումով վերկնալով  
տեղից գնչեց:

— Արեք, ինչպէս իմանում էք:

Բ.

Մ ինչպէս խանութում ամեն ինչ ընթա-  
նում էր իր սպարական ուղիով:

մարվում։ Գէորգը նստած կասայի առաջ զբաղված էր յաձախորդներից փող ստանալով, իսկ թումաս Արտեմիչը հսկում էր զործակատարներին։

— Ի՞նչպէս եղաւ, — հարցրեց Գէորգը, դիմելով Շարմաղեանին, — Ի՞նչպէս եղաւ այդ մուժիկի օյինը, ամա տաքանում էր հայ, մեղ ի՞նչ իսկապէս, մենք խօ մեղաւոր չենք, երբ այդ մարդիկը ախտախ են։

— Բայց և այնպէս, հարկաւոր է զգուշութեամբ վարդիլ։ Դեռ վտանդն անցած համարել չի կարելի։

— Ի՞նչով. չ՞որ եթէ վասնգ լինէր, մի շարաթ առաջ հէնց պէտք է դրէր խանութը։

— Ասենք թէ։ Այդ թողնենք, դուք փող ուղարկել էք Ալէքսանդրի համար։

— Ո՞չ։  
— Ի՞նչու։

— Փող չկայ։ Երէկ ուղարկեցի հայրիկին 5000 բուբլի։

— Հայրիկի՞ն. Ի՞նչու։

— Ի՞նչպէս թէ ինչու. չ՞որ ես պարտաւոր եմ հայրիկին։

— Բայց դուք մի և նոյն չափով պարտաւոր էք ուղարկել և ձեր եղօրը։ Զէ՞ որ նա մենակ, անյայտութեան մէջ փողի կարիք կունենայ։

— Զիսրծէք, միամիտ մի՛ գտնուէք, նա իրան

լաւ ապահովել է։ Կարծում էք նրա կինը փող չունի։

— Ունի թէ ըունի, բայց պէտք է և տիկնոջ մասն աչքի առաջ ունենալ։ Զէ, ես բողոքում եմ և խնդրում եմ իսկոյն կարդադրութիւն անել ուղարկել։

— Զեր սիրան ի զուր է ցաւում կողմնակի մարդկանց համար։ Դուք ծառայում էք այստեղ ուրեմն պարտաւոր էք խանութի շահերը պաշտպանել։

— Ես ձեզ խնդրում եմ մի անգամ ես, որ

հէնց այսօր փող ուղարկել այնտեղ։

— Ո՞վ կտանի նրա համար, դուք կտանէք։

— Ի՞նչու չէ, բանն այնտեղ հասաւ՝ կտանեմ։ Այդ միջոց ներս եկաւ մի զըրդը նա մի նամակ հանեց իր իւղուած ծոցից։

Գէորգը ձեռքը ձգեց վերջնելու, բայց զբանուեց Շարմաղեանին ասելով։

— Ինձ պատուիրած է տալ ձեզ։

Շարմաղեանը վերցրեց կարդաց։ Կարդալու ժամանակ երեսում էր, որ նա շարունակ տաքամանակ երեսում էր, և երեսի վըա երեսում էին բարքանում էր և երեսի վըա երեսում էին բարքութեան նշյլները։

— Ահա կարդացէք, — ասաց նա։

«Ես և կինս նեղ դրութեան մէջ ենք», — «Ես և կինս նեղ դրութեան մէջ ենք», — «ասանից այնքան շտապ գրած էր նամակում, — «ասանից այնքան շտապ գրած էր նամակում, որ բաւականաշափ փող էլ չենք գուրս եկանք, որ բաւականաշափ փող էլ չենք».

«Վերցրել: Իսկ այստեղ ոչինչ չի լինում գանել  
«բացի չոր հացից և ձուկից: Մի ամիս է, որ  
«ձուկ ենք ուտում, բայց այդ էլ այժմ չենք  
«կարողանում ճարել քանի որ առանց փող  
«ոչ ոք մեղ բան չի տալիս: Կինս սկսել է ջեր-  
«մել: Խնդրում եմ անյապաղ մի կերպ փող  
«հասցնել»:

Վերջացնելով կարդալը, նա վեր կացաւ տե-  
ղից և սովորական կերպով ձեռքերը տանելով  
զրպանը՝ մի խրոխտ և դողդոջիւն ձայնով հար-  
ցրեց.

— Դու այդ Ն գիւղումն ես բնակվում:  
— Հրամել էք, մենք այն կողմերում ձուկ  
ենք որսում:

— Ի՞նչպէս է աղան, առողջ է:

— Եյքան էլ առողջ չի կարելի ասել:

— Բայց ոտքի վրա՞ է:

— Հրամել էք: Տիկինն է պառկած...

— Դու ինչով ես եկել:

— Ես եկել եմ կրամնիշ՝ Եարի վրայով շոգե-  
նաւով:

— Շոգենաւը դնում է մինչև կրամնիշ՝ Եար:

— Հրամել էք. իսկ այնտեղից նաւակով:

— Նաւակ միշտ կարելի՞ է ճարել:

— Միշտ: Կրամնիշ՝ Եարից կարելի է վարձել.

Ես ունիմ ծանօթ զըրդզ: Ինձ աղան ասել է,  
եթէ կամենաք դալ կարող էք դալ կրամնիշ-

Եար, իսկ այնտեղից մինչև Ն գիւղը կարելի է  
գնալ նաւակով:

Ղրղը շատախօսներից էր և կատարեալ  
միամտութեամբ պատմում էր Ճանփարհի ա-  
մեն մի մանրամասնութիւնը և չնայելով Շար-  
մաղեանի աշքով ունքով տնելուն նա շարու-  
նակ խօսում էր:

Այդ միջոց ներա մտան Ստեփան Սաեփանիը,  
փաստաբանը և պրիստաւը:

Շարմաղեանը մրանց տեսել էր արդէն և այդ  
էր պատճառը, որ աշխատում էր ղըրդի խօս-  
քերին վերջ տալ:

— Ուրեմն զու այժմ գնա՞ — ասաց Թոմաս  
Արտեմիչը, երեկոյեան կդաս, ես քեզ պատա-  
խան կտամ:

Ղրղը բնազդմամբ կասկացաւ, որ պէտք է  
գնայ, բայց իր ցեղակիցներին յատուի կասկա-  
ծութեամբ և երկշոտութեամբ մի քանի անգամ  
նայելով նորեկներին, ուղևորվեց դեպի դուռը:

— Լսիր, սիրելիս, — կանգնեցրեց նրան փաս-  
տարանը, — զու Աքսորեաննից վատագայումն ես  
ծառայում, չե՞ս կարող մի նամակ տալ այն-  
տեղի հաշուապահին:

— Ո՞չ, ես Աքսորեաննից վատագայում չեմ ծա-  
ռայում, այլ ծառայում եմ Միթասեաննից մօտ:

— Միթասեաննից: Միթէ պրոնք վատագա  
ունին:

— Նոր է, այս տարվանից:  
— Ո՞րտեղ է:

— Ն գիւղում:

— Հա, դէ ներողութիւն, ես կարծեցի, որ  
դու Աքսորեանենց վատագայումն ես, ուղում էի  
մի նամակ տալ: Ուրեմն հիմա կարող ես գնալ:

— Ասում էք երեկոյեան զամ՝ — Հարցրեց մի  
անգամ էլ զըզզը՝ դառնալով Շարմաղեանին:

— Ասացի, էլի ի՞նչ ես հարցնում, գնա էլի.  
տեսնում ես մարդիկ են կանգնած, դորձ ունինք:

Դրդք գնաց: Խանութում ոչ ոք չկար, բայց  
գործակատարներից, որոնք սովորաբար զբաղվել  
էին ապրանքը տեղահան անելով:

— Ես խնդրում եմ ինձ յայտնէք, որտեղ է  
գտնուում պ. Ալեքսանդրը, — դարձաւ փաստա-  
րանը Թոմաս Սրտեմիշին, բայց մինչև նրա մի  
որ և է պատասխան ստանալը, մէջ ընկաւ Գէ-  
որգը:

— Խնդրեմ գուք ինձ դիմեցէք ձեր հարցե-  
րով. խանութի տէրը ես եմ: Ես ձեզ մի ան-  
գամ, կարծեմ, ասացի, որ արտասահմանում են:  
Այժմն տեղն ասել չեմ կարող, որովհետեւ երկու  
շաբաթ է, որ նամակ չունենք: Իսկ երկու շա-  
բաթ առաջ գտնվում էին. . .

— Ո՞ր քաղաքում:

— Որ քաղաքում, այ մոռանում եմ, իսկա-  
պէս, կարծեմ եանա քաղաքում, բայց այնտե-

ղեց պիտի տեղափոխվէին ֆրանսիա, գուցէ և  
ցուցահանդէս. . .

— Հա..., Ուրեմն պ. պրիստաւ, — խօսքը փո-  
խեց փաստաբանը, — ես խնդրում եմ սկսէք  
ցուցակագրել ապրանքը, որովհետեւ, ինչպէս ես  
ապացուցի այդ, փոփոխութիւնը խարդախու-  
թիւն է, ուրիշ ռչինչ:

Թոմաս Սրտեմիշը, որ հեռացել էր խանութի  
միւս կողմը և իր գժողովութիւնն էր արտայայ-  
տում գործակատարներից մինին տղեղ անցքի  
վերաբերմամբ, լսելով փաստաբանի այդ խօսքը,  
ինչպէս շանթահար՝ մօտեցաւ պրիստաւին և  
սկսից պաշտպանել: Բոլոր գործակատարները  
գործի անսպասելի ընթացքից արձանացած մը-  
նացին խանութի զանազան կողմերում:

— Դուք ի՞նչ իրաւունքով էք ուզում կնքել  
խանութը, — տաքացաւ Գէորգը, — ես ձեղ փող  
եմ պարտ:

— Եյդ յետոյ կխօսնեք, — տաքացաւ Ստե-  
փանովը:

— Ներողութիւն, — մէջ ընկաւ Շարմաղեա-  
նը, — այստեղ երեխ թիւրիմացութիւն է:

Բայց նրան չխողեց շարունակել փաստաբանը:

— Մենք ձեղ հետ ևս հաշիւ ունենք — ասաց  
նա, — այն, այստեղ թիւրիմացութիւն է և  
դուք որովէս թէ չգիտէք ի՞նչ թիւրիմացութիւն  
է: Խնդրեմ, պ. պրիստաւ, սկսեցէք:

Պրիստաւը սկսեց մի առ մի ցուցակագրել  
ապրանքը: Գործակատարների մի մասը փախաւ:  
Շարժաղեանը տեսնելով որ իր միջամտութիւ-  
նով չի կարողանում օգնել զործին, այլ աւելի  
վատ ընթացք է տալիս, սկսեց լուրջ կերպով  
վախենեալ:

—Ես զարմանում եմ, —չեր հանգստանում  
Գեորգը, —կարծես Տաճկատանումն ենք ապ-  
րում: Որ ցերեկով գալիս էք և զրում էք ու-  
րիշի խանութը:

—Եյդ յետոյ, յետոյ, —ասաց փաստաբա-  
նը, —գատաստանում կարող էք ձեր իրաւունք-  
ները պաշտպանել:

—Առելի լաւ կանէք, —ասաց պրիստաւը, —  
կանէք ու տաք փողերը և զործը չի ծանրա-  
կալ: Խնդրեցէք հաշտութիւն:

—Ոչ մի հաշտութիւն չեմ կամենում, —  
տաքացաւ Ստեփանովը:

Երկու ժամից յետոյ խանութի կողմեքների  
վրա փայլում էին զմռսաւոր կնիքները:

— Այդի արակեցի վայեց բնակչութեան վայ-  
ուցազատութիւն վայեցաց: Պ.

Հետո միանում էին երեկոյեան, փաստաբա-  
նը կրկնեւ եկաւ Ստեփան Ստեփանիչը մօտ և  
յայտնեց, որ Ստեփանովը Ասկերչանի հետքը

արդէն գոտած է և թէ նա հէնց վաղն տռաւօտ-  
եան ուղում է Ճանապարհ Ընկնել և տեղն ու  
տեղը կալանաւորել:

— Այդ ի՞նչպէս իմացաք, —հարցրեց Ստեփա-  
նովը զարմանալով:

— Հէնց իրանց քթի տակ:

— Զարմանալի է, պատմեցէք, տեսնեմ:

— Ասեմ, ասեմ: Բայց իմացէք, որ փող պէտք  
է չխնայել:

— Ասացէք առենեմ: —կարծ կապեց Ստեփան  
Ստեփանիչը:

— Յիշում էք, որ խանութ մանելուն պէտ  
ես խօսեցի մի զրով հետ:

— Լաւ, ինչ զարմանալի բան է: Բայց ես  
բոլորովին սովորական երեցիթ է: Բայց ես  
խանութ մանելուց նկատեցի, որ Շարժաղեանը  
նեղացած խօսում էր Գեորգի հետ: Նա  
մէջքով էր նստած և այն աստիճան էին զբաղ-  
ված, որ մինչև մեր մօտենալը մեզ չեին տես-  
նում: Դուք դեռ զուան մէջ էիք և զէսի դուրս  
էիք նայում, չփառեմ ինչու:

— Ես մի ծանօթ մարդու անցնելը տեսայ,  
կամենում էի կանգնեցնել:

— Իսկ ես մինչև անգամ լսեցի, որ զրով ա-  
սում էր, թէ երասնիւ Եարից կարելի է նա-  
ւակ նստել յետոյ զրովը լսեց: Ես խսդյն զլսի  
ընկայ, որ այդ զրովը կարող է Ալեքսանդրից

ուղարկուած լինի. միայն ես չլսեցի թէ կրասնիյ-  
Եարից ուր պէտք է զնալ նաւակով։ Այդ էլ  
իմանալ դժուար չէր, ես հնարեցի Աքսորեա-  
նենց վատագայի օյինը։

— Ուրիմն զուք դիտմամբ հարցրիք. ես էլ  
զարմանում էի, թէ ինչ ծանօթ պէտք է  
ունենաք այնտեղ։

— Ոչ մի ծանօթ։ Ես այդ հարցով կամ-  
նում էի իմանալ թէ նա ում վատագայումն  
է ծառայում։ իսկ այդ իմանալով, կարելի էր  
զործի կէսն արդէն իմացած համարել։ Եւ ինչ  
պէս տեսաք, հետքը գտայ։ Կրասնիյ-Եարի շըջա-  
նում կան վատագաներ։ երեխ թէ այդ վատա-  
գաներից մէկում ձգնում է նա։ Մի խօսքով  
այդ դժուարութիւնն ես յանձն եմ առնում։  
Վաղը կգնամ կրասնիյ-Եար, այնտեղի ոստի-  
կանն իմ ծանօթս է, ես կիմանամ։

— Այդ բոլորը շատ գեղեցիկ է. մինչեւ անգամ  
ձեր պահան ես կարող եմ լրացնել. այն կող-  
մերումն է գտնվում նրանց ազգականի վատա-  
գան, հաւանական է, որ այնտեղ լինի, եթէ ձեր  
ենթադրութիւնները ճիշտ են, — միայն թէ սրա-  
նից մեղ օգուտ չկայ։ Բանստարկմանով նրան՝  
մենք զրկվում ենք մեր փողերից։

— Բայց զուք հիմա տեսէք, թէ որպիսի  
խայտառակութիւն է։ Այժմն արդէն ամբողջ  
քաղաքը խօսում է խանութի փակման մասին,

վաղը միւս օրն էլ երբ կբերենք և փառաւոր  
կերպով բանտը կցցնեք, այն ժամանակ տեսէք։  
Այդ ժամանակ, գուցէ, կարելի լինի փող սա-  
ղայնել։ Եղել են դէպքեր, երբ ազգականները  
օգնութեան են հասել — և այդպիսով մի բան էլ  
է գոյացել է։

— Բայց եթէ մենք չքանտարկենք, մի կերպ  
գուցէ մի բան սաղայնենք։ Ախր 40 հազար է,  
40 կոպէկ չէ։ Գոնէ րուբլին 20 կոպէկ էլ է  
սաղայնենք։

— Որտեղից էք սաղայնում երբ մէջ տեղ  
ոչինչ չկայ. ապրանքն էլ չնչին բան է երեւում,  
իսկ պարագը համար է մինչև 60 հազարի։  
Կօնկուրսը չեմ կարծում համաձայնի չքանտար-  
կելուն։

Ստեփանովն ուշագրութիւնով լսում էր  
փաստաբանին։ Վերջապէս, նա նկատեց.

— Աւելի լաւ է 10 կոպէկ սաղայնել, քան-  
թէ նրան բանտարկել։ Դուք համողեցիք կօն-  
կուրսումի — չէ՞ որ դուք նախագահն էք։ Ես  
համոզված եմ, որ մի բան կարելի է պոկել. պէտք  
է գտնել կնոջը, մի քիչ սպառնալ նրան։ գու-  
ցէ աչքի առաջ ունենալով ամուսնու բանտար-  
կութիւնը՝ մի բան կտայ։

— Ինչպէս կկամենաք. բայց ես ձեզ խորհուրդ  
կտամ ընդունել իմ առաջարկութիւնները։  
Փաստաբանն այնքան տաքացած էր պնդում

իր ասածները, որ մօւժիկին ուրիշ ոչինչ չէր  
մումբացի որա առլ իր համաձայնութիւնը:  
— Միայն պէտք է այդ առնը ծածկել, որ ոչ  
ոք չփանաց: զգը զգեց ան ան յար չի մըցար  
և մաս մի խովարաց մ— մաս մի մաս եւ անց  
զարձակում: Եւ ին ծառաբարձ վերաբեր չ  
իր մի գոմելքառանց զմեն մեջ ըլլա: —

**Այդ** ժամանակն էր, որ Ասկերչեան - Հայրը  
իր վատագայի վերնայարկում մի խորհրդաւոր  
և բանուկ խոհականութեամբ խրատներ էր տա-  
լիս իր երրորդ որդուն՝ Սիմօնին, որ կանգնած  
էր հօր առաջ պատկառելի հեռաւ որութեան  
վրա: Օ՛ Տէսի ժ Խանուաց զգացար իւս  
Նրա համեստ հայեացքի մէջ անզրագառ-  
նում էր երիտասարդական կատարեալ անփոր-  
ձութիւն, շարժմութեաների մէջ նկատվում էր  
վաճառականական առնե վայելք: Նա մեծ ուշա-  
զութեամբ հետեւում էր հօր ասածներին. նրա  
ձակատի վրա երևում էին ուշադրութեան հե-  
տեղականութիւն: Իսկ Ասկերչեան - Հայրը առե-  
նելով, որ որդին կատարեալ ուշադրութեամբ է  
լսում նրա ամեն մի պատուէրները, աւելի ու  
աւելի էր սաստկացնում իր եռանդր:

— Ես շատ ուրախ եմ, որ քո խելքին նրա-  
նում է իմ ասածները: Դու գեռ այնքան ջա-  
հիլ ես, որ ի հարկէ չես կարող շուտով հաս-  
կանալ առետրական նրբութիւնները, բայց այդ

ոչինչ, եթէ կլսես իմ խրատները, աջողութիւն  
կունենաս: Ահա այժմ մենք մեր վրայից թօ-  
թափում ենք շատ ծանրութիւններ: Երկրորդ  
ամիսն է, որ յայտարարած է մեր սնանկու-  
թիւնը: Դա, ի հարկէ, շատ սովորական երեսից  
է, ուրեմն մի էլ զարմացիր: Իմացիր, որ մինչև  
չպղտորվի, չի պարզվիլ Սկզբում գուցէ մեզ  
մի քիչ կնեղացնեն, գուցէ և...  
— Ի՞նչ:

— Գուցէ և բանտարկեն. բայց ես չեմ վա-  
խում այդ բանից: Ի՞նչ բան է մի քանի ամիս  
նասելը կատարեալ ապահովութեան համար  
Բոլոր գործերն այնպէս են սարքած, որ բարե-  
յաջող ելքը ապահովված է: Հիմիկվան ժամա-  
նակ, եթէ այդպէս չանենք, տեղներումն դիմա-  
նալ չենք կարող: Այս, սա որ կայ, առեւտուր է:  
Առեւտրում քոյրուեղայր չկայ: Այժմ, ի հարկէ,  
կիսուն, կմեղագրեն, բայց գու քո բանն իմա-  
ցիր: Մի տարի, չէ երկու տարի ամեն ինչ կը-  
մուացվի. միւնոյն խօսողները կդան, քո առաջ  
երկրպագութիւն կտան, էնքան է, փող ունե-  
ցիր... Այս, մեծ բան է փողը...

— Բայց, Հայրիկ, միթէ այդ սնանկութեան  
համար բանտարկում են, մենք խօ մարդ չենք  
սպանել:

— Այս, բայց և այնպէս... Բանտ ասելով գու-  
չհասկանաս, որ այն բանտերն են, ինչ որ ա-

ւաղակ մարդասպանների համար. սա մի առանձին արգելարան է, որտեղ լինում են նստած յատկապէս մնանկացածները: Կարող է լինի, որ չըանտարկեն, որովհետեւ պարտական տէրերի համար աւելի ձեռնտու է մեզ թողնել և հաշտութիւն խնդրել: Այդպիսով ես կարող եմ 15 կամ 20 կօպէկ մանէթին տալ իսկ այդ բանից նրանք հաշիւ ունեն:

Ոսկերչեանը շունչ առաւ և շարունակեց հանգարտ ձայնով.

— Յիմարութիւն արաւ միայն Ալեքսանդրը, իմ խօսքս չլսեց, սատրագրեց մուրհակը. այսօր վան օրն իմ գործը փչացրեց: — Ինչով, հայրիկ:

— Նրանով, որ գուցէ նրան էլ բանտարկեն, իսկ նա այդ իր համար անպատճութիւն կհամարի: Նրան բան հասկացնել չէր լինում: Զգոյշ կաց, ի սէր Աստուծու, դու էլ որքան կարող ես, կասկածելի և դժուար դէպքերում հարցրու: Հարցնելն ամօթ չէ:

— Կարծում եմ նրան չեն թողնիլ: Նա ունի բաւականին հասկացող աներ, որ չի թողնիլ փեսայի խայտառակութիւնը:

Ոսկերչեանը մի անհամբեր շարժում արեց, որից որդին եղբակացրեց, որ իր յայտնած մըտքերի մէջ անզգուշաբար է վարվել: — Մայլեանը խելօք է, այո՛, միայն իր հա-

շիւներում: Խնչելիցէ... տեսնենք ինչ կլինի: Ես էլ յոյս ունիմ, որ նա չի թողնիլ իր փեսային. այդ մեզ համար աւելի լաւ. աւելի հետ կը պրծնենք փորձանքից:

Բայց այդ միջոց շոգենաւի սուլոցը խանգարեց նրանց խօսակցութիւնը:

— Այդ ի՞նչ է, մի՞թէ շոգենաւն է գալիս: — Այո՛, զարմանալի է, այսօր սովորականից

առաջ է գալիս:

Շոգենաւն իսկապէս մօտենում էր ավինս: Աշա նա կանգնեց վատագայից մի քանի սաժէն հեռաւորութեան վրա: Շուտով լսվեց արդէն աղմուկ և մարդկանց վազվզոցը:

— Կարծեմ, մէկն այսաւել է դալիս, — ասաց Ասկերչեանը, — տես, Սիմօն, ո՞վ է սա մեր գործակատարը չէ:

Բայց այդ միջոց արդէն ակսեց բարձրանալ սանդուղքի վրայով խանութի գործակատարներից մինը:

— Ի՞նչ է պատահել այդ ի՞նչ է քո զցնը:

Գործակատարի երեսից արդէն երեւում էր,

որ մի վատ գոյժ հավորդելու է, նրա հայեացքն

արտայայտում էր և վախ, և բարկութիւն:

— Ինձ ուղարկեց ադ, Գէորգը, մի չարագու-

շակ եղելութիւն է, ձեր որդին խնդրում է, որ

—Մեր խանութը կնքեցին: —կնքեցին, —բացականչեց Ոսկերչեանը շանթահար, —ինչպէս թէ կնքեցին, ինչու համար: —Ոչ մի առարկութիւն չէին ընդունում: Որքան ասացին, թէ խանութի աէրը պ. Ալքսանդրը չէ, բայց նրանք առում էին, որ այդ ամենը ֆիկտիվէ, իսկ մանրամասնութիւնները կդանէք այդ նամակի մէջ. . .

—Ինչպէս կարելի է, որտեղ է լսուած կնքել այն մարդու խանութը, որ ոչ մի պարտք չունի, —բացականչեց Ոսկերչեանը բարկացած: Նա բացեց նամակը և կարդալուց յեայ՝ բացականչեց.

—Մի և նոյն էլ այստեղ է զրած: —Ահա թէ ինչ է նշանակում անփորձ լինել: Մի՞թէ Գէորգը չկարողացաւ բացատրել Մինչդեռ գործակատարի բոլոր բացատրութիւններն աւելի մայլացնում էին եղելութիւնը:

—Պ. Գէորգը խնդրում է, որ դուք ինքներդ անձամբ զաք քաղաք հէնց այսօր: —Սյո՛, ասա, որ կդամ: Դու այժմ դնա. . . Լաւ, մի բան կանենք. . .

Ոսկերչեանն իր շրջանում վայելում էր մի այնպիսի համակրութիւն և հեղինակութիւն, որ գործակատարը հաւատալով նրա խօսքերին, դուրս եկաւ ու դնաց:

Մնալով մենակ՝ Ոսկերչեանն ի զուր էր աշխատում ծածկել իր անհանդստութիւնը մի շինծու ժպտի տակ: Մառը քրտինքը ծածկեց նրա ճակատը:

—Հիմա ի՞նչ կանենք, հայրիկ: —Հիմա այն, որ կօպէկ էլ չեմ տալ: Դու աხօ, սովորիր: Հիմա բանտարկութիւնն անխուսափելի է: Պէտք է զատ սկսել շատ բան են կնքել տեսնենք թէ դատաստանն ինչ է ասում:

Իսկ ինքը մի և նոյն ժամանակ մտածում էր, թէ ի՞նչ կերպ պէտք է չարիքը հեռացնել:

Բայց ի մեծ զարմանս Ոսկերչեանի, այդ օրը, նոյնպէս և միւս օրը, անցաւ առանց մի երկիւղալի գէպքերի: Նրան չէին կալանաւորում: Ոսկերչեանը գլուխը կորցնում էր զանազան ենթադրութիւնների մէջ և չէր կարողանում հասկանալ թէ ի՞նչու են լոել պարտքան տէրերը: Բայց և այնպէս այդ գէպքը մի կատարեալ յեղափօխութիւն առաջ բերեց Ոսկերչեանի հոգեկան աշխարհում: Նրա սիրալ լովեց խոր յուսահատութիւնով: Նա որբան մտածում էր հանդամանքների վրա, այնքան աւելի էր կատաղում և իր բարկութիւնը թափում էր Ալքսանդրի հասցէին, երկրորդ որդու գլխին: Ի զուր էր Սիմօնն աշխատում հօր բարկութիւնը հանդստացնել Ոսկերչեանը չէր հանդս-

տանում: Եւ ինչպէս նաև կարող էր սառնութեամբ մարսել, երբ գործերի դրութիւնը խօստանում էր խանգարել նրա բոլոր շահամիրական ցնորդները: Նա յոյս ունէր, որ ահա կանց նեն մի քանի ամիսներ, մաքերը կհանգստանան, պարտքան տէրերը կհաշտվեն, անբարեյաջող հանգամանքի հետ և նա կիրանաց մի քանի հազարների տէր, խանութի տէր, իսկ այժմ այդ ամենը ձեռքից գնալու վրա է և, որ զլխաւորն է, նրան կմեղաղընն, իբրև զիտաւորեալ մնանկացածի ու կաքսորին: Վերջին հանգամանքը նրան այնքան հաւանական էր թվում, որ նրա վառ երեւակայութեան մեջ սկսեցին պատկերանալ Սիրիսի սարերը, խօրդ ու բորդ ճանապարհները և բոլոր այն անախորժութիւնները, որոնցով յայտնի է այդ ուղին: Բայց մի քանի ամիս առաջ ինչ յօյսեր էր փայփայում: Այժմ ամեն ինչ կորած է, ամեն ինչ փշրված է: Ոսկերչեանի պէս յայտնի ընդունակ վաճառականին, նրան, որի զլխում այնքան խելտցի մտադրութիւններ են յղացել ու ծնունդ առել, այսօրվան օրը սպառնում է մի խայտառակ աքսոր և կորուստ բոլոր իլածչելածի: Եւ այդ բոլորը շնորհիւ իր մեծ որդու անհեռատեսութեան: Բայց ամենից շատ նա ցաւում էր, ի հարկէ, այն քանի վրա, որ նա ստիպված կլինի կորցնել այն ձեռք բերած հարըստութիւնը, որով նա մինչև օրս դիզել է և

որի համար այսքան տարի զիշեր - ցերեկ նուիր-ված է եղել իր ամբողջ էութեամբ:

Բանն այնտեղ հասաւ, որ նա սկսեց անիծել իր գյութիւնը, իր կեանքը: Ինչ կեանք կարող է լինել մարդու համար առանց փողի, — մտածում էր նա, — առանց փողի աւելի լաւ է մարդս ծուրը ընկնի, քան թէ ապրի աշխարհիս երեծուրը ընկնի, Սիրիսի գուցէ մնում էր նրա համար, հասին: Մի ելք գուցէ մնում էր նրա համար, հաւաքել իր մօտ բոլոր ունեցած փողերը և առաջրկել պարտքան աէրերին մանէթին մի որոշ գումար, — բայց այնուհետև ինչ պիտի անէր նա առանց կօպէկի: Առանց փողի նա ապրել և կարող: Իսկ եթէ նա նոյնպէս փախուստ տար, անցնէր Պարսկաստան, մնար այնտեղ մի քանի տարի և շարունակէր նշն ապրուստը, նոյն կեանքը... Բայց յետոյ նա զլսի ընկաւ, որ ապրել Պարսկաստանի պէս յետ ընկած տեղում չարժի:

Կշռադասելով այդ ամենը՝ նա եկաւ այն կշռադասելով այդ այժմ ծածկել եղրակացութեան, որ զժուար է այժմ ծածկել իր խարդախութիւնները. նա ընկաւ աւելի խօր մտածմունքների մեջ՝ յուսահատութիւնը ծըն շեց նրան վերջին ծայր. նա մնաց անշարժ, ինչ պէս մի քարացած և անշարժ դիակ:

ովհանք քնզմբ ուղարք վշտու մասնաւ զանաք պիտի  
ուղարք ելանք եւ բայց ովհ լիր և նոր

**Բ**ոլոր այդ ժամանակ Ալեքսանդրը և Եւ-  
գինէն իրանց փախուստ տուած տեղում ծանր  
օրեր էին անց կայնում: Նրանք ոչ մի տեղիկու-  
թիւն չունէին քաղաքից. միայն Թոմաս Արտե-  
միքը՝ խանութը փակելուց յետոյ՝ եկաւ և բա-  
ցատրեց գործի վտանգաւոր կողմը:

Ալեքսանդրը՝ երկիւղ կրելով իր գործերի  
վտանգաւոր ընթացքից՝ երկար ժամանակ խոր  
մտածմունքի մէջ կրում էր հոգեկան անտա-  
նելի տանջանք:

Նրա այդ տիսրութիւնը բաժանում էր Եւգի-  
նէն և Թոմաս Արտեմիքը:

Շատ էին խօսեցել սրանք իրանց հանգա-  
մանքների մասին, Թոմաս Արտեմիքը շատ մի-  
ջոցներ էր առաջարկում, բայց ոչ մինը հաւա-  
նութիւն չէր գտնում: Նրա բոլոր ասածները  
Ալեքսանդրի խելքին չէին նստում: Նա միական-  
ջով էր կարծես միայն լսում, իսկ նրա աչքի  
առաջ ապագան, հեռանկարը պատկերանում  
էր խոր, թանձր մառախուղե մէջ:

Դուրսն արդէն խոր աշունքը իր մռայլագեմ  
երեսը գարձրել էր ընութեան վրա: Ալեքսանդրն  
երկար ժամանակ անշարժ լուռ նստելուց յետոյ՝  
մօտեցաւ պատուհանին, աչքը դուրս զցեց և

մի յուսահատական հոգոց արձակեց իր սրտից:  
Նա ընութեան մէջ, կարծես, ուղում էր գտնել  
միսիթարական երևոյթներ, բայց գժգոյն աշու-  
նը, կարծես, աւելի թունդ տիսրութիւն էր սրփ-  
ում մարդու երակների մէջ: Ալեքսանդրը բա-  
ցեց պատուհանը, աշնան թարմութիւնը նրա  
թուլացած ջղերին մի տեսակ ուժ և կարողու-  
թիւն պարզեց: Ալեքսանդրը սկսեց լի կրծքով  
կլանել այդ թարմութիւնը, այդ բանը նրան  
մի քիչ թեթևացրեց:

Սյու ժամանակ նրա զլսից, կարծես, գուրս  
գնացին թէ բարկութիւնը և թէ յուսահատու-  
թիւնը, որովհետեւ այդ զրութիւնից դուրս դա-  
լու ցանկութիւնը այնքան մեծ էր նրա մէջ  
որ միւս բոլոր զգացմունքները նսեմանում էին  
որ առաջ առաջ գարձեալ մի քանի անդամ լի  
կրծքով ներշնչելով, թարմ օքք, նա նուիրվեց  
իր խորին: Սյու նպատակով նա շուռ եկաւ  
դէպի կինը և կամեցաւ նորոգել խօսակցու-  
թիւնը, բայց այդ միջոց զգաց մի այնպիսի խեղ-  
դոց իր կրծքում որ քիչ մնաց լաց լինի—և  
որպէս զի իր կնոջից ծածկած լինի այդ բանը,  
նա շուռ եկաւ կրկին դէպի պատուհանը և  
շարունակեց կրկին դիմել:

Սյուպէս նա մնաց երկար ժամանակ:  
Նոյն դրութեան մէջ էր և Եւգինէն: Նա տես-  
նելով իր ամուսնու դրութիւնը՝ շատ միսիթա-

րական խօսքեր էր տոել, շատ էր կամենում հանդպատացնել նրան, բայց սպառված համարելով իր բոլոր ոյժը, նոյնպէս մնացել էր քարացած:

Վերջապէս, նա մի ձիգ բանեցրեց, վեր կացաւ տեղից և կամեցաւ մի շարժում անել դեպի ամուսինը, բայց տեսնելով որ ոչ մի խօսք ոչ մի միջոց չի գտնում առաջարկելու, այլ բոլոր ասածները պիտի լինեին նախկին մտքերի կրկնութիւնները, նա աւելի թուլացաւ և ընկնելով աթոռի վրա, մնաց անխօս:

Այդ յուսահատական տեսարանը խիստ ճընշում էր Շարմաղեանին: Նա վերջերս իրան այնքան կապված էր համարում այդ ընտանիքի հետ, որ սառը վերաբերվել սրանց վշտին չէր կարողանում: Մանաւանդ նա սաստիկ տապակվում էր Եւզինէի համար:

Շարմաղեանի ամբողջ անցեալը սահպում էր նրան այդպէս վերաբերվել: Իր 40 տմեայ անցեալ կեանքում Շարմաղեանը մի լուսաւոր զիծ է յիշում միայն և այդ այն սէրն է, որով նա վառված էր դէպի մի օրիորդ, որը նրան դաւաճանեց և գնաց ուրիշի: Այդ հարուածը չկարողանալով նա տանել, թողեց իր հայրենի քաղաքը և սկսեց միիթարութիւն որոնել ոտար քաղաքներում: Հինգ տարի է, որ այլ ևս Շարմաղեանը չի մտաբերում այդ դէպիքը, բայց

երբ նա ծանօթացաւ Ոսկերչեան ընտանիքի հետ, երբ ի մօտոյ ծանալից տ. Եւզինէին, Շարմաղեանի միտքը կարծես, սպառովից ու Եւզինէին թվաց նրան այն կանանցից, որոնց հետ նա ուրախութեամբ կկապէր իր բախտը: Բայց Շարմաղեանը տեսնում էր, որ իր տիկնոջ սէրը դէպի իր ամուսինը այնքան ջերմ է, որ երբէք չի կարելի մածել, որ նա երբ և իցէ կդաւաճանի նրան: Այդ պատճառով նա լուս այր վում էր մի ծածուկ զգացմոնքով, մի զգացմոնքով որի մասին նա դեռ ոչ մի մարդու հաշիւ չի տուել այլ թաղում է իր մտքում: Իսկ երբ Եւզինէն ընկաւ աթոռի վրա, յենելով իր սիրուն զլուխը ձեռքերի մէջ, այդ ժամանակ զիրքում նա այնքան դուր եկաւ Շարմապէս: Նրա թախծալից երեսը, լի տիրալից կիրքը: Նրա թախծալից երեսը, լի տիրալից աչքերը Շարմաղեանի սրտում առաջ բերին մի թունդ բարախում: Եւ քանի որ նա աւելի աջակցութիւն էր ցոյց տալիս դէպի տմունութշուառութիւնը, այնքան աւելի և աւելի էր թշուառութիւնը, այնքան աւելի և աւելի էր զարդանում: Շարմաղեանի զգացմոնքը դէպի այդ անզուգակից արարածը...

Բայց նա մի աւելորդ անգամ կարողացաւ զսպել իրան: Այս, Շարմաղեանն այդ կողմից մի արտակարգ մարդ էր: Նա կարողանում էր զսպել իր մէջ այն զգացմոնքը, երբ տեսնում էր չի

ստանալու փոխաղարձ պատասխան։ Ճիշտ է,  
նրա սրտում այժմ տեղի էր ունենում մի ա-  
նողոք կոիւ։ Նա տեսնում էր իր առաջ մի  
արարած, որին սիրում է, բայց որից պէտք էր  
ծածկէր այդ զգացմանքը, նա կարողացաւ այդ  
անել առաջին օրը չէ, որ նա սպանում է իր  
ներքին ձայնը, այդպիսի ժամանակ նա սովորա-  
բար խօսք էր բացում։ Այդպէս ևս արաւ ներ-  
կայ բովէում։

—Ես պնդում եմ, —ասաց նա, — կրկնում  
եմ, որ ձեր հայրն ունի միջոց. բայց այն մուր-  
հակներից, որը ես անձամբ տեսել եմ, նա շարու-  
նակ վոր էր ստանում ձեր եղորից և այդ ծա-  
ծուկ կերպով, որպէս զի չիմանաք գուք..., ինչ  
պէս տեսնում եմ, ձեր հօրը աւել եմ ձանա-  
ցում. . .

—Իսկ դուք վաճառականներին ձանացում  
եք, —ընդհատեց Ալեքսանդրը։

—Կարծեմ։

—Հիմա ասացէք, ո՞ր վաճառականն է իր  
խղճի առաջ մաքուր, ազնիւ։ Ո՞վ է նրանցից  
Ճշմարիտ ձանապարհով գործ բռնում։ Ո՞վ չե-  
զօտվում զէպէրից, հանգամանքներից։ Նրան-  
ցից ո՞րը կկանգի իր դիտաւորութիւնների առաջ  
և կհարցնի, թէ սա իր հայրն է, որդին է, փե-  
սան է. . . Ամեն մինը նրանցից ուղում է զիւ-  
րին կերպով հարստանալ խարել կողոպտել

թոյլին։ Եւ ով է այդ բանի վրա զարմանում։  
Ընդհակառակը խելօքը նա է, ով կարողանում  
է ջրից չոր դրւոս գալ. . . Հիմա այդ Շմեռած  
ծովում ուղում ես գտնել կենդանի ծաղկեկ. . .  
Ի՞նչու իս պահանջում որ իմ հայրը բացա-  
ռութիւն կազմի։ Նա էլ նոյն է, ինչ որ նրա  
պէս հազար—հազարացը։

Այդ խօսակցութեան ժամանակ Ալեքսանդրի  
աչքերում վառվեցան վրէժինդրութեան ցայ-  
տեր։ Իր խօսակցութիւնով նա այնքան երկիւղ  
ազգեց, որ Եւգինէն շտապեց ընդհատել նրան  
իր մեղմ խօսքերով։

—Ես քեզ հետ եմ, —ասաց նա, —մի վշտա-  
ցիր, մի բան կանենք։

Նա մօտեցաւ ամուսնուն և մօտեցնելով իր  
թարմ զժկամակած երեսը ամուսնու երեսին՝  
սկսեց գդուել նրան։

—Մի յուսահատուիր, —շարունակեց նա  
միսիթարել իր ամուսնուն, — Ճիշտ է, մենք  
գունվում ենք անելանելի դրութեան մէջ, բայց  
իս չեմ կտրում իմ մէջ յօյսը, հաւատում եմ  
որ մի բան կանենք. . .

Այդ խրախուսանքից Ալեքսանդրի երեսը, կար-  
ծես, բայցվեց, նա զրաւեց զէպի իրան կնոջը և  
սեղմելով իր զրկում, պահեց նրան այդպէս  
երկար ժամանակ։

Իսկ հարմաղեանի վրա այդ տեսարանը մի

Ճանդաւտպութիւն գործեց: Նա զլեթէ առաջին անգամ լցվեց նախանձի կատաղութեան կըքով, սղմեց իր բռունցքները և վեր կենալով տեղից՝ անցաւ սենհակի, մի ուրիշ անկիւնը: Մինչդեռ Ալեքսանդրը այնքան հանգստացել էր, որ սկսեց մեծ ողերութեամբ նայել կնոջը: Նրա աչքերը միւնոյն ժամանակ փայլեցին. Նա սեղմեց իր կնոջը աւելի ուժեղ իր զրկում և կամեցաւ համբուրել, բայց այդ միջոց նկատելով Շարմաղեանի ներկայութիւնը, զսղեց իրան:

—Թո՞ղ ուրեմն, —ասաց նա, —նստիր և խօսենք, թէ ի՞նչ պէտք է անել:

—Եթէ ինձանից ես հարցնում, ես կասեմ—ընդունել Թոմաս Արտեմիչի առաջարկութիւնը, գնալ հայրիկի մօտ և ստիպել նրան, որ պարտքան աէրերին բաւարարութիւն տայ, քանի որ նա ունի վող: Այնպէս չէ, թոմաս Արտեմիչ:

Շարմաղեանը, որ դեռ գտնվում էր իր քաղցր ցնորքների մէջ, առաջ էկաւ և սկսեց իր նախկին ասածները կրկին պաշտպանել:

—Ես արդէն ասացի, ուրիշ ճանապարհ չկայ, հակառակ դէպքում:

—Հակառակ դէպքում ի՞նչ... բացականչեց Ալեքսանդրը:

—Խայտառակութիւնն անխուսափելի է: Այսինքն բանտարկութիւնը:

—Եյո: Իսկ ձեր հայրիկն այնքան ապահով է, որ կարող է օգնել:

Ալեքսանդրը լոեց, բայց իր աչքերը չէր հեռացնում Շարմաղեանից և սպասում էր նրանից խօսքի շարունակութիւնը, դէպքերի աւելի կատարեալ լուսաբանութիւնը:

—Ուզում եմ հաւատալ, —ասաց եւզինէն,

—որ հայրիկը չի թողնիլ:

—Ես չեմ գտնում առիթ հակառակը մածելու, —ասաց Շարմաղեանը, —ասում եմ այն, ինչի մէջ որ համոզուած եմ:

Տիրեց կրկին լոռութիւն: Ալեքսանդրը մի քիչ հանգստացաւ և ապա ասաց.

—Դուք ասում էք զիմել հայրիկին, իսկ երբ որ սա չհամաձայնի մեզ ձեռք մեկնել...

—Չհամաձայնի, —հարցրեց Շարմաղեանը:

—Եյո: Եւ Ալեքսանդրի սրտից մի խուլ հոգոց զուրութաւ, մի հոգոց, որ իր վրա կրում էր յուսահատական կեանքի և դէպքերի անողոք բարդութիւնների մի կատարեալ կնիք:

—Չեմ կարծում, —ասաց Շարմաղեանը, —պես կերպեանն այնքան յիմար չէ, որ չհասկանայ գործի օգուտը: Ինչ օգուտ այդ աեսակ վերաբերվելուց, մինչդեռ փող տալով՝ գործը նա թողնում է նոյն գլուխեան մէջ և խանութը շարունակվելով, օգուտը շարունակվում նութը շարունակվելով:

է: Շարունակելով գործերը նախկին դրութեամբ՝  
նա կունենայ միջոց կրկին փող ստանալու  
նախկին ձանապարհով։ Սա է միակ ելքը, որ  
ես առաջարկում եմ և խորհուրդ եմ տալիս  
ժամանակ չկորցնելու համար հենց այսօր կամ  
վաղը ձանապարհ ընկնել։  
— չամաճայն եմ ձեզ հետ, — ասաց Եւդինէն,  
— ընդունում եմ ձեր առաջարկութիւնը։  
Թումաս Արտեմիչն աւելի մօտեցաւ և մի շար-  
ժում անելով ասաց։

— Եթէ նա կմերժի, ես կսահիպեմ նրան։ Ես  
կապացուցանեմ, որ նա ունի մուրհակներ, որոնց  
ուզում էր իմ անունով շննել իսկ ես ընդու-  
նեցի։ Սյդ գէպքը ես պահում եմ վասն ապա-  
գայի և առաջին իսկ յարմար լուղէում, չեմ  
զլանալ գործ ածել այդ զէնքը։

Սյդ ասելով՝ Թումաս Արտեմիչը բարձրացրեց  
ձայնը և բացականչեց։  
— Ես չեմ թշյլ տալ, որ անմեղ մարդիկ  
կորչն։

Եւդինէի զարմանքը դնալով աւելի սաստկա-  
ցաւ, նրա սիրուն աչքերը փայլեցին մի բաւա-  
կանութիւնով իսկ շըթունքների վրայից սահե-  
ցաւ մի սիրուն ժպիտ։  
— Ուրեմն դուք ուղում էք, որ արդարու-  
թիւնը դուրս կանգնի։  
— Սյդ,

իսկ յետոյ մտքում աւելացրեց։  
— Ուրագէս զի իմանաս, թէ ի՞նչ կայ իմ  
սրտում։

Ա մայիսի առջև բայց Խոյ գնակրության  
վելացածուն նեմայուն Զ. աչ առջև սա պայման

**Ա**լեքսանդրը Շարմաղեանի առաջարկու-  
թիւնը դեռ տատանվում էր ընդունել որով  
հետեւ նա չէր սպասում հօրից ոչ մի օգնու-  
թիւն։ Սրա պարզ ապացցին այն էր, որ այդ-  
քան ժամանակ նա նրան ոչ մի օգնութիւն չէր  
հասցել չնայելով, որ խոստացել էր օգնել  
նրանք նեղ զրութեան մէջ կլինէին, եթէ Շար-  
մաղեանը չհասնէր իր օգնութեամբ։ Դեռ Ալեք-  
սանդրը չդիտէր եղբօր ծածուկ կերպով փող  
ուղարկելը։ Սյդ գէպքը աւելի սաստկացրեց մի  
անդամ ընդ միշտ կաղմած համոզմանքը, թէ  
օգնութիւն հօրից չե կարելի սպասել։

Բայց վերջապէս նա ստիպված եղաւ զեծա-  
նել ինո՞ջ թախանձանքներին, դիմել այդ վեր-  
ջին կէտին։

— Փորձեցէք, դրանից խօ վնաս չտնեք, երբ  
չե աջողվել այն ժամանակ ուրիշ բան կանենք։  
— Ասենք թէ։

Նրա խնդիրների առաջ Ալեքսանդրը չդիմա-  
ցաւ. երկու օրից նա կրկին դիմեց Շարմաղեա-  
նին և հարցրեց.

—իսկ եթէ այդ բանից ոչ մի օգուտ չտեսնե՞ք:

—վնաս էլ չեմ տեսնում այստեղ, —ասաց Շարմաղեանը, —իսկ եթէ այդ օգնութիւնն էլ կմերժի, ես անշուշտ կյայտնեմ մուլհակների խնդիրը:

Սրանից յետոյ Ալեքսանդրը կրկին տատանվեց: Մի պատճառ էլ կար նրա այդպիսի անվճռականութեան. նա չեր ուղում դուրս գալ թաքսաից. մինչև այժմ այստեղ նա ապրում է անյայտ, իսկ որ դուրս գայ այստեղեց և նրան կալանաւորեն և սրանով բաժանեն իր կնոջեց, այն ժամանակ ի՞նչ կանի նա: Նա մի օր չկարող մնալ առանց կնոջ, առանց նրա խորհուրդների, խրախուսանքի. նա չծածկեց իր միտքը Շարմաղեանից:

—Եյն ժամանակ թոյլ տուեք ձեր կնոջը գնալ իսկ դուք մնացեք այստեղ: Կամենում եք, ես կուղեկցիմ նրան:

Ալեքսանդրն այդ մաքի հետ հաշտվեց. մասնաւանդ այդ հանգամանքը կարող էր նպաստել գործին, որովհետեւ եւզինէն աւելի սիրով էր խօսում, մինչդեռ ինքը կարող էր Ճնշվել կամ կուել հօր հետ: Երբ եւզինէն իմացաւ Շարմաղեանի նոր առաջարկութիւնը, նա ևս իր կողմից շատ հաւանութիւն տուեց: Եյնուհետեւ սկսեց ասել որ չկարող աւել տեսնել իր ա-

մուսնու նեղութիւնները և պէտք է, թէ այսպէս, թէ այնպէս, վերջ տալ այդ գործին: Եթէ այդ չաջողվեց, նա խոստացաւ Ալեքսանդրին դիմել իր հօրը: Եթէ Ոսկերշանից մերժում ստանայ, նա հաւատացած էր, որ իր հօրից օգնութիւն կդանի: Գոնէ Մայիլեանը կարող էր պարագան տէրերին մեղմացնել և խնդրել ժամանակ պարտվեց: Եթաձգելու: Եյդ չափով օգնութիւն եւքը յետաձգելու: Եյդ չափով օգնութիւն եւզինէն հօրից սպասում էր, թէև վերջին ժամանակներս նրանց յարաբերութեան մէջ մտել էր մի տեսակ սպառնութիւն:

Ճիշտ է, Ալեքսանդրն երբէք չեր կամենալ այդ անձնաւորութիւններին դիմել բայց որով այդ կանուգութիւններին մասնաւանդ որ կանեմ: Ինձ զժուար չի լինիլ, մասնաւանդ որ ինձ հետ է մի այդ տեսակ մարդ:

—Դու թոյլ տուր ինձ գործել քո տեղ, —ասաց եւզինէն, —ես յոյս ունիմ, որ մի բան կանեմ: Ինձ զժուար չի լինիլ, մասնաւանդ որ ինձ հետ է մի այդ տեսակ մարդ:

Նա ցըց տուեց Թօմաս Արտեմիչին:

Եյդ գովասանքը լսելուց Շարմաղեանի մէջ զարթեցին քաղցր զգացմունքներ: Նրան շատ ուրախացրեց այն հանգամանքը, որ պիտի մենակ մնայ եւզինէի հետ, միասին ճանապարհ անայ... Թէ այդ միայնակութիւնը թէ այն ագնայ... Թէ այդ միայնակութիւնը թէ այն ագնայ... Թէ այդ միայնակութիւնը թէ այն ագնայ...

էին նրա ինքնարաւականութիւնը և մեծ հա-  
ճոյք պատճառում նրան:

Սրանից յետոյ սկսեցին ճանապարհի պատ-  
րաստութիւններ տեսնել:

Նրանք վճռեցին մինչև Կրասնիյ Եար գնալ  
նաւակով, իսկ այնտեղից շոգենաւ նստել: Աշ-  
նան ցրտութեան պատճառով սկսեցին տաք  
շորերի պատրաստութիւն տեսնել: Այդ բոլոր  
ծանրութիւնն իր վրա էր վերցրել Ալեքսանդրը:  
Նա իր ձեռքով կոչ նաւակի նստեցրեց, իր  
ձեռքով նրան տաք շալով փաթաթեց: Ալեք-  
սանդրը վախում էր նաւակով ճանապարհ զնե-  
լուց, թէ այդ ճանապարհը մինչև Կրասնիյ  
Եար մի քանի ժամվայ միջոց էր պահանջում,  
բայց և այնպէս դա շատ անհանգստացնում էր  
նրան:

— Շալի չհանես ճանապարհում, — ասաց Ա-  
լեքսանդրը Եւգինէին, — թէ չէ կարող ես մրսել:  
Կրկնակօշեկներդ հաղել ես...

— Այո, այո, մի վախենալ, չեմ մրսիլ:

— Խոզրեմ, լաւ հսկէք, — զիմեց նա Շարմա-  
ղեանին:

Շարմաղեանն այդ խօսքերից յետոյ տւելի  
մօտեցաւ Եւգինէին: Նա մինչև անգամ վերցրեց  
շալի մի ծայրը և առաջարկեց տիկնոջը աւելի  
փաթաթիլ: Այդ շալի մէջ ես Եւգինէն Շար-  
մաղեանին թվում էր գեղեցիկ, դուրեկան, այն-

պէս որ նա շարունակ չէր հեռացնում իր աշ-  
քերը նրանից:

— Իէ, ցտեսութիւն, սիրելիս:

Ամուսինները գրկախառնուեցան:

Վերջապէս, թիավարները իրանց ձեռքերը  
բարձրացրին, նաւակը ձուռաց և սկսեց տա-  
տանվել:

Ալեքսանդրը թողեց կոսջը: Նրա սրտից, կար-  
ծես մի բան կտրեցին: Առաջին անգամ իր կեան-  
քում նա ստիպված է բաժանվել կոսջից: Նա  
երբէք չի զգացել միայնակութիւն, իսկ այժմ  
նրա առաջ կարծես, զետի ափը վլվում էր և  
պատրաստվում էր նրան կլանել: Նրա մտքից  
առաջին անգամ կարծես, անցաւ մի չարագու-  
շակ միտք, որ գնալով սաստկանում էր, դա  
այն էր, որ նա կարծում էր, թէ այդ բաժա-  
նումը խոստանում է տեսել շատ երկար, կամ  
գուցէ և լինել մշտական: Բայց նաւակի հեռա-  
նալը տեսնելով, նա սպանեց իր մէջ ախուր  
զգացմունքները և հրաժեշտի վերջին րօպէներից  
օգուտ քաղելով, բեենեց իր աշքերը կոչ երե-  
սին: Ո՞քան փոխադարձ վիշտ, ո՞քան կակիծ  
գծագրվեց այդ երկու սիրող հայեացքների մէջ:

Վերջին հրաժեշտ տօւեց Ալեքսանդրը և Շար-  
մաղեանին: Նաւակը սկսեց հեռանալ...

Շա նա ափից բաւականին հեռացաւ:  
Դուրսը մութն էր. զետը մթութեան մէջ մի

պսպղուն շերտի նման փայլում էր նրա առաջ և այդ մթութեան մէջ Եւգինէի երեսը այլ ևս չէր երեսում: Մէկ մէկ լսվում էին թիերի չափաւոր հարուածները: Ալեքսանդրը դեռ երկար նայում էր նաւակի հեռանալուն:

— Ա՞խ, Աստուած, ի՞նչ ուզում ես իմ զբուխը բեր, միայն սրան փորձանքից աղատիր...

Եւ նրա աչքերից ցայտեցին արտասուքի կաթիներ, իսկ նրա վշտին արձագանք տուեց առաջեկց ալեքների հանդարտ գլորումը, իսկ ետերից՝ դիւզի շների հաջոցը:

**Ա**լեքսանդրը կանգնած մնաց... Խոր մտածմունքները ձնշեցին նրան... Կնոջ բաժանումը նրան զցեց մի այնպիսի անթափանց դրութեան մէջ, որ նա երկար ժամանակ չէր կարողանում մնուացութեան սահմանից դուրս գալ: Նրա սրտի մէջ կամաց կամաց բորբոքվում էր կասկածների կայծը, թէ զուցէ մի փորձանք պատահի ձանապարհում... Բացի սրանից նրա մէջ թշլէ և այդ յանձնարարութեան գլուխ գալու յօյլը: Ոչ մի օգնութիւն նա չի սպասում ոչ իր հօրից և ոչ աներոջից: Նա չկամեցաւ միայն իր հօրից և ոչ աներոջից:

սկսեց տանջել այն թշուառութիւնը և անբախտութիւնը, որ նա բերեց իր կնոջ համար: Նա երբէք չէր կամենալ կնոջն այդքան թշուառութիւնների տակ գցել: Ալեքսանդրը շատ վշտացաւ: Ամուսնութեան բոլոր ժամանակ նա կնոջը թշուառութիւնների և նեղութիւնների պատճառ է եղել: Մինչև այժմ դեռ ևս հանգամանքները ոչ թէ չեն խոստանում պարզվել, այլ աւելի ու աւելի կնճռվում են: Եւ ցաւալին այն էր, որ ոչ մի ձեռք չկար, որ մեկնէր նրան և օգնութեան համնէր... Եւ ի՞նչ կլինի ապագայում: Արդեօք չե՞ն խոստանում կուտակվել նրա գլխին աւելի մեծ թշուառութիւնները: Այդ հարցերը նրան սկսեցին այժմ աւելի տանջել:

Տակաւ առ տակաւ այդ երկիւղը և ապագայի անորոշութիւնը նրան այնքան թուլացրին, որ նա քիչ մնաց ընկաւ գետին: Այդ ժամանակ նա ուղղեց իր քայլերը դեպի տուն: Գետից փչում էր զով քամին և շշում էր մարդու թուլացած ջղերը, բայց Ալեքսանդրը չզգաց իր մէջ ոչ մի ուժ: Գալով տուն, նա երկար ժամանակ չքննեց:

Առաւօտը վեր կացաւ դարձեալ նոյն մտածմունքներով:

Վերջապէս այդ թուլութիւնը տեղի տուեց մթափման:

Ապա նա իրան թափ տուեց, սկսեց մտածել

և մի ձար որոնել այդ զրութիւնից դուրս դաւ-  
լու համար:

Հարկաւոր է մի բան անել — բայց ի՞նչ անել:  
Բանտարկեալը աւելի հեշտ կարող էր մի յշու-  
դնել փախուստի վրա, քան թէ անանկացած  
և թաք կացած վաճառականն իր նեղ զրու-  
թիւնից դուրս գալու վրա: Մի անցյօս կոկիծ  
գարձեալ ճնշեց նրան: Այժմ նա սկսեց անիծել  
վաճառականութիւնը և վաճառականներին: Այդ  
ժամանակ ընդհատված շնչառութիւնը սկսեց  
խեղդել նրան: Նա տեսաւ, որ անզօր է ինքնօդ-  
նութեամբ դուրս գալ այդ զրութիւնից: Նա  
պարզ նկատում էր, որ նրա առաջ կանգնած  
է ամեհի վիշապը, որ բացերպ իր լայն երախը  
րօպէ առ րօպէ մօտենում է նրան կլանելու  
համար: Նա նկատեց իր կատարեալ կորուսար,  
անօդնականութիւնը և անզօրութիւնը: Զգաց  
մի խեղդոց և միևնոյն ժամանակ մի բուռն ձրդ-  
տում դէպի վրիժառութիւն: Բայց ումից: Ճիշտ  
է, նրա հայրը մեղաւոր է, նրա շահասիրու-  
թեան զոհ է նա այժմ: Բայց միթէ ինքը ևս  
աւելի մեղաւոր չէ, որ չկարողացաւ նախատես-  
նել չարիքը: Բայց և այնպէս մաքերի այդ խառ-  
նիճաղանձ կուտակման մէջ վրիժառութեան  
տենչը աւելի էր բարձրացնում իր գլուխը...  
բայց — այն ժամանակ պէտք է դուրս գալ թա-  
քըտակց: Բայց չ որ նա ոտք քաղաք է դրել

նրան կկալանաւորեն: Նու այդ բանի վրա էլ  
քիչ չէ զարմանում, թէ ինչպէս այստեղ չնու-  
կարողանում ձանացել նրան: Զարմանալի նա-  
խազդացում, մի քանի ամիս է, որ նա դտըն-  
վում է այստեղ և մինչև օրս ոչ մի օր այնքան  
և այն չափով չի բռնվել նրա սիրար կալանա-  
ւորման երկիւղով, ինչպէս այս րօպէ:

Այժմ ընկնելով աթոռի վրա, Ալեքսանդրը  
սկսեց այդ բանից չափազանց վախենալ: Մի ինչ  
որ անտեսանելի, բայց ուժեղ սարսափ՝ բերելով  
երկիւղ և վախ՝ զիշատում էր նրա սիրար: Այդ  
րօպէն նա աւելի քան երբ և իցէ կարօտեց  
կնոջ խորհուրդներին:

Բայց այդ խորհուրդներն այլ ևս չկային: Եւ  
նա միայնակութեան մէջ քանի գնում էր մաշ-  
վում էր: Կնոջ ներկայութեամբ նա գոնէ դուրս  
էր գալիս գետի ափը, դիտում էր արևի մայր  
մանելուն, որ այստեղ մի բաւականին շքեղ  
պատկեր էր ներկայացնում: Իսկ կնոջ գնալուց  
յետոյ նա փակվելով սենեակում՝ այլ ևս դուրս  
չկալիս: Այժմ նա նկատելի կերպով փոխ-  
վել է, երեսը կորցրել է իր առողջ զցնը, աչ-  
քերը մարել են, մի խօսքով նրա բոլոր ար-  
տաքինը մի տեսակ երկիւղ էր ազգում նայողի  
վրա:

Վայ այն մարդուն, որ կորցնում է հաւատը  
դէպի կեանքը, նպատակը. այդպիսի մարդը նը-

մանում է կենդանի մեռածի: Ալեքսանդրը ներկայում մի այդպիսի դիակ էր ներկայացնում: Նա կորցրել էր յօյսը և հաւատը դէպի մարդիկ: Նա տեսնում էր ամեն մէկին շահասիրութեամբ վառված էակներ, էակներ, որոնք ամեն ինչի մօտենում են իրանց որոշված նպատակաւոր շահաւէտ չափերով: Նա այժմ չե հաւատում ոչ մի բանի... Այժմ նա ամեն բօպէ սպասում է, թէ կզան, կամիոփեն, կրաժանեն իր սիրելի կնոջից, կսպանեն նրա մէջ վերջին նպատակը, որի համար նա ուղում է ապրել ու ապրել:

Միւնոյն ժամանակ նա կրում է փողի խիստ նեղութիւն: Տան տիկինը, որի տանը նա ապրում է, վերջին ժամանակներս սկսել է կասկածանքով վերաբերվել սրանց վրա և ապրուստի վարձը այս գլխան պահանջել, իսկ Ալեքսանդրը չունէր միջոց այդ թեթև բաւարարութիւնն անգամ տալու:

Նա դեռ զարմանում է իր վրա, որ ինչպէս է կարողանում այդքան նեղութիւնները տանել: Այդ վերաբրում էր միայն իր կնոջ սիրոյն: Զախորդ հանդամանքները չեն հանգյրել կնոջ սէրը, իսկ եթէ երբ և իցէ այդ հանդամանքներն իրանց ջախջախիչ ձեռքերը բարձրացնեն այդ միակ սուրբ միացած զգացմունքի վրա, — այն ժամանակ:

Այդպիսի զգացմունքներից նա խեղպվում էր, մաշվում էր և ընկնում հոգւով: Նա չէր սպասում խանութի փակման. իսկ այդ դէպիքից յետոյ նրա վերջին յօյսերն էլ մարեցան և նա խրատները լսելով և ահա այդ սխալի շնորհիւ նա պարտաւոր է պատասխանառութիւնը իր վրա վերցնել: Երբ որ այդ մաքերլ դեպիքում էին նրա գլխում, նա սկսեց կասկածանքով վերանդա բերվել ծնողական զգացմունքներին: Նրա համար բերվել ծնողական զգացմունքներին: Նրա համար կեռ առաջ նա յօյս ունէր հօր, եղբայրների դեռ առաջ նա յօյս ունէր հօր, եղբայրների միահամուռ աջակցութեամբ գործ կառավարել և հէնց այդ մարդկանց շնորհիւ է, որ նա այժմ կորչում է:

Մինչդեռ օրերը սահում էին, նրա յօյսերը քանի գնում մարում էին: Իսկ կնոջից ոչ մի ժողովում մարում էին: Իսկ կնոջից ոչ մի ժողովում մարում էին: Բայց միւնոյն ժամանակ լուր չէր ստանում: Բայց միւնոյն ժամանակ կոող գնացող գիւղացի ձկնորսները չարագուեած էին բերում: Նրանք ասում էին, որ շակ լուրեր էին բերում: Նրանք ասում էին, որ խանութի ապրանքը արդէն հրապարակով վաճառել են, որ Շարմաղեանին անդամ արդելիքած է քաղաքից գուրս գալ և թէ դատաստանը հաստատել է դիտաւորեալ սեանկութիւնը:

Այդ լուրերն իսպառ հալեցին Ալեքսանդրին: Մինչև գատաստանը նա դեռ յօյս ունէր, որ մի կերպ կարդարացնեն նրանց, իսկ այժմ...

— Ա՞խ, հայր, հայր, — դուրս պրծաւ նրա կրծքից, — այդ ինչ պատրաստեցիր ինձ համար: Այդ լուրերի տպաւրութեան տակ նա վճռովում էր զիմել մի նոր վերջնական քայլե, մը տաղրվում էր դուրս դալ իր խցից և գնալ անձամբ հօր մօտ, վերադառնալ քաղաք և տեղն ի տեղը տեանել հանգամանքների դրութիւնը: Նա արդէն վճռել էր զիմել այդ քայլին, ինչ պէս կնոջից լուր ստացաւ, թէ հայրը նրանց խնդիրը մերժեց և մինչեւ անդամ դուրս արաւիր մօտից: Այժմ նա դտնվում է քաղաքում և կամենում է իր հօր հետ տեանվել:

Այդ լուրը մի ձկնորս դրզզ էր բերել: Այդ չարագուշակ տեղեկութիւնը մի ձնշող տպաւութիւն գործեց Ալեքսանդրի վրա:

Գիշերը վըա հասաւ: Նա կիսահանված, թէք ընկած ամբողջովին խորասուզվել էր իր մոքերի մէջ: Նրա մօտ եկաւ տան տիկինը, որ պատուէր ստանայ վաղվայ ճաշվայ պատրաստութեան, ինչպէս սովորաբար այդ տեղե էր ունենում իւրաքանչիւր օր: Այդ տաղտկալի միայնակութեան ժամանակ միայն այդ հասարակ զիւղացու կնոջ ներկայութիւնն էր, որ մի տեսակ միսիթարութիւն էր պատճառում նրան: Ալեքսանդրը աշխատում էր սրանից ծածկել իր վեշտը, իր երկիւղը, բայց այդ նրան չէր աջողվում, մանաւանդ այս երեկոյ:

Յանկարծ Ալեքսանդրը վեր թռաւ իր տեղում, երբ տեսաւ տանտիկնոջ ներս մտնելը:

Տանտիկինը զարմացած նայում էր նրան:

— Ո՞վ է այնտեղ:

Տանտիկնոջ զարմանքը տեղի տուեց երկիւղե, որովհետեւ սենեակում ոչ ոք չկար: Երկու շաբաթ է, ինչ Ալեքսանդրը մենակ է, իսկ տանտիկինը կրտէք նրան այնպիսի յուղված զրութեան մէջ չի տեսել ինչպէս այս երեկոյ:

— Տեսէք թէ ով է այնտեղ:

— Ի՞նչ է եղել ձեզ, մարդ չկայ, ոչ ոք չկայ,

— Կրկնեց կինն երկիւղով:

Ալեքսանդրը ուշքի եկաւ և աշխատեց իր կասկածանքը ծածկել բայց այդ նրան չէր աջողվում:

— Իմ ականջին գուան ձայնը նկաւ:

— Այժմ մարդ չկայ, բայց սրանից քիչ առաջ մի մարդ ձեղ հարցնում էր:

— Ո՞վ էր, — խիստ երկիւղով հարցրեց Ալեքսանդրը:

— Զգիտեմ:

— Բայց ի՞նչ էր ուզում:

— Չասաց: Միայն հարցնում էր, թէ ե՞րբ

էք դուք այստեղ եկել և ինչով էք պարապում:

— Տէր Յիսուս Քրիստոս... Ում ինչ գործ...

Դու ինչ ասացիր:

— Ես ասացի որ չգիտեմ: Բայց այդ մարդը  
կամենում էր ձեղ հետ տեսնվել. Ես ասացի, որ  
ամենայարմար ժամանակը առաւտան է:

Ալեքսանդրը մի քիչ ազատ շունչ քաշեց.  
Նա, կարծես, ուրախացաւ, որ դեռ ժամանակ և  
ամբողջ գիշեր կայ միայնակ մնալու: Մակայն  
շուտով նրա միաքը կրկնու պղտորվեց և նա  
սկսեց խոր հառաչել:

Բայց այդ ժամանակ դռան ձայնը լսվեց: Մի  
ինչ որ ոտքերի վստահ ձայներ սկսեցին հասնել  
դռնից այս կողմը:

Ալեքսանդրը լարեց ուշադրութիւնը, բայց  
յետոյ շտապ ցած եկաւ բազմոցի վրայից և  
ուղեորվեց միւս սենեակ: Նրա ոտքերը սկսեցին  
դաւաճանել իրան: Մի ինչ որ երկիւղից մի  
քանի քայլ անելով՝ նստեց աթոռի վրա:

— Տեսէք թէ ովկ է, — մըմնջաց նա:

Տանտիկինը դուռը բաց արեց և նրա ետելից  
ներս մտան երկու մարդ, որոնցից մէկին միայն  
նա ճանաչեց:

Դա գիւղի տասնապեսն էր:

— Ահա այդ մարդն էր ձեղ հարցնում, — ա-  
սաց տանտիկինը, ցոյց տալով տասնապեսի  
հետ եկած մի ակնոցաւոր մարդու:

Ալեքսանդրը քարացած մնաց իր տեղում:  
Նրա հայեացքն մի անորոշ գոյն էր ընդունել:  
Բայց յանկարծ նա վեր թռաւ ու գոչեց,

— Ի՞նչ էք ուղում ինձանից: Ես ձեղ չեմ  
ճանաչում:

— Դուք էք Ալեքսանդր Ոսկերչեանը:

— Ես եմ:

— Ես եկել եմ ձեղ յայտնելու, — ասաց ակ-  
նոցաւոր պարօնը, — որ դատաստանի վճռով  
ձեղ պիտի կալանաւորենք և տանենք բանտը...

Ալեքսանդրը մինչև անգամ չլսեց վերջին  
խօսքերը. նա մեքենաբար ընկաւ բազմոցի վրա  
և մնաց անշարժ:

— Վեր կացէք, — ասաց տասնապետը՝ մտնե-  
լով իր դերի մէջ, — հետեւցէք մեզ: Կառքը  
դուրսը սղասում է. եթէ ոչ մենք կարող ենք  
շրգենաւից ուշանալ:

— Ինձ ուր էք ուղում տանել — հարցրեց  
Ալեքսանդրը:

— Առ այժմս կրասնից եար, ապա քաղաք:

— Զէք կարող մի քանի օր սպասել որ գոնէ  
ես կնօջս հետ տեսնվեմ:

— Մենք ձեղ առանց այն ես քանի ժամա-  
նակ է պարում ենք: Խնդրեմ հետեւցէք. իսկ  
ձեր կնօջ հետ յետոյ կարող էք տեսնվել:

Ալեքսանդրը զսպելով իր արտասուքները  
վեր կացաւ և հետեւ նրանց:

— Յայտնեցէք այդ ամենը հարցնողներին, —  
ասաց նա՝ դառնալով տանտիկնոջը: Մի, եւ-  
գինէ, եւգինէ... Մնամ բարեաւ, սիրելիս...

## Ա

Նեակեալ օրը Եւզինէն և Շարմաղեանը  
վերադարձան գիւղ:

Հաղիւ դուռը բացվեց թէ չէ, ինչպէս երևեցաւ  
տանտիկինը և յայտնեց երէկվայ եղելու-  
թիւնը և Սլեքսանողի հետ պատահած անբախ-  
տութիւնը:

—Երէկ երեկոյեան մենք նստած էինք, ինչ  
պէս մի ակնոցաւոր պարոն մեր տասնապետի  
հետ եկաւ և կալանաւորեց... .

Բայց այդ խօսքերի շարունակութիւնը այլ  
ևս չլսեց Եւզինէն. նրա ոտները թուլացան,  
շունչը կարծացաւ, աչքերը մթնեցին, ականջ-  
ները խշացին և նա ընկաւ յատակին:

Այդ ժամանակ միայն Շարմաղեանը դուրս  
եկաւ մոռացութիւնից, կռացրեց իր յաղթան-  
դամ իրանը, գրկեց տիկնոջը և պառկացրեց  
բազմոցի վրա:

Նրա սիրաը սկսեց բարախել տիկնոջ մերձա-  
ւորութիւնից, զլուխը պտոյտ դալ բայց Շար-  
մաղեանը ունեցաւ այնքան քաջութիւն, որ  
յաղթեց իրան և զիմեց հնարաւոր միջոցների  
ու կարգադրութիւնների:

—Ո՞խ, այդ ինչ անբախտութիւն է: Գնա-  
ցէք ջուր բերեցէք, շուտ արէք, բացէք կո-  
ճակները... .

Տանտիկինը շտապեց կատարել Շարմաղեանի  
պատուէրները:

—Զեր գիւղում բժիշկ ունիք, — հարցրեց  
Շարմաղեանը տանտիկնոջեց:

—Որտեղեց. այ գնացէք մեր դիմացի խա-  
նութը, գնեցէք սկիպիդար, տիկինը մռաած է  
երեսում. գիշերս քամի էր, ձանապարհում մըր-  
սել է... .

—Ոչ ոչ, հարկաւոր չէ: Դուք հանեցէք շո-  
րերը, կօրսեալը... պատուհանը բաց արէք... նա-  
ուշագնաց է եղել... ես տեսել եմ այդպիսի տկար-  
ներ... իմ քոյըս մի անգամ այդպէս բռնվեց...  
Թոմաս Արտեմիչը, տեսնելով որ տանտիկինը  
թոմաս մոռացում է, հրեց և իր ուժեղ ձեռքով բա-  
ղանդացում է, հրեց և իր ուժեղ ձեռքով բա-  
ղեց պատուհանը: Թարմ օդի խիտ հոսանքը  
կպաւ նրա երեսին և սենհակի ձնչող օղը սկսեց  
տեղի տալ դրսի օդին:

—Կօրսետ խօ չկայ հագում:

—Ոչ ոչ... բացելով Եւզինէի կոճակները,  
Տանտիկինը, բացելով Եւզինէի կոճակները,  
ուղղեց նրա ոտքերը և մի խոր ցաւակցական  
հայեացքով սկսեց նայել նրան:

Շարմաղեանը մօտեցաւ նայեց տիկնոջը:

—Օ՛, որ աստիճան սպլինած է... . Բարձը  
հանէք զլիսի տակից: Կացէք, ես ունիմ օղը  
կօլոն—հանեցէք խնորեմ, կողովիս մէջ է... Օ՛, և  
սառը քրտինք... .

Շարմաղեանը վերցրեց օ· զը-կօլօնի շեշը և սկսեց հեղուկով տրորել Եւզինէի ձակատը, քունքերը, զրգուհել քիթը. յետոյ պատուիրեց նոյնն անել տանտիկնոջը:

— Դուք կատարեալ բժիշկ էք եղած, — ասաց ոռւս կինը:

— Բանդ տես, արորիր... Այս տեղերը, քունքերը... այն, այդպէս, այդպէս...

Անցաւ մի քանի րօպէ: Շարմաղեանը շարունակ դիտում էր տիկնոջը և մեծ անհանգստութեամբ սպասում նրա ուշքի գալուն:

— Զեռքերը որ աստիճան սառն են, — չէր հանգստանում ոռւս կինը:

— Ոչինչ, ոչինչ զու միայն քսիր...

Բայց ահա Եւզինէն խոր հառաչ քաշեց, յօրանջեց, նրա ձեռքերն ու ոտքերը թեթև շարժում գործեցին:

— Նու, փառք Աստուծոյ:

Անցաւ դարձեալ մի քանի րօպէ և Եւզինէն թոթովեց մի քանի բառ:

— Ո՞ւր եմ... Թոմաս Պրտեմիչ...

— Այստեղ եմ, տիկին, հանգիստ եղէք... Այլիմար գլուխ, — յանկարծ բացականչեց նա, — բոլորովին մոռացել եմ... այս րօպէ...

Նա շտապ անցաւ կից սենեակ, բացեց իր ձանապարհորդական կողովը, հանեց այնտեղեց մի շեշ կօնեակ, ըմպանակ և սկսեց լթնել:

— Սովորաբար ևս հետո եմ ման ածում այդ հեղուկը: Խնդրեմ յստակ խմեցէք, սա կօդնի: Եւ նկատելով, որ Եւզինէն պարզում է, նա շարունակեց նոյն իսկ հանաքով.

— Խմեցէք, խմեցէք, այժմ այդ կօնեակը տասը մանէթով չէք գտնիլ. այս ես պատահմամբ ձեռք եմ բերել մի խանութից, որտեղ մացած կան զեռ ակցիոն չմտած ժամանակվանից: Թշլ տուէք ձեզ նստեցնել...

Եւ նա մեկնեց ձեռքը և վերյնելով Եւզինէի քնքոյշ ձեռքերը նստեցրեց անկողնում: Յետոյ նշան արաւ ոռւս կոնջը, որ զլիսի տակ բարձ դնի ու ինքը գնայ...

Մնալով մենակ նա մօտեցրեց ըմպանակը տիկնոջ ըլթունքներին և ասաց.

— Ոչ ոչ յստակ խմեցէք, յստակ խմեցէք, մինչև անգամ ուզում եմ մէկն էլ ածել:

— Ոչ, ոչ ինչ էք ասում: Ես այդքան խմել չեմ կարող:

Բայց և այնպէս Եւզինէն դատարկեց կիսատլապանակը և ընդունեց ժպտով Շարմաղեանի հանաքները:

Ըստ երեսյթին նա պարզում էլ: Շարմաղեանի վրա այդ հանգամանքը մի ուրախ տպաւորութիւն գործեց: Այդ ժպտի մէջ նա, կարծես, տեսնում էր վտանգի անցումը: Հաւատացած լինելով կօնեակի բարեբեր ազ-

ղեցութեան և վտանգի անցնելուն, նա տանտիկնոջն արձակեց, մօտեցաւ Եւզինէի բազմոցին և նստեց նրա մօտ ու սկսեց լուռ դիտել նրա շարժմունքները:

Մինչդեռ Եւզինէի շնչառութիւնը չափաւոր ընթացք ստացաւ, աչքի կոպերը ծանրացան: Շարմաղեանն աւելի լարեց իր ուշադրութիւնը նա չէր հեռացնում իր աչքերը տիկնոջ երեսից: Նրա հայեացքի մէջ կարդացվում էր բուռն սիրոյ թունդ զգացմունք:

Ահա տիկինը ննջեց: Մանր, բայց արդէն կանոնաւոր շնչառութիւնը հասնում էր Շարմաղեանի երեսին: Այդ ժամանակ նա գտնվում էր երկու կրքերի ծանր հարուածների տակ: Նա պատրաստ էր բռնել տիկնոջ զլուխը և խեղդել իր համբոյրների մէջ, բայց միենոյն ժամանակ մի ուրիշ ձեռք պահում էր նրան և զսպելով, կարծես, ասում էր՝ «մի պղծիր այդ անարատ ու ջերմ սիրով ուրիշին պատկանող էակին»: Իսկ զիշերը սահում էր մի մեռելային միապաղպութեամբ: Շարմաղեանը զեռ նրատած էր Եւզինէի առաջ կռուելով իր զգացմունքների հետ: Երբեմն երբեմն Եւզինէն մի շարժում էր զործում, բայց գարձեալ չափաւոր շնչառութիւնը վկայում էր նրա անուշ քունը: Այդ միջոց վերմակի տակից գուրս եկաւ նրա աջ ձեռքը և Շարմաղեանը դիտելով տիկնոջ

հոլանի ուսը, այլ ևս չփիմացաւ, զգուշութեամբ վերցրեց նրան և պահելով երկար ժամանակ իր ձեռքերում, կլանում էր իր աչքերով նրան: Նա կամեցաւ դաւաճանել իր կամքին և գոնէ մի համբոյր դրոշմել տիկնոջ հոլանի ուսերին, բայց կրկին զսպեց իրան և այդ չարաւ:

Իսկ Եւզինէն կօնեակի ազդեցութեան տակ այնպէս էր քնած, որ ոչինչ չլսեց: Շարմաղեանը զգուշութեամբ պահեց տիկնոջ ձեռքը, յետոյնը նը զգուշութեամբ պահեց տիկնոջ ձածկեց և թողնելով զրեց ցած, վերմակով ծածկեց և թողնելով Եւզինէին շտապ անցաւ իր սենեակը, երկու ըմբանակ մէկ - մէկու վրա կօնեակ գատարկեց ու թուլացած ընկաւ մահճակալի վրա:

Արդէն զիշերվանից բաւականին անցել էր, երբ Շարմաղեանը խոր քուն մտաւ: Լոյսը բացվելուն պէս, Եւզինէն բացեց իր աչքերը:

Նրա ականջին հասան բակի ձայները: Պարզ էր, որ զիւղական կեանքն արդէն ոտքի էր կանգէր, և սվում էին զիւղացու մուժիկների խօսակնել: Լսվում էին զիւղացու մուժիկների խօսակնել: Այդ անխոնջ աշխատաւորները ցութիւնները. այդ անխոնջ աշխատաւորները արդէն զբաղվել էին իրանց ձկնորսական գործութեամբ: Այդ միջոց և ներս մտաւ տանտիկինը: Տերութիւն միջոց էր այժմ ձեզ զգում: Ի՞նչպէս քննեցիք զիշերս:

— Ինչպէս մեռած: Ինչպէս երկում է քըս — ինչպէս մեռած: Ինչպէս երկում է քըս — ինչպէս մեռած: Փառք Աստուծոյ, այժմն ինձ տնած եմ եղել... Փառք Աստուծոյ, այժմն ինձ

լաւ եմ զգում, միայն թուլութիւնը դեռ կայ: Գիտէք, այս զիշեր մենք շատ նեղութիւն քաշեցինք. ստիպված եղանք նաւակով դալ: Քամին խիստ թունդ էր... Բայց ես շտապեցի այտեղ, որ աւելի յաւալի լուր լսեմ.. Թոմաս Արտեմիչը վեր է կացել:

—Նա այնպէս է քնած, որ քառասուն թըլբուկ հարէք, չե վեր կնապ:

—Խոնդրեմ պամեցէք մանրամասն, ինչպէս եղաւ, որ կալանաւորեցին ամուսնուս:

—Երեի ձեր ամուսինը պարտք ունի՞:

—Դուք որտեղից զիտէք:

—Այնպէս էր ասում տասնապետը: Ես զըրսում ծածուկ այն ակնոցաւոր պարոնից հարցրի նրան: Գիտէք, ես շատ վախեցայ: Քանի տարի է, որ պահում եմ այս սենեակները և տանս մէջ ոչ մի անկարգութիւն չի պատահած: Ինձ մօտ յած են գալիս շատ պատուաւոր հիւրեր: Զեղանից առաջ այստեղ յած էր եկել փաստաբան Բ.: Այսօր ի՞նչ պատրաստեմ ձեղ համար:

—Ինչ ուղում էք, միւնքն է ինձ համար: Հարցրէք Թոմաս Արտեմիչից:

—Իսկ թէյլ ձեղ համար այստեղ բերեմ:

—Սպասեցէք, որ Թոմաս Արտեմիչը վեր կենայ:

Այդ միջոց կից սենեակից լսվեց Շարմաղեանի ձայնը:

—Օ՛, այս ինչ շատ քնեցայ: Հա՛, մինչեւ անգամ չեմ էլ հանված... իվանօվնան...:

Տանտիկինը շտապեց Շարմաղեանի սենեակը:

—Ի՞նչպէս է ամիկինը: Վեր է կացել թէքնած է:

—Արդէն վեր է կացել:

Շարմաղեանը սկսեց լուացվել: Յանկարծ նրա միտքը ընկաւ երէկվայ անցքը և շատ գոհ մնաց իր վարմունքից:

—Թոմաս Արտեմիչը այդ ի՞նչ շատ էք քը նում, —ձայն տուեց Եւզինէն:

—Ա՛, ներկցէք, դուք արդէն... այս ըօպէիս... Շարմաղեանը սանրվեց, հայելու առաջ դիլստեց իր փողպատը և մօտեցաւ դոնին:

—Կարելի՞ է:

—Խոնդրեմ:

Շարմաղեանը մօտեցաւ Եւզինէին: Տիկինն այդ ժամանակ ցած էր եկել և հագնվել էր արդէն:

—Ի՞նչ էք այդքան մնում, ներս եկէք, ես հագնված եմ:

—Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ, որ ձեզ առողջ եմ տեսնում: Պէտք է շնորհակալ լինէք իմ կօնեակից:

—Ես չափազանց շնորհակալ եմ ձեղանից: Ներկցէք, որ ձեզ այդքան սեղութիւն պատճառեցի: Նստէք այստեղ տուեք ձեր ձեռքը, ես ձառեցի: Նստէք այստեղ տուեք ձեր ձեռքը, ես առանձնապէս կամենում եմ ձեր ձեռքը սեղմել

ի նշան խորին շնորհակալութեան և ներդութիւն խնդրել որ իմ պատճառով դուք այդքան թուք ու մուլ լսեցիք:

—Դուք ձեր սկեսրայրի լըբութիւններն էք ակնարկում,—բայց ես էլ նրան լաւ չորեցի, չէ, չիմա նա մինչեւ գերեզմանը չի մոռանալ ինձ... Բայց զարմանալի կերպով ծածկեց մուրհակների դէպէքը: Զէ, ես այդ խօսքերից յետոյ՝ հրաժարվում եմ նրա հետ զատվելուց: Դա մի ինչ որ հրեշ է...

—Եյ՞, բայց սրանով մեր գործը չթեթևացաւ: Ճիշտ է, ես չի սպասում, որ նա այնքան ստոր վարվէր, մինչեւ անգամ իր տանից դուրս անէր, բայց ի՞նչ անենք. նրանից յոյսներս պէտք կտրենք: Ափսոս, որ հայրիկս Աստրախան չէ: Ալքսանդրին արդէն կալանաւորեցին, հարկաւոր չէ արգեօք մի փաստաբանի դիմել...

—Աւելորդ փող կծախոէք. ես ձեզ ինքս կէս փաստաբան: Առ այժմս պէտք է տեսնվել պարտքան տէրերի հետ և խնդրել գուցէ մի բան զիջողութիւն կանեն: Գոնէ մեզ տային մեր խանութը: Դիտէք ինչ կայ, ես ձեզ խորհուրդ կտամ, այ թէ ի՞նչ արէք: Դիմեցէք անձամբ մուժիկին, ինչքան լինի՝ կին մարդու դիմածը ուրիշ է, հասկանում էք ինձ, խնդրեցէք, խոստացէք, որ նշանակեն աղմինիստրայշիա... Նու, վերջապէս, դործ զրեցէք ձեր կանայի ծարադի-

կութիւնը: Օ՛, եթէ ես կին լինէի՝ կանէի շատ բան...

—Բանն էլ այն է, որ ես կանանց այդ շնորհը ըստնեմ:

—Մի կերպ զինուեցէք: Պէտք է Ալքսանդրին աղատել:

—Ափսոս, որ հայրիկը քաղաքում չէ. նա, յօյս ունիմ կօնէր: Բայց խօսքով ես ձեզ յեց զրկեցի...

—Դուք միթէ չէք ուղում խմել:

—Խնչու չէ: Նրանկը նատիցին թէյի և երկար ժամանակ մաքերի փոխտնակութիւն արեցին իրանց զրութեան մասին:

թ.

**Ս**տեփան Ստեփանիշ Ստեփանովը չէր սպասում, որ այդպէս դիւրին կերպով կաջողպէս դանել Ալքսանդրին: Երկար ժամանակ նա ինք նարաւական ժպտով վերաբերիում էր այդ հանուարական ժպտով միտ բերելով, որ այդ պագամնքին, յետոյ միտ բերելով, որ այդ պագամնքին, իսաւ միտ քաշել իր գումարի ժով նա ստիպված է խաչ քաշել իր գումարի վրա, վեր կացաւ իր տեղեց և խորհրդական վրա, վեր կացաւ իր տեղեց և խորհրդական վրա, սկսեց մասածել թէ ի՞նչ պէտք է քայլերով սկսեց մասածել թէ ի՞նչ պէտք է քայլերով սկսեց մասածել: Բայց տեսաւ, որ ոչ մի հըանել այսուհետեւ:

նար չկայ և պէտք է ձեռք քաշել 40,000 -ից,  
նա տարաւ ձեռքը իր ճակատին, անյոյս կեր-  
պով շփեց նրան և մի ցաւակյական հառա-  
շանք արձակեց:

Նա սկսեց մտաբերել թէ ինչ հանդամանք-  
ների շնորհիւ զրկվեց այդ գումարից: Նա յի-  
շում է, որ սկզբից շատ խիստ վերաբերվեց.  
գուցէ մեղմ վերաբերվելով նա կարող էր աւելի  
օգուտ բերած լինել իր դատին: Բայց յետոյ  
եկաւ այն եղրակացութեան, որ այժմ արդէն  
ուշ է վշտանալ այդ կորուստով. հասկացաւ,  
որ պէտք է սկսածը տեղ հասցնել Այդ նպա-  
տակով նա վճռվեց որքան կարելի է աւելի  
խստացնել պահանջը և բանտարկութիւնով  
միայն չքաւականանալ: Վրիժառութեան զգաց-  
մունքը այն աստիճան տիրեց նրան, որ նա  
ուղղվեց և մի շարժում անելով նստեց զրա-  
սեղանի առաջ ու զքաղվեց այդ մոքով: Նրա  
միաքը կանգ առաւ փաստաբանի խորհուրդների  
վրա, որ շարունակ մեղաղրում էր Ալքսանդ-  
րին դիտաւորեալ սնանկութեան մէջ և այդ  
մոքով առաջարկում էր դատ սկսել:

Այդ միաքն այժմ նստեց նրա գլխում: Վրի-  
ժառութեան ողին այնպէս տիրեց նրա հոգաւն,  
որ նա մի կատաղի հայեացք ընդունելով, ոտ-  
քով մի ուժգին հարուած հասցրեց յատակին.  
այդ ձայնի վրա ներս մտաւ ծառան:

— Կանչեցէք փաստաբանին, — պատուիրեց նա:  
Այդ ասաց նա զրիթէ անդիտակյարար, բայց  
միւնցն ժամանակ զգաց, որ անհրաժեշտ է  
տեսնվել նրա հետ, որովհետև այժմ ուզում է  
զլուխ բերել փաստաբանի առաջարկութիւնը  
և սկսել գործը մեղաղրելու Ալքսանդրին դի-  
տաւորեալ մնանկացած:

Այդ հանդամանքի վրա նա այնքան ուրախա-  
ցաւ, որ մի ինքնաբաւական ժպիտ անցաւ նրա  
երեսով: Այժմ նա անտանելի էր: Մինչև անդամ  
նա հպարտացաւ այն բանով որ իր ձեռքումն է  
մի մարդու վեճակը և թէ ինչ կկամենայ, այն  
էլ կանի նրա հետ: Նա իր մէջ կրում էր կա-  
էլ կանի նրա հետ այն ինքնաբաւականութիւնը, իրբ այդ  
տուի այն ինքնաբաւականութիւնը, իրբ այդ  
մի անդամ ընդ միշտ թօթափեց իր վըայից  
խղճութեան ողին և առաջին անդամ տուեց  
կատարեալ աղատութիւն իր վրիժառութեան  
զգացմունքին: Այժմ միայն նա իրան համարեց  
իր համապատասխան բարձրութեան և դիրքի  
իր համապատասխան բարձրութեան: Միայն  
վրա կանգնած արժանաւոր վաճառական: Բայց  
այդ պատիժը կհովայնէ նրա սիրտը: Բայց  
յանկարծ նրան երկար թվաց ծառայի բացա-  
լայի գլխին, ինչպէս տեսաւ նրան դռան մօտ  
արդէն կանգնած:

— Այդ ի՞նչ եղաք. այդքան ժամանակ չկարողացաք իմանալ: Այնտեղ է զրագիրը:

— Եսու, բայց հեռախօսը բոնված էր: Փաստաբանն ինքը անձամբ ասաց, որ գալիս է: Բայց, պարուն, այստեղ եկել է մի կին, որ կամենում ձեզ տեսնել:

Ստեփան Ստեփանիչը ձեռքով նշան արեց և պատուիրեց այցելուին ընդունել:

Նրա մանողը ա. Եւզինէն էր, որի արտաքին տեսքը այնքան ճնշված և լացակնված էր, որ նմանում էր մի սգաւորի:

Ստեփան Ստեփանիչը իսկոյն հասկացաւ նրա այցելութեան պատճառը և մի շենծու պաշտօնական գիրք ընդունելով՝ հրաւիրեց տիկնոջը նստել:

Առաջին բօպէից Եւզինէն չվստահացաւ խօսելու: Նրա երկիւղը չափազանց մեծ էր: Մի բօպէ նրա մաքով անցաւ, որ մի գուցէ անաջող հետեւանք ունենայ իր այցելութիւնը, սակայն Ստեփանովի մօտ վարմունքը երաշխաւորում էր հակառակը:

Մի կաոր ժամանակ նրանք լուռ նայեցան մէկ մէկու. վերջապէս Եւզինէն խղեց լոռութիւնը և ասաց.

— Արդիօք ես յօս կարող եմ ունենալ որ իմ խնդիրս կյարգվե... .

Ստեփանովի բեխերի միջով անցաւ ծալքերի

ալիքը. մի բօպէ նա նայեց հեռուն և վերջապէս պատասխանեց.

— Զգիտեմ, ի՞նչ է ձեր խնդիրը:

Բայց Հենց այդ նախադասութիւնից և արտասանութեան եղանակից Եւզինէն գուշակեց զործի ելքը. նրա սիրալ խիստ խռովեցաւ և նա հազիւ զապեց իր արտասուքը:

— Ես եկել եմ իմ ամուսնու գործով այն ամուսնուս, որը ձեզ պարտք է, որին դուք կալանաւորեցիք... Ես Ալեքսանդր Ռուբեռշեանի կինն եմ...

— Գիտեմ:

— Բայց ես հաւատացնում եմ ձեզ որ նա մեղ չունի... .

Ստեփանովի արիւնը գլխին տուեց:

— Ի՞նչպէս, եթէ մեղաւոր չլինէր, մենք նրան կկալանաւորէինք ո՞ր... .

— Գիտեմ, զիտեմ... օրէնքով այս, նա գուցէ... Եւ Եւզինէն արդէն չկարողացաւ զապել իրան. արտասուքը խեղդեցին նրան. Նա ընկաւ Ստեփանովի ուներին, բայց սա վերցրեց տիկնոջ ձեռքից և նստեցրեց:

Այդ տեսարանն այնքան ծանր էր և վշտալի, որ մինչև անդամ Ստեփան Ստեփանիչը որաի մէջ արթնացրեց խղճահարութեան դպացմունքը:

— Նստէք, հանգստացէք, յետոյ կասէք: Դուք եկած էք ձեր ամռւսնու գործով. որքան իմ ձեռքից է կախված, ես... նստէք... .

Եւ մուժիկը զցեց իր հայեացքը Եւզինէի  
սիրուն երեսին: Խեղձ կինն արդէն զսպեց իրան  
և հազիւ ժողովեց իր ուժերը:

—Մէնք, տիկին, մեղաւոր չենք. երեակայեցէք ձեր ամուսինը մեզ պարտ է և սրա մասին ըսկի չել մտածում:

—Օ՛հ, —հառաջեց Եւզինէն:

—Ես շատ կամեցայ, որ մի կերպ հաշտութիւն կայացնենք: Այդ նպատակով ես հրաւիրեցի ձեր սկեսրայլին, նա չեկաւ, իսկ ձեր ամուսինը անհետացել էր: Գիտէք, մենք որքան ջանք դրինք, որ նրան գտանք. այդ էլ շնորհիւ մի անակնկալ դէպքի, մենք իմացանք մի զրդպեց...

Եւզինէի շրթունքները զողողացին և նա հազիւ լսելի ճայնով հարցրեց.

—Բայց որտեղ է բանտարկված իմ ամուսինը, կրամնիյ-եար, թէ այստեղ:

—Նա կամենում էր կրամնիյ-եար, բայց մենք բարւոք համարեցինք այստեղ:

Տիրեց լուռթիւն: Երկու կողմից էլ կարծես, խնդիրը պարզված համարվեց: Երբեմն երբեմն սենեակի պատի ժամացոյցի թիք-թաքը խանգարում էր խորհրդաւոր լուռթիւնը: Վերջապէս Եւզինէն թուլացած կրկին ընկաւ մուժիկի ուները և ջղային ցնցումնվ ասաց.

—Ես խնդրում եմ որ աղատէք իմ ամուսնուն:

Լսելով այդ մուժիկը կարծեց, որ Եւզինէն կամենում է պարտքի մի մասը առաջարկել և սրանով ձեռք բերել ամուսնու աղատութիւնը, սրանով ձեռք բերել ամուսնու աղատութիւնը մինչև անդամ ասում այդ մոքով, նա վճռվեց մինչև անդամ յանդիմանութիւն կարգալ: Իր դիտաւորութիւնը զլուխ բերելու համար, Ստեփանովը սկսեց նը զլուխ բերելու համար, մեղմացնել իր ամեղազրել նրա ամուսնուն, մեղմացնել իր արածը:

Եւզինէն լսելով այդ խօսքերը իրան զգաց մի այնպիսի ստորացած զրութեան մէջ, որ վեր կենալով իր տեղից, այլ ևս չկնդրեց: Նա իրան վերաւորված համարեց, իսկ այդ հանգամանքը թեթեացնում էր նրա ցաւը և անտանելի վիշտը: Բայց մի քանի րօպէից յետոյ նրա միտքն ար: Բայց մի քանի րօպէից յետոյ նրա միտքն ընկաւ կրկին իր սիրեցեալ ամուսինը: Նրա սիրալ կրկին փղձկվեցաւ և նա պարզ նկատեց, որ հպարտութեամբ չել կարող աղատութիւն ձեռք բերել ուստի կրկին հարցրեց.

—Այս, մենք ձեր ձեռքումն ենք: Ի՞նչով կարուի ես զնել իմ ամուսնու աղատութիւնը:

—Քառասուն հազարով:

Այդ խօսքերը լսելուց յետոյ Եւզինէնի տանջանքը հասաւ իր գագաթնակետին: Նա ծախեց իր բոլոր զարդարանքը, իր աղամանդեայ օղերը, իր բոլոր զարդարանքը, իր աղամանդեայ գուապարանջանները և իր մօտ եղած չեչին գուապարանջանները միացնելով հազիւ մի 10,000 բուբլի

կազմեց և այդ գումարով յոյս ունէր գնել իր ամռանու ազատութիւնը, — բայց այժմ համազ-  
վում է, որ այդ ամենը զուր աշխատանք է:  
Վերջապէս հոգեկան տանջանքներն առ ժամն  
պէտք էր մոռանալ և յայտնել դալու ճիշտ  
նպատակը:

— Ես 10,000 կարող եմ ձեզ առաջարկել:  
Նրա ձայնը դողաց, շրթունքները բաժանվե-  
ցան — քիչ էր մնում լաց լինի:

Ստեփանովի աչքի կոպերը լայնացան և նա  
ձեռքը տանելով զլիին՝ սկսեց շփել իր մազերը:  
Նրա բարկութիւնը նստեց: Նա տիսաւ, որ գոնէ  
գումարի մի մասը կարող է սաղացնել և այդ  
պատճառով չկամեցաւ ձեռքից բաց թաղնել  
ընկած որսը: Նա սկսեց խօսել մեզ, բայց միե-  
նոյն ժամանակ պահելով իրան իր բարձրու-  
թեան վրա:

— Դուք ծիծաղում եք, — ասաց նա, — պարա-  
քը 40,000 է, դուք ինձ քառորդ մասն էք ա-  
ռաջարկում:

— Ես գիտեմ, ես խնդրում եմ, որովհետեւ ես  
աւելի չունիմ:

— Աւելացրէք: Կուղէք 35,000 -ով, նու, վեր-  
ջապէս 30,000 -ով ես կարող եմ համաձայն-  
վել:

Վրա հասաւ շատ ծանր րօպէ: Եւգինէն ա-  
ւել փող չունէր, բայց մի ելք կարևոր էր զբա-

նել — և նա առաջարկեց 20,000 լուրիք, միայն  
թէ 10,000 -ի տայ մուրհակ:

— Մուրհակ, — զարմացաւ մուժիկը, — ինչու  
չէ: Այդ պայմանով ես կմտածեմ:

— Դուք թոյլ տուեցէք մեր գործերը շարու-  
նակել այն ժամանակ ես խօսք եմ տալիս ձեր  
փողերը լրիւ հատուցանել: Եթէ կամենաք, հենց  
այժմ այդ գումարը...

— Ինչու չէ:

Ստեփան Ստեփանիչը տուեց ստացագիր  
10,000 -ը ստանալու համար և ստացաւ փո-  
ղերը:

— Իսկ մուրհակին կարող էք յետոյ գալ:  
Ես գրել պատրաստել կտամ...

Եւգինէն գուրս եկաւ՝ հաւատացած լինելով  
որ իր ամռանու գործը թեթևացրել է. բայց  
չգիտէր խեղճ կինը, թէ որ աստիճան ինքը  
խարված է իր ենթագրութիւնների մէջ. չգիտէր,  
թէ ինչպէս վերջին կօպէկները տալով՝ մազա-  
շափ թեթևութիւն չի ձեռք բերում իր ամռա-  
նու համար:

Եւգինէի գնալուց յետոյ Ստեփանովը ուրա-  
խութիւնից շփում էր ձեռները, իսկ երբ եկաւ  
փաստաբանը, Ստեփան Ստեփանիչը հազօրդեց  
եղելութիւնը մի առանձին բաւականութեամբ:  
Փաստաբանը կրկին պնդեց և հաւատացրեց, որ  
նրանցից փող դուրս կդայ, միայն հարկաւոր է

գործի կիսում չկանգնել այլ շարունակ պինդ  
ոտք ճխտել պահանջի վրա:  
—Թէ այսպէս, թէ այնպէս, մի կտոր գումար  
սաղացրինք: Ես ձեզ կանչել էի ասելու, որ  
գործը շարունակեք և մեղաղրէք նրան, ինչպէս  
որ ասում էիք, ողիտաւորեալ անանկութեան  
մէջ:

Նրա ձայնի մէջ կրկին լսվեց քինառութեան  
նօտան:

—Այն ժամանակ կտեսնեք, որ նրանք կրե-  
բեն և մնացած փողերը:

## Փ.

Պաղաքի դլսաւոր փողոցներից մինով գոր-  
ծունեայ քայլերով տուն էին վերադառնում  
երկու մարդ:

Գիշերն արդէն բաւականին մութն էր. լու-  
սինը քանի օր էր, որ դուրս չեր գալիս. երկնա-  
կամարի վրա լողում էին սե-սե ամսերը:  
Մութն այնքան թանձր էր, որ երկու քայլ հե-  
ռուն հաղեւ էր նշարվում և ամեն րօպէ նը-  
րանք անսպասելի կերպով իջնում էին ու բարձ-  
րանում մայթերի անհաւասարութեան պատ-  
ճառով:

Ալբող Ճանապարհը, կարծես, մթութեան  
մէջ թաղված էր և անշետանում էր նրանց

աչքից: Անհաւասար բարձրութեան տները նը-  
րանց առաջ, կարծես, տատանվում էին. Նրանք  
հասան անկիւն, այսպեղ լսպատերի լցով ընկաւ  
նրանց վրա և լուսաւորից երեսները: Որանք  
Ոսկերչեան երկու եղայլներն էին՝ Գէօրգը և  
Սիմօնը: Նրանք նոր Ճանապարհ էին զցել ի-  
րանց հօրը Մօսկվա և վերադառնում էին տաւն:  
Եթէ մի քիչ լցով լնէր, պարզ կարելի էր

նկատել նրանց խորհրդաւոր երեսները:

—Ես կարծում եմ, որ հայրիկին վասնգ չի  
սպառնում, նա շատ բաւական սրատվ գնաց:

—Նրա վերաբերմամբ ես ոչինչ չեմ ասում:  
տեսնում ես, նա բոլորովին չի էլ մտածում  
գործի վրա և մինչեւ անզամ ծածկում է մե-  
զունից, թէ ինչ գործով է գնում Մօսկվա, —  
ասաց երկորդ եղայլը, —բայց ես վախում եմ,  
որ ինձ բան չհասնի:

—Քեզ ինչ պիտի հասնի: Դու խօ չես սառ-  
րագրել մուրհակը:

—Բայց և այնպէս, չէ որ իմ անունով է  
խանութը. եթէ մեղ մեղաղրում են դիտաւոր-  
ված մնանկացած, այն ժամանակ ինձ էլ մա-  
սամբ կմեղաղրեն:

—Այդ գեռ տեսնենք, ինչ կասի դատաստանը:  
Նրանք մեղաղրեցին և գատաստանն էլ կար-  
ծում ես նրանց խօսքով մեղաղրեց:

—Այնուամենայնիւ գործն այն գրութեան

մէջ է, որ հանաք անել չե կարելի: Եթէ քո  
ասածները ճիշտ լինէին, մեր խանութը չէին  
կնքիլ: Բայց անսնում ես մեզանից չհարցրին և  
մենք մինչեւ օրս չենք կարողանում խանութը  
բացել: Մեղ շատ դժուար է ֆիրմայի դէմ դատ  
վարել: Նրանք ունին փողը իսկ մենք ոչինչ  
չունենք և ես կարծում եմ, եթէ դործին լաւ  
կպչն: Անգ ամենքիս էլ վիսա կհամնի:

— Բայց և այնպէս քո վախր աւելորդ է. ի՞նչ  
վտանգ կարող է մեղ սպառնալ:

— Դիցուք հէնց այն, որ մեր գործերը այն-  
քան էլ մաքուր չեն տարած...  
Նա շուռ եկաւ և հաւաստիանալով որ ի-  
րանց ետևից մարդ չե գալիս, կրկին շարու-  
նակեց.

— Միթէ իսկապէս կարծում ես, որ չե հաս-  
կացվում թէ մի դիշերում այդ տեսակ վոփո-  
խութիւններ անելն առանց նպատակի չէ:

Երկրորդ եղբօր երեսը խոժոռվեց:

— Այո՛, ես երկիւղ եմ կրում: Եթէ այժմ Ա-  
լեքսանդրն է պահված, վաղը կարող են մեղ էլ  
քաշել... Ես ուզում եմ զիմել փաստարանի:

Երկրորդ եղբօր դէմքն աւելի խոժոռվեց և  
նա ըսեց:

— Ե՞րբ է գործը նշանակված:

— Այդ զեռ յայտնի չէ:

Այդպէս խօսելով նրանցից ամեն մէկը աշ-

խառում էր իր հայեացքները լուսաբանել: Ան-  
ցաւ կէս ժամկց աւել երբ նրանք տռն հասան:

Տանը մնացել էր միայն Անկերչանի քոյլը՝ տ-

նուշանը, որն անհամբեր հայեացքով ընդու-

նեց նրանց և ասաց:

— Ի՞նչու այդպէս ուշացաք:

— Շոգենսաւը նոր դնաց:

— Նոր բան լսել էք՝ Սերգէյ Խրիստաֆօ-  
րից մեռաւ:

— Դողշեամնը:

— Այօ՛:

— Է՛հ, մեռաւ իսօ մեռաւ, — նկատեց Գէոր-

գէհ, մեռաւ իսօ մեռաւ, — նկատեց Գէոր-  
գը, — ողորմի հոգուն, նրա հողի համբարքավ  
մեղ էլ կեանք... Յետօյ ուրիշ հարցնող չե  
կղել:

— Ինչպէս չէ, մի տղայ էր հարցնում, — և

ասացի, որ մի ժամկց յետօյ գայ:

— Մի աղայ:

— Այօ՛, եթէ չեմ սխալվում այն օրվայ տը-  
ղան էր:

— Գէորգը մի երկիւղալի հայեացքով նայեց  
ա. Շուշանին:

— Ի՞նչ էր ասում այդ աղան: Զհարցրի՞ք:

Բայց այդ միջոց զուռը թիկթիկացրին:

Ներս մոռաւ մի պատանի:

— Ահա նա ինքը, — ասաց ա. Շուշանը, գնա-

լով միւս սկսեակ:

Գէորգը սրան արդէն երրորդ անգամն էր տեսնում և առաջին երկու տեսութիւնից յետոյ մի տեսակ վախ և զուանք էր զբում դէպի այդ պատանին: Նա մինչեւ անգամ նեղացաւ այցելուի վրա, միայն թէ ձեւ ցոյց չտուեց իր եղբօր մօտ և աճապարեց հրաւիրել նորեկին իր սենեակը: —Ես ձեզ մօտ այսօր երկրորդ անգամն եմ գալիս, —ասաց նա: —Դարձեալ նամակ է:

—Եւ ի՞նչ էք դուք նեղացնում մարդու, հաւատան միւնցն նիւթի վրա: զանգօրօն

Նրա ձայնը դողաց մի ինչ որ սպառնալից եղանակով: Բայց նամակաբերը բոլորովին աներկիւղ շարունակեց.

—Տէրս պատուիրեց ասել, որ եթէ այդ անգամ ևս չէք կատարիլ նրա առաջարկութիւնը, այլ ևս մենք նեղութիւն չենք պատճառիլ:

Ճանապարհելով նամակաբերին, Գէորգը շտապ բացեց նամակը և կարդաց: Նամակում շշափվում էր միւնցն խնդիրը, ինչ որ առաջին երկուսում, միայն այս անգամ ոճի մէջ գործ էր ածած աւելի կտրուկ լեզու և բացի դրանից խոստացած էր մի նորութիւն, որից իբրև թէ կախված է նոյն իսկ նրա կեանքը: Նա ամբողջապէս զբաղվեց այն մոքով, թէ պէտք է գնալ այդ մարդու մօտ այցելութիւն, ինչպէս ասված էր նամակում, թէ ոչ: Ամբողջ նամակից և նրա գրածից հնչում էր մի ինչ որ խորհրդաւոր

դաղտնիք և այդ էր պատճառը, որ Գէորգի սիրառաջնիք և այդ էր պատճառը, կախ ընկաւ աւելի քան թէ առաջին նամակները կարդալու ժամանակ: Մինչ դեռ նամակով նրան խոստանում են այդ նեղ դրութիւնից դուրս գալու և կնքած խանութը կրկին բացելու հաստատ միջոց և այդ պնդում են այնպիսի համոզեցուցիչ փաստերով որ չհաւատալ նա չի կարողանում: Եւ ի՞նչն է նրան կանգնեցնում: Ճիշտ է, նամակին նայելով, այդ կամպնեցնում: Ճիշտ է, նամակին նայելով, այդ գործի համար հարկաւոր է պատկառելի գործործի համար հարկաւոր է պատկառելի գործործի միթէ նա չի նախատեսել փողի մար, բայց միթէ նա չի նախատեսել փողի մար, նշանակութիւնը: Նա խանութի կրիտիկական նշանակութիւնը: Նա խանութի կրիտիկական դրութեան ժամանակ ապահովել է իրան մօտ դասը հաղարով. և այդ բանը ոչ ոք չգիտէ: առաջ հաղարով. և այդ բանը ոչ ոք չգիտէ: Նա այդ այնքան ձարպիկ կերպով է արել որ նոյն իսկ նարմաղեանը չի կատել:

Նա երկրորդ անգամ կարդաց նամակը և բացականեց.

—Պէտք է գնալ տեսնենք թէ ինչ է ասում, ինչ խորհուրդներ է տալիս:

Աչքը զցեց ժամացոյցին, տեսաւ որ այսօր արդէն ուշ է գնալը և թողեց վաղվան: Եւ քանի որ անցնում էր ժամանակը, նա այնքան աւելի խոր մտածման առարկայ էր դարձնում, նամակի առաջարկած նիւթը:

—Ո՞վ գիտէ, գուցէ իսկապէս կարելի է բայց ել կնքած խանութը:

Միւս օրը երեկոյեան, ժամի 8 -ին, նա զնաց  
նախակի հեղինակի մօտ:

Դա մի մեծ խանութիւն տէր էր: Գէորգը մտաւ  
խանութիւն: Նաւթիւն հոտ կպաւ նրա քթին, բայց  
ամանեղինների, թանկագին լամպերի ճաղակա-  
ռոր համակարգ տեսքը նրան դրաւեց: Այդ խա-  
նութը զանազանվում էր քաղաքի մէջ գանվող  
շատ խանութներից: Նա շատ հոյակապ էր:  
Ապրանքի տեսակները շատ չէին, բայց եղածնե-  
րը շատ հիանալի և գրաւիչ էին: Լոյսն էլ բա-  
ւականաչափ էր: Խանութիւն մի խորքում բարձ-  
րանում էր մի ամպհովանու նման բան: Պա կաս-  
սան էր, որտեղ նստած էր խանութիւն տէրը՝  
Բալուրեանը, որ տեսնելով Գէորգի ներս գալը,  
աջ ձեռքը տարաւ վերև, ձախով շփեց զլու-  
խը, որպիսի գործողութիւնից յետոյ խանութիւ-  
նուր գործակատարները սկսեցին մէկ-մէկու-  
ետեկից ցրվել:

Բալուրեանը շատ խորհրդաւոր մարդ էր: Նա  
արդէն միջին հասակից անց էր, բայց այնքան  
թարմ ու առողջ, որ կարծես թէ նրա վըա-  
կեանքի խոր վշտերը ոչ մի հետք չէին թողել:  
Բայց որ վշտեր ու արկածներ տեսել է նա, այդ  
վկայում է նրա հայեացքը, կեանքի փորձառու-  
թիւնը և խորամանկութիւնը: Նա այդ կաս-  
սայում նստած աշագին գործեր էր կառավա-  
րում, իսկ գործակատարների հետ խօսում

էր պայմանական նշաններով, օրինակ՝ աջ ձեռքը  
բարձրացնելը նշանակում էր ցրվել և իրան մե-  
նակ թողնել այցելուի հետ, որպի կանգնելը — սրա  
հակառակը, գուշ շփելը մի ուրիշ բան և այդ  
հակառակը, գուշ շփելը խօսակցութիւնն էր ինչ  
պէս ամեն մի քայլը: Խօսակցութիւնն էր ինչ  
ասել կուղի, շըջանակված էր ձեւականութիւն-  
ներով:

Երբ որ ներս մտաւ Գէորգը, նա միանդամից  
գրաւից Բալուրեանով և ապշած մնաց, երբ  
լսեց նրա բացատրութիւնները:  
— Եղբայր, ի՞նչ է եղիլ ձեզ, երեք անդամ է  
ձեղ կանչում եմ, մի անդամ հաղեւ եք գալիս:  
Զէք հաւատում համ. հասկանալի է: Բայց մի-  
թէ ես օրինակ չեմ ձեր առաջ: Դուք, ասենք,  
կարող էք տիսած չլինել բայց  
երիտասարդ եք, կարող էք տիսած չլինել բայց  
լսած կլինէք: Ո՞վ Բալուրեանին չի ճանաչում:  
Սրանից տասը տարի առաջ իմ խանութն էլ  
փակիցին, կնքեցին... զարմանում էք, բա՛ ի՞նչու-  
համար էի ձեզ հրաւիրում... Մեր հայն էք,  
լաւութիւն անենք... Ասեմ, ասեմ ձեզ...  
Նա զանդահարեց: Մի տղայ երկու բաժակ  
թէյ բերեց և զրեց նրանց առաջ:

— Խոզդիմ, — առաջարկեց Բալուրեանը:  
Բայց Գէորգին թէյը չը հետաքրքրում նա  
անհամբեր սպասում էր, թէ ի՞նչ կերպ նա  
կրացատրի իր միտքը և թէ ի՞նչ մէջ է կայա-  
գաղացնիքը: Բայց Բալուրեանը չը շտա-  
նում գաղտնիքը:

պում: Նա խառնում էր թէյը գղալով և առաջարկում էր Գէորգին բաժակը: — Ի՞նչպէս էք կարծում դուք մեր գործի մասին, — հարցրեց Գէորգը:

— Ես կարծում եմ, որ ձեր խանութը հիշտութեամբ կարելի է բացել: Դուք խօ չէք ստորագրած մուրհակը:

— Ո՞չ:

— Ուրեմն պատասխանատւութիւնը ընկնում է ձեր եղքոր վրա. Նրան կմեղաղրեն, իսկ ձեր խանութը կարելի է բացել միայն թէ այդ բանի համար, ինչպէս ձեղ հաղորդել էի նամակով, կհարկաւորի փող...

— Ես համաձայն եմ:

— Եւ փոքր փողով բան չի դուրս գալ այդ էլ իմացէք: Գիտէք իմ ազատութիւնն ինձ որքան փող է նստել՝ 30,000 րուբլ. Ի՞նչ անես, հիմա տարեկան եմ ես այդ փողը աշխատում և տասերորդ տարին է, որ այդ խանութս գործում է: Ճիշտ է, այժմս նա իմ կնոջս անունով է, բայց միթէ միենոյն չէ: Իմ բանն ուրիշ էր՝ ես ձեր եղքոր զրութեան մէջ էի, իսկ զուք — ձեր բանը ուրիշ է, ձեղ կթողնեն կրկին ձեր անունով խանութը շարունակել:

— Բայց ի՞նչ ճանապարհով էք կարծում: Մեր վրա արդէն խնդիրը տուած է:

— Այդպէս է, այդպէս է... խնդիրը կտրվե, բայց գատի օրը բանը շուռ կդայ...

Նա ցածացրեց ձայնը:

— Ասեմ, ասեմ ձեղ այստեղ գաղտնիքը նըրանումն է, որ պէտք է կաշառել դատաւորներին: Ի հարկէ, դա հեշտ բան չէ, բայց ես ինքու մօտ ծանօթ լինելով զլիսաւոր դատաւորներից երկուսի: Հետ՝ ձեր բանը կամ երկու հազարէք, հազարով կամ երկու հազարէքէք, իմացէք, հազարով կամ երկու հազարէք բով մօտենալ չի կարելի, այլ առնուազն պէտք յօժար էլ, ես հէնց վաղը զնալու եմ.. Վաղը յօժար էք, ես հէնց վաղը զնալու անն է, ես էլ կինս զլիսաւոր դատաւորի կնոջ անն է, ես էլ կինս զրաւիրկած ենք: Քէֆի լաւ ժամանակ, կաէլ զրաւիրկած ենք: Ոհա թէ ինչու ասացի, որ եթէ ռաջարկեմ: Ոհա թէ ինչու ասացի, որ եթէ այսօր չգաք, այլ ես չնկք կարող բան անել... այսօր չգաք, այլ ես չնկք կարող բան անել... այսօ չի կարելի գնալ պաշտօնական տեղում ռաջարկել:

— Հասկանալի է:

Գէորգը զարմացած մնաց թալութեանի առաջարկութեան վրա և վերաբերվեց նրան շատ յարգանքով ու հաւատով: Նա պատրաստ էր արդէն վերջնականապէս տալ իր համաձայնութիւնը:

— Ուրեմն դուք կուղէք, որ ձեղ հէնց այժմ տամ այդ դումարը:

— Ինչպէս կուղէք, կկամենաք ես ինքս կտամ,

յետոյ կտաք: Զեր վրա կարած չէ: Մենք առեւ-  
տրական մարդիկ ենք, մեզ ամօթ է այդպիսի  
մանր բաների առաջ կանգնել: Ունէք, տուեք,  
չունէք՝ ինչպէս կամենաք:

Բայց դուք կատարելապէս համզված էք,  
որ աջաղութիւն կունենաք:

— Ես ձեզ օրինակ:

— Ուրեմն բարի սահաժմի:

Գէորգը հանեց զրպանից 6000 բռոբին

առւաւ Բալուրեանին:

Քառորդ ժամից յետոյ Բալուրեանը սիրալիք  
կերպով ճանապարհ զրեց Գէորգին: Դռան մէջ  
նա մի անգամ էլ խրախուսեց և յըս առւեց  
Գէորգին և աս բաժանվեց ուրախ աթամադրու-  
թեան տակ:

Բաժանվելուց յետոյ միայն Բալուրեանի երե-  
սով սահեցաւ միւս խորհրդաւոր ժպիտ, իսկ  
աչքերի մէջ ուրախութեան կայծեր:

— Փառք իրան, — ասաց նա, — վեց հազար  
բռուրելի կողքի աշխատանք... Լաւ օրս էր...  
դնա, յիմար, սպասիր, որ ես քեզ համար դա-  
տաւորներին կաշառեմ — խելքս խօ չեմ տանել  
տուել...

Յետոյ դառնալով գործակատարներին՝ մի ինք-  
նաբաւական կերպով պատուիրեց.

— Խանութը կողպէք:

ՃԱ.

**Բ**աւականին ուշ Եւդինէն իմացաւ, որ  
ինքը խարված էր պարտատէրից: Ստեփանովը,  
ի հարկէ, չմողեց իր դատը և գործին տուեց  
իր մի անգամ վճռած ընթացքը՝ մեղաղրելով  
Ալեքսանդրին դիտաւորված սնանկացած:

Նշյնը արին, ի հարկէ, և միւս պահանջա-  
տէրերը: Ոյդ բանը չափազանց վշտացրեց Եւ-  
գինին: Նա շատ ախտոսաց իր արած այցելու-  
թեան վրա, բայց ինչ կարելի էր անել արդէն  
եղած էր: Բայց նրան աւելի շատ վշտա-  
ցրեց ամուսնու զրութիւնը:

Ինչ վերադարձել էր քաղաք, Եւգինէն դեռ  
չէր գնացել ամուսնուն տեսութիւն: Նա առա-  
ջին օրերը գեռ տեղեկութիւն չունէր նրա բան-  
տարկութեան աեղի մասին, իսկ յետոյ կամե-  
նում էր իր ամուսնու համար մինչև այցելու-  
թիւնը ձեռք բերել աղատութիւնը, այդ պատ-  
ճառով նրա մօտ գնալը յետաձեց մինչև Ստե-  
փանովի տեսութիւնը: Միայն այդ անաջող  
փորձից յետոյ, նա վճռեց գնալ ամուսնուն  
տեսութիւն: Սակայն նրա անհանգստութիւնը  
չափազանց սաստիանում էր: Նա եկած օրվա-  
նից այն առտիժան անհանգիստ էր և երկիւղով  
էր վերաբերվում դէպի ամուսնու վիճակը, որ  
ամեն ինչ կորած էր համարում:

Գուցէ հոգեկան այդ դրութեան քիչ չնպաստեց և Ստեփանովի վերաբերումը: Նա մինչև անգամ հիմա փոշմանում է, թէ ինչու է արել այդպիսի քայլ նրան այդ խորհուրդը տուեց Շարմաղեանը: Գլխաւոր պարագատէր Ստեփանովն էր և նրանից էր, ի հարկէ, կախված գործին տալ այս կամ այն ընթացքը—և ինչպէս Շարմաղեանը խորհուրդ չափ դիմելու այդ մարդուն:

Գործերն ընդունում էին այնպիսի ուղղութիւն, որ Եւգինէն սկսում էր երկիւղ կրել թէ նրան չէր կարելի երկոտ համարել: Ասում էին, որ խանութիւն ապրանքը մօտ ապագայում ածուրպի կհանվի և թէ արդէն նշանակված է գործը, որի քննութիւնը պիտի լինի մի ամսից: Այդ լուրերը սարսափելի կերպով անհանգըստացնում էին խեղճ կնոջը և նա ակամայից ականջները սրում էր դէպի ամեն մի լուր, ամեն մի տեղեկութիւն, որոնք վերաբերվում էին ամուսնուն: Սակայն նրա ականջն միայն լուրեր էին համանում և ամեն ինչ օրանով սահմանափակվում:

Իսկ նրա միտքն այնուամենայնիւ չէր կանգ առնում գործելուց: Նա մտածում էր իր ամուսնու վրա, մտածում էր գործելու ձանապարհի վրա: Խեղճ կին, ամուսնանալուց մինչև օրս նա գրեթէ հանգստութիւն չի տեսիլ և այդ

հանգստամանքը այն աստիճան ձնշեց նրան, որ նա կորցնում էր ամեն մի յոյս դէպի խաղաղ կեանքը: Իսկ երբ վրա էր համառմ զիշերը, նա երկար ժամանակ չէր քնում նրա մօտ յաճախ լինում էր Շարմաղեանը, որ նոյնպէս իր խորլինում էր Եւգինէն քնելու, երազում տեսպառկում էր Եւգինէն քնելու, երազում տեսպառկում էր մարդուն, տեսնում էր նրան վշտացած, նում էր մարդուն, տեսնում էր նրան վշտացած, հոգով ընկած — և ամբողջ երազը պատկերահոգով ընկած — և ամբողջ երազը պատկերահոգով նում էր նրա համար տխուր և մաւթ գյոներով: Մի վրա հասան ամենածանը ժամանակները: Մի տեսակ կորիւ էր յայտարարած, որի մի կողմից կանգնած էր ֆիրման, միւս կողմից՝ Ալեքսանդրը: Պարզ էր, որ այստեղ երկու հակառակ կողմ լաղը էր մէկ - մէկու դէմ: Այդպէս էր թե կանգնած էր մէկ - մէկու դէմ: Մորթիւն էր լաղը ու այդպէս էր արամադրում գործը, այդպէս էր կողմանքը: Մի կողմը վառված էր կողման ամառումով, միւսն իր արդար պահանջն էր անում, տուժում էր մի երրորդը՝ բալորովին անմեղ մէկը: Ոչ ոք չէր մտածում այդ խնդիր, ների առաջն առնելու մասին գործ դնել աւելի հիմնական միջոցներ: Մի խումբ մարդիկ, զուրկ ձշմարիտ առեւտրական կրթութիւնից, դաստիարակված գարերով փտած սկզբունքներով, սկըզբունքներ, որոնք մանկութիւնից վառում են տենչը դէպի հարստութիւնը, տովորեցնում են այդպիսի հարստութիւնը, տովորեցնում են այդպիսի մարդուն ու ամենի կամ այդպիսի մարդուն:

զիկ մտել են ասպարէզ — և ի՞նչ կարելի էր սպասել նրանցից... Զէ՞ որ այդպիսի հայեացք է տիրում հազարաւոր մարդկանց մէջ: Ահա թէ ի՞նչու երկու երիտասարդ սրտեր տանջվում ու մաշվում էին նրա համար, որ մէկը կամեցել էր թեթև ձանապարհով հարստանալ միւսը իր կորուստն էր պահանջում: Եւդինէն կամենում էր թեթևայնել իր դրութիւնը: Նա յիշում էր, որ մանկութիւնից լսել էր փողի ահազին նշանակութիւնը, նրա ուժը, նրա կատարած գերը և թէ ամեն մարդ, եթէ ուզում է լինել ապահով ու բախտաւոր, պէտք է անշուշտ ունենայ այդ բազմադիմի ուժը: Նա և նրա ամռւսինը արհամարհեցին այդ հայեացքը բայց ուր տարաւ նրանց այդ յանդգնութիւնը...

Բոլոր շրջանում, ուր պտտվել է Եւդինէն և Ալեքսանդրը, փողի նշանակութիւնն առաջին տեղն էր բռնած, փողի համար պատրաստ էին մարդիկ ամեն ստորութիւն յանձն առնել... Ուրիշն ներկայում միւնցին երեսյթի զոհ չեն դարձած նրանք: Զէ՞ որ այդ փողը ոգեսրում է բոլոր խաւերի մարդկանց: Ամեն տեղ խօսքը դրա մասին է, ամենքի յարաբերութիւնները կշռվում են միայն փողի նշանակութեամբ: Որտեղ յարդ և պատիւ տեսնես, իմացիր, որ այնաեղ դեր է խաղում փողը: Եւ ով զուրկ է այդ կուռքից, նա իրան անբախտացած է համարում:

Ամեն մէկը պինդ համոզված է, որ փողից դուրս չկայ ոչ մի կուռք, ոչ աստուած, և ամեն տեղը կայ պատիւ ու յարդ, հրաւէր դէպի գործունէութիւն, հիմնարկութիւնների մէջ ծագունէութիւն, պայմանական մի այդպիսի դէպքում ու այդպիսուն — ամեն մի այդպիսի դէպքում նախապատւութիւնը փողինն է և միմիայն փողինը...

Եւ ամեն մի փողատէր խրախուսվելով այդ ամենից՝ իր մէջ կազմում է այն համազմունքը, թէ ինքն է երկրի աղը, ինքն է ամբողջ հասաթէ լուսական կազմուածքի անկիւնաքարը: Ամենքի համակրութիւնը և ուշաղրութիւնը միշտ թեք ված է լինում դէպի այն անձնաւորութիւնը, որ ովնի այդ ոսկի ուժը — և այնքան շատ, որ քան շատ է նրա տիրապետողի գրպանում:

Փորձեցէք հակառակը պնդել և ձեր վրա քարեր կցցեն:

Ահա այդպիսի շրջանի հետ գործ ունէր Եւդինէն և դրանց ձիրաններից էր ուզում ազագիններ իր սիրուն ամռւսնուն:

ՃՐ.

Երկար ժամանակ Ալեքսանդրը չը կարողանում հաշտվել թէ ինչպէս եղաւ, որ նրան բերին արգելարանը:

Երկար ժամանակ նա մնաց նստած, ապա  
վեր կացաւ և կամենալով յիշողութեան մէջ  
վերականգնել հանդամանքները, սկսեց իր չորս  
կողմը զիտել:

Բայց արգելարանը նրա առաջ մի անորոշ  
միակերպութիւն էր պատկերացնում... Ուրիշ  
ոչինչ նա չուսաւ: Ճիշտ է, այդ բանը նա վաղ  
թէ ուշ սպասում էր, բայց և այնպէս կնոջ  
բաժանումը նրան այնքան ծանր թվաց, որ ամ-  
բողջ ճանապարհը գրեթէ ինքնամոռացութեան  
մէջ էր եղել: Իսկ յետո՞յ:

Մի շաբաթ է, որ նա այդ տան մէջ է և եր-  
բէք այնպէս խոր նրա մտքում չէին պատկե-  
րանում կալանաւորման րօպէներն, ինչպէս այդ  
տեղի էր ունենում այսօր:

Նա մտարերում է, որ նրան գիւղի փողօցով  
տանելու ժամանակ երեխաներն ու գիւղացիները  
մի տեսակ յանդիմանական հայեացքով էին  
զիմաւորում նրան: Սրտի խորքից վերաւորված  
լինելով, որ նրան թոյլ չտուեցին անդամ սպա-  
սել կնոջը, Ալեքսանդրը շարունակ կալանաւո-  
րողների հասցէին անէծք էր թափում և երբ  
նա սպասեց իր համբերութեան վերջին պա-  
շարը, բացականչեց.

— Ուր էք տանում ինձ:

— Ուր պէտք է ձեզ տանենք, նահանդապետի  
տանը երեկոյթ է նշանակված այսօր, ձեզ հրա-

ւիրել են հիւր, — հեգնօրէն նկատեց տասնա-  
պետը:

— Դուք ձեզ մոռանում էք, — իիստ վերա-  
ւորված նկատեց Ալեքսանդրը, — մի մօռացէք,  
որ ձեր կոպիտ գիւղացիների հետ չէք խօսում:

Այդ յանդիմանութիւնն ունեցաւ իր ազդե-  
ցութիւնը: Տասնապետը կծեց իր լեզուն և այ-  
նուշեաւ ոչ մի խօսք բերանից չմռացրեց:

Այնուշեաւ Ալեքսանդրը յիշեց այն րօպէն,  
երբ նրա հտեւից փակվեց արգելարանի դուռը:  
Մի մռայլ լուսով լուսաւորված սենեակում նա  
կարողացաւ նկատել միայն մի քանի դէմքէր:  
Այստեղ մի անկիւնում կուչ էր եկած մի նոյն-  
պիսի թշուառական վերաւորված հայեացքով,  
իսկ մէջ տեղում անցուղարձ էր տալիս մի ու-  
րիշ մարդ, որի վրա շըջապատող կեանքը, չըր  
երեսում, որ մի առանձին տպաւորութիւն գոր-  
ծած լինի. ըստ երեցին՝ նա հաշտ աչքով  
էր վերաբերվում իր վիճակին: Նա մինչև ան-  
էր վերաբերվում երբ նկատեց, որ իրանց հա-  
գամ շուռ եկաւ, երբ նկատեց, որ իրանց հա-  
սարակութիւնը մի անդամով էլ աւելցաւ:  
Բայց բոլորովին ուրիշ տպաւորութեան տակ  
Բայց բոլորովին ուրիշ տպաւորութեան տակ  
մինչև անդամ մի լակորշ հայեացքով զիմեց  
Ալեքսանդրին.

— Բարի սահաթի, անփոշմանելի լինի  
Բարկութեան և վերաւորանքի խիստ յուշ

մունքը տիրեց Ալեքսանդրին. նա մի արհամարհական հայեացք զյեց այդ մարդու վրա և լոռւթեամբ տարաւ այդ արհամարհանքը: Արանից յետոյ երկար ժամանակ մնաց լուռ և անխօս, ապա կամաց կամաց հաշտվելով իր դրութեան հետ, նստած մնաց մինչև այն ժամանակ, երբ նրա միտքը անյօյս լարումից յետոյ կորցրեց իր վերջին յենակէտները և նա ընկաւ ու քննեց:

Երկու ժամից յետոյ նա վեր կացաւ աւելի թարմացած: Նա նկատեց, որ իր գլուխը այժմ աւելի է զործում:

Իսկ երբ անցնում էին օրերը և շարունակ հետաքրքրվում էր իր վեճակով, նա հարց էր տալիս իրան, թէ մինչև երբ պիտի տեի այդ բանտարկութիւնը և թէ ումից կարելի է սպասել այժմ օգնութիւն: Միակ մօտ մարդը Եւգինին էր և Շարմաղեանը, բայց ի՞նչ կարող էին անել դրանք, երբ ձեռներում չկար այն միջոցը՝ փողը, որով միայն կարելի էր գնել որա ազատութիւնը:

Ահա այդ մտքերով պաշարված նա նստեց տախտի վրա և սկսեց վշտանալ: Նրան շատ սարսափելի թվաց իր զրութիւնը: Ի՞նչ կլինի խակապէս, եթէ նա ստիպված կլինի մնալ այդ պէս մի քանի տարի: Ի՞նչ կլինի, եթէ ոչ ոք պէս մի քանի տարի: Այն ժամանակ ի՞նչ նրան օգնութեան չասնի: Այն ժամանակ ի՞նչ պէս նա կկարողանայ տանել կնոջ բացակայութէս:

Թիւնը: Նա կրկին թուլացաւ, վճռեց պառկել քնելու, որպէս զի քնի մէջ գոնէ կարողանայ մռանալ այդ մարդկանց խստասրտութիւնը: Բայց այդ միջոց բացվեց զուռը: Նա բարձրացրեց զլուխը և դողդողալով իր ուրախութիւնից՝ բացականչեց.

—Եւզի՞նէ...

Եւզինէն ներս մտնելով աշխատեց զսպել իր տիսրութիւնը, բայց տեսնելով ամուսնուն, չկարողացաւ այդ անել: Երկու ամուսինների սրաներում էլ վիշտն այնքան ծանրացել էր, որ ըստմն էլ վիշտն այնքան ծանրացել էր, որ զրկախառնվելով, երկար ժամանակ խօսք չէին գտնում մէկ - մէկու ասելու:

—Ոչ ոչ ինձ շատ դժուար է, իմ Եւզինէս, իմ սիրելիս, իմ անգինս, իմ հոգեակս... աղօթիր, աղօթիր, որ այդ չարիքը անցի մեր գլխից: Թիր, աղօթիր, որ այդ չարիքը անցի մեր գլխից: Եօ չեմ կարողանում լինել քեզանից հեռու, չեմ կարողանում հաշտվել իմ միայնակութեան հետ:

Եւզինէն դիտեց իր ամուսնուն. նրա սիրաը տնքում էր անտանելի ցաւից: Նրա սիրելի ամուսինը ստիպված է կրել այդ նեղութիւնները:

Ո՞քան կարծ եղաւ նրանց բախտաւորութիւնը և որպիսի խաղաղ և երջանիկ օրեր էր երեակայում նա ամուսնութեան առաջին օրերում:

Եւզինէն աւելի լաւ համարեց տիրապե- բայց Եւզինէն աւելի լաւ համարեց տիրապե-

տել իր զգացմունքներին։ Նա նստեց ամուսնու  
մօտ և սկսեց միսիթարել նրան։

— Սիրելիս, մի վշտանար, մի ընկնիլ հոգով։  
Ես յոյս ունեմ, որ այդ անախորժութիւններն  
երկար չեն տեկլ։ Մենք դարձեալ կլինենք միա-  
սին։ Այն ժամանակ մեղ ոչ ոք չե կարող բա-  
ժանել։ Եւ որքան բախտաւոր կլինենք մենք…  
Յիշեր միայն այն, որ քո Եւզինէն միշտ քոնն  
է, նա բաժանում է քո վշտերը, քո ցաւերը  
միատեսակ։ Ի՞նչ անես, մեր անփորձութիւնն  
էր։ Յոյսներս պէտք է չկտրենք։

— Եթէ մի յոյս լինէր, միթէ ես այդպէս  
կցաւէի, կվշտանայի։ Բայց բաւական է, որ  
ինձ մեղաղբեն, ինչեւ մէջ որ կասկածում են…  
Այդ հանգամանքն իմ վրա սարսափ է բե-  
րում…

Ամուսինը զրեց իր գլուխը կնոջ կրծքի վրա  
և ծանր կերպով ախ քաշեց։ Որքան անէծք  
անցաւ այդ րօպէին Ալեքսանդրի սրտից գէպի  
այն մարդկանց հասցէին, որոնք բաժանման  
պատճառ են դարձել։ Մի քանի հազարները  
նրան բաժանեցին իր սիրուն կնոջեց։ Ո՞վ և  
ի՞նչ բան կվարձատրի նրա անբախտութեանն…

— Բայց և այնպէս, — սկսեց միսիթարել Եւ-  
զինէն, — քանի որ ոչ մի վճիռ չկայ, ի զուր է  
քո վշտանալը, սիրելիս։ Ես խօսեցել եմ փաս-  
տաբանի հետ — դեռ կասկածելե է հակառակ

կողմի մեղաղբանքը։ Ես քոնն եմ յաւիտեան,  
մի կարծիր, որ այդ բանալիութիւնները ինձ  
կհեռացնեն քեզանից… Ուրեմն քանի որ ունենք  
միջոց, թող որ աշխատենք և ես դարձեալ ա-  
սում եմ — յոյսս չեմ կտրած։ Ես հաւատում  
եմ արդարադատ դատաստանին… Առանց պըլ-  
տոր օրերի չկայ կեանք աշխարհիս երեսին։ Իսկ  
երբ կդայ օրը, երբ քեզ կվերադարձնեն ինձ, ես  
քո գրկում կմոռանամ այդ տխուր օրերը…  
Որքան էլ տիսուր լինի մեր ներկան, ատագայի  
քաղցր օրերը կվարձատրեն մեզ։

Եւզինէն զրկեց իր ամուսնուն, համբուրեց  
սպրոնած շրթունքները։ Այդ խօսքելի տը-  
նրա սպրոնած տակ վախը և երկիւղը մի բօ-  
պաւորութեան տակ վախը և երկիւղը մի բօ-  
պէ, կարծես, չքացաւ և նրանք երկուսն էլ  
ընկղմվեցան փոխադարձ քաղցր զգացմունքների  
շոյման մէջ։

Վերջապէս Եւզինէն սեղմեց ամուսնու գլուխն  
իր կրծքին, համբուրեց նրան և մի շարժում  
անելով մի քիչ հեռացաւ նրանից։  
— Այժմ մենք պէտք է բաժանկենք։ Ես  
պէտք է գնամ այստեղեց փաստաբանին։ Յոյսդ  
մի կարիր, սիրելիս, ես հաւատում եմ, որ ինձ  
կաջողվե հանել քեզ այստեղեց։ Թող որ միակ  
յօյսը և թեւ տեսղը ինձ լինի այն երեսյթը,  
որ դու կլինիս ուրախ և զուարթ։ Այդպիսի  
դու դու կլինիս ուրախ և զուարթ։ Այդպիսի  
դանր րօպէներում պէտք է ընկնել հոգւով և

աշխատել աներկիւղ — և երբ ես կիմանամ, որ  
դու այնքան էլ չես վշտանում, աւելի կվառ-  
վուեմ եռանդով. քո սրտոտութիւնը ինձ սիրտ  
կտայ... Ուրիմն ցտեսութիւն, սիրելիս:

— Բայց սպասիր, մի քիչ էլ նստիր: Այս,  
քո խօսքերը ինձ համար կենդանարար բալասան  
են: Ես այժմ այնքան թեթեացած եմ, որ խօսք  
եմ տալիս չվշտանալու: Նստիր...

— Ոչ ոչ սիրելիս, բաւական է. պահպանիր  
քեզ:

Ալեքսանդրն ազահութեամբ հետեւում էր  
կնոջ ամեն մի խօսքերին: Նա դարձեալ առաւ  
կնոջն իր գիրկը:

— Իմ հոգիս իմ թանկագինս, դու ինձ հա-  
մար չես դադարում հոգալուց:

Եւգինէն աւել չղիմացաւ, կրկին ընկաւ նրա  
կրծքի վրա: Երկուսն էլ լուցին: Բայց ահա  
Ալեքսանդրը խզեց լոռութիւնը:

— Ներիր, ինձ, իմ անզինս... Ցտեսութիւն,  
սիրելիս...

Եւ Եւգինէն մի ջերմ ու տաք համբոյր դրոշ-  
մեց ամուսնու շրթունքներին:

Երկու սիրող սրտերը չեին կարողանում բա-  
ժանվել մէկ - մէկուց: Բայց յանկարծ Եւգինէն  
փղձկվեցաւ, նրա սիրտը լցվեց, քիչ մնաց, որ  
լաց լինի և դուրս գալով իր ամուսնու գրկից,  
շուր տուեց իր երեսը, որպէս զի ամուսնուց

ծածկի իր արցունքի կաթիլները, որոնք արդէն  
սկսեցին գլորվել նրա աչքերից:

Ալեքսանդրը մնաց դարձեալ մենակ: Նա մի  
քիչ ուժ զգաց իր մէջ: Կնոջ քաղցր խօսքերը  
գեռ շնչում էին նրա ականջներում: Նա ահա  
ականջ է դնում դոնից: Կնոջ մանր քայլերի  
չափաւոր հարուածները ահա կարվեցան: Նա  
վերադարձաւ իր տեղը. կրկին նստեց. կրկին  
մտածմունքների աշխարհը ընկաւ: Բայց բօպէն  
նրա համար շատ քաղցր էր: Նրա շրթունքները  
նրա համար շատ քաղցր էր: Նրա շրթունքներից:  
Ալեք-  
դրու այրվում էին կնոջ համբոյրներից: Ալեք-  
սանդրը, կարծես, ինքն էլ կամենում էր պահ-  
պանել իր մէջ հոգու ուրախ տրամադրութիւ-  
նը: Նա տարածում էր ձեռքերը և կարծես դեռ  
նը: Նա տարածում էր զգում կնոջ իրանը: Նա շատ  
իր գրկի մէջ էր զգում կնոջ իրանից վանել  
թեթեացաւ: Նա աշխատում էր իրանից վանել  
հոգուր: Նա սրանով կամենում էր կնոջ խնդիրը  
հոգուր: Նա սրանով կամենում էր կնոջ խնդիրը  
հոգուր: Նա սրանով կամենում էր կնոջ խնդիրը  
հոգուր: Նա սրանով կամենում էր պատճառում  
լու վճիռն էր, որ թեթեութիւն էր պատճառում  
նրան: Այդպէս վարկել նա իր պարտականու-  
նրան: Երգպէս վարկել նա իր պարտականու-  
նրան էր համարում: Գուցէ սրանով իր մեղքը  
թիւնն էր համարում: Գուցէ սրանով իր մեղքը  
կնոջ առաջ կքաւէր: Իսկ կնոջ առաջ Ալեք-  
դրու առաջ կքաւէր: Իսկ կնոջ առաջ Ալեք-  
սանդրը իրան չափաղանց յանցաւոր է համա-  
սանդրը իրան չափաղանց յանցաւոր է համա-  
րում: Զէ՞ որ նա է գցել կնոջը այդ անել դրու-  
թեան մէջ: Նա ինքն է անձամբ մեղաւոր...  
թեան մէջ: Նա ինքն է անձամբ մեղաւոր...  
Սեղաւոր... Ալոգեօք այդպէս է: Այդ խօսքերից  
Մեղաւոր... Ալոգեօք այդպէս է: Այդ խօսքերից  
յետոյ նրա ուղեղում ցցվեց երկու հակապատ-

կեր—մէկը՝ իրաւացի, իրապէս արդարացի, միւսը՝ բոլորովին հակառակը՝ զրկվել հանգստութիւնից, փշրփած տեսնել երջանկութիւնը, բաժանված միակ այն անձնաւորութիւնից, որ թեու թիկունքն է նրա, հոգին ու շունչն է նրա,— աւելիք քան գաղանաբարոյ պատիժ նա չէր կարող երևակայել: Ուրբան անբախտութիւն է լինել այդ գրութեան մէջ: Այդ մտածմունքներից յետոյ ակամայից նա ընկաւ կրկին նախկին վշարի և մտածմունքի տակ:

Նրան մօտեցաւ մի ուրիշ բանտարկված: — Ի՞նչ է, դարձեալ տիրեցիք չէ որ դուք տեսաք ձեր կնոջը: Ի՞նչ արած. պէտք է պատիժը մենք կրենք:

Ալեքսանդրը նայեց իր վեճակին:

— Զարմանում էք: Եթէ մեզ այդպէս չանեն, աշխարհը շուռ կգայ: Ես զարի էի ծախում, կարող էի փողը տալ բայց չուզեցի և բուրլիին 20 կօպէկ առաջարկեցի: Հիմա եթէ մենք էլ այդպէս չանենք, ինչպէս ենք կարող առետուր անել: Հիմիկվան ժամանակ դժուար է հեշտ ուրքի կանգնել: Մի մեծ պատիժ էլ չէ. մի նուկու տարի կնստենք, դուրս կդանք, էլի մեր գործերն կշարունակենք...

Ալեքսանդրն աւելորդ համարեց վեճարանել: Բանտարկվածը հեռացաւ: Ալեքսանդրը կրկին վշարացաւ և այս անդամ աւելի:

Նրա համար պարզ էր, որ կան հանգստամանքներ, որոնց շօշափելը և քրքրելը ընդունված չէ: Ի հարկէ, նրանք երկուսն էլ մեղաւոր են և գուցէ արժանի պատժի: Եթէ շտան սրանց այդ պատիժը, չէ որ մի ուրիշը դարձեալ կանի նոյնը, իսկ երկրորդը, երրորդը միթէ չի ձգտիլ նոյն ձանապարհով հարստութիւն դիզել Ուրիմն ի՞նչ պէտք անել...

Բայց և այնպէս նրա զլիսում չին նստում, որ բոլոր առետրական խարդախութիւնները, հարստանալու տենչը, մէկ-մէկու թշուառացնելու ձգտումը կարելի լինի սահմանափակել բանտով և արգելարաններով կամ նոյն իսկ աքսորանքով...

Բայց այդ ենթադրութիւններն էլ պիտի մեռնէին նրա զլիսում, ինչպէս որ ծնունդ առին: Երբ որ մարդը ամեն չարիքների առաջը առնելու համար միայն պատիժ է գործ ածում, գուցէ և դրանումն է իսկական փրկութիւնը... Այդ պատճառով Ալեքսանդրը թերահաւատութիւնի վերաբերվելով հանդերձ իր պատիժը կրում է անխօս, որովհետև այդպէս է պահանջվում: Նա մեղաւոր է, պէտք է պատժել—ահաթէ ինչ է արդար պահանջը...

Եւ այդ պահանջի առաջ Ալեքսանդրը զլուխ խօնարհեցրեց:

գուրանքներից, իմ փաղաքշանքներից... Ո՞վ  
քեզ այնտեղ կմսիթարի»...

Նա չոքեց, բարձրացրեց ձեռքերը և սկսեց  
աղօթք անել: «Ասառուած, նա չետանիլ այդ  
միայնակութիւնը. հոգսը կսպանի նրան... խղճա  
նրան... մինչև Երբ... և ի՞նչ կլինի նրա վերջը»...

Այդ ժաքից նա սարսափեց: Նրան թվաց, որ  
նրա ամուսինը մի քանի ամիս մնալով այդ  
դրութեան մէջ՝ բոլորովին... նրա բերանը չղուեց,  
բայց նրա երեակայութեան մէջ պատկերացաւ՝  
նա մեռած... և մի սուր խեղդոց եկաւ ծածկեց  
նրա կոկորդը:

Բայց անմլսիթարականն այն էր, որ նա չգի-  
տէր, թէ ուրքան ժամանակ պէտք է Սլեքսանդրը  
մնայ այդ դրութեան մէջ: Բայց ահա Եւգինի  
ուղեղը յոգնեց մտածելուց, նա ցած դրեց վը-  
լուխը և քնեց:

Այդ օրվանից Եւգինին այդպիսի ծանր գի-  
շելներ շատ է անց կացրել բայց և այնպէս նա  
շարունակ մտածել է, թէ ինչ կերպ կարելի է  
ամուսնուն օգնել. շարունակ հետևել է գործի  
ընթացքին, սրտի բարախումով հետաքրքրվել  
է նրա ամեն մի քայլին: Շարմազնանի հետ  
տեղի ունեցած խօսակցութիւնը շարունակ ա-  
մուսնու մասին էր: Խեղծ կնոջ համար ուրիշ  
կեանք չկար: Նա ոչ մի տեղ չէր գնում: օրերը  
զբորում էր շատ միատեսակ ուտում էր, խմում

Երբ ամուսնու մօախց Եւգինին տուն վե-  
րադարձաւ, արդէն իրիկվան դէմ էր:

Այդ գիշեր նա բոլորովին չկարողացաւ քնել:  
Մի տեսակ սպառնական վտանգ նկատում էր  
նա իրանց գործում: Նրա աչքի առաջեց դեռ  
չէր չքանում մարդու թշուառութիւնը: Նա  
վառեց ծրագը. քունը նրա աչքին չէր գալիս:  
Նա թէք ընկաւ բազմոցի վրա և խորասուզվեց  
իր մտածմունքների մէջ: Ճիշտ է, Եւգինին  
զսպեց իրան, բայց այժմ մնալով մենակ չկա-  
րողացաւ պահել իր արտասուքը: «Ի՞նչպէս ա-  
նեմ, որ քո ազատութիւնը ձեռք բերեմ», —  
մրմնջացին նրա շըթունքները, — «բայց թէ որպի-  
սի գնով ես պատրաստ եմ քեզ համար ձեռք  
բերել քո փրկանքը: Օ՛, ի՞նչու այդքան անս-  
ղոք է իմ ձակատագիրը: Ախ, Օստուած, տուր  
Դու ինձ միջոց, որ ես հանեմ իմ ամսւանուն  
այդ դրութիւնից, տուր ինձ նրան, իմ ամուս-  
նուն... Դու խնամք ու գութ գցիր այդ մարդ-  
կանց սրտերը, որոնցից կախված է նա: Եւ  
ի՞նչու ես զուրկ եմ միջոցներից... Օ՛, փող,  
փող, այս, մեծ է քո ուժը... Ալեքսանդր, սի-  
րելի՞ս, ի՞նչ ես դու անում այժմ... դու պիտի  
քնես այն կոշտ տախտերի վրա, հեռու իմ գուր-

էր, բայց այդ ամենը նրա աչքին չէր դալիս և միմիպայն մի բան էր նրան հետաքրքրում—ամուսինը և նրա թշուառութիւնը:

Միփթարական միայն այն օրերն էին նրա համար, երբ նա մի որ և իցէ լուր էր լսում իրանց գործի մասին: Այդ լուրերը շատ հակասական էին: Մէկ ասում էին, որ դատաստանը կարդարացնէ նրանց, միւսները—թէ կմեղադրէ... Այդ վերջին լուրերը լսելու ժամանակ Եւգինէն իր զուտիք կարցնում էր: Այդպիսի օրերը սև օրեր էին նրա համար: Յուսալով որ նրան կաջողվե երբ և իցէ արդարացնել ամուսնուն և լսելով այդպիսի լուր՝ թշուառ կնոջ մէջ հանգըռում էր վերջին աղօտ յոյսը և այդպիսի օրերը, մանաւանդ գիշերները, աչք-աչքի չէր խրփում: Եւգինէին տանջում էր այն երկիւղը, որ իսկապէս կմեղադրէն նրա ամուսնուն, կաքորեն նրան և նա, Ալեքսանդրը, չի տանիլ այդ հարուածը: Իսկ երբ նրա մէջ կենդանանում էր այն յոյսը, թէ կարդարացնեն, կդարձնեն նրա ամուսնուն, այդ քաղցր հեռանկարի մէջ նրան պատկերանում էին նախկին երջանիկ օրերը, Ալեքսանդրի գիրկը, դգուանքը և համբոյրները... Բայց յետոյ շուտով այդ ամենը նրան յուսախաբութիւն էր թվում և Եւգինէն կրկին ընկնում էր իր սև մաքերի մէջ և իր զրութիւնն աւելի ծանր պատկերացնում:

— Այդ ձեր վրա վատ կազմի, դուք ձեր առողջութեանը կվնասէք, — ասում էր վերջին օրերս Շարմաղեանը Եւգինէին, — ես հաւատացած եմ, որ ձեր ամուսնուն կարդարացնեն:

Պատասխանի տեղ Եւգինէն իջեցնում էր իր սիրուն գլուխը և մի խոր հառաջանք արձակելով՝ շարունակում էր իր երեակայութեան մէջ պատկերացնել տխուր նկարներ:

— Այժմ ես ցաւում եմ, որ ինչու մերժեցի այդ մուրհակները, քանի որ ես շատ հեշտ կարող էի գործն այդ զրութեան մէջ չէգել:

— Այո, այո, սրանք են մեր դարեսը միջոցները. միայն այդպիսի խարդախ և անվայել միջոցներով պէտք է օգնութեան հասնենք մարդկանց թշուառ բօպէներում: Պէտք է մէկին խարեւ զբէլ որ միւսին ազատել: Այդ է մեր ուղղութիւնը...

Շարմաղեանը միայն հառաջեց և ոչնչէ չպատասխանեց: Նա լաւ գիտէր, որ այդ միջոցն անարդար է, բայց նրա մէջ զարթեցրեց այդ միտքը միայն տիկնոջ թշուառ դրութիւնը, որը նա տեսնել չէր կարողանում: Նա բոլոր ուշադրութեամբ հետեւում էր սրանց գործին, բայց այդ գործը միրտ պատռառող կերպարանք էր ստանում նրա աչքում: Ազնիւ հակումներով բռնված Ալեքսանդրը դիմեց առեւտրական ասպարէզ որպէս զե այդ ասպարիզում գործի

ժամանակակից ուղղութեամբ—և ի՞նչ նա տեսաւ այս աշխարհում։ Անթիւ, անհամար կեղծիք, խարդախութիւն, ընկերոջ միամտութիւնից օգտվելու բուռն ձգտում։ Այդ բոլորի դէմ նա զինվեց։ Բայց ի՞նչ կարող էր անել մենակիր անզօր և անփորձ ուժով, ի՞նչ կարող էին անել նրա հետ Եւզինէն և Շարմաղեանը այդպիսի ուժեղ բռնութեան դէմ։ Բայց գրութիւնը մնում էր անորոշ։ Ալեքսանդրի բանտարկութիւնով գործը չէր վերջանում և այժմ աւելի գժուար ժամանակներն էր, քանի որ պարտքանտէրերը ժողովվելով զբաղված էին նրանով, թէ ի՞նչ կերպ կարելի է ծանրացնել մեղաղբեալի գրութիւնը...

Ուրեմն ի՞նչպէս կարելի էր սպասել որ Ալեքսանդրի գրութիւնը կթեթեանայ։ Բայց այդ յայտնի էր, որ այդ ժողաւոր պարտքատէրերը բոլորը շահի հոգով բռնված մարդիկ են և չոր ու բիրտ սիրտ ունեցողներ։

Ահա այդ գժուար րօպէներում եթէ մի օդնութիւն կար, պէտք էր անէր Եւզինէն։ Նա վճռեց մի քայլ անել։ Բայց ի՞նչ անել։ Ո՞ւմից և որտեղից գտնել փող։ Նրան հարկաւոր էր վաթսուն հազար, բայց ով կտար նրան այդպիսի գումար։ Տեղու է ասել, վաթսուն հազար—որտեղից նրան ծարել։ Հազար մի բան էր նա մոածում, բայց և ոչ մէկի վրա Եւզինէի միտքը

չէր կանգ առնում։ Մէկ՝ մէկ նա յոյսը կտրում էր և կարծես հաշավում էր այն բանի հետ, որ նրա մարդու գրութիւնը անելանելի է։ Երբ նա գալիս էր այդ եզրակացութեան, նրա մակրք վիրը վշաքաղում էին և նա վայր էր թռչում նստած աեղից։

— Ոչ ոչ—բացականչում էր նա, — կդիմեմ... այդ վերջին փորձն էլ կանեմ։ Իմ ու նրա մէջ ոչ մի ընդհարում չի եղել։

Եւ վՃռեց դիմել հօր օգնութեան։

Սա չափազանց ծանր քայլ էր նրա համար։ Շատ ժամանակ է, որ հօր ու սրանց մէջ, Ալեքսանդրի հեռանալու պատճառով մի տեսակ կտրված յարաբերութիւն է տիրում։ Նրա հայրն այդ ժամանակ գտնվում էր Մօսկվայում։

Զմեռվան սկիզբն էր, մի գառնաշունչ սառն օրեր էին, բայց Եւզինէն գնում էր այդ դառնաշունչ ցրտին միակ յուսով։ Որ գտնի փող օրով կարողանայ ազատել իր ամուսնուն։

Նա այն աստիճան ոգեսորված էր այդ մաքով, չէր նկատում ձանապահի գժուարութիւնները։

Այդ ձանապահութութեան առիթով այդ անգամ նա խորհուրդ էլ չարեց Շարմարեանի հետ, որպէս կտակ վերջին ժամանակներս նրա բոլոր խորհուրդները թռյլ էին թվում Եւզինէի աչքին։ Ճիշտ է, նրա գլխում ծագեց մի կաս-

կածանք թէ գուցէ այդ ձանապարհորդութիւնն էլ ապարդիւն է, բայց և այնպէս նա գնում է, աշխատելով վանել այդ անախորժ մտքերը և վերաբերվել մեծ հաւատով իր բռնած քայլին։ Նա զգում էր, որ պէտք էր այդպէս վարվել։ Նրա երեակայութիւնը նկարագրում էր ամուսնու ցաւալի դրութիւնը, նրան թվում էր, թէ ինչպէս ամուսինը, միակ յուսալից աչքերը յառած իր կնոջը, սպասում է նրանից օգնութիւն — և ի՞նչպէս կանգնել այդպիսի խնդրի առաջ։

Սուրախանից մինչև թարիցին ձանապարհը Եւզինէին շատ ծանր թվաց։ Ճիշտ է, ձանապարհը ցրտի շնորհիւ շատ թեթևացել էր. անտանելի ու անանցանելի ցեխերը ալիքանման սառել էին ու ճիւնով ծածկվել, բայց սահնակով գնալը կայարաններում ճիերին սպասելը նրան շատ էր զրգուում և յուզում։ Նրա համար թանկ էր ամեն բօպէն, մինչդեռ այստեղ ոչ ոք չէր շտապում, ոչ ոք նրա սրտի ցաւը չէր նախատեսնում։ Ամեն տեղ անհոգ դէմքեր, ամենքը ուրախանում էին, որ ցրտի շնորհիւ դիւրացել է ձանապարհը Եւզինէն խնդրում էր շտապել խոստանում էր աւելացնել վարձը ձիապանին, միայն թէ սա քշի ու քշի ճիերին։ Իսկ ինքը փաթաթվելով իր տաք մուշտակի մէջ՝ բօպէներն էր հաշւում, թէ երբ կգայ Յա-

րիցին, որտեղ այդ ձանապարհի գժուարութիւնը անհետանում է երկաթուղու շնորհիւ։

Միայն ութերորդ օրը նա հասաւ ծարիցին։ Երկաթուղու կայարանում տիրում էր հաներկաթութիւն։ Մի քանի մարդիկ միայն խմբվել էին պլատֆորմի վրա և պատրաստվում էին ձանապարհ ընկնել։

Եւզինէն մտաւ այդ խմբի մէջ և նոյնպէս սպասեց։ Դարձեալ պէտք է սպասել։ Ախ, այդ ի՞նչպիսի դանդաղ մարդիկ են, — անցաւ նրա մտքով։

— Շատ պիտի սպասե՞նք, — մօտեցաւ նա կօնդուկտօրին։

Կօնդուկտօրը մի ինչ որ բան մրժմրթաց, որից Եւզինէն չկարողացաւ ճիշտ հասկանալ իսկ երկրորդ անգամ նա չունեցաւ միջոց հարիսկ երկրորդ անգամ նա չունեցաւ միջոց ու հեցնելու, որովհետեւ կօնդուկտօրը թողեց ու հացաւ։

Որքան ուշանում էր գնացքը, այնքան Եւզինէն աւելի ու աւելի էր մտածում իր ամուսնու դրութեան վրա։ Նրան թվում էր, որ այդպէս ուշանալով՝ նա կկորցնի ժամանակը։

Հստ երեսյթին, դեռ շատ պիտի սպասէին։ Եւզինէն անցաւ դահլիճ։ Այստեղ դրեթէ ոչ ոք չկար։

Ընդհանուր սեղանի առաջ նստած էին երկու մարդ և թէյ էին խմում։ Եւզինէն սրանց

Ճանաչեց, զբանք նոյնպէս Աստրախանի վաճառականներ էին, որոնք ուղևորվում էին նոյնպէս Մօսկվա: Նրանք նատած խօսում էին:

—Ի՞նչն է քեզ ստիպում ձմեռվայ Ճանապարհով գնալ Մօսկվա:

—Քեռիս տկար էր, կանչել էր, զնում էի տեսնելու, սակայն այսօր Յարիցինում հեռագիր տացայ, որ մեռել է:

—Բբուկեանը:

—Այո:

—Ուրեմն շնորհաւորում եմ:

—Ի՞նչը:

—Ժառանգութիւնը: ԶԵ՞ որ դու ես միակ ժառանգը: Ի՞նչ էր շնում նա Մօսկվայում:

—Բժիշկներն էին ուղարկել:

Եւգինէն աւել բան չլսեց սրանց խօսակցութիւնից: Նա անց ու դարձ էր անում դաշիւծում և այդ բառերը հասան ականջին, երբ նա անցաւ այդ մարդկանց մօտով: Եւգինէի վրա Բբուկեանի մահուան լուրը մի առանձին ցաւակցական տպաւորութիւն չգործեց: Նա գիտէր, որ Բբուկեանը վերջերս տեղափոխվել էր Մօսկվա և շարունակ բժշկվում էր, երկրորդ՝ նրա հասակը, —այդ ամենն աչքի առաջ ունենալով՝ զարմանք չէ նրա մահը, —բայց այդ լուրը զարթեցրեց նրա մէջ այն միաքը, թէ իր հայրն էլ կանգնած է միւնցն Ճանապարհի

վրա: Եւգինէն մտածման մէջ ընկաւ: Տէրը մի արասցէ, եթէ նա իր հօրը տեսնի ծանր տկար, կամ՝ նոյն իսկ մահվան անկօղնում: . Այժմ աւելի քան երբ և իցէ նա կամենում էր, որ հայրը լինէր առողջ...

Վերջապէս լալեց գնացքի մօտենալը: Ծանր սպասողական զրութիւնն անցաւ: Եւգինէն մըտաւ վագօններից մինը և փաթաթվելով իր մուշտակի մէջ՝ կուչ եկաւ մի անկիւնում: Ահա երկաթուղին Ճանապարհ ընկաւ: Այժմ Եւգինէն իր նպատակին հասած է համարում: Այլ ևս այնքան օրեր ու նեղութիւններ, որոնց տեսնել է Եւգինէն Յարիցինի տաժանելի Ճանապարհում, այսուել տեղի չունեն: Մի քիչ չէր շատ-շատ երկու օր սպասելով, նա կլինի Մօսկվա:

Իսկ կինը գանվում էր ջղային այնպիսի գրգռման մէջ և այն աստիճան զրաւված էր իր ամուսնու վիճակով: Որ չնկատեց Ճանապարհի մրապաղաղ և միադյն սպաւորութիւնները, կայարաններում մարդկանց ցած գալ ու նըստելը. միայն քաղցն էր նրան մէկ-մէկ ստիպում իջնել կայարաններում և մի կտօր բան ուտել կամ՝ մի բաժակ թէյ խմել: Եւգինէի առաջ չեին դադարում պատկերանալ իր քաշածի տպաւորութիւնները: Նա նայեց վագօնի պատուհանից — ձիւնով պատած մերկ դաշտերը,

որոնք փուփում էին աշագին ապահութիւնով,  
չվանեցին նրա գլխից տիսուր պատկերները: Նշյն  
իսկ այդ ընդարձակ զատարկ դաշտերի վրա նր-  
բան թվում էր տիսուրթեան և միապաղպու-  
թեան միանման տաղտկալի դրոշմ... .

ԺԴ.

**Մ**իայն Աստրախանից դուրս եկած տասե-  
լորդ օրը Եւգինէն եկաւ Մօսկվա: Նա գիտէր  
հօր հասցէն: Մօսկվայի փողոցները նրան շատ  
ծանօթ էին: Անցաւ աւելի քան կէս ժամ, երբ  
Եւգինէն հասաւ «Большая Дмитровка» կոչ  
ված փողոցը: Նա կանգնեցրեց կառքը մի մեծ  
հիւրանոցի առաջ: Տեսնելով դռնապանին, նա  
տուեց հօր ազգանունը, որից յետոյ նրան ցցց  
տուին համարը: Եւգինէն մի կարճ ժամանակ  
տատանվեց, ապա թէ վճռեց բարձրանալ սան-  
դուզքով: Նրա ետեից դռնապանը տարեց ձա-  
նապարհի փռքի կողովը:

—Ահա այդ է, —ցցց տուեց դռնապանը:

Պ. Մայիլեանը առեւտրական գործերով դեռ  
աշնան սկզբում տեղափոխվել էր Մօսկվա: Նա  
նկել էր որդուն վերջնականապէս հանելու կա-  
զարեան ձեմարանից: Որդէն մի քանի ամիս է,  
ինչ որ նա իր որդուն ուղարկել է Բերլին ա-

ուետրական գպրոց, իսկ ինքը սպասում՝ էր  
գարնան տաք օրերին, որ վերադառնայ Աստրա-  
խան:

Պ. Մայիլեանը Եւգինէի ներս մտնելու ժա-  
մանակ, թէք էր ընկած բազմոցի վրա և խո-  
րսուզված էր մի ինչ որ մոքերի մէջ: Մի  
քանի րօպէ նա մնաց անխօս, ինչպէս քարա-  
ցած. Նրա ներքին աշխարհում զանազան հար-  
ցեր ծագեցին աղջկայ գալու պատճառով: Նա  
հասկացաւ, որ անշուշտ մի անսպասելի ծանր  
ժուզող դէպէ սովիակել է նրան ձմեռվայ ձա-  
նապարհով գալ Մօսկվա:

—Եւգինէ, —բացականչեց նա, —այդ ի՞նչ է  
եղել քեզ:

Նա ընկաւ աղջկայ վզով և զրկեց նրան:  
Կարօտած ծերունին շարունակ համբուրում էր  
աղջկան:

Եւգինէն չկարողացաւ զապել իր արտասուքը:  
—Հայրին, —ասաց նա, —ես եկել եմ քեզ  
նից օգնութիւն խնդրելու:  
—Բայց ի՞նչու ես դու մենակ: Ո՞րտեղ է Ա-  
լեքսանդրը:

—Նա բանտարկված է: Բանտարկված  
—Բանտարկված: Ինչո՞ւ:  
—Այժմ օգնութեան մեծ կարիք կայ, հայ-  
րին: Ես եկել եմ յատկապէս ձեւ մօտ:  
Մայիլեանը, որ գեռ իր դրկութիւն էր պահում

աղջկան, նստեցրեց նրան բազմացի վրա և քըն-  
քըութեամբ նկատեց.

— Ինչ էլ լինի, ձմեռվայ այդ ցուրտ ժամա-  
նակ... դու կարող էիր մրսած լինել... Ե՞կ այս-  
տեղ վառարանի մօտ նստիր, այս կողմը մի  
քիչ փշում է պատուհանից:

— Ես չեմ մրսած, — Հեկեկած Եւգինէն, հա-  
նելով իր վերարկուն և տեղափոխվելով վա-  
ռարանի մօտ: — Այս, հայրիկ, իմ գլխին մեծ ան-  
րախտութիւն է եկել, եթէ դուք չօգնէք, մենք  
կորած ենք...

— Ասա, տեսնեմ բանն ինչումն է. ես պատ-  
րաստ եմ... մի՞թէ դու հայրիկիդ չես ձանա-  
շում:

Եւգինէն պատմեց: Երբ Մայիլեանն իմացաւ  
աղջկայ դալու պատճառը, սկսեց գործ դնել  
ամեն մի միջոց, որպէս զի թեթեացնի նրա  
վիշտը, իսկ ապագայում նոյն իսկ օդնի նրան:  
Եւգինէն չէր սպասում հօրից այդ տեսակ վե-  
րաբերում: Այս հանգամանքը նրա վիշտը մի  
քիչ թեթեացուց: Մայիլեանը համոզվել էր, որ  
աղջեկը, նոյն իսկ փեսոն մեղք չունեն այդ ան-  
րախտութեան մէջ: Մայիլեանի մէջ վառվեց մի  
տեսակ զիտակցական նախանձ դէպի հայր: Ու-  
կերչեանը և ցաւակցութիւն դէպի անմեղները  
և այդ զիտակցութիւնը, համոզմումը աւելի  
յոյս ու թեթեութիւն էր ներշնչում Եւգինէի

սիրու: Ինկ Ալեքսանդրի բանտարկութիւնը  
մինչև անգամ նրան գրուեց:

— Ի՞նչու ժամանակին չէիր գրում... ի՞նչ էր  
եղել ձեզ, որ վերջին ժամանակներս ոչ մի ասդ  
չէիք գրում: Մի՞թէ ես քեզ այդպէս էի սիրում:

— Ներեցէք, հայրիկ, մենք մեղաւոր, ենք,  
տխուր կերպով ասաց Եւգինէն:

— Ուրեմն ձեր բոլորը աշխատանքը կորած է  
այժմ: Նա մեզ խայտառակցեց: Լաւ, մենք ցցց  
կտանք նրան: Ի՞նչպէս է ինքը Ալեքսանդրը:

— Ես նրա առողջութեան մասին երկիւղ  
ունիմ: Իթէ մի քանի տմիս էլ մնացել էս կա-  
րող է վտանգ սպառնի նոյն իսկ նրա կեանքին:

— Ինկ գործը ձեր նշանակված է: Ե՞րբ է  
գործի քննութիւնը:

— Զգիտեմ:

— Հարկաւոր էր իմանալ, որովհետեւ գործերը  
վճռվելուց յետոյ հաշտութիւն կայացնել չկ  
կարելի:

Այդ խօսքերը Եւգինէի վրա կլկին վշապեր  
աղջեցութիւն գործեցին: Այդ բանը նկատելով  
Մայիլեանը փոխեց իր խօսքը:

— Մենք կփորձենք գործին տալ ուրիշ ըն-  
թացք, — ասաց նա, — այդ աղուէսը այստեղ է,  
կաշխատենք տեսակցել նրա հետ, գուցէ մի բան  
կանենք:

Երկու օրից յետոյ Մայիլեանը դտաւ Ոսկե-

չեանին և հրաւիրեց իր համարը: Նա ամեն կերպ աշխատում էր համողել Ռսկերչեան-Հօրը, որ ներկայ հանգամանքնեռում անհրաժեշտ է հաշտութիւն խնդրել: Ոսկերչեանը սկզբում յայտնում էր իր պատրաստականութիւնը, բայց յետոյ ամեն կերպ հրաժարվում էր:

Եւգինէն այդ տեսնելով՝ գլուխն էր կորցնում: Մի քիչ հանգստացնում էր նրան այն հանգամանքը, որ հայրն ամեն կերպ աշխատում էր նրա համար:

— Մենք վաճառականներ ենք, պէտք է մեր յարգն ու պատիւը պահենք, — ասում էր Մայիլեանը: — հաշտութիւն խնդրելով՝ չենցանակում, որ մենք ստորանում ենք մռմիկի առաջ: Եթէ այստեղ խօսքը լիներ մի հասարակ պահանջի մասին, ես խօսք չունեի, բայց դու հասկացիր, որ այստեղ մեզ մեղադրում են դիտաւորեալ մնանկացած...

— Ոչ թէ մեզ! — ընդհատեց Ոսկերչեանը:

— Եյո, Սլեքսանդրին, բայց մի՞թէ սա մեզ չե վերաբերում... Մեղ հարկաւոր է մի թեթև օնութիւն և մենք ազատում ենք երկու թըշուառներ: Ինչ մեղք ունի մանաւանդ իմ աղջկելը: Քանի ուշ չէ, մենք պէտք է անշուշտ վերջացնենք գործը հաշտութիւնով, հակառակ դէպքում՝ մենք չենք կարող այդ անել: Դու շատ լաւ դիտես, որ գատաստանը վճարեց և

հաստատեց դիտաւորեալ մնանկութիւնը, այն ժամանակ ուշ կլինի և մենք ոչինչ չենք կարող անել:

— Ա՛խ, ի՞նչու այդ մենք առաջ չնախատեսնք, — հարցրեց Եւգինէն:

— Հիմա ինչ եղել է եղել է, պէտք է դրա վրա այժմ չխօսենք: Ես առաջարկում եմ հենց պայմանը հեռազրել որ գործը յետաձգեն: Իսկ այժմ հեռազրել որ գործը յետաձգեն: Իսկ պայմանը կամ 60 կոպէկ: Ես կէս բացէք բուբելին 50 կամ 60 կոպէկ: Ես կէս բացինը տալիս եմ; Միւս կէսը դուք ձեր վրա վերցրէք...

— Զարմանալի կերպով դուք պաշտպանում էք ձեզ: Եթէ ես փող ունենայի, միթէ կթողնէ որ իմ ձեռքով ստրիած գործը քայքայ-վէր: Դուք կարծում էք, որ նրանք մեղադրում են և գատաստանն էլ կմեղադրի: Կարծէք այդ տեսակ մնանկութիւնների օրինակներ սկի չեն եղած... Կանցնի մի քանի տարի, կալմակնեն... ամեն ինչ կմոռացվի...

Եւգինէի սիրալ ճմլվեց այդ խօսքերը լսելուց: Սյու ինչ տանջանք է: Սյու մարդու շնորհուց: Հիւ նրա ամրող կեանքը խաւարվել է և այժմ հիւ նրա ամրող կեանքը խաւարվել է և այժմ երբ գործն այստեղ է ընկել որ նրանից մի փոքր դուքն այստեղ է ընկել որ նրանից մի փոքր դուքն այստեղ է պատանցիում, այդ մարզը լուանութիւն է պատանցիում, այդ մարզը լուանութիւն է իր ձեռքերը: Սյու զեռ քիչ է, նա բողք է յայտնում:

— Դուք ինձ, ինչպէս մի երեխայի, կամնում  
էք համոզել գործի վատանգաւոր կողմը, կար-  
ծէք ևս չեմ հասկանում: Ոչնուչ էլ չի լինիլ:  
նրան երբէք չեն մեղադրիլ, քանի որ ապօրէն  
արած բան այստեղ ոչինչ չեմ տեսնում: Սրանց  
ուղածին ևս եթէ նայում (նա ցոյց տուեց Եւ-  
դինէին) նրանք ուղում են, որ նա չնսափ էլ  
պյուղէս չի կարելի, է...

— Բայց դու պէտք է իմանաս, որ նա երի-  
տասարդ է, նա այդ անպատճութիւնը տանել  
չի կարող: Զէ, ևս պահանջում եմ, որ ան-  
շուշտ դիմենք և գործը վերջացնենք հաշտու-  
թեամբ:

— Ինչպէս երեւում է, մենք մէկ - մէկու երբէք  
չենք հասկանալ: Եթէ դուք երկիւդով էք վերա-  
բերլում, կարող էք ձեր խելքի կտրածն անել:

Եւ Ոսկերչեանը վեր կացաւ ու առանց մի  
խօսք ասելու, ուղեսորվեց դէպի դուռը:

Երկու հայր բաժանվեցան առանց մի որ և է  
հաշտութիւն կայացնելու:

Ոսկերչեան - հայրը իջնելով հիւրանոյի սան-  
դուխքներից՝ շապակեց իր հիւրանոյի համարը,  
որտեղ նա այս գիշեր պէտք է ժամանակին  
լինէր, օրովհետեւ նրա մօտ մի մարդ պիտի այ-  
ցելութիւն անէր: Դուրս գալով փողոց՝ նրան  
թված, որ բաւականին ուշացել է, հանեց ժա-  
մացոյցը և մրթմրթաց.

— Այդ գարդակ մարդու պատճառով իմ  
ըանս ևմ բաց թողնում: իննը զարկել է, հա-  
ւատա որ եկած ու գնացած լինի:

Նա արագացրեց քայլերը, յետոյ վարձեց մի  
կառք և պատուիրեց քշել: Նրա ձանապարհը  
գնում էր Կրէմլից դէնը՝ Մօսկվա գետից միւս  
կողմը: Նա անցաւ այդ գետի վրայի կամուր-  
ջով և մի շարք փողոցներ թողնելուց յետոյ՝  
մօտեցաւ իր տունին:

Այստեղ հակառակ կողմից մէկը մօտեցաւ  
նրան:

— Ա՛, դուք արդէն այստեղ էք. ինըրեմ,  
խնդրեմ, վաղո՞ւց է:

— Ոչ, չէնց այս բօպէ:

— Մեր աստրախանցիներից մինն է եկել զը-  
նացել էի մօտը, մի քիչ ուշացայ: Խնդրեմ...

Նա ցոյց տուեց ձանապարհը և իր սենեակի  
դուռը: Նրանք անցան մի քանի սենեակ առաջ,  
քան մտան մի խուց:

Ոսկերչեանը վառեց լամպան:

— Թէյ իլիմէք:

— Եթէ որ նեղութիւն չէ:

— Այս բօպէիս, այս բօպէիս:

Նա զանգահարեց, եկաւ ծառան. Ոսկերչեանը  
պատուիրեց թէյ պատրաստել:

— Եկայ պատմեցէք, դժուարութիւններ իս  
առաջ չեկան:

— Ոչ ոչ ինչ դժուարութիւններ: Այն տեսակ մարդկանցից պահանջ ունիք, որ մի խօսք չխօսեցին: Իսկ պ. Շ. այնքան սիրալիք կերպով ընդունեց, որ ես զարմացայ:

— Բայց դուք խօ ոչ մէկին չեք ասել, որ ես այստեղ եմ:

— Ոչ ի՞նչ է, բայ էք լսել:

— Ոչ, այնպէս էի հարցնում: Գիտէք, ես չեմ վախում սրանից, բայց ինչպէս ձեզ ասել էի, մի քանի հանգամանքների շնորհիւ, ես ստիպված եմ խուսափել անձամբ ստանալուց, այդ ես ձեզ յետոյ կասեմ: Հիմա պատմեցէք, թէ ինչպէս են գնում ձեր գործերը: Մառայելն է լաւ, թէ սեփական գործ ունենալը:

— Ի հարկէ, սեփական գործը: Ես շնորհակալ եմ ձեզանից, որ դուք ինձ ձանապարհ ցոյց առնիք և ձեռք բռնեցիք: Եթէ դուք սկըզբից կօմիսսիա ձուկ չուղարկէիք, ես ինչպէս կարող էի...

— Մարդս մարդով է, այն ժամանակ ես ձեզ հասայ, այժմ դուք էք ինձ փոխարէն ծառայութիւն անում: Այդպէս չենի, աշխարհս տեղում չե կանգնիլ:

— Մինչև անգամ այս տարի ուղում եմ կողքիս խանութն էլ վեր առնել, ի՞նչպէս էք գտնում:

— Ո՞րը, ձախ կողմինը:

— Այն այդ այս վեհերաց զայն ապահովական հարցներից միայն հարկաւոր է միացնել և մի լաւ էլ ցուցանակ խփել: Կամ

— Այդ ինքն ըստ ինքեան: Ուրեմն թոյլ տուեցէք, հանելով քսակը ասաց նորեկ այցելուն, հատուցանել ձեզ հասանելի գումարը.

բոլորը տասն երկու հազար չեք երեք մուրհակով. ստացէք ձեր տաօր հազարը, երկու հազարն իբրև իմ մաս, ինչպէս խօսել ենք, ստանում եմ:

Ոսկերչեանը վերցրեց 10,000-ը և շտապելով զրեց զրպանը թղթադրամները:

— Բայց այդ թէյլ ինչ եղաւ, ուշացրին... Եկէք թէյլից յետոյ ձեզ մի տեղ տանեմ... Ցիցանկաների մօտ կդաբ...

— Ինչու չէ: այսանդրա մաներ ու ինչու ու Ոսկերչեանը վերցրեց զանգակը, կրկին ու կըրկին հարեց: Ուստի հայտարար անդքան է ճայցի ոչ ներա մտաւ ծառան: Այսուհետեւ զարաց բա

— Թէյլ շուտ կբերէք:

— Այս րօպէիս... Այսուհետեւ իոյ այս զաման, մայթեր ու ասումոն զանցից Ածառօղակ ոչ որդեգա ոչ զարաց մաներ ու ածուն

թէկ Ոսկերչեան - հօր անսիրտ վերաբերումը վշաայրեց Եւգինէին, բայց հօր լաւ ընդունելութիւնը նրա սիրտը մի քիչ թէկեացրեց: Ոսկերչեանի գնալուց յետոյ Եւգինէն կէս հանված

պառկեց բազմոցի վրա: Նրա քունը տանում  
էր և նա աչքերը կէս կապած, կէս բաց դար-  
ձեալ շարունակում էր հաշիւ տալ իր արածի  
մասին: Նրա առաջ սեղանի վրա վարվում էր  
լամպան: Այդ րօպէին միայն առաջին անգամ,  
կարծես, նախամոռացաւ իր վիշտը, նրա առա-  
ջեռմ կանդնած սպառնալիքները, կարծես,  
գնալով նուազում էին: այժմ նա զգաց, որ  
դեռ կայ յոյս ապակայ երջանիկորերի, թէ  
կան դեռ ևս նրա մօտ մարդիկ, որտնք ձեռք են  
մեկնում նրա այդպիսի դժուար, ծանր օրերում:  
այժմ նա չի փորում յոյսը, որ ահա շատ  
շուտով նրա ամուսինը կմօթափի իր թշուա-  
ռութիւնները և կըկին կնայի նրա երեսին լի  
երջանիկ յուսով: Եւ այդ երջանկութիւնով,  
ի հարկէ, Եւգինէն պարտական կլինի իր հօրը.  
այդ մարդն է, որ պարզեռում է թշուառ կնոջը  
իր սիրած և պաշտած ամուսնուն Յայց ահա  
այդ քաղցր յիշողութիւնների թելը կարեց նրա  
հայրը, որ այդ միջոց կից սենեակից դուրս գա-  
լով՝ մօտեցաւ նրան:

Մայիլեանը մօտեցաւ իր աղջկան, նստեց նրա  
մօտ: Եւգինէն բացեց իր աչքերը: Յօր կարօտած  
աչքերն ընկան աղջկայ երեսին: Մայիլեանը  
կուացաւ և համբուրեց նրան, առնելով աղջկայ  
ձեռքը, երկար ժամանակ պահեց իր կոշտացած  
ձեռքում:

— Եւգինէ, զու չես քնում, քնիր — այդպէս  
անքուն մնալով ինչ կլինի...

Եւգինէն վեր կացաւ և նստեց:

— Տեսար ի՞նչ լիրը մարդ է քո աները Զեռ-  
քերը լուանում է և քաշվում է, բայց Աս-  
տուած ողորմած է, զու միայն քեզ հանգիստ  
պահիր: Այդ ինչի ես նման, ես քեզ հաղիւ կա-  
րողացայ ձանաչել:

Եւ հօր երեսի վրա արտայայտվեց տիրու-  
թեան այնպիսի նշցյլ որ Եւգինէն վախից բա-  
ցականչեց.

— Ոչ, ոչ հայրիկ, այժմ անցաւ: Այժմ քանի  
որ զու ինձ պաշտպանեցիր, ես ուրախ եմ:

Մայիլեանը տարաւ ձեռքը իր աղջկայ մէջքը  
և բռնելով նրան՝ պահեց երկար ժամանակ:

Մի քանի րօպէ հայր և զաւակ մնացին այդ  
անխօս զրկախառնութեան մէջ:

— Խօ վտանգ չկայ, հայրիկ, — հարցրեց վեր-  
ջապէս Եւգինէն:

— Ինչ վտանգ ես կամեցայ փորձել այդ  
մարդուն, որ յետոյ չասի, թէ իրանից բաժան  
ենք զործել: Ես նրան մի շաբաթ է, որ աես-  
նում եմ այստեղի հարցրի ձեր մասին, բայց  
աղուէսը ոչինչ չասաց... Վաղը մենք գուրս  
կզանք Աստրախան... և մի կերպ զործը կվեր-  
ջացնենք... Այժմ ես կէնց կհեռադրեմ նար-  
մաղեանին. նա, ասում ես, այնտեղ է...

Այս:

Կհեռազրեմ, որ գնայ մուժիկին և ասի,  
որ մենք դալիս ենք: Այժմ դու քնիր, հանզըս-  
տացիր, որ այլ ևս չուշացնենք, հեսց վաղը  
դուրս գանք, առաւօտեան գնացքով...

— Օ, հայրիկ...

— Ոչինչ հարկաւոր չէ, իմ սիրելիս:

— Ոչ ոչ ես չեմ կարող իմ շնորհակալու-  
թեանս չափն արտայայտել: Ես այնքան մեղա-  
ւոր եմ քո առաջ, որ...

— Այս, այս, իմ սիրալ թշյլ չետալիս քեզ  
այժմ թողնել այդ զրութեան մէջ:

— Հայրիկ... դու դարձնում ես իմ ամուս-  
նուն—ես այդ երեք չեմ մոռանալ:

ՃԵ.

**Ա**երջապէս հասաւ դատաստանի օրը, որ  
ծանր ու չարագուշակ կալանաւորված ու բան-  
տակված Ալեքսանդրի համար: Նա սպասում  
էր իր համար մի անդառնալի վճիռ: Եւ իսկա-  
պէս պարագատէրելը վերջին ժամանսակներս  
իրանց յարձակումը խիստ սասակացրել էին:  
Նրանք այլ ևս չեին մատածում հաշտութեան  
մասին և մի գլուխ մեղաղբում էին Ալեքսանդ-  
րին դիտաւորեալ սնանկացած:

Առաւօտեան 10 ժամն էր, որ Ալեքսանդրին  
բերին դատաստանատուն: Այսուեղ ժողովվել էր  
մեծ բազմութիւն: Վկաների թւումն էր և Շար-  
մաղեանը, որ քայլելով Ալեքսանդրից քիչ հե-  
ռու, նոյնպէս մի խոր մտածմունք թաղում  
էր իր սրտում:

— Ինձ թւում է, որ ամեն ինչ վերջացած է,

ասաց Ալեքսանդրը՝ դիմելով Շարմաղեանին:

— Ասուծուծոյ կամքն է, տեսնե՞նք:

— Ցաւում եմ, որ Եւզինէս այսուղ չէ: Տե-  
ղեկութիւն չունիս:

— Ոչ:

Այսուեղ նրանց խօսակցութիւնն ընդհատվեց:  
Երևացին դատաւորները, օրոնք դուրս գալով  
կից սենեակից բանեցին իրանց տեղերը:

Դատաւորների գժգոյն երեսն Ալեքսանդրի  
վրա գործեց մի անսովոր շփոթութիւն:

Սկալեց գործը Վկաներին հեռացրին, Հեռա-  
ցրին և Շարմաղեանին: Հակառակ կողմից փաս-  
տաբանը յարձակվեց Ալեքսանդրի վրա: Ամբողջ  
դաշինքն ուշաղութեամբ լսում էր: Դա մի  
կռիւ էր, որտեղ չեին խնայում ոչ մի զենք,  
ոչ մի միջոց. երկու կողմն էլ մէկ-մէկու վրա  
յարձակվում էր և ամեն մէկն աշխատում էր  
ջարդել միւսին:

Ալեքսանդրին պաշտպանում էր յայտնի փաս-  
տաբաններից մինը, որ նոյնպէս համոզված էր

Ալեքսանդրի անմեղութեան վրա։ Մինչզեռ ժողոված վկանները բոլորովին հակառակ ուղղութիւն տուին գործին։ Մէկը նրանցից մինչև անգամ յայտնեց, որ խանութը պատկանելիսէ եղել Ալեքսանդրին, յետոյ մի օր զալիս են և հազորդում են, որ նրանց աւերը Ալեքսանդրը չէ, այլ կինն է ու հղայրը։ Նոյնպիսի ցուցմունքներ տուին գրեթէ միւս վկանները։ Բոլոր ժողովուրդը լսում էր և մեղաղբում էր Ալեքսանդրին։ Մի քանիսները մըթմըթում էին՝ «ահա ձեզ հեշտ հարստանալու ճանապարհը»։ Իսկ մանր վաճառականներն ասում էին՝ «այդպիսի ուղղութեամբ գործող վաճառականի վերջն այս է»։

Բոլոր ցուցմունքները գործին տուին ծանր ուղղութիւն։ Ալեքսանդրը կանգնած տեղում այդ ամենը լսում էր։ Նրա ուսները թուլացել էին, թէև նա ճիգ գործ գրեց մի քանի խօսք ասելու, բայց ուժերը մատնեցին նրան, նա չկարողացաւ շարունակել և ընկաւ նստարանի վրա։ Բայց և այնպէս ասածից երկաց, որ նա իրան ճանաչում է մեղաւոր. . . միայն ոչ այն չսփով, ինչպէս նրան համարում են. . .

Գործը մի քանի րօպէով ընդհատեցին։ Տիրեց մի ինչ որ իրարանցում սկսեցին բարձր ձայնով մեղաղբել մեղաղբանքի գերակշեռ կողմը Ալեքսանդրի դէմ էր։ Իսկ այդ ընդհանուր

իրարանցումը սարսափելի ծանր տպաւորութիւն էր գործում Ալեքսանդրի վրա։ Կրկին զանգահարկացին։ — Քատը սկսվում է։ Կրկին լուսութիւն։ Կանչեցին միւս վկաններին, ներս եկաւ և նարմաղեանը։ — Պարսն դատաւորներ, — ասաց նա, — գործի վրա լցոս սփուելու համար ևս կարող եմ ասել, որ այդ գործում աւելի մեղաւոր է մի ուրիշ անձ, որ այժմն դատապատճի ուշադրութիւնից վրիպած է։

— Ձեղանից պահանջվում է, որ դուք, եթէ ունիք մի օր և է բան ասելու Ալեքսանդր Ուկրչեանի մասին, ասէք։

Եցտեղ միջամտեց փաստաբանը։

— Գործը պահանջում է, — ասաց նա, — որ վկան պատմի իր ցանկացածը. այդ պատճառով ևս խնդրում եմ թոյլ տալ վկային աղատ յայտնել իր ասելիքը, գուցէ նրանց մէջ պարունակվում են ծանրակշիռ ցուցմունքներ. . .

Նախագահ՝ դատաւորը առանց երկար մտածելու ասաց։

— Վկայ Շարմաղեան, արդեօք գուք գիտէք, որ այդ խանութը իսկապէս վաճառված է կնոջը։ Շարմաղեանը կմկնաց։

— Դուք ներկայ եղել եք այդ վաճառքին։

— Ոչ Բայց ես պէտք է պատմեմ սկզբից,  
որ իմ ասածներն պարզ լինի: Մեր խանութի  
գործը գնում էր աջաղ և մենք շատ հեշտու-  
թեամբ կարող էինք պարտքատէրերի հետ հա-  
շեւը վերջացնել: Բայց մի ուրիշ անձնաւորու-  
թիւն, որը, ինչպէս ասացի, դատաստանի ու-  
շադրութիւնից վրիպած է, մեր գործերին առեց  
ուրիշ ուղղութիւն և կերպարանք. դա պ. Ա-  
լեքսանդրի հայրն է: Նա այդ ժամանակ պա-  
հում էր վատագա և պայմանաւորված էր բանած  
ձուկը տալ ֆիրմային, բայց, չկամենալով այդ  
անել ծախում էր կողմանակի... .

— Զեր պատմածը գործին չե վերաբերում:  
— Ոչ պարոն դատաւորներ, եթէ ինձ թշոյ  
տրի կարգով պատմել... .

— Դուք ասացէք այն՝ պ. Ալեքսանդրը փող  
ստացել է այդ վաճառքից:

— Ես գիտեմ վաճառքը տեղի է ունեցել փո-  
խադարձ համաձայնութիւնով:

— Դուք խուսափում էք գլխաւոր խնդրից:  
Դուք եղել էք գլխաւոր գործակատար և մի՞թէ  
չգիտէք, արդեօք վաճառքը փողով է կայացել:

— Ես, պ. դատաւորներ, այդ ժամանակ եղել  
եմ Մօսկվա, ուր ուղարկված էի խրիզի, և երբ  
որ վերադառնում եմ, ինձ յայտնում են, որ  
խանութը այժմ պատկանում է կնոջը և միւս  
որդուն՝ Գէորգ Ոսկերչանին:

— Եւ չէք հետաքրքրված, չէք լսած, թէ  
ի՞նչպէս է եղել որ կարձ ժամանակում դուք  
ստիպված էք ուրիշ տիրոջ ծառայել: Հայրը  
— Ինձ վարձել է սկզբից Ոսկերչան - հայրը,  
նա էլ ինձ խրիզի է ուղարկել իսկ երբ որ ես  
վերադառնում եմ, ինձ ասում են, որ դուք  
այժմ այդ մարդու մօտ էք ծառայում... .  
Շարմաղեանը լուց: Հստ երևոյթին, մի եր-  
կիւղ պատեց նրան. նա վախեցաւ իր ասած-  
ներից: Շարմաղեանը իր բայցարութիւններով,  
հակառակ իր ցանկութեան, ոչ թէ մեղադրեց  
Ոսկերչան - հօրը, այլ Ալեքսանդրին: Որքան նա  
աշխատեց, բայց նրան չաջողվեց գլխաւոր գեր  
խաղացողի վրա դատաստանի ուշադրութիւնը  
հրաւիրել:

Ալեքսանդրը լսում էր Շարմաղեանին լար-  
ված ուշագրութիւնով և չէր մեղադրում նրան:  
Բոլոր գործակատարները հրաւիրված էին  
վկայութիւն տալու և որանց ցուցմունքներից  
չէր երևում ոչ մի այնպիսի գործունէութիւն,  
որ ուղղված լինի Ոսկերչան - հօր կողմից, այլ  
ամենի ասածն էլ Ալեքսանդրի վրա էր: Այդ  
պիսով աւելի մօտ գործունէութիւն ունեցողը  
հնաց վարագոյրի եակ: Բայց թէ ի՞նչը ստիպեց,  
որ խանութի գործը ծուռ ուղղութիւն ընդու-  
նեց, ինչից ստիպված եղաւ Ալեքսանդրը են-  
թարկվել այդպիսի ծանր մեղադրանքի, — այդ

բանով չհետաքրքրվեցին. և ի՞նչպէս էլ կարելի էր հետաքրքրվել, երբ հիմնական փաստերը մշտեղ չկային, ընդհակառակը բոլոր պաշտօնական կասկածանքները ակներեւ Ալեքսանդրի վրա էր:

Զկամեցան մինչև անդամ լսել փաստաբանի խօսքերը: Ալեքսանդրի փաստաբանը պարզ կերպով ուշադրութիւն դարձրեց Շարմաղեանի ցուցմունքների այն կէտի վրա, որով նա մեղադրում էր Ոսկերչեան - հօրը: Փաստաբանը պատմեց գործի բոլոր ընթացքն ու զարգացումը, նկարագրեց այն շրջանը, հանգամանքը, որի մէջ գործել է Ալեքսանդրը՝ մի անփորձ երիտասարդ: Դալով այն կէտին, որ այդ փոփոխութիւնը տեղի է ունեցել Շարմաղեանի բացակայութեան ժամանակ, փաստաբանը ընդգծեց այդ կէտը, ասելով որ աննպատակ չի եղած այդ և, որովհետեւ խրիդի ուղարկողը եղել է հայրը, կնշանակի այդ փոփոխութիւնը առանց նրա զիտութեան չէր կարող լինել և գուցէ հէնց զիտմամբ է հեռացրած Շարմաղեանը, որովհետեւ հայրը կարող էր կասկածել, թէ Ալեքսանդրը կղիմեր Շարմաղեանի խորհուրդներին, իսկ այդ վերջինս հազեւ թէ խորհուրդ տար այդպիսի քայլ անելու:

— Ինչու էք այդպիս ենթադրում:

— Որովհետեւ յանցաւոր Ալեքսանդրը ասում

էր, որ Շարմաղեանը խրիդից վերադառնուլուց ասել է, որ սրանց արած քայլը սխալ է:

— Դուք ի՞նչ կասէք, դիմեց դատաւորը Ալեքսանդրին:

— Ես կհաստատեմ, որ Շարմաղեանը ինձ իսկապէս ասել է, թէ մեր արածը սխալ քայլ է: Այդ միջոց Շարմաղեանի և Ալեքսանդրի հայեացքները հանդիպեցին և նրանք մէկ - մէկու սրաի զգացածը կարդացին այդ հայեացքների մէջ:

Ալեքսանդրը չէր ուղում հօր արարքը շօշափել և սրանով նրան ևս ենթարկել կասկածանքի, այդ պատճառով նրա ասածները թըռուցիկ բնաւորութիւն էին կրում: Ալեքսանդրը ցանկանում էր, որ ոչ ոք չմեղադրվի, ոչ հայրը, ոչ եղբայրը. նա պատրաստ էր ինքը մինչև վերջ տանել իր գործած յանցանքի պատիժը:

Փաստաբանը կրկին շարունակեց իր ասելեքը. նա ինդրում էր, որ գործը յետաձգվի և Ոսկերչեան - հայրն էլ ենթարկվի քննութեան, բայց այդ միջոց դատաւորների մէջ տիրեց մի հանդարդ շշուկ... Բոլորը լուեցին և անհամբեր սպասում էին, թէ ի՞նչ վծիո կսանեայ գործը:

Ահա կարդացին և վծիոք:

— Ալեքսանդր Ոսկերչեան ձանաչվում է դատաստանով զիտաւորեալ մնանկացած... .

Ամենքը գլուխները կախեցին: Հակառակ կողմը մի առանձին բաւականութեամբ դուրս եկաւ դահլիճից: Ալեքսանդրը մօտեցաւ Շարմաղեանին:

— Պաշտպանիր Եւզինէին:

Նրանց երկուսի հայեացքները վառվում էին մի ինչ որ կատաղի ցայտումնվ, բայց այդ միջոց Ալեքսանդրին հրաւիրեցին հետեւ բանտ: — Եւզինէ, ախ Եւզինէ, մաս բարեւ, սիրելիս...

Իսկ Շարմաղեանը հազաւ զլիսարկը և նայեց չորս կողմը, ու վերաբարձաւ տուն: Նա իր տեսածին ու լսածին չէր հաւատում:

— Պաշտպանիր Եւզինէին, անցաւ նրա մըտքով բայց այդ իմ ուժից վեր է: Այժմ վերջացած է, ոչ ես չեմ կարող այդ գերը ստանձնել:

Նա անդիտակցարար շտապ սկսեց պատրաստել իրեղինները, շորերը, պայուսակները: Վերջին ժամանակներս նա վճռել էր թողնել Աստրախանը, գնալ բախտ որոնելու Կովկասի մի որ և է քաղաք և սրանով մոռացութեան տալ իր մէջ աճող դէսի Եւզինէն ունեցած զգացմունքը: Նա այդ վճռել էր, միայն սպասում էր դատաստանի վճռին:

Այժմ նա մենակ է իր սենեակում:

Մի անորոշ զգացմունք խեղից նրան: Մի ինչ որ տիսուր, ձնշղ և անցուսալի բան նոր ուժով գալարվում էր նրա սրտում... Նա նա-

յեց իր պատրաստած իրեղիններին և քիչ մնաց որ չարտասվեա.. .

Սրդէն արեգակը մայր էր մտել: Փողոցնեմ աղմուկը զգալի կերպով սաստկանում էր: Եյդ աղմուկը համելով նրա ականջին, կարծես, աւելի խոր վշտի մէջ ցցեց նրան: Շարմաղեանը լսելով այդ աղմուկը՝ ափսոսաց, որ ստիպված է թողնել այն կեդրոնը, որտեղ նա երկար տարիներից յետոյ ստիպված եղաւ ձանաչել մի անձնաւորութիւն—և նա մտքով սլացաւ գէպի այդ անձնաւորութիւնը՝ Եւզինէն իր անհուն սիրով գէպի իր ամուսինը: Նրա մէջ վառվեց նախանձ: Եւ այդ րօպէն նա անիծեց իր կեանքը, այն կեանքը, որ երբէք նրան չի ժպտել այլ եղել է խորթ եղբայր... և այդ անողոք եղբայրը չի խոստանում նրան ոչ մի մոռացութիւն, ոչ մի թիթեութիւն... նա շատ կցանկանար, որ գոնէ իր սիրած առարկան չձանաչէր այդ վշտը ու լինէր բախտաւոր... Ալեքսանդրի բանարկութիւնը գործի ամբողջ ընթացքը շարժում էր նրա սրտում մի ինչ որ մութը յցու և այդ մթութեան անոլոցութեան ետև նկարվում էր մի ինչ որ անըմբոնելի բախտի աղջալ լոյս, որը կարծես զրաւում էր նրան... Նրա երեակայութեան մէջ մի րօպէ պատկերացան ցանկալի րօպէներ, րօպէներ, որոնք խոստանում են լինել շատ մսիթարիչ... Եւ այդ մտքերի

առաջ նա երկար մնաց—պաշտպանել արդեօք  
Եւզինէին...

Երկար նա կանգնեց այդ խնդրի առաջ՝ կա-  
մենալով հաշիւ տալ իր մտքում դեղերող  
հարցերին և զգացմունքներին... Բայց յետոյ  
աննիատելի կերպով բանականութիւնը յաղ-  
թեց զգացմունքին, նու վախեցաւ այդ հեռա-  
նկարի մութ պատկերից իր ոլոր մոլոր հոգսե-  
րով բաղեկան վայելչութիւններով, ուրախու-  
թիւններով... Նա շտապեց տեղակել իրեղէնները  
և այլ ևս չուշանալ:

Նրա երեսը ընդունեց այժմ խիստ հաստա-  
տակամ արտայայտութիւն: Նա դողաց, դողո-  
ջիւն ձեռներով սփոեց կապոտել իր պայու-  
սակները, բայց վճիռը չէր փոխում: Վերջապէս  
նա պատուիրեց կառք կանչել: Յետոյ վերցրեց  
կոնստակը տեղերը, առաւ պարկը և դուրս  
եկաւ: Դուան մօտ ծառան խոնարհեց գլուխը և  
բարի ձանապարհ մաղթեց:

Շարմաղեանը հանեց մի քանի կօպէկ և առեց  
ծառային:

—Բարի ձանապարհ, բարի երթ, —շարունա-  
կեց զլուխ տալ ծառան:

Շարմաղեանը պատրաստվում էր կառք նստել,  
երբ մի մարդ նրան կանգնեցրեց:

—Ես ձեղ երկու օր է պարառմ եմ, —ասաց  
մօտեցողը:

—Ինչ էք ասում, ևս երկու շաբաթ է ար-  
դէն տեղափոխվել եմ: և մի՞թէ ձեղ չասացին:

—Ոչ, որքան հարցրի՝ չասացին. յետոյ բօր-  
սայում իմացայ: Զեր վրա հեռագիր կայ...

—Անպիտանները նեղացած են վրաս, այդ  
պատճառով էլ չեն ասել:

Իսկ երբ Շարմաղեանը բացեց հեռագիրը և  
աչքով առաւ, ակամայից բացականչեց: Դա

Մայիլեանի հեռաղերն էր, որպէս յայտնվում  
էր, թէ իրանք այս օրերս գալիս են Աստրա-

խան գործը հաշտութիւնիմբ վերջացնելու: Շար-

մաղեանը մինչև անգամ վայր թռաւ այդ ան-  
սպասելի, բայց արդէն ուշացած նորութիւնից:

Մի բագէ նա տատանվեց և կամեցաւ մնալ:

Նրա մէջ կրկն զարթեցաւ ցանկութիւն  
տեսնել եւզինէին: Տիկնոջ հրապուրիչ պատ-

կերը վերականգնեց նրա մէջ, կրկն նրա մէջ  
վառվեց նախանձը, որ այդ կինը գալիս է գրկե-

լու և համբուրելու յուսով այն բախտաւո-  
րին... և նա զլուխը կորցնում էր խանդային  
հնթաղրութիւնների մէջ...

Բայց գարձեալ նրա մէջ վասկից կամքի  
ոյժը, նա բարձրացաւ կառք և հրամայեց քշել

դէպի շոգենաւների նաւահանգիստը:

Մայիլեանի ննջարանում հիւանդ սպառկած էր Եւգինէն: Մի գեղեցիկ հարուստ մահճակալի վրայից փայլում են երկու զբյու տենդային աչքեր: Իսկ նրա առաջ այդ բօպէն կանգնած էր հայրը: Նրանք սպասում էին թժիշկին — իսկ մինչև գալը, վշտացած հայրը չէր հեռանում իր սիրած աղջկայ մօտից: Ամբողջ սենեակի մէջ տիրում էր մի խոր տիսրութիւն: Ահա հաւաքվեցան և սակաւաթիւ հիւրերը, որոնք եկել էին հիւանդին տեսութիւն: Տիկինը իր անսահման վշտով աւելի ծանր էր թվում նրան:

Պատուհանից ընկած արեգակի ձառագայթները սփովում էին տիսրադէմ հիւրերի երեսներին և սքօղում էին հիւանդի սպրդնած երեսը: Հիւանդը այնքան թոյլ էր, որ չէր խօսում:

Երբ որ Եւգինէն լսեց, որ ինքը ուշացել է և դատն արդէն վճռված է մինչև նրա գալը, նա անդիտակցարար հարուածներ էր տալիս իր գլխին և բացականչում՝ «Էլի չաջողվեց»: Նրան այնպէս էր թվում, որ ամուսնու հետ այլ ևս չի տեսնվելու: Այժմ էլ անկողնում պառկած շարունակ կրկնում էր, թէ նրանից խլեցին ամուսնուն և թէ ինքն այդ հարուածը տանել չի կարող: Ամուսնու անբախտութիւնը ծանր հարուած էր նրա համար. այսուհետեւ չքացաւ

նրա համար միսիթարութիւն, յոյս, սէր, որի համար այնքան համբերեց՝ յուսալով որ վերջապէս կաջողի նրան ցրվել իրանց վրայից մառախողը, — բայց այժմ տեսնում է, որ նա միայն այն ժամանակ կթեթեանայ այդ վշտերից, երբ հրաժեշտ կտայ այդ վշտերին և այդ աշխարհին...

Բայց հայրը փորձում էր միսիթարել աղջկան, այդ էլ չթեթեացրեց Եւգինէի վիշտը: Մահուան գողը տիրեց նրա մարմնուն և թըշուառ կնոջ մաքում կրկին պատկերացաւ այն հանգտմանքը, թէ ամուսնուն տարան, բաժանեցին: Բայց ահա հիւանդը խօսեց:

— Աստուած, Դու չինայեցիր նրան, Քո կամքն է... երեխ ինձ վիճակուած չէր իմ ամուսնու հետ կրկին արժանանալ երջանիկ օրերի: Բայց, ով Աստուած, ով կպաշտպանի նրան այնտեղ՝ աքսորում: Ի՞նչ կանի նա մենակ, ոչ, ես կերթամ նրա հետ, առողջութիւն, Աստուած, վեր կացրուր ինձ այս անկողնից... Ով կեանք, կեանք, որքան քաղցր ես դու, բայց միայն նրա հետ... Ես ուզում եմ նրա վշտերը թեթեացնել նրան համբերութիւն և սիրտ ներշնչել... Բայց ի՞նչպէս անել... ես չեմ կարողանում վեր կենալ...

Նա թուլացաւ և լսեց:

Հայրը չոքեց մահճակալի առաջ, սկսեց լաց

լինել նա սպառել էր իր միիթարութեան բու-  
լը պաշարը, բայց չէր աջողվում նրան համո-  
գել:

Վիշտն այնքան թեթև չէր, որ Եւգինէն կա-  
րողանար զիւրութեամբ տանել: Բայց ահա  
հայրը դուրս եկաւ դահլիճ, հիւրերը շրջապա-  
տեցին նրան:

— Ինչպէս է:


— Օ՛հ, չզիտեմ. նրա վրա, կարծեմ, շունչ  
չկայ... երեխաս գնաց...

Այդ միջոց եկաւ բժիշկը:

— Պ. բժիշկ,— գոչեց Մայիլեանը,— կարծեմ  
պրծաւ... այլ ևս փրկութիւն չկայ...

— Այդ չե կարող լինել... Ես ձեզ ասում եմ,  
կանցնի... Հօգեկան խիստ յուզմունք է...

Նա չշարունակեց, շտապ մտաւ ննջարան և  
մօտ հինգ րոպէ մնաց այնտեղ... յետոյ դուրս  
եկաւ և հանգստացրեց, որ հիւանդը կենդանի  
է... թէե զրութիւնը շատ ծանր է...



Նախրունաշ Ճ Խոյստարմ չնի Նարդարդար  
ազաղըն և սիցարաց Ճ Ամստի ամ դու միջ  
յառ Նոր ու Ճ մայի որպառն միջմայի Նազար  
... Նարդը վաճմ արարացըն  
... Յ բանալ պահապահ ո մե սմբաջմէ  
ճաց յառ միջուր սահման մայն դու միջմայի  
դայ Ճ զանը սկզբ սկզ Խ Ճ պահին դայի  
... Ո մայի ուսմացըն Ճ ճղոր



Եղինէն առողջացաւ: Առողջա-  
նալով նա շարունակ երկու տա-  
րի զբաղվեց իր ամռւսնու ա-  
զատման խնդրով: Երբ որ դա-  
տառաստանը Ճանաչեց Ալեքսանդ-  
րին՝ դիտաւորեալ մնանկացած  
եւ գործը ստանալով քրէական  
բնաւորութիւն՝ աստիճանաբար հասաւ սենատ,  
Եւգինէն նոր ուժով դիմեց մայրաքաղաք: Նա  
յօյս ունէր լաւ փաստաբանների միջոցով սե-  
նատում ամռւսնու համար ձեռք բերել ազա-  
տութիւն: Գալով Պետերուրգ՝ նա վարձեց մի  
յայտնի փաստաբան, պատմեց նրան գործի հղե-  
լութիւնը: Փաստաբանը խոստացաւ կարելցն  
շափ գործը թեթեացնել Բէ Եւգինէն Պե-  
տացվեց նոր շրջան Ալեքսանդրի գործում:  
Պարտաքատէրերը չկասկածելով թէ Եւգինէն Պե-

տերբուրգում ինչ նպատակով է, համոզված էին, որ նա փախել է քաղաքից և մայրաքաղաքում վշտերին մոռացութիւն է ուզում տալ երկրպագուների զրկում...

Վերջապէս մի օր փաստաբանը յայտնեց Եւ-գինէին, որ նրան աջողվեց գործին տալ ցանկալի ընթացք և թէ այս օրերս պէտք է սկսի գործի վերաքննութիւնը...

Ամառնային անտանելի օրվայ երկարատեւ շոքից յետոյ, այնպիսի շոքից, երբ տիրապետում է Ճնշող արեգակը, խեղդիչ փոշին — որքան հիանալի է նրան յաջորդող երեկոն:

Որպիսի թեթեութեամբ է այդպիսի երեկոներին մարդ շարժում իր թռքերը. որքան մեղմ է շոյում մարդու յոգնած ջղերը այդ անուշեկ զովութիւնը. Մինչև արեգակի մայր մոնելը դեռ Ճնշում են այդ շոքերը և յանկարծ այդ անտանելի շոքին յաջորդում է անդորր երեկոն և ամեն ինչ փոխվում է: Ծառերը աւելի եռանդուն կերպով են բարձրացնում իրանց գագաթները, առուները, գետակները, կարծես, շփոթված արթնանում են օրվայ թմրութիւնից. զգայուն, քնքոյշ և խոնարհ ջրերը տարածում են իրանց շուրջը մի կենդանացուցիչ թարմաւ-

թիւն: Մի քիչ պնդերեսութիւն է անում օրը, բայց սա էլ վերջ ի վերջոյ զիջանում է — և նրա խեղդող ու թմրութիւն սփոռղ ծանրութիւնը չքանում է հեռաւոր տարածութեան մէջ: Կուսինը պարզ կերպով բարձրացնում է իր վլուխը կապոյշա երկնքի վրա: Յանկալի է նրա ողջոյնը... դուրեկան է ժպիտը... Կարծես նրա կաթնագոյն շողերը դարձնում են ձընշված երկրին մի նոր ուժ, նոր կենդանութիւն... Եւ յերեկվայ տօթից, ինչպէս մի չքացած վշտից, անհետանում են նրա վերջին բռնկումները...

Օգոստոսի երեկոներից է... Օրը իր անբաժան տապով արդէն սահել գնացել է... Նրա խեղդող ու Ճնշող շունչի նշոյն անգամ չկայ... Անուշ երկինքը իր կենդանացուցիչ գդուանքը ու փայփայնքը ուղարկում է Ալեքսանդր Ռուկեշեանի տան վրա... Դիա մի նոր ժամիտ է, կենդանացած յըսերի առաջին ուրախութեան ժպիտ... Եւ եւգինէն և Ալեքսանդրը նստած են իրանց տանը և բայ պատուհանի առաջ զմայլվում են անուշեկ երեկոյով:

Մի ինչ որ նոր երջանիկ օրերի տպաւորութեան կնիք զրոշմված է նրանց փայլող երեսների վրա: Մի ամբողջ օր է, որ նրանք միասին են, մի ամբողջ օր է, որ նրանք սայում

են մէկ - մէկու և երկուսն էլ ուրախ են, երկուսն էլ բաւական:

— Օ՛, պիրելիս, դու այժմ ինձ մօտ ես... Դու կարողացար ինձ համար բերել բոլորը քո սէրը, քեզ ամբողջապէս և, վերջապէս, իմ կատարեալ աղատութիւնը... և այդ ամենը քո անարժան ամուսնուդ համար. . .

Կարօտած սիրոյ զգացմունքը բռնկեց նրա մէջ նոր ուժով. նա բռնից կնոջ ձեռքերը և սկսեց համբուրել նրան: Եւզինէի մէջ բորբոքվեց արիւնը, սիրութ թնդաց և նո կարծեաթմրեց իր ամուսնու զրկում: Իսկ երբ Ալեքսանդրը շարունակում էր պահել նրան իր զրկում՝ Եւզինէն զգում էր իրան այնքան բաւական, այնքան ուրախ իր ամուսնու ներկայութեամբ, որպիսին երբէք չի զգացել.

— Ա՛ռ, առ, սիրելիս, այդ ձեռքը, կրկնն համբուրիր ինձ, սրանով դու ինձ պարզեռում ես նոր կեանք... Ես ուղում եմ դու միշտ լինես ինձ մօտ, իմ զրկում. . .

— Եթէ դու չենէիր, Եւզինէս, ով գիտի քանի երկար տարիներ ստիգմած կլինէի փառել բանտում: Օ՛, այդպիսի կին ունեցողը երբէք կորած չէ... . .

— Այս, պէտք է գոհ լինինք Աստուծուց, որ նա մեզ օգնեց. Հակառակ գէպքում մենք այդ արիւնոտ ալիքների միջից դուրս գալ չենք

կարող: Այժմ ես յոյս ունիմ, որ ինձանից քեզ խլող չի լինիլ. . . Բայց ես երբէք չէի սպառում, որ տրղարացնեն... Դու, դարձեալ դու, իմ Եւզինէս, կարողացար պարզել այդ երջանկութիւնը... Եկ ուրեմն, սիրելիս...

Ալեքսանդրը կրկն զրկեց իր կնոջը և այժմ զգաց, որ այդ առանձնացած խուցը շատ թանգ է նրա համար: Ուրքան ծանր օրերի քաւարանը առիթ տուեց արժանանալ այդ օրվան... Այստեղ ամեն ինչ այժմ շնչում է նրա համար երջանկութեան քաղցրութիւնով: Այստեղ նա միացաւ իր կնոջ հետ սենատում արդարացնելուց յետոյ: Նրան թվում էր, որ նոյն իսկ ամուսնութեան առաջին օրերին այն տեսակ ջերմ և փայլուն ձառագայթներ չեն թափանցել նրա սիրու, ինչպէս այսօր և այդ զգացմունքը շոյում էր նրա յոյսերը, նրա ցնորքները... . .

Շարունակ հինգ տարի գեղերման մէջ լինելուց յետոյ, այժմ արդարադատ դատաստանի շնորհիւ նրան միջոց տրվեց թափել իր բոլոր զգացմունքները, կարօտութեամբ լի զգացմունքները. . .

Այդպիսով նոր կեանք ստացած ամուսինները սպառելով իրանց բոլոր խօսակցութիւնը, որոնում էին մի ինչ որ բաւականութիւն փոխադրձ համբոյների և զրկախառնութեան մէջ...

իսկ պատրւհանից թարմ քառին, որ մեզ  
միկ մղումներով ներս էր մտնում, թափանցում  
էր նրանց սրաերբ և վառաւմ մի կախարդա-  
կան ցանկութիւնով։ յաճախ առ ամենոց  
... պահպատմանց ըստ վարչական դաշտում

**ԱՍՏՐԱԽԱՆ.** ամենու մեջ ի՞ն

15 Յունիսի 1901 թ. ից միջյա զբանացմամ

քանի ուստ գրանց ծաղամեմուստ ըստ ու ըստ  
ընտառաց, իմաց կամ մայր և պահանձ այս չ

շահական ըստ յաճախանելու ըլուս մինա  
L.U. Հ. Z. ՀԱՅՐԱՅԻՆ ԶՐՈՒԹՅՈՒՆ 7 Հ. 1922 մասին ամենայի վեց  
\* C.C.P.A. ԽՈԾՈՎԱԿԱ ԲԽՈՎԱԿԱ 7 Հ. 1922 մասին ամենայի վեց

այս պահպատման գաղտնաբառ մույս այս պահպատման  
ու պահպատման ըստ այս պահպատման պահպատման

պահպատման պահպատման պահպատման պահպատման  
պահպատման պահպատման պահպատման պահպատման

## ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Դատավոր և գործիք	Դ Եպարք	Հ քառ	Ամերկ
գործակ	եղածան	զմբ 8	28
եւամբանք	եւամբանք	" 81	28
հ մ	դ թ	զմբ 8	16
դ մ մ մ ի մ	դ մ մ մ ի մ	զմբ 4	28
ի ս յ ա մ ա յ ո ւ ն	Ա յ ա ր ա ս ա խ ա ն	" 8	28
հ մ մ ա ր ա ս ա ն	հ մ մ ա ր ա ս ա ն	" 8	28
հ մ մ ա ս ա պ	հ մ մ ա ս ա պ	" 81	201
մ ա ր ա մ ա ն ա շ	ո ր ա մ ա ն ա շ	" 4	202
ն ա ր ա ս ա ն ա շ ի շ	ն ա ր ա ս ա ն ա շ ի շ	" 2	728
մ ա ս ա յ ի ս	մ ա ս ա յ ի ս	զմբ 4	"
գ ո ր դ	հ ո ր դ ո ր	զմբ 8	108
թ շ ա ռ ա ն	թ շ ա ռ ա ն	" 8	228
եւ տ ի շ ա ն ա ն ա պ	եւ տ ի շ ա ն ա ն ա պ	զմբ 8	"

ՎՐԻ ՊԱԿԱՆԵՐ

---

<b>Երես.</b>	<b>առղ.</b>	<b>ապած է.</b>	<b>պէտք է կարդալ</b>
35	3 վեր.	անշարժ	անշուք
38	18 »	կազնում	կանգնում
51	8 ներ.	թու,	իւ
52	4 վեր.	մի - մի օր	մի - մի որ
89	6 »	հովանաւորելով	հովահարելով
95	3 »	ստեղանքի	ստեղունքի
102	13 »	պատկերի	պատերի
203	4 »	բռնածն այս	բռնածն այս է
337	2 »	ոչ աստուած	ոչ մի աստուած
»	4 ներ.	սիրուն	սիրասուն
361	8 վեր.	բոլորը	բոլոր
363	5 »	հարցրեց	հառաջեց
»	3 ներ.	պատանջվում	պահանջվում

---

၁၃၅

၁၃၆

ՀՀ Ազգային գրադարան



NL0360735

55.645